Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

2008 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 3
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2008 ԹՎԱԿԱՆԻՆ 48
ՀՀ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ 59
Հարկային եկամուտներ 61
Պետական տուրք 68
Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ 72
Պաշտոնական դրամաշնորհներ 72
Այլ եկամուտներ 73
ՀՀ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ 76
Տնտեսագիտական դասակարգում 76
Ընթացիկ ծախսեր 77
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ 78
Գործառական դասակարգում 80
Ընդհանուր բնույթի պետական ծառայություններ 80
Պաշտպանություն 92
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն 92
Տնտեսական հարաբերություններ 97
Շրջակա միջավայրի պաշտպանություն 127
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ 134
Առողջապահություն 139
Հանգիստ, մշակույթ և կրոն 150
Կրթություն 162
Սոցիալական պաշտպանություն 174
Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր 189
ՀՀ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ 190
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (տնտեսագիտական դասակարգմամբ) .....
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (գործառական դասակարգմամբ) .....
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ .....
ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ .....

2008 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երկրորդ սերնդի բարեփոխումների ներքո տնտեսական քաղաքականության շրջանակի ձևակերպում և տնտեսական աճի կառավարում

Կենսունակ տնտեսական աճի ապահովման մեխանիզմների արմատավորում

ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության շրջանակը ներառում է տնտեսական զարգացման նպատակների, մեխանիզմների, թիրախների և արդյունքների գնահատման չափելի ցուցանիշների հստակ ամրագրում: Այս նպատակով մշակվել և հաստատվել են ՀՀ կառավարության 2008-2012թթ. գործունեության ծրագիրը և 2008-2012թթ. գործունեության միջոցառումների ծրագիրը: ՀՀ տնտեսության զարգացման հնարավոր սցենարների, կառուցվածքային տեղաշարժերի և երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման առումով մշակվել է ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության դրույթներով նախատեսված՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության գործունեության ծրագրի նախագիծը, որտեղ բացահայտված են զարգացման մարտահրավերները, դրանց դիմակայման խնդիրները և լուծման ուղղությունները: 2008 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է նաև ՀՀ կայուն զարգացման ծրագիրը և մշակման ավարտական փուլում է միջոցառումների ծրագիրը: Շուտով պատրաստ կլինեն նաև ծրագրի մոնիտորինգի մեխանիզմները: Մոնիտորինգը նախատեսվում է իրականացնել առավելագույնս բաց և թափանցիկ՝ ինտերնետ միջավայրում, որը տեսանելի և վերահսկելի կլինի յուրաքանչյուր քաղաքացու համար:

Ապահովվել է Համաշխարհային բանկի հետ համագործակցության շրջանակներում առաջիկա 3-4 տարիներին իրականացվելիք ծրագրերի գնահատումը, առաջնահերթությունների սահմանումը: Առաջին անգամ այս գործընթացն իրականացվել է հստակ մեթոդաբանության համապատասխան: Արդյունքում ձևավորվել է հանրապետության համար առաջնահերթ ծրագրերի փաթեթը, որոնց իրականացման համար Համաշխարհային բանկին ներկայացվել է 1 մլրդ ԱՄՆ դոլարից ավելի վարկային (արտոնյալ և ոչ արտոնյալ) հայտ:

Տարածքային տնտեսական զարգացման անհամաչափությունների նվազեցում

Տարածքային տնտեսական զարգացման հետագա քաղաքականության մշակման նպատակով իրականացվել են մի շարք վերլուծություններ արդյունաբերական ընկերությունների կողմից տնտեսական գործունեության ծավալման վերաբերյալ ամենամսյա մոնիտորինգի, ՀՆԱ-ի դիսպերսիայի, ՀՀ-ում և զարգացող երկրներում ուրբանիզացիայի, տարածքային տնտեսական զարգացման վրա տնտեսության ճյուղերի ազդեցության թեմաներով:

Մշակվել է ՀՀ Զվարթնոց Օդանավակայանի հարակից տարածքում ազատ տնտեսական գոտի ստեղծելու հայեցակարգը և Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը: Գյումրու տեխնոպարկի ձևավորման, հետագա զարգացման ռազմավարության և բիզնես պլանի մշակման նպատակով մրցույթի արդյունքում ընտրվել են միջազգային և տեղական փորձագետներ:

Ստորագրվել է հուշագիր ՀՀ էկոնոմիկայի նախարարության, Եռաչափ մոդելավորողների հայկական ասոցիացիայի և Հայաստանի ադամանդագործների և ոսկերիչների ասոցիացիայի միջև Գյումրիում Եռաչափ մոդելավորման ուսումնական լաբորատորիայի հիմնման վերաբերյալ, որն ուղղված կլինի Գյումրի քաղաքում եռաչափ մոդելավորման զարգացմանը, կրթական համակարգի բարելավմանը և նոր ծրագրերի հիմնմանը, նոր աշխատատեղերի, աշխատանքային խմբերի և ընկերությունների ստեղծմանը, բիզնես կարողությունների ամրապնդմանը, զարգացմանը և գործարար միջավայրի բարելավմանը: Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի և Հայ Օգնության ֆոնդի հետ համատեղ աշխատանքներ են տարվել SUN տեխնոլոգիաների լաբորատորիայի ստեղծման ուղղությամբ:

Միջազգային մակարդակով մրցունակ գործարար և առևտրային պայմանների ապահովում

<u>Արտաքին տնտեսական համագործակցություն:</u> Ներկայումս եվրոպական կողմը, համաձայն սահմանված ընթացակարգերի, քննարկում է ՀՀ-ին շուկայական տնտեսության կարգավիճակ շնորհելու հարցը: Սպասվում է, որ 2009 թվականի գարնանը Եվրոպական Հանձնաժողովը կհրապարակի իր վերջնական որոշումը Հայաստանի վերաբերյալ:

2008 թվականի դեկտեմբերի 9-ին Եվրոպական Հանձնաժողովը հրապարակել է 2009-2011թթ. համար «Արտոնությունների ընդհանրացված համալրված համակարգում» ընդգրկված 16 երկրների ցանկը, որոնց թվում է նաև Հայաստանը: GSP+-ը հնարավորություն է տալիս համակարգից օգտվող երկրներին շուրջ 6400 ապրանքատեսակներ ԵՄ շուկա արտահանել զրոյական կամ զգալիորեն նվազեցված մաքսատուրքերով, ինչը լուրջ խթան կհանդիսանա ԵՄ երկրներ իրականացվող արտահանումների ծավալների մեծացման համար:

ԵՄ անդամ երկրների կողմից որոշում է կայացվել 2009 թվականի սկզբին նախաձեռնել նախապատրաստական աշխատանքներ ՀՀ-ԵՄ ամբողջական ազատ առևտրի մասին համաձայնագրի ստորագրման ուղղությամբ:

<u>Ներքին շուկա:</u> 2008 թվականին ՀՀ Ազգային ժողովն ընդունել է ՀՀ կառավարության կողմից ներկայացված առևտրի և ծառայությունների ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործմանն ուղղված օրենսդրական փաթեթը, որով առաջարկվում էր

փոփոխություններ և լրացումներ կատարել «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում և «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքում: Մեծապես կարևորելով սպառողների պաշտպանվածության գաղափարը՝ մշակվել է «Հայաստանի Հանրապետությունում միջազգային չափանիշներին համապատասխան սպառողների շահերի պաշտպանության համակարգ ապահովելու» հայեցակարգի նախագիծը:

Արտաքին առևտուր: Արտաքին առևտրի խթանման նպատակով մշակվել և ստորագրվել են «Մինչև 2010թ. ժամանակահատվածը ՌԴ և ՀՀ միջև երկարատև տնտեսական համագործակցության իրականացման միջոցառումների ծրագիրը» և «ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև փոխադարձ առևտրում անուղղակի հարկերի գանձման սկզբունքների մասին» արձանագրությունը: Շարունակվել են բանակցությունները Իրանի Իսլամական Հանրապետության առևտրի նախարարության հետ՝ երկու երկրների միջև ազատ առևտրի ռեժիմի սահմանման ուղղությամբ, ԱՊՀ շրջանակներում՝ «Ապրանքների ծագման երկրի որոշման» կանոններում փոփոխություններ կատարելու ուղղությամբ: Մշակվել են հայեցակարգային մոտեցումներ մաքսային սահմանի վրա ԱԱՀ-ի գումարների գանձման վերաբերյալ:

Գործարար միջավայր: 2008 թվականին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է Հայաստանի գործարար և ներդրումային միջավայրի «Գերազանցության կենտրոն» համազգային նախագծի հայեցակարգը և դրա իրականացմանն ուղղված Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագիրը: Ծրագրով նախանշվել և արդեն իսկ իրականացվում են 10 հիմնական ուղղություններով նախատեսված միջոցառումները:

ՀՀ-ում ներկայումս իրականացվում են նաև տեսչական բարեփոխումներ, որոնց նպատակն է կատարելագործել ՀՀ տեսչական համակարգը և այդպիսով ևս նպաստել երկրում գործարար միջավայրի բարելավմանը:

Կորպորատիվ կառավարում: 2008 թվականին նախաձեռնվել է Կորպորատիվ կառավարման կոդի ստեղծումը, որի նպատակն է՝ ակտիվացնել կապիտալի շուկան, խթանել արժեթղթերի շուկայի զարգացումը, որի համար պետք է հայտնաբերվեն զարգացմանը խոչընդոտող բոլոր գործոնները և դրանց վերացման համար ձեռնարկվեն միջոցառումներ: Ներկայումս փորձագետների կողմից ի հայտ են բերվել Կորպորատիվ կառավարման զարգացմանը խոչընդոտող մի շարք հանգամանքներ, որոնք ուսումնասիրվում են աշխատանքային խմբի անդամների կողմից:

Պետություն-մասնավոր հատված համագործակցություն: Մշակվել է ՀՀ-ում պետություն-մասնավոր հատված համագործակցության հայեցակարգի նախագիծը: ՊՄԳ-ները թույլ են

տալիս ծրագրերի ռիսկերը ողջամտորեն կիսել կառավարության և մասնավոր ընկերությունների միջև և մասնավոր կապիտալն ուղղել դեպի ենթակառուցվածքների ոլորտ:

Ստանդարտացում: 2008 թվականի ընթացքում Հայաստանում ընդունվել և գործողության մեջ են դրվել 103 միջազգային ԻՍՕ և 11 եվրոպական ԵՆ ստանդարտներ: Ներկայումս աշխատանքներ են տարվում ոլորտի զարգացման հայեցակարգային ուղղությունների մշակման ուղղությամբ:

Համապատասխանության հավաստում: Սահմանված կարգով մաքսային սահմանի վրա արտադրանքի համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա արտադրանքի ցանկը կրճատվել է 65-70%-ով՝ թողնելով առավել «ռիսկային» ապրանքները (մանկական սնունդ, ձուկ, ձկնամթերք): Նախատեսվում է մշակել համապատասխանության հավաստումը կարգավորող ՀՀ նոր օրենք՝ օրենսդրական փոփոխությունների հիմքում շեշտադրումը դնելով համապատասխանության պարտադիր հավաստման նախընտրելի ձևի՝ հայտարարագրման վրա:

Չափումների միասնականության ապահովում: Աշխատանքներ են ընթանում տարածաշրջանային չափագիտության ինստիտուտների կողմից տրված ազգային էտալոնների կալիբրավորման և չափումների վերաբերյալ սերտիֆիկատների փոխճանաչման ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա զգալիորեն պարզեցնել ինչպես չափումների միասնականության ապահովման համակարգում, այնպես էլ՝ համապատասխանության հավաստման բնագավառում իրականացված աշխատանքների արդյունքների փոխադարձ ճանաչումը: Համաշխարհային բանկի աջակցությամբ Չափագիտության ազգային ինստիտուտի կազմում ստեղծվել է ստանդարտ նմուշների լաբորատորիա: Նման ճշտության սարքավորումներով հագեցված լաբորատորիան Հայաստանում և տարածաշրջանում միակն է:

Տնտեսության մեջ արտադրողականության բարձրացում և ավելի բարձր ավելացված արժեքի ստեղծում

Մրցունակ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ձևավորում, տեղեկատվական հասարակության կայացում

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ: 2008 թվականին ՀՀ Կառավարության հավանությանն արժանացավ «Տեղեկատական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հայեցակարգը», որի նպատակն է խթանել երկրում տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) կտրուկ զարգացումը՝ ապահովելով աշխարհում Հայաստանի առաջատար դիրքն ու երկրում տեղեկատվական հասարակության կայացումը:

Իրականացվել է «Տեղեկատվական տեխնոլոգիաների ամիս» խորագրով միջոցառումների շարքը. Cornet ՓԲԸ կողմից WiMax անլար ցանցի պաշտոնական գործարկումը և բացումը Հայաստանում, «Սինոփսիս շաբաթ» միջոցառումների շարքը, օլիմպիադաներ, սեմինարներ, համաժողովներ, մրցույթներ և այլն:

Համաշխարհային բանկի հետ բանակցությունների արդյունքում բանկը 2009 թվականին «Տեխնոլոգիայի մրցունակության բարձրացում» ծրագրի շրջանակներում կտրամադրի Քաղաքականության և մարդկային ռեսուրսների զարգացման խոշորածավալ դրամաշնորհ (PHRD), որն ուղղվելու է 3 հիմնական ուղղությունների զարգացմանը՝ ենթակառուցվածք, բովանդակություն և նորարարություն:

Կազմակերպվել են նաև Մալազիայում «ՏՀՏ և զարգացման գլոբալ ալյանսի» կառավարման խորհրդի ամենամյա նիստին և Գերմանիայի Հանովերում CeBIT 2008 խոշորագույն ցուցահանդեսին մասնակցությունը, DigiTec ամենամյա մասնագիտացված ցուցահանդեսի շրջանակներում ԻՏՀՄ-ը կազմակերպել է «Ռոբոտիքս» մրցույթը: Անցկացվել է ArmTech Congress’08 համաժողովը:

«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի հետ համատեղ կատարվել է ոլորտի հետազոտություն՝ ներկայացնելով ոլորտի ներկա իրավիճակը, այդ թվում՝ հիմնական խնդիրները և մարտահրավերները, ռազմավարական զարգացման հեռանկարներն ու վերջին տարիներին գրանցված նվաճումները:

Կազմակերպվել է «Կրթություն և զարգացում» Athgo International ֆորումը, որին ներկա են եղել ավելի քան 150 մասնակից, որոնցից 50-ը՝ արտերկրից:

Գիտության և տեխնոլոգիաների ձեռներեցության ծրագրի (STEP) շրջանակներում «VC» վենչուրային համաժողովի համաֆինանսավորում» ենթամիջոցառման շրջանակում անցկացվել է «Գաղափարից դեպի շուկա» գործնական սեմինար: ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորվել են SS ոլորտին առնչվող 2 ծրագրերին հատկացվող դրամաշնորհները:

Տեղի ունեցած Մայքրոսոֆթի «Երևակայության գավաթ» ծրագրավորման միջազգային մրցույթի գնահատման արդյունքում իր «Աշխարհի թափոնների շուկա» ծրագրով հաղթած «Ալֆա Սֆեր» թիմը հնարավորություն է ստացել մասնակցելու Փարիզում կայանալիք «Երևակայության գավաթ»՝ «Ծրագրային ապահովման մշակում» (Software Design Invitational) տարեկան միջազգային մրցույթին:

Մայքրոսոֆթի հետ հաստատված 2008-2009 փորձնական դասընթացների և ծրագրերի շրջանակներում որպես առաջին աշխատանքային ծրագիր հանդիսացել է Էլեկտրոնային ծառայությունների տրամադրման համակարգը, որի ընթացակարգային և տեխնիկական պահանջները մանրամասն ուսումնասիրվել և քննարկվել են ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի մասնագետների հետ, և այնուհետև մշակվել են ծրագրային ապահովման լուծումները:

Երեք ուսումնական լաբորատորիաներ են հիմնվել Երևանի պետական, Հայ-ռուսական (Սլավոնական) և Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարաններում: 2008 թվականին կազմակերպվել է ուսանողների ընդունելության գործընթացը:

Մշակվում է հայկական SS ոլորտի վիճակագրական (տվյալների հավաքման, ճշգրտման և մշակման) նոր համակարգը:

Տեղեկատվական հասարակություն: ՀՀ-ում տեղեկատվական հասարակության կայացման ուղղությամբ առաջին քայլերից մեկն է դիտարկվում պետության կողմից հասարակությանը և տնտեսվարող սուբյեկտներին ծառայությունների մատուցումը էլեկտրոնային եղանակով կազմակերպելը:

Սյունիքի մարզում իրականացվել է հեռահար կրթության ներդրման պիլոտային ծրագիր Կապանի և հեռավոր մի քանի դպրոցների միջև, ինչպես նաև Շահինյանի անվան Ֆիզմաթ դպրոցի միջև կապ հաստատելու միջոցով, այսինքն՝ Ֆիզմաթ դպրոցում ընթացող դասին տեսակապի և ձայնային կապի միջոցով հնարավորություն էր տրվել մասնակցություն ունենալու նաև Սյունիքի համապատասխան դպրոցների աշակերտներին: Փորձարկումից հետո այն դրվեց էլեկտրոնային-հեռահար ուսուցման կենտրոնացված համակարգի ներդրման հայեցակարգի հիմքում:

Արդյունաբերության գլոբալ մրցունակության բարձրացում

Աշխատանքներ են տարվել քիմիական արդյունաբերության բնագավառում կլաստեր ստեղծելու գաղափարի շուրջ: Պարբերաբար տեղի են ունենում քննարկումներ, որին մասնակցում են հանրապետությունում նշված ոլորտի արտադրական, գիտական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև անհատ գիտնականներ: ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) հետ համատեղ իրականացվում է հանրապետության քիմիական արդյունաբերության ներկա վիճակի ուսումնասիրություն:

Իրականացվել է թեթև արդյունաբերության ոլորտի համաշխարհային զարգացման միտումների բացահայտման վերլուծություն, որը համադրվել է հանրապետությունում ոլորտի զարգացման միտումների հետ, բացահայտվել են հիմնախնդիրները և դրա հիման վրա մշակվել է առաջարկությունների փաթեթ:

Ադամանդագործություն: Հայաստանում ադամանդագործության ոլորտում այսօր լիարժեք գործում են 14 կազմակերպություններ: Չնայած ընկերությունների քանակը նվազել է, սակայն գործող ընկերությունները, շնորհիվ միջազգային ճանաչվածության, վերջին ամիսներին կարողանում են ապահովել ադամանդագործության ճյուղի ծավալների աճ:

Հաշվի առնելով համաշխարհային ճգնաժամի սպառնալիքները՝ Անթվերպենում 2008 թվականին կայացել է գագաթաժողով, որին մասնակցել են ավելի քան 500 ինչպես

արդյունահանման, այնպես էլ վերամշակման ոլորտի ներկայացուցիչներ: Որոշում կայացվեց կրճատել շուկաներին հումքային ալմաստների մատակարարումը՝ գնային անկումից խուսափելու նպատակով:

Կառավարությունն առավել ուշադրություն է դարձնում և կաջակցի այն միջոցառումների իրականացմանը, որոնք ուղղված կլինեն ապահովելու միջազգային շուկաների հասանելիությունը: Այդ համատեքստում առաջնային ենք համարում եռաչափ մոդելավորման դիզայներային կենտրոնի հիմնումը Գյումրիում:

ՀՀ-ում Իտալիայի դեսպանի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել աջակցելու հայ-իտալական ոսկերչական և դիզայներական ընկերությունների հետագա համագործակցությանը, մասնավորապես՝ վերջիններիս ներգրավելով Գյումրու տեխնոպարկում: Արդեն իսկ կա համագործակցության արձագանք իտալական «Դիզայնի Եվրոպական ինստիտուտ» ընկերության կողմից:

Ուսումնասիրվել է Հոնկ Կոնգի՝ լավագույնը ճանաչված լոգիստիկայի փորձի ներդրումը Հայաստանում:

Կառավարության կողմից որդեգրվել է ոսկեգործության և ադամանդագործության ոլորտում «պետություն–մասնավոր հատված» համագործակցության ուղղությունը: Այդ նպատակով կձևավորվի ոլորտի բարձրագույն մարմին՝ Խորհուրդ և իրեն կից գործադիր մարմինը, որտեղ կներգրավվեն ոլորտի համահայկական մասնավոր հատվածի և պետական մարմինների ներկայացուցիչներ:

«Ալրոսա» ընկերության հետ վարվող բանակցությունների արդյունքում համաձայնություն է ձեռք բերվել ավելացնել հայկական ընկերությունների թիվը հաճախորդների ցուցակում:

«Կրիստալ» և հայկական «Դի Սի Էյ» ընկերությունների միջև ստորագրված՝ ադամանդագործության ոլորտում համագործակցության հուշագրի շրջանակներում «Դի Սի Էյ» ընկերության արտադրական հզորություններում արդեն իրականացվում է «Կրիստալ» ընկերությունից ստացված ալմաստների 2 խմբաքանակի մշակումը:

Բանակցություններ են վարվում ՌԴ ֆինանսների նախարարության հետ թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման նշանների փոխադարձ ճանաչման ուղղությամբ, ինչը կպարզեցնի Հայաստանից Ռուսաստան ոսկերչական իրերի արտահանման գործընթացը:

Ոլորտի առջև ծագած խնդիրների, մասնավորապես՝ միջազգային շուկայում ստեղծված ճգնաժամային իրավիճակում ոլորտի զարգացումն ապահովելու նպատակով գործարարների հետ համատեղ մշակվել է հայեցակարգի նախագիծ:

Արդիական տեխնոլոգիաների ներմուծման գործընթաց: Կառավարության աջակցությամբ և Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ մեկնարկել է գերմանական «Ֆիխտներ» ընկերության կողմից իրականացվող՝ «Երևան քաղաքում պետական և մասնավոր հատվածների համագործակցության միջոցով կոշտ կենցաղային թափոնների կառավարման ինտեգրված ծրագրի տեխնիկատնտեսական հիմնավորման մշակում» ծրագիրը:

Բարձրարժեք ծառայություններ մատուցող ոլորտների զարգացում

2008 թվականին ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացավ Զբոսաշրջության զարգացման հայեցակարգը: Մշակվել և հաստատվել է 2008-2012թթ. միջոցառումների ցանկը: Նշված միջոցառումներն ուղղված են Հայաստանը կազմակերպված հանգստի կենտրոն դարձնելուն, ինչը Ազգային մրցունակության խորհրդի կողմից հայտարարվել է որպես երկրի տնտեսական զարգացման և մրցունակության ապահովման հիմնական ուղղություններից մեկը:

ՀՀ կառավարության որոշմամբ Ջերմուկ քաղաքը հայտարարվել է զբոսաշրջային կենտրոն՝ սահմանելով քաղաքի զարգացման հայեցակարգային նպատակները: Ներկայումս որոշմանը համապատասխան մշակվում է Ջերմուկ քաղաքի ռազմավարական ծրագիրը:

Աշխատանքներ են տարվում Հայաստանի համայնքներում զբոսաշրջության զարգացման ծրագրի ուղղությամբ՝ համագործակցելով ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության, այլ միջազգային կառույցների, տեղական ինքնակառավարման մարմինների և մասնավոր հատվածի շահագրգիռ կողմերի հետ:

Ուսումնասիրվել են Գառնի-Գեղարդ երթուղու հիմնախնդիրները, և դրանց լուծմանն ուղղված միջոցառումների ցանկը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:

Շարունակվել է Հայաստանը ներկայացնող հոլովակների հեռարձակումը CNN և EuroNews հեռուստաալիքներով: Ավարտվել են Հայաստանը ներկայացնող 1 ժամ տևողությամբ ֆիլմի նկարահանումները:

Շարունակվում են «Ծաղկաձորը միջազգային չափանիշներին համապատասխանող զբոսաշրության կենտրոն» նպատակային խնդիրների լուծման ծրագրի իրականացումը և մասնակցությունը Եվրամիության կողմից ղեկավարվող «Կիևյան նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում իրականացվող «Մշակութային զբոսաշրջություն և գինու ճանապարհ» ծրագրի աշխատանքներին:

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը 2008 թվականից անդամակցել է Ասիայի և Խաղաղօվկիանոսյան Տարածաշրջանում Զբոսաշրջության Ոլորտում Կրթական և Վերապատրաստման Հաստատությունների Միությանը (APETIT):

Գիտելիքի վրա հիմնված տնտեսության ենթակառուցվածքների ձևավորում

2008 թվականին մշակվել է «Գիտելիքի տնտեսության ձևավորման հայեցակարգի» նախագիծը:

ՀՀ կառավարություն է ներկայացվել Ա.Ի.Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտում CICLONE-30 իզոտոպների արտադրության համալիրի տեղադրման և Հայաստանում Միջուկային բժշկության կենտրոնի ստեղծմանն աջակցելու ծրագիրը: Կազմվում է նախագծի իրականացման բիզնես-ծրագիրը՝ ներգրավված միջազգային կազմակերպության փորձագետի մասնակցությամբ: Արագացուցիչների կիրառմամբ նոր տեխնոլոգիաների ներդրումը բժշկության մեջ և հարակից բնագավառներում հնարավորություն կտա Հայաստանը դարձնել Միջուկային բժշկության կենտրոն:

<u>Գյուղատնտեսություն</u>

Ելնելով ոլորտի առանձնահատկությունների և երկրի պարենային անվտանգության խնդիրներից՝ 2008 թվականին կարևորվել է գյուղատնտեսության պետական աջակցության քաղաքականությունը՝ ուղղված ագրարային ոլորտում իրավական հիմքի ձևավորմանը, գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար գործունեության և ներդրումների բարենպաստ պայմանների ապահովմանը, ենթակառուցվածքների զարգացմանը, սննդամթերքի անվտանգության համակարգի զարգացմանը և այլն:

Գյուղատնտեսությունում 2008 թվականին իրականացված քաղաքականությունը նպատակաուղղվել է ճյուղի և նրան սպասարկող ոլորտների գործունեության արդյունավետության բարձրացմանը և դրա հիման վրա գյուղատնտեսության հետագա զարգացման և ընդլայնված վերարտադրության համար պայմանների ստեղծմանը, գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտների ավելացմանը, հանրապետության պարենային ապահովության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը, բնակչության աղքատության մակարդակի կրճատմանը:

Համաձայն ուսումնասիրությունների վերջին տարիներին արձանագրված տնտեսական աճի յուրաքանչյուր տոկոսային կետ գյուղական աղքատության մակարդակը նվազեցրել է 0.48 տոկոսային կետով («Հայաստանի սոցիոլոգիական պատկերը և աղքատությունը» վիճակագրական վերլուծական զեկույց, ք. Երևան 2008թ., էջ 26 աղյուսակ 2.5):

2008 թվականին գյուղատնտեսության ոլորտում բյուջետային ծրագրերն ուղղվել են հետևյալ կոնկրետ նպատակների իրականացմանը.

- հողերի բերրիության պահպանում և բարձրացում՝ հողերի մելիորատիվ վիճակի բարելավում, հակահեղեղային միջոցառումներ, բնական կերհանդակների (արոտների) բարելավում և ջրարբիացում,
- գյուղատնտեսական մշակաբույսերի բարձրորակ բերքի անկորուստ ստացում՝ բույսերի վնասակար օրգանիզմների բազմացման, զարգացման ու տարածման հետազոտությունների և պայքարի աշխատանքների կազմակերպման միջոցով դրանց տարածման շրջանակների նվազեցում և հետագա կանխարգելում,
- անտառային տնտեսության զարգացում, անտառպահպանության արդյունավետության բարձրացում՝ անտառվերականգնման աշխատանքների ծավալների մեծացում, անտառշինական նախագծերի կազմում, անտառային տարածքներում բույսերի պաշտպանության կենտրոնացված միջոցառումների իրականացում,
- ներմուծվող և արտադրվող անվտանգ բուսական և կենդանական ծագումով մթերքներով ապահովում՝ կարանտին անվտանգության ապահովում, կարանտին օրգանիզմների և կենդանական ծագում ունեցող հումքի մթերքի, և կենդանիների միջոցով հանրապետության տարածք վարակիչ հիվանդությունների ներթափացման կանխարգելում,
- գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններին մատչելի գներով պարարտանյութերի մատակարարումը (սուբսիդավորման մեխանիզմի կիրառմամբ),
- կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից բնակչության պահպանություն և գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացում՝ կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելիչ պատվաստումների իրականացում, սննդամթերքի նմուշների փորձաքննություններ և տոհմասելեկցիոն աշխատանքների կազմակերպում, բարձր մթերատու ցեղերի երինջների ներկրում,
- գյուղացիական տնտեսություններին բարձրորակ սերմերով ապահովում՝ բույսերի սելեկցիոն նոր սորտերի պաշտպանություն, բարձր վերարտադրության սերմերի որակի գնահատում,
- գյուղատնտեսության համար առավել անբարենպաստ գոտիներում գյուղատնտեսական հողօգտագործողներին պետական աջակցության տրամադրում,
- գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտների և գյուղատնտեսությունում համախառն ներքին արդյունքի ավելացում,
- պարենային ապահովության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացում, կայուն միջպետական տնտեսական կապերի հաստատում:

Սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն

2008 թվականին կառավարությունը շարունակել է միասնական քաղաքականություն վարել սոցիալական պաշտպանության ոլորտի բոլոր ուղղություններով՝ սահմանելով հստակ առաջնահերթություններ, ապահովելով համակարգի ֆինանսական կայունությունը, հասցեականության մեծացումը, ձեռնարկելով բնակչության կենսամակարդակի բարձրացմանն ու կյանքի որակի բարելավմանն ուղղված քայլեր:

Հաստատվել են կենսաթոշակային բարեփոխումների ծրագիրը և բարեփոխումների իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը, ավարտական փուլում են կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող օրենքների նախագծերի մշակման աշխատանքները:

Արդիականացվել են գործող տեղեկատվական համակարգերը, ներդրվել են նոր համակարգեր, ինչպես նաև էլեկտրոնային կառավարման այլ գործիքներ:

Լրամշակվել է «Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգի և դրա իրականացումն ապահովող միջոցառումների ծրագրի» նախագիծը:

Աշխատանքի և զբաղվածության բնագավառում վարվող քաղաքականությունն ուղղված է արժանավայել աշխատանքի պայմանների ապահովմանը, աշխատաշուկայում աշխատանք փնտրողների մրցունակության բարձրացմանը, գործատուների կողմից նոր աշխատատեղերի ստեղծմանը, դրանք որակյալ մասնագետներով համալրմանը:

Շարունակվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի լրամշակման աշխատանքները՝ այն համապատասխանեցնելով ԱՄԿ-ի կոնվենցիաների և Եվրոպական վերանայված սոցիալական խարտիայի պահանջներին, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից որդեգրված բիզնես միջավայրի բարելավման հայեցակարգային մոտեցումներին:

2009թ. հունվարի 1-ի դրությամբ զբաղվածության տարածքային կենտրոններում հաշվառվել է աշխատանք փնտրող 90244 անձ, որոնցից գործազուրկ է 74698-ը: Զբաղվածության ծրագրերում ընդգրկվել է աշխատանք փնտրողների 43.5%-ը, աշխատանքի է տեղավորվել է 8657 անձ կամ աշխատանք փնտրողների 9.6%-ը, ինչը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է 4.3%-ով: Աշխատանքի տեղավորվածների 20.7%-ը երիտասարդներ են, աշխատաշուկայում անմրցունակ անձանցից աշխատանքի է տեղավորվել 187-ը: Զբաղվածության տարածքային կենտրոնների հետ համագործակցող գործատուների թիվն աճել է 20%-ով: Տարեվերջին գործազրկության մակարդակը հանրապետությունում կազմել է 6.3%, տարեսկզբի 6.7%-ի փոխարեն:

Սոցիալական ապահովագրության և կենսաթոշակային ապահովության համակարգի ընդհանուր բարեփոխումների համատեքստում հաշվետու տարվա ընթացքում շարունակվել են աշխատանքները կենսաթոշակների չափերի շարունակական բարձրացման, պետության կողմից անհրաժեշտ երաշխիքների տրամադրման ուղղությամբ:

Հաշվետու տարում աշխատանքներ են իրականացվել կենսաթոշակային բարեփոխումների ուղղությամբ, որի շրջանակներում մշակվել և հաստատվել է «Կենսաթոշակային բարեփոխումների ծրագիրը և կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը:

ՀՀ կառավարության որդեգրած՝ կենսաթոշակառուների սոցիալական վիճակի բարելավման և կենսաթոշակների չափերի շարունակական բարձրացման քաղաքականության համատեքստում 2009 թվականի հունվարի 1-ից ապահովագրական կենսաթոշակների միջին չափը 2008 թվականի 21842 դրամից բարձրացվել է մինչև 25686 դրամ (աճը՝ 17.6%), իսկ սոցիալական կենսաթոշակների միջին չափը՝ 10173 դրամ՝ 2008 թվականի 8765 դրամի փոխարեն (աճը՝ 16 %):

Մշակվել են արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող ցուցակների կիրառման կանոնները, որով կապահովվի արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող ցուցակների միասնական կիրառումը և քաղաքացիների՝ կենսաթոշակային արտոնությունների իրավունքների իրականացումը:

Աշխատանքներ են իրականացվել նաև կենսաթոշակների անկանխիկ վճարման համակարգի ներդրման ուղղությամբ: Ստեղծվել է աշխատանքային խումբ և իրականացվել են անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ:

Սոցիալական աջակցության բնագավառում 2008 թվականի ընթացքում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված 165394 ընտանիքներից ընտանեկան նպաստ է ստացել ամսական, միջին հաշվով, 121160-ը կամ հաշվառվածների շուրջ 73.25%-ը, իսկ հրատապ օգնություն՝ շուրջ 10010 ընտանիք կամ հաշվառվածների 6.1%-ը, նպաստի միջին չափը կազմել է 21100 դրամ: Ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքներին միանվագ դրամական օգնություն է տրվել երեխայի ծննդյան կապակցությամբ՝ 2972 ընտանիքի, երրորդ և հաջորդ երեխաների համար՝ 4306 ընտանիքի, երեխայի առաջին դասարան ընդունվելու կապակցությամբ՝ 9390 ընտանիքի, ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ 188 ընտանիքի: Երեխայի ծննդյան միանվագ նպաստ է տրվել 38303 ընտանիքի, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ՝ 4488 ընտանիքի, Հայաստանի զոհված ազգային հերոսի ընտանիքի նպաստ՝ 8 ընտանիքի:

2008 թվականին շարունակվել են նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993թ. հունիսի 10-ը դրամական ավանդ ներդրած անձանց փոխհատուցման վճարումները: Այդ աշխատանքների շրջանակում հանրապետության 55 ՍԾՏԳ-ների կողմից հաշվառված ավելի քան 62 հազար անձանցից վերջին երեք տարիներին փոխհատուցում է ստացել ավելի քան 18000 քաղաքացի, այդ թվում 2008 թվականին՝ շուրջ 7800 քաղաքացի:

Հաշմանդամների և տարեցների հիմնահարցեր: Ելնելով «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015թթ. ռազմավարության» դրույթներից՝ 2008 թվականի ընթացքում շարունակվել են աշխատանքները հաշմանդամներին հասարակությանն ինտեգրելու ուղղությամբ:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց համար հավասար պայմաններ և հավասար հնարավորություններ ապահովելու գործընթացին աջակցելու, ծագած խնդիրները վերլուծելու և դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ մշակելու, ինչպես նաև հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող կազմակերպությունների աշխատանքները համակարգելու, միասնական քաղաքականություն իրականացնելու նպատակով ՀՀ վարչապետի որոշմամբ 2008 թվականի փետրվարին ստեղծվել է հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով Ազգային հանձնաժողով: Նշված հանձնաժողովի աջակցությամբ ստեղծվել են այդօրինակ մարզային և Երևանի քաղաքային հանձնաժողովներ:

Բարելավվել են բժշկասոցիալական փորձաքննության աշխատանքները, հստակեցվել է հաշմադամության խմբորոշման կարգը: ԲՍՓՀ ծառայությունները հեռավոր և սահմանամերձ գյուղերի բնակիչներին առավել մատչելի դարձնելու, տեղերում հիվանդների բացահայտման և փորձաքննության անցկացման նպատակով կատարվել է 48 շրջայց:

Տեսողության խնդիրներ ունեցող անձանց հասարակությանն ինտեգրելու, նրանց ուսուցման և աշխատանքի համար մատչելի պայմաններ ապահովելու նպատակով շարունակվել է իրականացվել «Ուշ տարիքում տեսողությունը կորցրած հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով գրքերի պատրաստում և «Խոսող գրքերի» ձայնագրության ծառայությունների ձեռքբերում» ծրագիրը: 2008 թվականին առաջին անգամ պետական բյուջեից միջոցներ են հատկացվել տեսողությունից 1-ին խմբի հաշմանդամներին և հաշմանդամ երեխաներին «Արև» համակարգի ուսուցման և համակարգչային տեխնիկայով ապահովելու համար:

Աշխատանքներ են տարվում Գյումրի քաղաքում հաշմանդամների աշխատանքային վերականգնողական կենտրոն ստեղծելու ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա հայտնաբերել մարզի աշխատունակ հաշմանդամներին, գնահատել նրանց կարողությունները և ուղղորդել համապատասխան աշխատանքի:

Իրականացվել և համակարգվել են հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2008 թվականի տարեկան ծրագրով նախատեսված՝ հաշմանդամների վերականգնողական և պրոթեզաօրթոպեդիկ օգնության տրամադրման աշխատանքները:

Համակարգի 4 տուն-ինտերնատներում խնամվել են 1010 տարեցներ: Անօթևան մարդկանց ժամանակավոր կացարանում սպասարկվել են շուրջ 350, իսկ տնային պայմաններում՝ 1500 անձինք, նախորդ տարվա 1200-ի փոխարեն:

2008 թվականին շարունակվել է միայնակ տարեցներին և հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային կենտրոններում սոցիալական սպասարկման և խնամքի, ինչպես նաև մտավոր խնդիրներ ունեցող երիտասարդների ցերեկային կենտրոններում սոցիալական սպասարկման ծառայությունների պատվիրակումը հասարակական կազմակերպություններին:

Ընթացքի մեջ են բռնադատվածների և նրանց առաջին հերթի ժառանգների բնակարանային պայմանների բարելավման նպատակով արտոնյալ պայմաններով երկարաժամկետ վարկերի տրամադրման աշխատանքները: 2008 թվականին վարկ է ստացել 31 մարդ:

Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցեր: 2008 թվականին շարունակվել է երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի հզորացմանը, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների պաշտպանությանը, ինչպես նաև կանանց վիճակի բարելավմանը և հասարակության մեջ նրանց դերի բարձրացմանն ուղղված քաղաքականության իրականացումը:

Լոռու մարզում, «Առավոտ» հասարակական կազմակերպության հետ համատեղ, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների բեռնաթափման փորձնական ծրագրի շրջանակներում 40 երեխա վերադարձել է կենսաբանական ընտանիք, 10 երեխայի մուտք հաստատություն կանխարգելվել է:

Երեխաների ցերեկային հոգածության 2 կենտրոններում ռիսկի խմբի շուրջ 200 երեխաների և նրանց ընտանիքներին մատուցվել են սոցիալական ծառայություններ:

«Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կողմից Տավուշի մարզի 4 ցերեկային խնամքի կենտրոնների աջակցության ծրագրի շրջանակներում օժանդակություն է ստացել շուրջ 750 շահառու:

Իրականացվել է «Խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրում» ծրագիրը, որի միջոցով մանկատան 20 երեխա խնամվում է 17 ընտանիքում:

Կենտրոնացված հաշվառման է վերցվել որդեգրման ենթակա 146 երեխա, 347 որդեգրողների թեկնածուներ, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած 491 երեխա և

բնակարանի կարիք ունեցող առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող 22 անձ: Որդեգրվել է 93 երեխա:

ՄԱԶԾ-ի և Եվրախորհրդի հետ համատեղ իրականացվել են գենդերային հավասարությանն ուղղված մի շարք միջոցառումներ:

Միգրացիայի և փախստականների ոլորտ

Միգրացիայի և փախստականների ոլորտում 2008 թվականին ներկայացվել են ներքոհիշյալ օրենսդրական ակտերի նախագծերը.

- «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի նախագիծը,
- «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների Հայաստանի Հանրապետությունից ելքի և Հայաստանի Հանրապետություն մուտքի մասին» ՀՀ օրենքի նախագիծը,
- «Արտագնա աշխատանքների կարգավորման մասին» ՀՀ օրենքի նախագիծը,
- «1988-1992թթ. Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած փախստականների համար կառուցված բնակարանները սեփականության իրավունքով փախստականներին հատկացնելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը,
- «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերից ներքին տեղահանված անձանց իրենց ծագման բնակավայրերը վերադարձի կազմակերպման ծրագրի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Նշված օրենսդրական ակտերից ՀՀ Ազգային ժողովի կողմից 2008 թվականի նոյեմբերի 27-ին ընդունվել է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը:

ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերից ներքին տեղահանված անձանց իրենց ծագման բնակավայրերը վերադարձի կազմակերպման» ծրագիրը, որով նախատեսվում է աջակցել ներքին տեղահանված անձանց 1005 ընտանիքի իրենց հիմնական բնակության վայրեր վերադառնալու հարցում:

Հաշվետու ժամանակաշրջանում սկսել է գործել օտարերկրյա պետություններում բնակվող մեր հայրենակիցների հայրենադարձությունը խթանող համակարգը, որի միջոցով այդ անձինք էլեկտրոնային կապի հաղորդուղիներով կարող են անմիջականորեն կապվել Հայաստանի պետական կառավարման համապատասխան մարմինների հետ և ստանալ իրենց հուզող հարցերի պատասխանները:

Համակարգի շահագործումից անցած մի քանի ամիսների ընթացքում համակարգին են դիմել մոտ 200 անձինք:

Հայաստանի Հանրապետությունից ծնունդ առնող անօրինական միգրացիայի դեմ պայքարելու նպատակով հաշվետու տարում՝

- շարունակվել են աշխատանքները բնակչության շրջանում տեղեկատվության տարածման միջոցով անօրինական միգրացիան կանխարգելելու ուղղությամբ,
- ռեադմիսիոն համաձայնագրեր են կնքվել Բուլղարիայի և Շվեդիայի հետ, համանման համաձայնագրերի կնքման շուրջ բանակցությունները շարունակվել են Ռումինիայի, Չեխիայի, Էստոնիայի, Կիպրոսի, Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի հետ,
- շարունակվել է Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գրասենյակի հետ համատեղ իրականացվող Շվեյցարիայից վերադարձող ՀՀ քաղաքացիների ռեինտեգրման աջակցության ծրագիրը, որի նպատակն է օգնել վերադարձող քաղաքացիներին փոքր բիզնես հիմնելու, երեխաների կրթության և այլ սոցիալական հարցերում,
- շարունակվել են գործակալությունում գործող մշտական բնակության նպատակով ՀՀ վերադարձած անձանց խորհրդատվական աջակցման և հեռախոսային «թեժ գիծ» ծառայության աշխատանքները:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակական աշխատանքներ են տարվել՝ կապված հանրակացարաններում բնակվող փախստական ընտանիքների կողմից զբաղեցրած տարածքների սեփականաշնորհման հետ: 2008 թվականին 32 փախստական ընտանիքներ օգտվել են այդ գործընթացից: Փախստական 54 ընտանիք հաշվետու տարում տեղավորվել են «Հանրակացարաններ» ՓԲԸ-ի տնօրինության հանրակացարաններում:

2008 թվականի ընթացքում ՀՀ քաղաքացիություն են ձեռք բերել 733 փախստական:

Հաշվետու ժամանակաշարջանում օտարերկրյա պետությունների (Վրաստանի, Իրաքի, Իրանի Իսլամական Հանրապետության, Թուրքիայի, Շրի Լանկայի) քաղաքացիներից ստացվել են Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստանալու մասին 205 դիմումներ, որոնցից 190-ը դիմել են ժամանակավոր ապաստանի, իսկ 15-ը՝ փախստականի կարգավիճակ տրամադրելու խնդրանքով: Փախստականի կարգավիճակ է տրվել 3 անձի, մյուսների դիմումները մերժվել են: Ժամանակավոր ապաստան է տրվել 68 անձի:

Առողջապահություն

Առողջապահության ոլորտում 2008 թվականին իրականացված քաղաքականությունը բխել է ՀՀ կառավարության գործունեության ռազմավարական դրույթներից: Այն ուղղված է եղել համակարգի հետագա զարգացմանը, արդյունավետության բարձրացմանը, սոցիալական արդարության ու համերաշխության սկզբունքներով բնորոշվող առողջապահության

համակարգի ձևավորմանը, բժշկական օգնության որակի ու մատչելիության բարձրացմանը, բնակչության առողջության պահպանմանը և բարելավմանը, հիգիենիկ հակահամաճարակային անվտանգության ապահովմանը:

2008 թվականին առողջապահության ոլորտում արձանագրվել է որոշակի առաջընթաց: Մասնավորապես այն անդրադաձել է համակարգի կազմակերպական ու կառուցվածքային վերափոխումներին, օրենսդրական դաշտի բարելավմանը, առողջապահության ֆինանսավորման համակարգի կատարելագործմանը, ոլորտի օպտիմալացմանը և արդիականացմանը, կրթական համակարգի արդիականացմանը, բժշկական օգնության կազմակերպման կատարելագործմանը և այլն:

Ոլորտի ֆինանսավորման կայուն աճը հնարավորություն է տվել ավելացնելու պետության կողմից իրականացվող առողջապահական ծրագրերը, դրանց ծավալները և բարձրացնելու մատչելիությունը:

Ամբուլատոր-պոլիկլինիկական համակարգի հզորացումը ՀՀ կառավարության կողմից իրականացվող առողջապահական բարեփոխումների գերակայությունների առանցքային ուղղություններից է: Վերջինս արտացոլված է նաև ՀՀ կառավարության կողմից ընդունված «Կայուն զարգացման ռազմավարական ծրագրում»:

Տարեցտարի ավելացող առողջապահության պետական ֆինանսավորման մեջ զգալիորեն աճել են առողջության առաջնային պահպանմանն ուղղվող հատկացումները, ինչի շնորհիվ հնարավորություն է ընձեռվել զգալիորեն բարձրացնելու առաջնային օղակի մասնագետների վարձատրման չափը:

2008 թվականին շարունակվել է անվճար ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության մատուցումը: Իրականացվել են առաջնային բուժօգնության որակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ (հատուկ ուշադրություն դարձնելով գյուղական բնակչության կարիքներին):

Այսպես, ՀԲ առողջապահական վարկային ծրագրի և ԱՄՆ ՄԶԳ համագործակցության շրջանակներում 2008 թվականին նորոգվել ու վերակառուցվել են 66 գյուղական բժշկական ամբուլատորիա և բուժկետ, 245-ը հագեցվել է սարքավորումներով ու պարագաներով: Շարունակվել է ընտանեկան բժշկների և բուժքույրերի մասնագիտացման գործընթացը, իրականացվել է նաև առաջնային օղակի 92 առողջապահության կազմակերպիչի և 108 հաշվապահի վերապատրաստում:

Շարունակվել է բնակչության կողմից առաջնային օղակի բժշկի ընտրության գործընթացը՝ ընդգրկելով ՀՀ բնակչության շուրջ 78.5% -ը:

Մշակվել և համակարգում ներդրվել են առողջապահության տարբեր ոլորտների աշխատանքը, առանձին հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումները կանոնակարգող ուղեցույցներ և չափորոշիչներ:

Մոր և մանկան առողջության ոլորտում շարունակաբար իրագործվել են ՀՀ կառավարության կողմից հաստատված «Մոր և մանկան առողջության պահպանման 2003-2015թթ. ազգային ռազմավարությունը» և «Վերարտադրողական առողջության բարելավման 2007-2015թթ. ծրագիրը»: Մշակվել է «Երեխաների և դեռահասների առողջության ու զարգացման ազգային ռազմավարությունը և 2009–2015թթ. գործողությունների ծրագիրը»: 2008 թվականի հուլիսի մեկից ներդրված ծննդօգնության պետական հավաստագրի ծրագիրը թույլ տվեց բնակչության համար լիովին ապահովել որակյալ և անվճար ծննդօգնության ծառայությունների մատուցում: Մշակվել և հաստատվել են երեխաների և կանանց բուժօգնության գործընթացը կանոնակարգող շուրջ 10 կլինիկական չափորոշիչներ:

Ոլորտում իրականացվել են մի շարք ծրագրեր միջազգային կազմակերպությունների (UNICEF, WHO, UNFPA, USAID/ NOVA, MISSION EAST, WORLD VISION) հետ արդյունավետ համագործակցության շնորհիվ:

Հանրապետության բնակչությանը որակյալ դեղերով ապահովելու մատչելիությունը կանոնակարգելու նպատակով 2008 թվականին իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- ՀՀ ԱՆ կողմից կենտրոնացված կարգով ձեռք բերված դեղերի քանակը հիմնականում ապահովել է հիվանդների պահանջարկը, մասնավորապես՝ շաքարային և ոչ շաքարային դիաբետի բուժման, իմունաճնշիչ, հոգեմետ և հակացնցումային, բջջաթունային, թմրաբեր ցավազրկող, պարբերական հիվանդության դեղերի և ֆենիլանին չպարունակող մանկական կերի մասով,
- մարդասիրական օգնությամբ ԱՄՆ Միացյալ հայկական հիմնադրամից ստացվել են մոտ 1.5 մլրդ դրամի դեղեր և բժշկական պարագաներ: Ստացված դեղերի հիմնական ծավալը բաշխվել է ՀՀ մարզերի բուժհաստատություններին:

«Հայաստանի Հանրապետությունում տեղական մալարիայի վերացման 2006-2010թթ. նպատակային ծրագրի» համաձայն իրականացված համալիր կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների արդյունքում 2007-2008թթ. հանրապետությունում տեղական մալարիայի դեպքեր չեն արձանագրվել:

Ծավալուն աշխատանքներ են կատարվում միջազգային կապերի ու համագործակցության ուղղությամբ, մասնավորապես Առողջապահության համաշխարհային կազմակերպության, Համաշխարհային բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, Միավորված ազգերի կազմակերպության կառույցների, օտարերկրյա կառավարությունների, ոչ պետական կազմակերպությունների հետ: Հատկապես կարևորվում է համագործակցությունը հայկական սփյուռքի հետ:

<u>Կրթություն և գիտություն</u>

Կրթության և գիտության ոլորտում ՀՀ կառավարության գործունեությունն իրականացվել է պետական ռազմավարական փաստաթղթերի՝ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի և ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության գերակայություններին և ուղենիշներին, ինչպես նաև կառավարության գործունեության ծրագրին համապատասխան:

Կրթության բնագավառում ՀՀ կառավարության գլխավոր խնդիրն է կրթության բոլոր մակարդակներում որակի բարձրացումը՝ ապահովելով քաղաքացիների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը: Այդ նպատակով համակարգում իրականացվող բարեփոխումները գնալով ավելի ընդարձակվում և խորանում են՝ ընդգրկելով կրթության բոլոր ոլորտները:

Բնագավառում գերակա է հանդիսանում հանրակրթությունը՝ որպես երեխաներին ինքնուրույն կյանքի և հետագա մասնագիտական կրթության նախապատրաստման հիմք: Արտասահմանյան զարգացած երկրների և Հայաստանի հանրակրթական համակարգերը համադրելի դարձնելու նպատակով շարունակվել են 12-ամյա կրթակարգի և միջնակարգ կրթության պետական կրթական չափորոշչի ներդրումը, և ՀՀ մարզերում և Երևան քաղաքում շարունակաբար իրականացվել են ուսուցիչների վերապատրաստումներ՝ ուսումնական նոր ծրագրերի, չափորոշիչների, գնահատման նոր համակարգի և ուսուցման նոր մեթոդների ուղղությամբ:

12-ամյա կրթակարգի ներդրման վերջին փուլը կսկսվի 2009 թվականից՝ 3-ամյա ավագ դպրոցի ծրագրի ներդրմամբ: Այս տեսանկյունից հանգուցային է առանձին գործող ավագ դպրոցների ցանցի ձևավորումը, ինչը հնարավորություն կտա հաղթահարել ավագ դասարաններում այսօր առկա հիմնախնդիրները և ապահովել սովորողների լիարժեք պատրաստվածությունը՝ իրենց նախընտրած մասնագիտությամբ ուսումը շարունակելու համար:

Հանրակրթության որակի բարելավման, ինչպես նաև համակարգի առաջանցիկ զարգացման կարևոր նախապայմաններից է ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ներմուծումը հանրակրթական դպրոց և դպրոցների համալրումը ժամանակակից համակարգչային միջոցներով: 2008 թվականին դպրոցներին տրամադրվել են 1135 համակարգիչ և այլ համակարգչային սարքավորումներ: Ներկայումս «Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցում» ընդգրկված է 324 դպրոց: Հանրապետության 785 դպրոցում հիմնվել են էլեկտրոնային գրադարաններ:

Շարունակական միջոցառումներ են ձեռնարկվում մանկավարժների մասնագիտական պատրաստվածության բարելավման, նրանց հասարակական վարկի ու ուսուցչի մասնագիտության գրավչության բարձրացման ուղղությամբ: Վերջին տարիներին

շարունակաբար բարձրացվել է մանկավարժների աշխատավարձը: Անցած տարի այն բարձրացվել է 21%-ով և կազմել 90.6 հազ. դրամ, իսկ վարչական անձնակազմի աշխատավարձը՝ 136.0 հազ. դրամ: Շարունակվել են սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերը մանկավարժական կադրերով համալրման և մանկավարժների նպատակային պատրաստման ծրագրերը: 2008 թվականի ընթացքում սահմանամերձ լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի հանրակրթական դպրոցներ գործուղվել են 92 մանկավարժ և ուսուցման անհատական գրաֆիկի անցած 8 ուսանող:

Հանրակրթության ոլորտի բարեփոխումների կարևոր խնդիր է կրթության որակի գնահատման և վերահսկման նոր համակարգի ներդրումը: Կրթության որակի վերահսկման միասնական նոր համակարգի համաձայն՝ 2008 թվականին անցկացվել են միջնակարգ դպրոցի պետական ավարտական և միասնական քննություններ՝ հայոց լեզու և գրականություն, մաթեմատիկա, օտար լեզուներ (ռուսերեն, անգլերեն, գերմաներեն և ֆրանսերեն, իսպաներեն, իտալերեն) առարկաներից: Միաժամանակ, գնահատման նոր համակարգի համաձայն, կազմակերպվել ու անցկացվել է նաև հիմնական դպրոցի մաթեմատիկայի ավարտական քննությունը:

2008 թվականին հաստատվել է «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015թթ. ռազմավարական և փորձնական ծրագիրը», որի հիմնական նպատակն է նախադպրոցական կրթության ծառայությունների որակի և մատչելիության բարելավումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների՝ նախադպրոցական կրթության մեջ ընդգրկման ավելացմանը:

Մասնագիտական կրթության ոլորտում կառավարության քաղաքականությունն ուղղված է աշխատաշուկայի պահանջներին միտված մասնագիտական կրթության և կրթական ծառայությունների մատուցման բարձր որակի ապահովմանը: Կազմավորվել է մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային խորհրդի կազմը:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտի հիմնական գերակայությունը Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործումն է, որը կապահովի հանրապետության բարձրագույն կրթության ինտեգրումը Եվրոպական միասնական կրթական համակարգին: Հայաստանում Բոլոնիայի սկզբունքների իրագործումն իրականացվում է՝ համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատված «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործման 2006-2010թթ. ժամանակացույցի»: Ստեղծվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամը»: Մշակվել է բարձրագույն մասնագիտական կրթության որակավորումների ազգային շրջանակի նախագիծը:

Գիտության ոլորտում իրականացվող քաղաքականությունն ուղղված է գիտության ոլորտում ինստիտուցիոնալ բարեփոխումներին, գիտության ֆինանսավորման ծավալների ավելացմանը, գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը, գիտական ներուժի վերարտադրությանը, գիտության երիտասարդացման միտվածությանը և գիտության ու տեխնոլոգիաների գերակա ուղությունների ձևավորմանը:

Վերջին տարիներին կրթությանն ուղղվող պետական ծախսերի դինամիկայում արձանագրվել են դրական տեղաշարժեր: Այսպես, 2006 թվականին պետական բյուջեով նախատեսված ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 2.53%-ը, 2007 թվականին՝ 2.84%, 2008 թվականին՝ 2.94%:

Սպորտ և երիտասարդության հարցեր

Սպորտի և երիտասարդության ոլորտում Կառավարության վարած պետական քաղաքականության իրականացումը ենթադրում է մի շարք հիմնական խնդիրների լուծում, որոնք ներկայումս գտնվում են ուշադրության կենտրոնում. զանգվածային ֆիզկուլտուրային-առողջարարական՝ համայնքային, տարածաշրջանային, մարզային և հանրապետական միջոցառումների անցկացում, հանրապետական փառատոների անցկացում, հաշմանդամների տարբեր խմբերի շրջանում ֆիզկուլտուրային-առողջարարական աշխատանքների հետագա բարելավում, հաշմանդամ մարզիկների, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին հանրապետության մարզիկների մասնակցության աջակցություն, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզչությանը և առողջ ապրելակերպի արմատավորման քարոզմանն ուղղված համալիր միջոցառումների և ծրագրերի իրականացում, ոլորտը կարգավորող իրավական ակտերի մշակման գործընթացի կազմակերպում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում բարեփոխումներ կատարելու, Եվրախորհրդի ծրագրերին, սպորտի եվրոպական խարտիայի պահանջներից բխող հիմնահարցերին, խնդիրներին ծանոթացնելու նպատակով հանրապետական, մարզային, համայնքային սեմինար-խորհրդակցությունների անցկացում, բնակչության՝ մասնավորապես ուսումնական հաստատություններում ֆիզիկական դաստիարակության անընդհատությանը, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության դաստիարակությանը նպաստող միջոցառումների անցկացում:

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության համակարգում գործում են 25 մանկապատանեկան մարզադպրոց և օլիմպիական հերթափոխի պետական մարզական 2 քոլեջ: Նշված մանկապատանեկան մարզադպրոցների, ինչպես նաև պետական աջակցություն ստացող Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի, «Հայաստան», «Սևան», «Դինամո», հասարակական կազմակերպությունների 23 մանկապատանեկան մարզադպրոցների հիմնական խնդիրներն են մատաղ սերնդի առողջության պահպանումն ու ամրապնդումը,

ընտրած մարզաձևերում մարզական հերթափոխի պատրաստումը, պարապողների մարզական ունակությունների կատարելագործումը, Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի համալրումը, միջազգային ասպարեզում վերջիններիս արդունավետ մրցունակության ապահովումը: Նշված խնդիրները, ինչպես նաև կրտսեր մասնագետների պատրաստման հարցերը կոչված են լուծելու օլիմպիական հերթափոխի պետական մարզական 2 քոլեջները:

Մարզադպրոցներում անհրաժեշտ պայմանների բարելավման նպատակով 2008 թվականին պետբյուջեի միջոցներով վերանորոգվել են հանրապետության 8 մարզադպրոցների մարզադահլիճներ: 2008 թվականին գույքային ծրագիր չի իրականացվել: Կառավարության քաղաքականության առաջնահերթ խնդիրը և ուղղությունն են համարվում մարզական հերթափոխի պատրաստման համակարգի պահպանումն ու զարգացումը, մատուցվող ծառայությունների բարելավումը, նրանց որակի և արդյունավետության բարձրացումը, ինչն իր հերթին կնպաստի երեխաների և պատանիների շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայականացման հետագա զարգացմանը և համակարգի կազմակերպություններում աշխատող մարզիչ-մանկավարժների ու ղեկավար անձնակազմի սոցիալական վիճակի բարելավմանը:

Օլիմպիական հերթափոխի քոլեջը եզակի նշանակություն ունեցող միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է, որը կոչված է հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցների լավագույն և հեռանկարային մարզիկների համար ապահովելու պայմաններ՝ մարզումները և կրթական գործընթացը համատեղելու, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի համար մասնագետներ պատրաստելու նպատակով: Քոլեջներում ուսուցումն իրականացվում է անվճար հիմունքներով: Քոլեջների սաները աշխարհի և Եվրոպայի 2008 թվականի առաջնություններում նվաճել են 2 ոսկե, 3 արծաթե, 3 բրոնզե մեդալ:

Մեծ նվաճումների սպորտի բնագավառում նախարարության իրականացրած քաղաքականությունն ուղղված է.

սպորտի բարձրագույն նվաճումների քաղաքականության ապահովմանը,

սպորտի զարգացման նպատակային ծրագրերի մշակմանն ու իրագործմանը,

մարզիչ-մանկավարժների վերապատրաստման աշխատանքների կազմակերպմանը,

օլիմպիական շարժման զարգացմանը, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի և մարզական ֆեդերացիաների գործունեության աջակցմանը,

մարզաձևերի զարգացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ամրապնդմանն ու զարգացմանը,

միջազգային, այդ թվում՝ սփյուռքի հետ կապերի ամրապնդմանը,

մարզաձևերի հավաքական թիմերի գիտամեթոդական աշխատանքների ապահովմանը,

միջպետական մարզական հարաբերությունների զարգացմանը:

2008 թվականին օլիմպիական մարզաձևերի ազգային ֆեդերացիաների և մարզական կազմակերպությունների հետ համագործակցության նպատակով անցկացվել են Հայաստանի Հանրապետության 78 առաջնություններ, որոնց մասնակցել են 5504 մարզիկներ: Աշխարհի և Եվրոպայի առաջնություններին, գավաթի խաղարկություններին և միջազգային մրցումներին նախապատրաստվելու նպատակով մարզաձևերի Հայաստանի Հանրապետության հավաքականներում ընդգրկված 3055 մարզիկների համար կազմակերպվել են 85 ուսումնամարզական հավաքներ, 85 միջազգային մրցաշարերին մասնակցել են 1550 մարզիկներ: Տարբեր մարզաձևերից ՀՀ հավաքական թիմերի 510 մարզիկներ մասնակցել են աշխարհի և Եվրոպայի 85 առաջնությունների՝ նվաճելով 108 մեդալ, որից՝ 27 ոսկե, 40 արծաթե, 41 բրոնզե: 2008 թվականի Պեկինի օլիմպիական խաղերին մասնակցել են ՀՀ 25 մարզիկներ, որոնցից 6-ը նվաճել են բրոնզե մեդալ: Ոչ օլիմպիական մարզաձևերից շախմատի 38-րդ օլիմպիադայում Հայաստանի հավաքականը դարձավ չեմպիոն:

Մասսայական և մանկապատանեկան սպորտի բնագավառում նախարարության իրականացրած քաղաքականությունն ուղղված է.

տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների մարզական ոլորտի աշխատանքների ակտիվացմանը,

մարզական ակտիվի ներուժի օգտագործմանը, մարզական միջոցառումներում գյուղական երիտասարդության ներգրավմանը,

հաշմանդամ-մարզիկների համար սպորտով զբաղվելու համապատասխան պայմանների ստեղծմանը:

Երիտասարդության ոլորտում պետական քաղաքականությունը ենթադրում է զարգացնել մարզերում իրականացվող երիտասարդական պետական քաղաքականությունը (մարզային երիտասարդական կենտրոնների գործունեության ապահովում և համայնքային երիտասարդական կենտրոնների ստեղծում, գյուղական և սահմանամերձ շրջանների երիտասարդության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում), բարձրացնել հասարակական, քաղաքական զարգացումներին նրանց մասնակցության աստիճանը, նպաստել երիտասարդության գործունեությունն ապահովող իրավական դաշտի զարգացմանը, երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային և գիտական մակարդակի բարձրացմանը, ազատ ժամանցի ակտիվ և նպատակային կազմակերպմանը, ուսումնասիրել առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները և բարելավել երիտասարդների կենսապայմանները, հայտնաբերել և խրախուսել տաղանդավոր երիտասարդներին, նպաստել երիտասարդության շրջանում հայրենասիրական դաստիարակության, քաղաքացիական գիտակցության բարձրացմանը, ակտիվացնել, զարգացնել համագործակցությունը միջազգային

երիտասարդական կառույցների հետ, ստեղծել պայմաններ երիտասարդությանը անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելու, նրանց լիակատար ինքնադրսևորման համար:

Էներգետիկա

Ընթացիկ տարում էներգետիկայի բնագավառի օրենսդրական դաշտի կատարելագործման ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ՀՀ կառավարության կողմից հաստատվել են «Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող ՀՀ կառավարության մի շարք որոշումներ,
- ՀՀ կառավարության կողմից հաստատվել են էներգետիկայի ոլորտներին վերաբերող թվով երեք տեխնիկական կանոնակարգեր նշված ոլորտների շահագործման անվտանգության աստիճանի բարձրացման նպատակով, իսկ չորսը դեռևս գտնվում են քննարկման փուլում:

Ատոմային էներգետիկայում ծավալված գործունեության հիմնական արդյունքներն են՝ ՀԱԷԿ-ի անվտանգության աստիճանի բարձրացման ուղղությամբ.

- «Հայկական ԱԷԿ» ՓԲԸ-ում ավարտվել են աշխատած միջուկային վառելիքի պահեստարանի կառուցման աշխատանքները՝ իրականացված «Հայհիդրոէներգաշին-ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից համաձայն ֆրանսիական «Կոջեմա Լոջեստիկ» ընկերության կողմից կատարված նախագծի:
- 2008 թվականի ընթացքում ՀԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկում ներդրվել են անվտանգության բարձրացման մի շարք միջոցառումներ: 2008 թվականի սեպտեմբերին Երևանում տեղի է ունեցել Հայկական ԱԷԿ-ի անվտագության բարձրացման միջոցառումների համար դոնոր երկրների կողմից հատկացվող օգնությունների ԱԷՄԳ-ի (Ատոմային էներգետիկայի միջազգային գործակալություն) համակարգող երրորդ նիստը: 2008 թվականի դեկտեմբերին տեղի է ունեցել ՀՀ նախագահին կից ատոմային էներգետիկայի անվտանգության խորհրդի նիստը:
- Հայկական ԱԷԿ-ի սեյսմիկ անվտանգության բարձրացման առաջնահերթ խնդիր է հանդիսանում կայանի սեյսմիկ վերագնահատումը: Ավարտված է կառուցվածքների սեյսմակայունության գնահատումը: Ավարտվել են Հայկական ԱԷԿ-ի սեյսմիկ անվտանգության հավանականային վերլուծության աշխատանքները: Անկախ կազմակերպության կողմից իրականացվել է կայանի սեյսմիկ շրջայց, որը կազմակերպվել է ԱԷՄԳ-ի կողմից: Շրջայցի արդյունքների հիման վրա ճշտվել են սեյսմիկ վերագնահատման աշխատանքների ծավալները և կազմվել է դրանց իրականացման ժամանակացույց:

- Հայտարարվել է մրցույթ Հայկական ԱԷԿ-ի 110/220կՎ բաց բաշխիչ ենթակայանի վերակառուցման համար:

ՀԱԷԿ-ի գործող բլոկները շահագործումից դուրս բերելու և նոր միջուկային էներգաբլոկի կառուցման նպատակով.

- Հայկական ԱԷԿ-ի կողմից տարվում են նախապատրաստական աշխատանքներ 2010թ. 1-ին եռամսյակում ԱԷՄԳ-ի OSART միսիայի պատշաճ մակարդակով անցկացման համար:
- Համաձայն 2007թ. հոկտեմբերի 21-ին ԱՄՆ ՄԶԳ (միջազգային զարգացման գործակալություն) հետ ստորագրված համաձայնագրի մշակվել են ՀՀ-ում «Նոր միջուկային էներգաբլոկի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորում» և «Միջուկային էներգաբլոկի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա» փաստաթղթերը:
- ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «Ատոմակայանի նոր բլոկի կառուցման ծրագրի իրականացման համար կառավարող ընկերության ընտրության միջազգային մրցույթ անցկացնելու մասին» փաստաթուղթը:
- ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային էներգաբլոկի(ների) կառուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:
- Հայտարարվել է մրցույթ Հայաստանում նախատեսվող նոր միջուկային էներգաբլոկի(ների) կառուցման հարթակի սեյսմիկ անվտանգության տեսակետից գնահատման համար:

Էլեկտրաէներգետիկայի ոլորտում իրականացվել են հետևյալ համակարգային նշանակության աշխատանքները՝

- Ընթանում են Իրան-Հայաստան 400կՎ լարման երրորդ էլեկտրահաղորդման գծի նախագծային աշխատանքները:
- Հայաստան-Վրաստան 400 կՎ նոր էլեկտրահաղորդման գծի կառուցման նախագծային աշխատանքների վերջին 10կմ հատվածի համար «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է մրցույթ, որի արդյունքները դեռևս չեն ամփոփվել: Վարկային համաձայանագիր կնքելու նպատակով KfW բանկի կողմից ուսումնասիրվում է ՖԻԽՏՆԵՐ ընկերության կողմից մշակված վերոհիշյալ բարձր լարման գծի շինարարավերականգնողական աշխատանքների տեխնիկա-տնտեսական հիմնավորումը: Հայկական մասում շինարարական աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2009-2010 թվականներին:
- Մեկնարկել են շինարարահավաքակցման աշխատանքները ՄՀՃԲ կողմից ֆինանսավորվող վարկային ծրագրերում, այդ թվում՝ «Երևանի ՋԷԿ-ում համակցված ցիկլով

շոգեգազային կայանի կառուցում» ծրագրով իրականացվել են հիմնական շինությունների հիմքերի բետոնապատման աշխատանքները, «Էլեկտրահաղորդման և բաշխիչ համակարգեր» ծրագրի 110 կՎ ենթակայանների և SCADA/կապի համակարգի բաղադրիչներում սկսվել են նախագծման աշխատանքները:

- Շարունակվում են Հրազդանի 5-րդ էներգաբլոկի վերակառուցմանն ուղղված նախապատրաստական գործողությունները, որոնք իրականացվում են «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ կողմից:

Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության ոլորտներում կատարված հիմնական աշխատանքներն են՝

- Հուլիսին ներկայացվել են «Հայաստանում կենսաէթանոլի արտադրության և յուրացման ներուժի և հեռանկարայնության գնահատում» ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքների երկրորդ փուլի արդյունքները:
- Դեկտեմբերին ներկայացվել են «Հայաստանում արդի արեգնակային ՖՎ (Ֆոտովոլտայիք) էներգետիկայի զարգացման օժանդակումը» ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքների երրորդ փուլի արդյունքները:
- Տարվել են բանակցություններ ՀԲ-ի փորձագետների հետ, որոնք ուղղված էին հիմնավորելու առաջարկվող երկրաջերմային հեռանկար ունեցող տեղամասերը: Լրացուցիչ համալրված են երկրաբանական և երկրաջերմային տվյալները՝ Գեղարքունիքի մարզում գտնվող Եռաթումբ և Գլիձոր հեռանկարային երկրաջերմային տեղամասերի համար: Վերջիններս էլ հանդիսացել են ՀԲ-ի կողմից ուսումնասիրության օբյեկտներ:
- Ավարտվել է ՀՀ ՓՀԷԿ-երի նորացված և ճշգրտված սխեմայի մշակման գործընթացը: Սխեման ներկայացվել է ՀՀ կառավարության հաստատմանը:
- ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվել է վերականգնվող էներգետիկայի ոլորտի զարգացման համար առկա խոչընդոտներն ուսումնասիրելու և համապատասխան լուծումներ առաջարկելու նպատակով միջգերատեսչական հանձնաժողով:
- Իրականացվել է «Վերականգնվող էներգետիկայի շաբաթը Հայաստանում» կոնֆերանսը և միջոցառումների շարքը:
- Հաջողությամբ շարունակվում է փոքր ՀԷԿ-երի վարկավորման գործընթացը: Գերմանական KfW բանկի աջակցությամբ ստեղծված «Փոքր ՀԷԿ-երի զարգացման հիմնադրամի» կողմից վարկավորվել են թվով 11 ՓՀԷԿ-եր, իսկ ՀԲ-ի ֆինանսավորմամբ «Էներգախնայողության և վերականգնվող հիմնադրամի» կողմից՝ թվով 23 ՓՀԷԿ-եր:
- ՀՀ կառավարության և ԻԻՀ կառավարության միջև Արաքս գետի հիդրոէներգետիկ ներուժի ուսումնասիրության նախագծի շրջանակներում ստորագրվել է ՀՀ և ԻԻՀ սահմանային երթևեկության դյուրացման կանոնակարգը և ներկայացվել ՀՀ ԱԺ վավերացմանը:

- Եվրամիության հետ կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագրի իրականացման 2006-2009թթ. Ազգային ծրագրի համաձայն մշակվել է «Հայաստանի Հանրապետության էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագրի կատարմանն ուղղված ՀՀ կառավարության միջոցառումների ցանկը»:

Գազամատակարարման և գազասպառման ոլորտում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- Ավարտվել են «Մեղրի-Քաջարան» d=700 մմ գազատարի միացման աշխատանքները «Կապան-Քաջարան» d=500 մմ գործող գազատարի հետ:
- 2008 թվականի ընթացքում գազաֆիկացվել և վերականգնվել է թվով 61168 բաժանորդների գազամատակարարումը (որից 59753-ը՝ բնակիչ բաժանորդների), վերագործարկվել են 912 կմ գազաբաշխիչ ցանցի գազատար, 296 գազակարգավորիչ կետեր, էլեկտրաքիմիական պաշտպանության 66 կայաններ, թողարկվել են 149 անհատական ճնշման կարգավորիչներ, կատարվել են անհրաժեշտ այլ աշխատանքներ:

2008 թվականի ընթացքում էներգետիկ ոլորտի արտաքին քաղաքականության բնագավառում իրականացված միջոցառումներից են.

- ՀՀ միանալը «Ռուսաստանի Դաշնության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև ուրանի հարստացման միջազգային կենտրոնի ստեղծման մասին» համաձայնագրին:
- «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2007-2008 թվականների համագործակցության մասին» համաձայնագրի ստորագրումը Երևանում (համաձայնագիրը վավերացվել է ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2008թ. հունիսի 18-ին): Այդ համաձայնագրով KfW բանկը պատրաստակամություն է հայտնել ՀՀ կառավարությանը հատկացնել 64 մլն եվրո գումարի աջակցություն՝ Գյումրի-2 բարձրավոլտ ենթակայանի վերակառուցման, Վրաստան 400կՎ լարման օդային գծի հայկական մասի կառուցման և Որոտան ՀԷԿ-երի համակարգի վերազինման ծրագրերի համար:
- ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և ՄՀՃԲ միջև «Հայաստանի Հանրապետության կառավարության և միջազգային համագործակցության Ճապոնիայի բանկի միջև Երևանի համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի նախագծի համար ARM-P2 վարկային համաձայնագրում փոփոխություն կատարելու մասին» վարկային համաձայնագրի կնքումը, որով Ճապոնիայի կողմից տրամադրվող վարկն ավելացվեց 10491 մլն ճապոնական իենով:

- “UNIT INVESTMENT S. A.” բելգիական ընկերության այցը ՀՀ: Արդյունքում ստորագրվել են համագործակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր և էլեկտրաէներգիայի առք ու վաճառքի վերաբերյալ համաձայնագիր:
- Մշակվել է էներգետիկ ոլորտում ՍԾՏՀ հետ համագործակցության վերաբերյալ առաջարկությունների նախագիծ:
- «Հայ-ռուսական լեռնահանքային ընկերություն» ՓԲԸ բացման պաշտոնական արարողությունը:
- ԱԷՄԳ շրջանակներում Երևանում կայացած ՀԱԷԿ-ի գործող 2-րդ էներգաբլոկի անվտանգության բարձրացման հարցերով դոնորների երրորդ կոնֆերանսը:
- ՆԱՏՕ-ԵԱԳԽ շրջանակներում «Էներգետիկ անվտանգությունը համագործակցության միջոցով» խորագրով միջազգային սեմինարի անցկացումը Երևանում:
- Հայաստանի Հանրապետության միացումը Համընդհանուր ատոմային էներգիայի գործակալությանը (ՀԱԷԳ) Փարիզում կայացած հերթական հանդիպման ժամանակ:
- 2008 թվականի ընթացքում ԵՄ էներգետիկ համայնքի պայմանագրին Հայաստանի միացումն ապահովող միջոցառումների իրականացումը: ՀՀ միացումը նշված պայմանագրին ակնկալվում է մինչև 2009թ. վերջը:
- հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի 8-րդ նիստի անցկացումը Թեհրանում և այդ շրջանակներում Իրան-Հայաստան գազամուղի, Իրան-Հայաստան 400 կՎ էլեկտրահաղորդման երրորդ գծի, Մեղրի ՀԷԿ-ի ծրագրերի հետ կապված խնդիրների, նավթամթերքների և Հայաստանի տարածքում նավթազտարանի կառուցման նպատակով Հայաստան-Ռուսաստան-Իրան եռակողմ բանակցությունների և այլ բնագավառներում ապագա համագործակցության հարցերի քննարկումները: 2008թ. հուլիսի 9-ին ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և ԻԻՀ նավթավերամշակման և նավթամթերքների բաշխման ազգային ընկերության միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր՝ Իրանից Հայաստան նավթամթերքների փոխադրման խողովակաշար և Հայաստանում համապատասխան տերմինալ կառուցելու վերաբերյալ:
- Բանակցություններ են վարվել Հայաստանում իրականացվող ներդրումային ծրագրերի (Հայաստանում նոր միջուկային բլոկի կառուցման նախագիծ, Լոռիբերդ ՀԷԿ-ի նախագիծ, հիդրոէներգետիկայի և վերականգնվող էներգետիկայի զարգացման ծրագրեր) հանդեպ հետաքրքրություն արտահայտած մի շարք երկրների պետական և մասնավոր ընկերությունների ներկայացուցիչների հետ (ռուսական, հունական, չեխական, լեհական, ամերիկյան, իրեական, հնդկական և այլն):

<u>Ջրային տնտեսություն</u>

2008 թվականի ընթացքում ջրային տնտեսության ոլորտում ՀՀ կառավարության գործունեության հիմքում ընկած էին ՀՀ ջրային օրենսգրքի, ջրի ազգային ծրագրի և ջրի ազգային քաղաքականության մասին օրենքների հիմնադրույթները, ինչպես նաև ՀՀ կառավարության ջրային ոլորտի բարեփոխումներին նվիրված որոշումները (այդ թվում՝ Աղքատության հաղթահարման ռազմավարական և պետական միջնաժամկետ ծրագրերը), գերակա խնդիրներն ու միջոցառումները, որոնցով հաստատված են համակարգի հիմնական ծրագրային ուղղվածությունները:

Հաշվետու տարում շարունակվել են աշխատանքները՝ համակարգում կառուցվածքային փոփոխությունների, հաշվառման համակարգի ներդրման ու կատարելագործման, ջրամատակարարման տնողության ավելացման ու ջրի որակի բարելավման, մասնավոր կառավարման պայմանագրերի վերահսկման, մատակարարված ջրի դիմաց վճարների հավաքման մակարդակի բարձրացման, համակարգում կորուստների նվազեցման և ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման, ջրաչափական սարքերի տեղադրման, բյուջետային և վարկային միջոցների արդյունավետ օգտագործման և նոր վարկային ու դրամաշնորհային միջոցների ներգրավման, ինչպես նաև այլ ուղղություններով:

Ջրային տնտեսության ոլորտում 2008 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ հիմնական աշխատանքները:

Մասնավոր կառավարման պայմանագրերի (վարձակալության պայմանագիր՝ ֆրանսիական «General Deseau» կազմակերպության հետ և գործադիր մարմնի լիազորությունների փոխանցման պայմանագիր՝ ֆրանսիական Սաուր կազմակերպության հետ) շրջանակներում ապահովվել է «Երևան Ջուր» և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների արդյունավետ գործունեությունը, ինչպես նաև նշված ընկերությունների մասով ապահովվել է Համաշխարհային բանկի վարկային ծրագրերի համապատասխան չափաբաժիններով իրականացումը:

Իրականացվել է Լոռու և Շիրակի մարզերում KfW բանկի ներդրումային ծրագրերի իրականացման գործընթացը, ապահովվել է «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Շիրակ-ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունների բնականոն գործունեությունը:

«Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր-Ակունք» ՓԲԸ-ների կառավարչի ընտրության համար հաստատվել է միջազգային մրցույթ անցկացնելու մրցութային հրավերի փաթեթը, սահմանված կարգով ապահովվել են ծանուցման և նախաորակավորման գործընթացները: Մրցույթի հայտերի գնահատումը նախատեսվում է իրականացնել 2009 թվականին:

Արդյունավետ է ճանաչվել Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ իրականացվող վարկային համաձայնագիրը (ընդհանուր արժեքը՝ 45.0 մլն ԱՄՆ դոլար վարկ, որից ՀՀ կառավարության մասնակցությունը՝ 9.0 մլն ԱՄՆ դոլար), արդեն իսկ մրցութային կարգով ընտրվել են համապատասխան խորհրդատվական և շինարարական առանձին աշխատանքներ իրականացնող կազմակերպություններ:

Արդյունավետ է ճանաչվել Արփա-Սևան թունելի անխափան և անվտանգ շահագործման ու նրա տեխնիկական վիճակի բարելավման համար Աբու-Դաբիի վարկային ծրագիրը՝ 10 մլն ԱՄՆ դոլար արժեքով: 2009 թվականին նախատեսվում է ծրագրի իրականացման համար մրցութային կարգով ներգրավել համապատասխան խորհրդատվական և շինարարական կազմակերպություններ: Միաժամանակ, Արփա-Սևան թունելի անխափան և անվտանգ շահագործման ու նրա տեխնիկական վիճակի բարելավման նպատակով 2008 թվականին ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ թունելում իրականացվել են 1.3 մլրդ դրամի շինարարական աշխատանքներ:

Արդյունավետ է ճանաչվել Ֆրանսիայի կառավարությունից Երևան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի (այդ թվում՝ «Աէրացիա» կայանի վերագործարկման) նպատակով 26.3 մլն եվրոյի չափով (որից 2.4 մլն եվրո՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորում) արտոնյալ վարկը և սկսվել է խորհրդատուի ընտրության մրցութային գործընթացը: 2009 թվականին նախատեսվում է մրցութային կարգով ընտրել խորհրդատվական կազմակերպություն, որի գործունեության արդյունքներով կսկսվեն նաև շինարարական աշխատանքները:

Արդյունավետ է ճանաչվել Եվրոպական վերականգնման և զարգացման բանկի (EBRD) ֆինանսավորմամբ Սևանի ջրհավաք ավազանի բնակավայրերում կեղտաջրերի մաքրման կայանների և ջրահեռացման ցանցերի կառուցման ներդրումային ծրագիրը: Արդեն իսկ մրցութային կարգով ընտրվել է համապատասխան խորհրդատվական կազմակերպություն, որի գործունեության արդյունքներով կսկսվեն նաև շինարարական աշխատանքները:

2008 թվականի տարեվերջին երկու տարի ժամկետով երկարաձգվել է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի մասնավոր կառավարման պայմանագիրը SAUR-ի հետ: Միաժամանակ, համապատասխան խորհրդատվական կազմակերպության աջակցությամբ իրականացվել են մասնավոր հատվածի ներգրավմամբ կառավարման հետագա հնարավոր ձևերի կիրառման ուսումնասիրություններ՝ պայմանագրի ավարտից հետո համապատասխան կառավարման մոդելի կիրառման նպատակահարմարության ընտրության նպատակով:

Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) ֆինանսավորման շրջանակներում իրականացվել է «Գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման հետազոտության

վերջնական հաշվետվությունը: Ծրագրով ուսումնասիրվել է ՀՀ Արագածոտնի, ՀՀ Գեղարքունիքի, ՀՀ Շիրակի և ՀՀ Տավուշի մարզերի շուրջ 153 գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վիճակը, և առաջարկվել են ներդրումների ներգրավման և բարեփոխումների ինստիտուցիոնալ լուծումներ: Ընտրվել են 2 համայնքներ (ՀՀ Արագածոտնի մարզի Ափնագյուղ և ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճավան համայնքներ), որտեղ իրականացվել են փորձնական ներդրումային ծրագրեր:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսավորման շրջանակներում ապահովվել է Արտաշատ քաղաքի և 27 շրջակա գյուղերի ջրամատակարարման համակարգերի բարելավման ծրագրերի իրականացման ուղղություններով համապատասխան աշխատանքների իրականացումը:

Համակարգի կազմակերպությունների հիմնական գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ իրագործվում են հաստատված ծրագրերը՝ տալով զգալի դրական տեղաշարժ: Ընդ որում, միայն հավաքագրումների գծով 2008 թվականի համակարգի գանձումը կազմել է շուրջ 15.93 մլրդ դրամ՝ 2007 թվականի 14.55 մլրդ դրամի փոխարեն կամ ավել է գանձվել շուրջ 1.38 մլրդ դրամ: Խմելու ջրի մասով գանձվել է շուրջ 12.49 մլրդ դրամ՝ 2007 թվականի 11.72 մլրդ դրամի դիմաց կամ ավել է գանձվել շուրջ 770 մլն դրամ, իսկ ոռոգման ոլորտում գանձվել է 3.44 մլրդ դրամ՝ 2007 թվականի 2.83 մլրդ դրամի դիմաց կամ ավել է գանձվել շուրջ 610 մլն դրամ:

Ոռոգման ոլորտում իրականացվել է կառուցվածքային փոփոխություն և «Որոտան-Արփա-ջրառ» ՓԲԸ-ն միացվել է «Սևան-Հրազդանյան-ջրառ» ՓԲԸ-ին: Միաժամանակ ոռոգում ջրառ իրականացնող «Սևան-Հրազդանյան-ջրառ», «Ախուրյան-Արաքս-ջրառ» և «Դեբետ-Աղստև-ջրառ» ՓԲԸ-ների, ինչպես նաև ոռոգման ջուր մատակարարող 52 ջրօգտագործողների ընկերությունների գործունեությունների արդյունքներով շոգ և սակավաջուր եղանակային պայմաններում ապահովվել է կայուն ջրամատակարարում և, չնայած առկա որոշակի խնդիրներին, ընկերություններն ունեցել են ֆինանսական կայուն վիճակ:

Համակարգի կազմակերպություններով ՀՀ պետական բյուջե են փոխանցվել (առանց ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով ԱԱՀ-ի գծով օրենքով նախատեսված սուբսիդիաների կամ փոխհատուցումների) շուրջ 4.5 մլրդ դրամի հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ, որը 2007 թվականի համեմատ ավել է շուրջ 360 մլն դրամի չափով: Ընդ որում, եթե խմելու ջրի ոլորտի բոլոր կազմակերպությունները նախկինում սուբսիդավորվում էին, ապա ներկայումս «Երևան Ջուր» ՓԲԸ-ն ոչ միայն չի սուբսիդավորվում, այլև ՀՀ պետական բյուջե է վճարել շուրջ 2.25 մլրդ դրամ, այդ թվում՝ մարել է Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման վարկային առաջին ծրագրի վարկից և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսներից համապատասխան գումարներ:

2008 թվականին Սևանա լճից (առանց Մարտունու տարածաշրջանի պոմպակայաններով իրականացված ջրառը հաշվի առնելու) բաց է թողնվել 302.28 մլն մ^3 ջուր: Ընդ որում, բնակլիմայական և շոգ եղանակային պայմաններից ելնելով՝ 2008 թվականի Սևանա լճից ջրառի իրականացման առավելագույն չափաքանակ օրենքով սահմանվել է մինչև 360 մլն մ^3: Սևանա լիճ է տեղափոխվել 190.66 մլն մ^3 ջուր, որը նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցում է 4.3 մլն մ^3-ով: 2008 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Սևանա լճի մակարդակը կազմել է 1898.84 մ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցում է 5 սանտիմետրով:

Աշխատանքներ են իրականացվել կոլեկտորադրենաժային ցանցի պահպանման, շահագործման և գրունտային ջրերի մակարդակների ու որակի որոշման գծով, կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքների, «Որոտան-Արփա-Սևան» թունելների շահագործման և պահպանման, բյուջետային միջոցների շրջանակներում նախատեսված խմելու ջրի հիմնանորոգման, ինչպես նաև ոռոգման համակարգերի հիմնանորոգման աշխատանքների իրականացման ուղղություններով: Վերջինիս մասով հիմնականում իրականացվել են համակարգերն աշխատունակ վիճակում պահելու և անվտանգության ապահովման, առավել վթարավտանգ հատվածներում հիմնանորոգման աշխատանքներ, ինչպես նաև իրականացվել են պոմպակայանների, ջրանցքների, ջրամբարների վերանորոգման և վարչական շենքերի կառուցման ու վերանորոգման աշխատանքներ:

Շարունակվել է բարելավվել հաշվառման համակարգը, կատարվել են ջրամատակարար կազմակերպությունների միջև գույքային հարաբերությունների և պարտավորությունների ճշգրտումներ, ինչպես նաև իրականացվել են կանոնադրությամբ վերապահված այլ լիազորություններ: Միաժամանակ, համակարգի խմելու ջուր մատակարարող կազմակերպությունների սպասարկման տարածքում բաժանորդների մոտ ապահովվել է նաև ջրաչափական սարքերի տեղադրման գործընթացը, որը 2007 թվականի համեմատ ավել է 16.2 հազար հատով:

Աջակցություն է ցուցաբերվել «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի ոռոգման ոլորտին ուղղված աշխատանքների իրականացմանը:

Համակարգում գործող բյուջետային և վարկային ներդրումային ծրագրերի շրջանակներում իրականացվել են մեծածավալ շինարարական աշխատանքներ: Դրանցից կարելի է առանձնացնել հիմնական և օժանդակ կառույցների վերանորոգման, ջրամբարների մաքրման, նորոգման և կառուցման, ջրամատակարարման ցանցերի գոտիավորման, ջրագծերի և կոյուղագծերի կառուցման ու վերակառուցման, օրվա կարգավորիչ ջրամբարների կառուցման, պոմպակայանների և վարչական շենքերի վերանորոգման, ասֆալտապատման

աշխատանքները: Ծրագրերի շրջանակներում իրականացվել են նաև խորհրդատվական, նախագծման, գնումների, տեխնիկական վերահսկման, աջակցության և այլ աշխատանքներ ու ծառայություններ:

Տրանսպորտ և կապ

2008 թվականին տրանսպորտի և կապի բնագավառում ՀՀ կառավարության գերակա խնդիրը երկաթուղային տրանսպորտի ոլորտը կարգավորող իրավական դաշտի ստեղծումն էր: Նախատեսված 8 միջոցառումները կատարվել են ժամանակին, որոնցից 5-ի վերաբերյալ ընդունվել է ՀՀ կառավարության համապատասխան որոշում: Բացի դրանից, զգալի աշխատանքներ են տարվել ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի կատարելագործման ուղղությամբ: Մշակվել են ՀՀ օրենքի 7 նախագծեր, որոնցից մեկն ընդունվել է, ՀՀ կառավարության որոշման 56 նախագծեր, որոնցից 16-ն ընդունվել են, ընդունվել են նաև ՀՀ վարչապետի 2 որոշումներ և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 3 նորմատիվային հրամաններ:

Երկաթուղու կառուցվածքային ծրագրի նախապատրաստման շրջանակներում նախապատրաստվել են երկաթուղու կոնցեսիայի միջազգային մրցույթի պայմանները և կոնցեսիոն պայմանագրի նախագիծը, իրականացվել է մրցույթը, կատարվել է մրցութային առաջարկների գնահատում, վարվել են բանակցություններ պայմանագրի վերջնական տարբերակի վերաբերյալ, մշակվել են երկաթուղու երեք վթարային կամուրջների վերանորոգման նախագծերը և մրցութային փաստաթղթերը, ինչպես նաև Զամառլու կամրջի վերանորոգման հնարավոր երկու սցենարների՝ գործող կամուրջի վերակառուցման ու ուժեղացման և նոր կամրջի կառուցման տեխնիկա-տնտեսական հաշվարկները, իրականացվել են երկաթուղու հողատարածքների ուսումնասիրության և քարտեզագրական, երկաթուղու բնապահպանական ելակետային ուսումնասիրության, ինչպես նաև երկաթուղու կոնցեսիայի իրականացման համար օպտիմալացման ծրագրի մշակման և սոցիալական ազդեցության գնահատման աշխատանքներ:

ՀՀ կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 12-ի «Երկաթուղային տրանսպորտի ոլորտի բարեփոխումների առաջնահերթ միջոցառումների մասին» N 1497-Ն որոշմամբ հաստատված «Հայկական երկաթուղու կառուցվածքային բարեփոխումների ծրագրին» համապատասխան 2007 թվականին սկսվել և 2008 թվականի հունվարին ամփոփվել է Հայկական երկաթուղու համակարգը կոնցեսիոն պայմանագրով փոխանցելու մրցութային գործընթացը՝ նպատակ ունենալով համապատասխան ներդրումների ներգրավմամբ վերազինել երկաթուղու շարժակազմը և զարգացնել ենթակառուցվածքները, ինչը կապահովի թե՛ անվտանգ

շահագործում և բարձրակարգ սպասարկում, թե՛ երկաթուղու գործունեության արդյունավետության բարձրացում:

2008 թվականին ապահովվել են փոխադրումների պահանջարկի լիակատար բավարարումը, բեռների անկորուստ փոխադրումները, շարժակազմի օգտագործման արդյունավետության բարձրացումը, տրանսպորտային սխեմաների արդյունավետ օգտագործումը, մրցունակության բարձրացումը, որոնցով պայմաններ են ստեղծվել հետագա դինամիկ աճի համար:

Հանրապետությունում պետական ավտոտրանսպորտային կազմակերպությունների մասնավորեցման և այս ոլորտում մանր ու միջին բիզնեսով զբաղվող ընկերությունների աճի պայմաններում ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում կարևորվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կարգավորիչ և վերահսկողական գործառույթը՝ օրենսդրական և նորմատիվային համապատասխան դաշտի ստեղծումը, համապատասխան մրցույթների կազմակերպումը և օրենքով սահմանված կարգով պետական վերահսկողության իրականացումը:

Տրանսպորտային համակարգն ամբողջությամբ վերահսկելի դարձնելու ուղղությամբ որոշակի աշխատանքներ է իրականացրել անօրինական ուղևորափոխադրումների և երթուղիների բացահայտման ու խախտումների վերացման ուղղությամբ:

Նախապատրաստվել է Երևանում երթևեկության կառավարման բարելավման և հասարակական տրանսպորտի զարգացման և բարեփոխումների համալիր երկփուլանի ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է Երևանում ներդնել և շահագործել միջազգայնորեն ճանաչված լուսանշանների համակարգ, որն ազդանշանների բազմառեժիմ աշխատանքի կոորդինացման շնորհիվ կապահովի օրվա ընթացքում տարբեր ինտենսիվության երթևեկության արդյունավետ կառավարումը և խցանումների նվազեցումը, երթևեկության ճարտարագիտության (երթևեկության կառավարման և ճանապարհների կահավորման) նոր սխեմաներ, որոնք կնպաստեն գործող ճանապարհային ցանցի թողունակության բարձրացմանը և երթևեկության մասնակիցների՝ առաջին հերթին հետիոտների անվտանգության ապահովմանը (հետիոտների անվտանգության կղզյակների և անցումների կառուցում), վերգետնյա ավտոկայանատեղերի կառավարման և շահագործման միջազգային չափանիշներին համապատասխանող համակարգ՝ մասնավոր ներդրումների հաշվին (պետական-մասնավոր համագործակցության մեխանիզմի միջոցով), ինչպես նաև ներդնել Երևանի մետրոպոլիտենի օգտագործումը բարձրացնելու և մեծ տեղատարողությամբ ավտոբուսների տրամադրումը խթանելու նպատակով գործող երթուղային ցանցի վերակազմավորում՝ երթուղիների խոշորացման և կոնսոլիդացման ու երթուղիների երկարաժամկետ (մինչև 12 տարի) սպասարկման պայմանագրերի (կոնցեսիաների) կնքման

միջոցով մեծ տեղատարողունակությամբ մագիստրալ ավտոբուսային ու տրոլեյբուսային և դրանց սնուցող միջին և փոքր տեղատարողունակությամբ ավտոբուսային երթուղային ցանց: Նշված ծրագիրը հնարավորություն կտա ներդնել երթուղիների և տոմսերի ինտեգրված համակարգ, որն ուղևորներին հնարավորություն կընձեռի նույն տոմսով փոխադրվել ավտոբուսներով, տրոլեյբուսներով ու մետրոյով:

Կապի և էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում 2008 թվականի ընթացքում ապահովվել է հանրապետության տնտեսության և բնակչության պահանջարկը: Մեծ ուշադրություն է դարձվել տեղեկատվայնացման ոլորտին: Հեռուստատեսության և ռադիոյի հեռարձակման ոլորտում իրականացվող բարեփոխումներն ուղղված են հեռարձակվող ալիքների ավելացմանը, երկրի բնակչության համար հեռուստաալիքների առավելագույն հասանելիության ապահովմանը, սփռման գործող ցանցի արդիականացմանը: Բարելավվել և ընդլայնվել է ինչպես հայկական, այնպես էլ արտասահմանյան հեռուստառադիոծրագրերի հեռարձակումը:

Իրականացվել են Հայաստանի Հանրապետության տարածքում ռադիոյի և հեռուստատեսության ծրագրերի հեռարձակման թվային համակարգի ներդրման հետ առնչվող, «Էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի պահպանման մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման աշխատանքները:

Իրականացվել են մի շարք իրավական ակտերի մշակման աշխատանքներ, այդ թվում՝ «Փոստային կապի ծառայությունների մատուցման կանոնները հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում, «Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի լրամշակում:

Իրականացվել են աշխատանքներ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում հանրային հեռուստածրագրի (Հ1) և հանրային ռադիոծրագրի հեռարձակման և որակի բարելավման ապահովման համար: Այդ նպատակով մարզերում վերգետնյա հեռարձակման համակարգերով են փոխարինվել արբանյակային հեռարձակման համակարգերը, և կառուցվել են վերգետնյա հեռարձակման ռելեային համակարգեր, որով ապահովվել է Հայաստանի Հանրապետության գրեթե ողջ տարածքի որակյալ հեռարձակման ծածկույթ:

Տեղեկատվություն փնտրելու, ստանալու, փոխանցելու, արտադրելու, տարածելու իրավունքի իրականացման, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման և տեղեկատվության պաշտպանության ապահովման ընթացքում առաջացող հարաբերությունները կարգավորելու նպատակով մշակվել է «Տեղեկատվության,

տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Տեղեկատվական հասարակության կայացմանն առնչվող խնդիրները, նպատակները և դրանց լուծման ուղղությունները ամրագրելու նպատակով մշակվել է Հայաստանի Հանրապետության կառավարության «Տեղեկատվական հասարակության ձևավորմանն ուղղված Ժնևյան գործողությունների ծրագրից բխող ազգային հայեցակարգը հաստատելու մասին» որոշման նախագիծը:

2008 թվականին իրականացվել է «Սևանի ավազանի բնակավայրերում, Դիլիջանում, Ջերմուկում հեռուստահաղորդումների սփռումն ապահովող միջոցառումների» ծրագիրը:

2008 թվականին զգալի աշխատանքներ են տարվել բջջային կապի երրորդ օպերատորի մուտքը հայաստանյան շուկա ապահովելու ուղղությամբ: 2008 նոյեմբերի 7-ին բջջային կապի երրորդ օպերատորի գործունեության լիցենզիա և ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն տրամադրվեց ևս մեկ՝ ֆրանսիական «Օրանժ» ընկերությանը: Վերջինս Հայաստանում գրանցել է տեղական՝ «ՖՏԱ Տելեկոմ» ընկերությունը և պարտավորվել առաջիկա երկու տարիների ընթացքում բջջային ցանցի (GSM) ծածկույթ ապահովել Երևանում և հանրապետության 42 քաղաքաներում:

Իրականացվել են «Հայաստանի Հանրապետության հաճախականությունների բաշխումների աղյուսակի» նախնական և վերջնական տարբերակի մշակման աշխատանքները:

2008 թվականին զգալի աշխատանք է կատարվել տրանսպորտի և կապի ոլորտներում տարբեր երկրների և միջազգային կազմակերպությունների հետ փոխշահավետ ու համակարգված համագործակցության կազմակերպման ուղղությամբ: Մասնավորապես՝ աշխատանքներ են տարվել Հայաստան-Իրան երկաթգծի կառուցման ուղղությամբ, նախապատրաստվել են տրանսպորտի և կապի բնագավառին առնչվող շուրջ 11 միջկառավարական և միջգերատեսչական համաձայնագրերի նախագծեր Եվրոպական և ԱՊՀ պետությունների հետ:

Քաղաքաշինություն

Տարածական պլանավորում, ճարտարապետություն

Կառավարության գործունեության կարևորագույն խնդիրներից մեկը տարածական պլանավորման միջոցով բարենպաստ կենսամիջավայրի ձևավորման և կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումն է: 2008 թվականին մշակվել և հաստատվել է «Սևան ազգային պարկի և դրան հարող տարածքներում հողամասերի վարձակալության, կառուցապատման իրավունքի տրամադրման և քաղաքաշինական գործունեության իրականացման մասին» ՀՀ կառավարության որոշումը:

ՀՀ կառավարության 2008թ. հունիսի 15-ի N 642-Ա որոշմամբ հաստատվել է «Գյումրի քաղաքի պատմամշակութային և քաղաքաշինական միջավայրի վերականգնման ու զարգացման (Կումայրի) ծրագիրը», համաձայն որի կազմակերպվել է շինարարական նոր տեխնոլոգիաների օգտագործմամբ կառուցվող անհատական բնակելի տների նախագծային առաջարկների մրցույթ:

Մշակվել են Հայաստանի Հանրապետությունում համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և գոտիավորման նախագծերի մշակման և հաստատման գործընթացի վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով ապահովվածության գույքագրման արդյունքները և անհրաժեշտ ֆինանսական միջոցների հաշվարկ-գնահատականը:

Կազմակերպվել և կայացել են Գյումրի քաղաքի Անի և Մուշ-2 թաղամասերում առնվազն 2300 բնակարանների և սպասարկման օբյեկտների, ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան գյուղում՝ 182 բնակարանների և սպասարկման օբյեկտների, ՀՀ Շիրակի մարզի 10 գյուղական բնակավայրերում առնվազն 226 անհատական բնակելի տների, ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքում՝ առնվազն 354 բնակարանների և սպասարկման օբյեկտների և ՀՀ Լոռու մարզի 24 գյուղական բնակավայրերում առնվազն 1821 անհատական բնակելի տների կառուցման մրցույթները:

Ստեղծվել է կառուցապատման գործընթացներն իրականացնելիս տեխնիկական պայմանների ստացման «Մեկ պատուհանի» համակարգի կիրառման նպատակով միջգերատեսչական աշխատանքային խումբ, որի աշխատանքի արդյունքում նախապատրաստվել են համակարգի ներդրման գործընթացի իրականացմանն ուղղված առաջարկություններ, որոնք սահմանված կարգով ներկայացվել են ՀՀ վարչապետին:

ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի նոյեմբերի 11-ի N240 հրամանով ստեղծվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության Քաղաքաշինական Խորհուրդը:

ՀՀ վարչապետի հանձնարարականի համաձայն ներկայացվել է ՀՀ Սփյուռքի և ՀՀ Արդարադատության նախարարությունների վարչական շենքերի կառուցման վերաբերյալ առաջարկությունը:

Կազմակերպվել են «Ճարտարապետությունը՝ կառույցից դուրս» կարգախոսով 2008 թվականի սեպտեմբերի 14-ից նոյեմբերի 22-ը Վենետիկում կայանալիք XI-րդ Միջազգային ճարտարապետական Բիենալեին Հայաստանի մասնակցության հետ կապված հայկական տաղավարի ձևավորման և կազմակերպչական աշխատանքները:

Շարունակվել է իրականացնել քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի (ՆՏՓ) միասնական համակարգի ստեղծման գործընթացը, գործող

քաղաքաշինական նորմերը եվրոպական ստանդարտներին համապատասխանության ուղղությամբ տարվող աշխատանքները:

ԱՊՀ շրջանակներում ապահովվել է մասնակցությունը շինարարության բնագավառի միջպետական տեխնիկական նորմավորման և ստանդարտացման 2008 թվականի ծրագրի ձևավորմանը, միջպետական ՆՏՓ-երի մշակմանը: Իրականացվել է բնագավառի մշակված միջպետական թվով 9 շինարարական նորմերի և 2 շինարարական կանոնների քննարկման, 17 միջպետական ստանդարտների փորձաքննության և 10 միջպետական ստանդարտների ընդունման և գործարկման ժամկետը սահմանելու գործընթացը:

Շարունակվել է համագործակցությունը Եվրոպայի Խորհրդի և ԱՊՀ անդամ երկրների համապատասխան կառույցների հետ, մասնավորապես՝ 2008 թվականի հոկտեմբերի 13-14-ը Երևանում կայացել է «Տարածական պլանավորում և լանդշաֆտ» թեմայով միջազգային գիտաժողովը և Ավագ պաշտոնյաների կոմիտեի ընդլայնված օպերատիվ խմբի 88-րդ նիստը՝ Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների տարածական պլանավորման համար պատասխանատու նախարարների եվրոպական կոնֆերանսի (CEMAT) հետ համագործակցության շրջանակներում:

Շինարարություն, գնագոյացում

Իրականացվել են ոլորտի ընդհանուր ռազմավարության և հեռանկարային ծրագրերի մշակման աշխատանքները: Իրականացվել է ՀՀ կառավարության 2008 թվականի «ՀՀ կառավարության 2008-2012թթ. գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» հուլիսի 24-ի թիվ 878-Ն որոշմամբ սահմանված միջոցառումների ցանկում ընդգրկված՝ «Կրթական և մշակութային օբյեկտների կառուցման, հիմնանորոգման և արդիականացման համալիր ծրագրի» առաջնային փուլը (ՀՀ մարզպետարանների կողմից տրամադրված տեղեկատվության ճշգրտում): Մշակվել է «Շինարարության գնագոյացման նորմատիվ փաստաթղթերի համակարգի տարրային նորմերի և չափորոշիչների մշակման և հաստատման կարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, իրագործվել են «Շինարարական ծախսային ծրագրերի ընդլայնման միջոցով ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող կրթական, մշակութային և այլ օբյեկտների հիմնանորոգման և կառուցման ծրագրերը»:

Հաշվետու տարում շարունակվել է ոլորտի գնագոյացման պետական վարման նոր սկզբունքների ներդրման քաղաքականությունը՝ շարունակելով շինարարության և/կամ նախագծման արժեքների և շինարարության արժեքի միջինացված ինդեքսների հաշվարկի մեթոդաբանության մշակման աշխատանքները:

Բնակարանային-կոմունալ ոլորտ

Հաշվետու տարում բնակարանային ոլորտում աշխատանքները նպատակաուղղված են եղել ՀՀ կառավարության գործունեության ծրագրով սահմանված դրույթների կատարման ապահովմանը ոլորտի գերակայությունների շարքին դասվող հետևյալ ուղղություններով՝

- անօթևան ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված արդեն իսկ ընդունված պետական աջակցության նպատակային ծրագրերով ձևավորված պետական պարտավորությունների կատարման,
- բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման, պահպանման և շահագործման բնագավառում առկա խնդիրների կարգավորման:

Բնակարանային ապահովման ուղղությամբ իրականացված միջոցառումների շնորհիվ տրամադրված բնակարանների գնման վկայագրերի միջոցով 2008 թվականին ձեռք են բերվել 441 բնակարան (բնակելի տուն), որոնցից 253-ը՝ ՀՀ Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած անձանց, 8-ը՝ Երևան քաղաքի Նոր Նորքի Մոլդովական փողոցի N70/1 հասցեում գտնվող հանրակացարանի 1-ին մասնաշենքում բնակվող փախստական ընտանիքների, 169-ը՝ ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի տարածաշրջանում բնակվող փախստական ընտանիքների և 11-ը՝ ՀՀ Տավուշի, Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզերի բնակավայրերի ակտիվ սողանքային գոտիներում գտնվող բնակելի տների բնակիչների կողմից:

<u>Բյուջետային քաղաքականություն</u>

Կազմակերպվել և մեթոդապես ապահովվել է ՀՀ 2009-2011թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագծի մշակումը, կազմվել է նշված ծրագրի նախագիծը և ներկայացվել ՀՀ կառավարության հաստատմանը (ծրագիրը հաստատվել է ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 21-ի թիվ 704-Ն որոշմամբ):

Մշակվել են «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստները պետության կողմից փոխհատուցելու կարգի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը (ՀՀ կառավարության կողմից ներկայացվել են ՀՀ Ազգային ժողով և ընդունվել համապատասխանաբար 2008 թվականի նոյեմբերի 23-ին և նոյեմբերի 27-ին):

Շարունակվել են հանրապետությունում ծրագրային բյուջեի ներդրման աշխատանքները, ինչպես խորացման, այնպես էլ ընդլայնման ուղղությամբ (2008 թվականին

այդ ուղղությամբ արդեն իսկ 53 պետական կառավարման մարմիններ՝ նախորդ տարվա 14-ի դիմաց, իրենց բյուջեները ներկայացրել են ծրագրային դասակարգմամբ):

Կազմակերպվել և մեթոդապես ապահովվել է ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծի մշակումը, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2008 թվականի նոյեմբերի 27-ին:

Ընդունվել է «ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների, ՀՀ 2009 թվականի պետական բյուջեում վերաբաշխումներ և ՀՀ կառավարության 2004 թվականի փետրվարի 12-ի թիվ 218-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու, ինչպես նաև պետական բյուջեից գումար հատկացնելու մասին» ՀՀ կառավարության որոշումը:

2008 թվականի նոյեմբերին ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել Հայաստանի Հանրապետությունում պետական ծախսերի ծրագրավորման գործընթացի բարեփոխումների զարգացման հայեցակարգը:

Կազմվել է Հայաստանի Հանրապետության պետական ֆինանսների կառավարման համակարգի գնահատման հաշվետվությունը, որը ներկայացվել է 2008 թվականի հոկտեմբերի 7-ին Երևանում ՀԲ հետ համատեղ կազմակերպված կոնֆերանսին:

Ցուցաբերվել է օգնություն ԼՂՀ-ին՝ իր 2009-2011թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և 2008 թվականի պետական բյուջեի նախագծերը կազմելու գործընթացում:

<u>Պետական եկամուտների քաղաքականություն</u>

2008 թվականին «Միասնական հարկային օրենսգրքի ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքների շարունակում» գերակա խնդրի լուծման նպատակով ավարտական փուլին են մոտեցվել ՀՀ միասնական հարկային օրենսգրքի հատուկ մասի նախագծի մշակման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Մշակվել և ընդունվել է օրենսդրական նախագծերի փաթեթ, որով փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների համար (այդ թվում՝ գյուղատնտեսության ոլորտում գործող) սահմանվել են հարկման և հաշվառման պարզեցված ընթացակարգեր:

ՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շրջանակներում մշակվել է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

Գույքային հարկերով հարկման համակարգի արդյունավետության բարձրացման, ներկայացվող հարկային հաշվետվությունների և հարկատեսակների վճարման հաճախականությունների քանակի նվազեցման, գործող դրույքաչափերի միասնականացման և համակարգի վարչարարության զգալի պարզեցման նպատակով մշակվել են «Անշարժ գույքի հարկի մասին» և «Փոխադրամիջոցների գույքահարկի մասին» ՀՀ օրենքների նախագծերը:

Մշակվել է համապատասխան որոշման նախագիծ, որով նախատեսվում է պարզեցնել մաքսային ընթացակարգերը և կրճատել մաքսային հսկողության համար պահանջվող փաստաթղթերի քանակը:

Նախաստորագրվել են «ՀՀ կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը վերացնելու մասին» համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» արձանագրության և Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության հետ կրկնակի հարկման համաձայնագրի նախագծերը: Միաժամանակ, 2008 թվականի հունիսին անցկացվել է Իռլանդիայի հետ կրկնակի հարկման համաձայնագրի նախագծի շուրջ բանակցությունների 1-ին փուլը:

Գանձապետարան և ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգ

Գանձապետական համակարգի կատարելագործման նպատակով ապահովվել է ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի թիվ 393-Ն որոշմամբ հաստատված ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի և գանձապետական համակարգի երկրորդ սերնդի բարեփոխումների ծրագրի իրականացումը: Մասնավորապես՝ նշված ոլորտներում իրականացվող բարեփոխումներին աջակցելու նպատակով Համաշխարհային բանկից ստացված դրամաշնորհների հաշվին կնքվել են խոհրդատվական ծառայությունների գնման պայմանագրեր: Այդ պայմանագրերի շրջանակներում մշակվել են.

- Հաշվապահական հաշվառման բարեփոխումների մասով՝ «Հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվողականության գործող համակարգի և ներկա կարողությունների գնահատման հաշվետվությունը» և հաստատվել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից,
- Կառավարության ֆինանսական կառավարման տեղեկատվական համակարգի ներդրման մասով՝ «ԿՖԿՏՀ իրականացման կարողությունների ստեղծման սկզբնական փուլի հաշվետվությունը», որը հաստատվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից, ինչպես նաև «Հայաստան. Առաջընթացի հաշվետվությունը», որը հաստատվել է 2009 թվականին:

ԱՄՀ «Հայաստանի Հանրապետությունում հաշվապահության բարեփոխումների» վերաբերյալ 2002 թվականի հոկտեմբերի հաշվետվության հիման վրա ԱՄՀ հետ համատեղ մշակվել և ՀՀ կառավարության 10.04.2003թ. N 393-Ն որոշմամբ հաստատվել էր ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի և գանձապետական համակարգի երկրորդ սերնդի բարեփոխումների ծրագիրը, որով կատարվել է ՀԲ SAC-5 Կառուցվածքային բարեփոխումների վարկային ծրագրի 3 նախապայման և ՀՀ կառավարության 2003 թվականի գործունեության ծրագրի 2 միջոցառում: Համաձայն նշված ծրագրի՝ ՀՀ հանրային հատվածի

հաշվապահական հաշվառման համակարգի բարեփոխումները ենթադրում են այդ հատվածում դեռևս խորհրդային ժամանակներից գործող հաշվապահական հաշվառման համակարգից անցում կատարել Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային չափանիշներին համապատասխան համակարգի, որը պետք է համահունչ և համադրելի լինի Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից հաստատված՝ Կառավարության ֆինանսական վիճակագրության 2001թ. ձեռնարկի և ՀՀ մասնավոր հատվածում ներդրված հաշվապահական հաշվառման ստանդարտներին: Նշված ծրագրի իրականացման շրջանակներում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 09.01.2007թ. N5 հրամանով հաստատվել են ՀՀ բյուջետային և հաշվապահական հաշվառման նոր դասակարգումները (ԿՖՎ 2001-ին համապատասխանող) և դրանց կիրառման ցուցումները: 2008 թվականից ՀՀ պետական բյուջեն, իսկ 2009 թվականից՝ ՀՀ համայնքների բյուջեները կազմվել և կատարվում են նոր դասակարգումներին համապատասխան: Նոր դասակարգման համակարգը և դրա տնտեսագիտական բնութագրերը հիմնվում են ԱՄՀ ԿՖՎ-2001 (GFS-2001) ձեռարկի վրա, որը կազմված է հաշվեգրման հիմունքով: Այս հիմունքը հնարավորություն է ստեղծում և՝ բյուջետավորման, և՝ հաշվապահության մեջ կիրառել միևնույն կոդերը, որը հնարավորություն կտա համադրելի հաշվետվությունների ստացման և առավել մատչելի, թափանցիկ և հասկանալի կդարձնի դրանք: Բացի այդ համակարգի ներդրումը հնարավորություն կստեղծի ճշգրիտ որոշումներ կայացնել դուրս բերված հաշվետվությունների հիման վրա: Նոր համակարգի կիրառումը հնարավորություն կստեղծի մանրամասն դասակարգել հիմնարկների բոլոր ֆինանսական գործառույթները, ինչը թույլ կտա առավել խիստ վերահսկողություն իրականացնել պետական ռեսուրսների նկատմամբ: Նշված համակարգի կիրառումը հնարավորություն է ստեղծում նաև բյուջետավորման և հաշվապահության քաղաքականությունները համապատասխանեցնել միջազգային չափանիշներին:

Պետական հատվածի ֆինանսների կառավարման պատասխանատուների մասնագիտական անհրաժեշտ ունակությունների ապահովման միասնական համակարգ ձևավորելու նպատակով մշակվել և ՀՀ կառավարության կողմից 2008 թվականի նոյեմբերի 20-ին հաստատվել է «ՀՀ հանրային ֆինանսների կառավարման համակարգի մասնագետների ուսուցման, շարունակական վերապատրաստման և որակավորման համակարգի ներդրման ռազմավարությունը»: Փաստաթուղթը մշակվել է միջազգային փորձի հիման վրա՝ ՀԲ-ի հետ համագործակցությամբ:

<u>ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգ</u>

Ներքին աուդիտի համակարգի կատարելագործման նպատակով ապահովվել է ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց ենթակա հիմնարկների և

պետական ու համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ներքին աուդիտի զարգացման ծրագրի իրականացումը: Մասնավորապես՝

- Մշակվել և ՀՀ Ազգային Ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունվել է «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նշված օրենքի նախագծի հաստատմամբ կներդրվի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց ենթակա հիմնարկների, պետական ու համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսական գործունեության գնահատման միասնական և ամբողջական համակարգ և կհստակեցվեն ներքին աուդիտի գործառույթները.
- Ներքին աուդիտի բարեփոխումների աջակցման նպատակով Համաշխարհային բանկից ստացված IDF TF 056827 դրամաշնորհային միջոցների հաշվին մշակվել են՝ հանրային հատվածում ներքին աուդիտի ստանդարտները և դրանց կիրառման ցուցումները, հանրային հատվածում ներքին աուդիտորների էթիկայի կանոնները, հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկը, հանրային հատվածում ներքին աուդիտորների վերապատրաստման ձեռնարկը:

Գնումների գործընթացի կարգավորման և համակարգման ոլորտ

Մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Գնումների համակարգի բարեփոխումների ռազմավարության» նախագիծը, որով նկարագրվում են գնումների համակարգում առկա հիմնախնդիրները, սահմանվում են ՀՀ կառավարության կողմից գնումների համակարգում իրականացվելիք բարեփոխումների շրջանակը և հիմնական նպատակները, դրանց իրականացման կարգը և բարեփոխումների արդյունքների գնահատման հիմնական ցուցանիշները:

Գնումների համակարգի կատարելագործման շրջանակներում ապահովվել է ՀԲ-ի փորձագետների հետ մասնակցությունը բանկի վարկառու անդամ երկրների գնումների համակարգի ուսումնասիրման և Երկրի գնումների համակարգի գնահատման հաշվետվության կազմման աշխատանքներին, որով արված առաջարկները դիտարկվում են գնումների համակարգի բարեփոխումների ռազմավարության հիմնական դրույթներից մեկը: Գնահատումն իրականացվել է հինգ հիմնական ուղղություններով՝

- իրավական համակարգ,
- ինստիտուցիոնալ և վարչական կարողություններ,
- իրավակիրառական պրակտիկա,
- կոռուպցիոն ռիսկեր,
- էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման բարեփոխումներ:

ԵՄ-ի հետ (SIGMA ծրագրի շրջանակում) համագործակցության շրջանակներում գնահատվել է Հայաստանի գնումների համակարգի համապատասխանությունը ԵՄ գնումների կանոններին, ԱՀԿ-ի պետական գնումների համաձայնագրին, ԵՄ երկրներում գնումների կազմակերպման լավագույն պրակտիկային: Գնահատման հաշվետվությամբ արված առաջարկները դիտարկվում են գնումների համակարգի բարեփոխումների ռազմավարության հիմնական դրույթներից մեկը:

Մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել է գնման առարկայի բնութագրերի հաստատման, նախնական հսկողության և գնումների ֆինանսավորման, մրցույթի հանձնաժողովների կազմավորման և գործունեության, գնման ընթացակարգի արձանագրությունների ստուգման, լիազոր մարմնին ներկայացված բողոքների քննարկման ու գնումների գործընթացի վերահսկման միավորի գործունեության, Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գնումների կատարման կարգերը և բնական մենաշնորհ հանդիսացող ծառայությունների ցանկը:

Պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող՝ միանման բնութագրեր ունեցող ապրանքների համախմբման և գնման մեկ գործընթաց կազմակերպելու միջոցով դրանց գնումը տնտեսապես առավել շահավետ և միանման պայմաններով իրականացնելու նպատակով մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել է պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող առանձին ապրանքատեսակների կենտրոնացված կարգով գնման գործընթացի կազմակերպման կարգը:

Նախաձեռնվել է ԱՀԿ-ի «Պետական գնումների մասին» համաձայնագրին միանալու ուղղությամբ բանակցային գործընթաց:

Գնման գործընթացների հրապարակայնության և թափանցիկության աստիճանի բարձրացման նպատակով նախագծվել է գնումների պաշտոնական ինտերնետային նոր կայք, որում ավելի համապարփակ ներկայացվում է գնումների համակարգին վերաբերող տեղեկատվությունը:

Գնումների հրապարակայնության ապահովման նպատակով մրցույթների հայտարարությունների վերաբերյալ հեռուստատեսությամբ և ռադիոյով հեռարձակվել են գովազդային հայտարարություններ և հաղորդումներ:

Գնումների գործի համակարգման պատասխանատուների վերապատրաստման նպատակով մշակվել են ուսումնական ձեռնարկներ և թվով 220 մասնագետների համար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ:

Շուրջ 9%-ով նվազել է մրցակցային հիմունքներով պետական կարիքների համար պետական կամ ծառայողական գաղտնիք չպարունակող գնումների կատարման ծավալը: Բաց

մրցակցային ձևերով 2008 թվականին կատարվել են շուրջ 105,23 մլրդ դրամի գնումներ, իսկ 2007 թվականին՝ շուրջ 115 մլրդ դրամի գնումներ:

Շուրջ 4.4%-ով աճել է մեկ անձից գնման ձևով պետության կարիքների համար պետական կամ ծառայողական գաղտնիք չպարունակող գնումների կատարման ծավալը: 2008 թվականին գնումների կատարման համար հատկացված միջոցների նկատմամբ (չի ներառում պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող և մենաշնորհային գնումները) մեկ անձից գնման ձևով կատարված գնումների ծավալը կազմել է շուրջ 10%, որը 2007 թվականին կազմել է շուրջ 9.2%: Մեկ անձից գնման ձևով 2007 թվականի կատարվել են 11.7 մլրդ դրամի գնումներ, իսկ 2008 թվականին՝ 12.218 մլրդ դրամի գնումներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2008 ԹՎԱԿԱՆԻՆ

2008 թվականի փաստացի տվյալների ամփոփումը ցույց տվեց, որ Հայաստանի տնտեսությունը զերծ չմնաց համաշխարհային ֆինանսական և տնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությունից, և տարեվերջին ճգնաժամի դրսևորումներն արտահայտվեցին տնտեսության ոչ ֆինանսական հատվածում՝ ի դեմս ցածր տնտեսական աճի, որը կազմեց 6.8%, և արտահանման դոլարային ծավալների նվազման (-7.2%):

Այնուհանդերձ, չնայած տնտեսության իրական հատվածի տարեվերջյան անբարենպաստ զարգացումներին, հարկային վարչարարության բարելավման շնորհիվ հաջողվել է ապահովել հարկային եկամուտների (ներառյալ տուրքերը) թիրախը՝ 621.1 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 17%՝ հնարավորություն ստեղծելով ժամանակին և ամբողջությամբ կատարել 2008 թվականի պետական բյուջով նախատեսված ծախսերը: Նշենք նաև, որ ճնավորված գնանկման միջավայրը թույլ տվեց չգերազանցել գնաճի ծրագրային մակարդակը՝ 4+/-1.5 տոկոս, և հիմքեր ստեղծեց ավելի ընդլայնողական դրամավարկային քաղաքականություն իրականացնելու համար (փաստացի գնաճը ժամանակահատվածի վերջում կազմեց 5.2%):

ՀՀ տնտեսությունում ֆինանսական ճգնաժամի բացասական հետևանքները հիմնականում դրսևորվել են ստացվող մասնավոր տրանսֆերտների աճի տեմպերի կրճատմամբ, գլոբալ տնտեսական աճի տեմպերի դանդաղման և համաշխարհային շուկաներում հումքային ապրանքների գների նվազման հետևանքով արտահանման ծավալների կրճատմամբ, ինչպես նաև ուղղակի ներդրումների նվազմամբ:

ՀԱՍԱԽԱՌՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ

2008 թվականին վերջնական սպառման իրական աճը կազմել է 7.8%: Վերջնական սպառման իրական աճի՝ ծրագրավորվածից ցածր ցուցանիշը հիմնականում պայմանավորված է չորրորդ եռամսյակի ընթացքում բնակչության իրական եկամուտների աճի տեմպերի զգալի նվազմամբ, իսկ վերջինս իր վրա է կրել չորրորդ եռամսյակում ՀՆԱ աճի տեմպերի էական դանդաղման ազդեցությունը: Վերջնական սպառման կառուցվածքում պետական և մասնավոր սպառման տեսակարար կշիռները կազմում են 15 և 85 տոկոս, որոնք աճել են համապատասխանաբար 17 և 6.4 տոկոսով:

Կապիտալ ներդրումների (5.9%), մասնավորապես մասնավոր ներդրումների իրական աճը (7.8%[1]) հիմնականում պայմանավորված է եղել շինարարության ճյուղի աճի տեմպերի զգալի նվազմամբ, որն իր հերթին համաշխարհային ֆինանսական և տնտեսական ճգնաժամով

[1]Նախնական գնահատական

պայմանավորված, կապիտալ և ընթացիկ տրանսֆերտների սպասվածից էականորեն ցածր աճի արդյունք է: Կապիտալ ներդրումներում պետական ներդրումները նվազել են շուրջ 1.9%-ով[1]:

2008 թվականի ընթացքում համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցության հետևանքով գնահատվում է ապրանքների և ծառայությունների արտահանման 12.5% նվազում՝ պայմանավորված համաշխարհային տնտեսությունում պահանջարկի անկման և հոկտեմբեր ամսից համաշխարհային շուկաներում արձանագրված հումքային ապրանքների գների կտրուկ անկմամբ: Իսկ ապրանքների և ծառայությունների ներմուծման իրական աճի տեմպերը պահպանվել են բարձր՝ կազմելով 5.3%:

ՀԱՄԱԽԱՌՆ ԱՌԱՋԱՐԿ[2]

Հաշվետու տարում չպահպանվեցին վերջին տարիներին արձանագրվող բարձր տնտեսական աճի միտումները. 2008 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին այն կազմել է 6.8%՝ զիջելով պետական բյուջեի հիմքում ընկած ցուցանիշը 3.2 տոկոսային կետով (նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը՝ 7 տոկոսային կետով): ՀՆԱ-ի դեֆլյատորը կազմել է 8.5%, որի արդյունքում 2008 թվականին համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) շուկայական գներով կազմել է 3650 մլրդ դրամ: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 2008 թվականին կազմել է 1128.6 հազ դրամ կամ 3689 ԱՄՆ դոլար:

2008 թվականին տնտեսության ոչ արտահանելի հատվածը շարունակել է հանդիսանալ տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժը[2]: Նշված ժամանակահատվածում տնտեսական աճի ապահովման գործում մեծ դեր են ունեցել շինարարության և ծառայությունների ոլորտները, որոնց հաշվին ապահովվել են տնտեսական աճի 1.8 և 2.9 տոկոսային կետը, իսկ իրական աճերը համապատասխանաբար կազմել են 7.2 և 9 տոկոս: Արդյունաբերությունը (ներառյալ էներգետիկան) 2008 թվականին աճել է 2.4%-ով և ապահովել 6.8% տնտեսական աճի 0.4 տոկոսային կետը: Հաշվետու տարում գյուղատնտեսության աճը կազմել է 1.3%, իսկ տնտեսական աճին նպաստման չափը՝ 0.2 տոկոսային կետ: Գծապատկեր 1-ում ներկայացված են տնտեսության առանձին ճյուղերում արձանագրված իրական աճի նպաստման չափը:

[2] Սույն պարբերության ցուցանիշները վերաբերում են տնտեսության ճյուղերում ստեղծված ավելացված արժեքին

Գծապատկեր 1. 2008 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՆԱ-ի իրական աճին տնտեսության ճյուղերի նպաստման չափը, տոկոսային կետ



Աղյուսակ 1. 2004-2008 թվականների իրական ծավալի ինդեքսները նախորդ տարվա նկատմամբ

	2004	*2005*	*2006*	*2007*	*2008*
Համախառն ներքին արդյունք	110.5	113.9	113.2	113.8	106.8
Գյուղատնտեսություն	114.2	111.2	100.5	110.2	101.3
Արդյունաբերություն	102.2	105.6	97.5	103.1	102.4
Շինարարություն	115.3	127.9	137.7	118.6	107.2
Ծառայություններ	112.7	115.0	116.0	113.4	108.5
Զուտ անուղղակի հարկեր	102.4	112.4	114.9	132.1	116.8

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ: 2008 թվականին արձանագրվել է արդյունաբերական արտադրանքի ծավալների մոտ 2% աճ՝ 2007 թվականին արձանագրված 2.6% աճի դիմաց[3]: Աճը պայմանավորված է հանքագործական արդյունաբերության և էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի, գոլորշու արտադրության և բաշխման ծավալների համապատասխանաբար 1.5 և 8 տոկոս աճերով, ընդ որում հանքարդյունաբերության տարեկան աճի ցուցանիշը հիմնականում

[3] Այսուհետ՝ ցուցանիշները ներկայացված են տնտեսության ճյուղերում ստեղծված համախառն արտադրանքի ծավալներով

ապահովվել է տարվա առաջին ամիսներին՝ կապված արտահանման համար բարենպաստ միջազգային շուկայական իրավիճակով: Հանքարդյունաբերության ճյուղում աճ է արձանագրվել, մասնավորապես, մետաղական հանքաքարերի արդյունահանման և հանքագործական արդյունաբերության այլ ճյուղերում՝ համապատասխա-նաբար 1.4 և 3.6 տոկոսի չափով: Չնայած մշակող արդյունաբերության ոլորտում աճ է արձանագրվել (0.6%), սակայն նրա առանձին ենթաճյուղերում գրանցվել է թողարկման ծավալների նվազում, մասնավորապես՝ մետաղագործական արդյունաբերության (9.6%), քիմիական արդյունաբերության (14.8%) և ոսկերչական արտադրատեսակների արտադրության (16.3%) ճյուղերում: Բնականաբար մետաղագործական արդյունաբերության ճյուղի անկման հիմնական պատճառը մետաղի համաշխարհային գների զգալի անկումն է, հատկապես միջին տարեկան կտրվածքով պղինձը նվազել է 2.4%-ով, իսկ մոլիբդենը՝ 5%-ով: Իսկ «Սննդամթերքի, ներառյալ՝ խմիչքների արտադրության», և «Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակ-ների արտադրության» ճյուղերում արձանագրվել է համապատասխանաբար 7.1 և 6.1 տոկոս աճ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ: 2008 թվականին նախորդ տարվա համեմատ արձանա-գրվել է գյուղատնտեսության և անտառային տնտեսության համախառն արտադրանքի ծավալի 1.4% աճ: Ընդ որում, գյուղատնտեսության աճը պայմանավորված է անասնաբուծության համախառն արտադրանքի 3.5% աճով, իսկ բուսաբուծության համախառն արտադրանքի աճը կազմել է 0.2%:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ: Ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալները 2008 թվականի ընթացքում կազմել են շուրջ 842.4 մլրդ դրամ և նախորդ տարվա համեմատ ավելացել 1.7%-ով: Ըստ ֆինանսավորման աղբյուրների իրականացված կապիտալ շինարարության կառուցվածքում բնակչության միջոցները կազմել են 71.1% և աճել 16.6%-ով, իսկ կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալները նախորդ տարվա նկատմամբ նվազել են 28.9%-ով: Պետական բյուջեի միջոցների հաշվին շինարարության ծավալները կազմել են մոտ 62 մլրդ դրամ և նախորդ տարվա համեմատ նվազել 10.6%-ով:

Շինարարության հիմնական միջոցներն ըստ տնտեսության ճյուղերի շարունակում են ուղղվել անշարժ գույքի հետ կապված գործառնություններին, կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունների մատուցման, ինչպես նաև տրանսպորտի և կապի ոլորտներին (տե՛ս գծապատկեր 2):

Գծապատկեր 2. Շինարարության ծավալներն ըստ տնտեսության ճյուղերի



ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԵՎՏՈՒՐ: 2008 թվականին մատուցված ծառայությունների ծավալը 2007 թվականի նկատմամբ աճել է 13.8%-ով: Մատուցված ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմում տրանսպորտի (22.3%) և կապի (23.1%) ոլորտների ծառայությունները, ինչպես նաև ֆինանսական գործունեության (20%), կրթության (5.1%) և առողջապահության (5.8%) ծառայությունները:

2008 թվականին առևտրի շրջանառությունն ընթացիկ գներով կազմել է 1676.7 մլրդ դրամ, որը 2007 թվականի ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 7.9%-ով, որտեղ մանրածախ առևտուրն աճել է 4.4, մեծածախ առևտուրը՝ 15.2 և ավտոմեքենաների առևտուրը՝ 11.3 տոկոսով:

2008 թվականին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը 2007 թվականի նկատմամբ նվազել է 8.8%-ով: Բեռնափոխադրումների ճյուղում հիմնականում աճ արձանագրվել է մայրուղային խողովակաշարային տրանսպորտի ոլորտում՝ 8.4% (բեռնափոխադրումների այս տեսակի տեսակարար կշիռը կազմում է 16.6%): Երկաթուղային ենթաճյուղում 2008 թվականին 2007 թվականի նկատմամբ նվազումը կազմել է 7.7%, որն ընդհանուր բեռնափոխադրումների ծավալի կառուցվածքում կազմում է 29.3%, իսկ ավտոմոբիլային տրանսպորտի ոլորտը նվազել է 13.6%-ով՝ կազմելով ընդհանուր բեռնափոխադրումների 54%-ը:

2008 թվականին բնակչությանը, հիմնարկներին, կազմակերպություններին մատուցված կապի ծառայություններից ստացված հասույթը համադրելի գներով 2007 թվականի նկատմամբ աճել է 14.9%-ով: Կապի ոլորտում աճը հիմնականում տեղի է ունեցել ի հաշիվ շարժական կապի

աճի՝ կազմելով 32.8%, իսկ ֆիքսված հեռախոսային կապը նախորդ տարվա նկատմամբ համադրելի գներով նվազել է 18.2%-ի չափով:

ԳՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ: 2008 թվականի տարեվերջին միջին գնաճը կազմել է 9%, որը պայմանավորվել է պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների՝ 10% (նպաստումը գնաճին՝ 5.4 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների գների՝ 5.1% (նպաստումը գնաճին՝ 0.8 տոկոսային կետ) և ծառայությունների սակագների 9% (նպաստումը գնաճին՝ 2.7 տոկոսային կետ) աճով: Չնայած տարեկան միջին գնաճի բարձր ցուցանիշին՝ ժամանակահատվածի վերջի դրությամբ (դեկտեմբերը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ) գնաճի ցուցանիշը կազմել է 5.2%, որը հիմնականում հոկտեմբեր ամսից արձանագրված արտաքին աշխարհից եկող գնաճի բարենպաստ միջավայրի ազդեցությունն է եղել:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱ: 2008 թվականի հունվար-դեկտեմբերին գործազրկության պաշտոնական մակարդակը հանրապետությունում նախորդ տարվա նկատմամբ կրճատվել է 0.7 տոկոսային կետով և կազմել 6.3% (74.9 հազ. մարդ):

2008 թվականին միջին ամսական անվանական աշխատավարձը 2007 թվականին գրանցված ցուցանիշի նկատմամբ աճել է 17.4%-ով, ընդ որում, բյուջետային հատվածի աշխատավարձն աճել է 18.6%-ով: Հաշվետու տարում տնտեսության բյուջետային և ոչ բյուջետային հատվածներում միջին աշխատավարձը համապատասխանաբար կազմել է 64836 դրամ և 113882 դրամ, իսկ միջին աշխատավարձը՝ 91331 դրամ:

2008 թվականին իրական աշխատավարձի աճը 2007 թվականի համեմատ կազմել է 12.9%: Աշխատանքի արտադրողականությունն իրական արտահայտությամբ նախորդ տարվա համեմատ աճել է 4%-ով:

ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ: 2008 թվականին ընթացիկ հաշվի բացասական մնացորդը կազմել է 1355.26 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 766 մլն ԱՄՆ դոլարով կամ 2.3 անգամ և զգալի ավելանալով ՀՆԱ-ի նկատմամբ՝ նախորդ տարվա 6.4%-ից մինչև 11.4%. այն տեղի է ունեցել հիմնականում ապրանքների գծով բացասական մնացորդի ավելացման հաշվին:

2008 թվականին ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը կազմել է 5480.8 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 24%-ով: Ընդ որում, արտահանումը նվազել է 7.2%-ով՝ կազմելով 1069.1 մլն դոլար[4], իսկ ներմուծումը կազմել է 4411.6 մլն դոլար[5]՝ ապահովելով 35% աճ: Տնտեսական անվտանգությունը բնութագրող ցուցանիշներից է նորմալացված առևտրային հաշվեկշռի գործակիցը[6], որը 1997 թվականի -0.6-ից աստիճանաբար բարելավվել է՝ 2005 թվականին հասնելով -0.3-ի, այնուհետև 2006-2007 թվականներին ցուցաբերել է

[4] ՖՕԲ գնով
[5] ՍԻՖ գնով
[6] Առևտրային հաշվեկշռի և ապրանքաշրջանառության հարաբերակցություն:

վատթարացման միտում՝ համապատասխանաբար կազմելով -0.38 և -0.48, իսկ 2008 թվականին խորացման միտումն էապես ավելացել է և կազմել -0.61: Նորմալացված առևտրային հաշվեկշռի գործակցի նման վարքագիծը պայմանավորված է եղել վերջին 3 տարիների ընթացքում արտահանման աճի տեմպերի նկատմամբ ներմուծման առաջանցիկ աճի տեմպերով, իսկ վերջինս էլ արդյունք է եղել տնտեսությունում անընդհատ աճող սպառողական և ներդրումային ապրանքների նկատմաբ պահանջարկի, ինչպես նաև արժևորվող փոխարժեքի:

2008 թվականի արտահանման 7.2% նվազման առավելագույն՝ 3.8 տոկոսային կետը պայմանավորված է «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման նվազմամբ, որը կազմել է 11.1% (նախորդ տարվա նույն ցուցանիշի 17.5% աճի առավելագույնը՝ 11.1 տոկոսային կետի փոխարեն): Արտահանման նվազման 3 տոկոսային կետը պայմանավորվել է «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ծավալների անկմամբ, որը կազմել է 16.3%:

ՀՆԱ-ի նկատմամբ ապրանքների արտահանման միջին հակումը 2008 թվականին կազմել է 9% (2007 թվականին՝ 12.6%): Ներմուծման միջին հակումը կազմել է 37%՝ նախորդ տարվա 35.8%-ի դիմաց: 2008 թվականի արդյունքներով գրանցված արտահանման ցածր և ներմուծման բարձր աճի հետևանքով զգալի նվազել է ներմուծման ծածկումը արտահանումով՝ կազմելով մոտ 30%[7] (տե՛ս գծապատկեր 3):

Գծապատկեր 3. 1993-2008 թվականների ներմուծման ծածկման գործակիցը, տոկոսներով



[7] Նախնական գնահատական:

Մինչև 2008 թվականը ՀՀ ներճյուղային[8] առևտրի մակարդակի վերլուծությունը հիմնականում վկայում է «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «Թանկարժեք ու կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «Պատրաստի սննդի արտադրանք», «Մանածագործական իրեր», «Սարքեր և ապարատներ» և «Կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերի գծով համեմատաբար կայուն երկկողմանի արտաքին առևտրի մասին, սակայն այս միտումը 2008 թվականին շեղվեց, և միայն «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապարանքախմբի մասով է մոտ երկկողմանի արտաքին առևտրին:

Գծապատկերում դրական և բացասական նշանները տրամադրում են լրացուցիչ տեղեկատվություն և պայմանավորված են համապատասխան ապրանքախմբերի արտաքին առևտրային հաշվեկշռի դրական կամ բացասական մնացորդով: 2008 թվականի «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի երկկողմանի առևտրի մակարդակը՝ բացասական առևտրային մնացորդը, վկայում է մեր երկրի կողմից արտաքին աշխարհի պահանջարկ չբավարարելու մասին, իսկ 20 ապրանքախմբերից շուրջ 11-ի գծով լրիվ միակողմանի առևտուր է իրականանում (տե՛ս գծապատկեր 4.):

Գծապատկեր 4. 2008 թվականի արտահանման և ներմուծման ներճյուղային առևտուրը



[8] Ներճյուղային առևտուրը տեղի է ունենում, երբ երկիրը և ներմուծում, և արտահանում է առանձին ճյուղում արտադրվող ապրանքատեսակները: Ներճյուղային առևտրի գործակիցը իրենից ներկայացնում է արտահանման և ներմուծման բացարձակ արժեքով փոքրի հարաբերակցությունը մեծին: «0» նշանակում է լրիվ միակողմանի, իսկ «1»՝ լրիվ երկկողմանի առևտուր:

Մնացած ապրանքախմբերով տեղի է ունեցել մեծ մասամբ լրիվ միակողմանի առևտուր՝ հիմնականում ներքին պահանջարկը բավարարելու ուղղությամբ (բացասական առևտրային մնացորդ):

Արտաքին առևտուրն ըստ գործընկեր երկրների. 2008 թվականի ՀՀ արտաքին առևտրաշրջանառության 30%-ը բաժին է ընկել ԱՊՀ և 35.3%-ը՝ ԵՄ երկրներին, 2007 թվականին նշված երկրների տեսակարար կշիռները կազմել են 32.4 և 38.4 տոկոս. ԵՄ և ԱՊՀ երկրների հետ ապրանքաշրջանառության աճի տեմպերը առաջանցիկ էին: ՀՀ խոշոր առևտրային գործընկեր-երկրների շրջանակում ընդգրկվել էին Գերմանիան (առևտրաշրջանառության 8%-ը), Չինաստանը (7%), Թուրքիան (4.9%), ԱՄՆ-ն (4.9%), Իրանը (4.1%), Իտալիան (3.4%), ինչպես նաև ԱՊՀ երկրներից՝ Ռուսաստանը (19.5%), Ուկրաինան (6.1%), Վրաստանը (2.4%): Վերջիններին բաժին է ընկել ՀՀ և ԱՊՀ երկրների միջև տարվա ընթացքում կատարված ապրանքաշրջանառության շուրջ 96%-ը: Հանրապետության թվով 35 հիմնական գործընկեր երկրները մեծամասամբ (80%) հանդիսանում են ԱՀԿ անդամ պետություններ:

ՓՈԽԱՐԺԵՔ: 2008 թվականին ընթացքում, ըստ էության, դադարել են նախորդ տարիներին ձևավորված փոխարժեքի կտրուկ արժևորման միտումները: Մասնավորապես՝ եթե ընթացիկ տարվա հունվար ամսին դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը կազմել է 306.83, ապա դեկտեմբերին այն մնացել է գրեթե անփոփոխ և կազմել 307.83: 2008 թվականի միջին փոխարժեքը կազմել է 305.97, իսկ նախորդ տարի՝ 342.08: Ըստ էության փոխարժեքի նման վարքագիծը պայմանավորված է եղել նաև ներմուծման աճի բարձր տեմպերի պահպանմամբ, ինչն էլ պահանջարկ է ստեղծել արտարժույթի նկատմամբ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱ: 2008 թվականի վերջում փողի բազան կազմել է 449.7 մլրդ դրամ՝ տարեսկզբի նկատմամբ աճելով 5.3%-ով: Նույն ժամանակահատվածում ԿԲ-ից դուրս կանխիկը նվազել է մոտ 1.6%-ով, արդյունքում՝ տարեսկզբի նկատմամբ կանխիկի տեսակարար կշիռը փողի բազայում նվազել է 5.4 տոկոսային կետով՝ կազմելով շուրջ 76.6%:

2008 թվականի տարեվերջին փողի զանգվածն աճել է 2.4%-ով, ընդ որում դրամային և արտարժութային ավանդների հաշվին ապահովվել է աճի համապատասխանաբար -1.9 և 5.7 տոկոսային կետը: Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները 2008 թվականի վերջի դրությամբ կազմել են 465.9 մլրդ դրամ, որից 51.2%-ը արտարժույթով ավանդներն են: Բանկային համակարգից դուրս կանխիկը դրամական զանգվածի աճը նվազեցրել է 1.5 տոկոսային կետով:

Առևտրային բանկերի վարկերը 2008 թվականի վերջի դրությամբ նախորդ տարվա համեմատ ավելացել են 48.9%-ով[9] և ՀՆԱ-ի մեջ կազմել 17.4%, ինչը 3.8 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները 2008 թվականի վերջին նախորդ տարվա համեմատ ավելացել են 12.7%-ով և ՀՆԱ-ի մեջ կազմել են 12.8%, ինչը 0.4 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից:

Նույն ժամանակահատվածում բանկային համակարգի զուտ արտաքին ակտիվները նվազել են 45.8%-ով, իսկ զուտ ներքին ակտիվները՝ աճել 57.8%-ով, աճը հիմնականում պայմանավորված է եղել տնտեսության վարկավորման 61.2% աճով: Այսինքն՝ տեղի է ունեցել ներքին տնտեսության վարկավորում նաև արտաքին շուկաներում փոխառած միջոցների հաշվին: Առևտրային բանկերի վարկերը 2008 թվականի վերջի դրությամբ կազմել են 634.5 մլրդ դրամ, որի 38.2%-ը կազմել են արտարժույթով վարկերը:

Առևտրային բանկերի՝ դրամով տրամադրած վարկերի տոկոսադրույքները 2008 թվականի դեկտեմբերին կազմել են 16.50%՝ 2007 թվականի դեկտեմբերի 16.45%-ի համեմատ: Նույն ժամանակաշրջանում գրանցվել է առևտրային բանկերի՝ մինչև մեկ տարի ժամկետով դրամով ներգրավված ավանդների տոկոսադրույքների աճ: Այսպես, եթե 2007 թվականի դեկտեմբերին ավանդների տոկոսադրույքը կազմել է 6.13%, ապա 2008 թվականի դեկտեմբերին այն աճել է 1.6 տոկոսային կետով (7.71%):

Տոկոսադրույքների համանման վարքագիծ է դրսևորվել նաև պարտքի շուկայում. 2008 թվականի վերջին ՀՀ պետական (շուկայական) պարտատոմսերի շուկայում նկատվել է տոկոսադրույքների աճ: Այսպես, եթե 2007 թվականի ընթացքում տեղաբաշխված պետական արժեթղթերի միջին եկամտաբերությունը կազմել է 6.78%, ապա 2008 թվականին այն կազմել է 8.93%: 2008 թվականի ընթացքում տեղաբաշխված պետական արժեթղթերի ծավալը կազմել է 64.6 մլրդ դրամ: Հաշվետու տարում տեղաբաշխված պետական արժեթղթերի միջին ժամկետայնությունը կազմել է 1889 օր: Տոկոսադրույքների աճին նպաստել է նաև ՀՀ ԿԲ-ի կողմից ռեպո տոկոսադրույքի բարձրացումը, որը մինչև 2008 թվականի սեպտեմբերի վերջը հետևողական բարձացվել է գնաճային ճնշումները մեղմելու տեսանկյունից, այնուհետև՝ հոկտեմբեր ամսից նորից նվազեցվել է գնաճային ճնշումների խորացման հետ կապված. դեկտեմբերին այն կազմել է 7.75%՝ 2007 թվականի դեկտեմբերի 5.75%-ի դիմաց:

2008 թվականի վերջին պետական (շուկայական) պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը գերազանցել է թողարկման ցուցանիշը 1.17 անգամ, իսկ տեղաբաշխում/թողարկում հարաբերակցության միջին մեծությունը կազմել է 0.75:

[9] Սույն ցուցանիշում ներառված է ինչպես տնտեսության իրական հատվածի, այնպես էլ Կառավարության վարկավորումը

Աղյուսակ 2. Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները 2008 թվականի ընթացքում

Ամիսներ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Առևտրային բանկերի վարկեր[3]	17.17 17.01	16.45 17.65	17.17 18.35	17.29 17.30	17.39 18.14	17.35 17.68	16.80 17.87	17.50 18.08	17.19 17.35	17.07 17.26	17.08 17.05	16.5 16.45
Առևտրային բանկերի ավանդներ[3]	6.51 5.80	6.16 5.90	7.36 6.03	6.14 5.83	5.71 6.08	5.75 7.63	6.23 6.83	5.75 6.21	6.67 6.25	7.11 6.19	7.60 6.17	7.71 6.13
ՀՀ ԿԲ ռեպո գործառնություններ	5.75 4.75	6.00 4.75	6.25 4.75	6.50 4.50	6.75 4.50	7.00 4.50	7.25 4.75	7.50 4.75	7.75 4.75	7.75 5.0	7.75 5.25	7.25 5.75

ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ: 2008 թվականին գրանցվել է պետական բյուջեի եկամուտների աճ, ինչպես հարկային, այնպես էլ ոչ հարկային եկամուտների գծով: Այդ ժամանակաշրջանում պետական բյուջեի եկամուտները և պաշտոնական տրանսֆերտները կազմել են 785.4 մլրդ դրամ՝ ՀՆԱ-ի 21.5%-ը, նախատեսված 21.2%-ի փոխարեն: 2008 թվականին հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 621.1 մլրդ դրամ՝ ՀՆԱ-ի նկատմամբ կազմելով 17%:

2008 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 810.6 մլրդ դրամ՝ նախատեսված 769.7 մլրդ դրամի դիմաց և կազմել ՀՆԱ-ի 22.2%-ը: Պետական բյուջեի պակասուրդը 2008 թվականի արդյունքներով կազմել է ՀՆԱ-ի 0.7%-ը (ծրագրված 2.1%-ի փոխարեն):

Հարկաբյուջետային ազդակ: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացված հարկաբյուջետային ազդակի գնահատման արդյունքներով 2008 թվականի համար եկամուտների առումով արձանագրվել են զսպող, իսկ ծախսերի առումով՝ ընդլայնող ազդակներ, որի արդյունքում հարկաբյուջետային քաղաքականության զուտ ազդակը գնահատվել է չեզոք (տե՛ս գծապատկեր 5):

Գծապատկեր 5. Հարկաբյուջետային ազդակը 2004-2008 թվականներին



ՀՀ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

2008 թվականին Հայաստանի տնտեսության զարգացման կանխատեսումների հիման վրա Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեով նախատեսվել էր ստանալ 746 մլրդ դրամ եկամուտներ, որից 711.1մլրդ դրամը՝ սեփական եկամուտների, 34.9 մլրդ դրամը՝ արտաքին պաշտոնական դրամաշնորհների տեսքով: Սակայն տարվա ընթացքում ձևավորված միտումները հաշվի առնելով՝ կառավարության կողմից ավելացվել է պետական բյուջեի եկամուտների ծրագիրը: Բացի այդ, «ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 18-րդ կետի և 11-րդ հոդվածի 3-րդ, 15-րդ և 16-րդ կետերի պահանջներից ելնելով՝ պետության դրամական միջոցների համախմբման նպատակով պետական բյուջեի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական հիմնարկների համար կառավարության որոշումներով բացված արտաբյուջետային հաշիվների շրջանառությունը, ինչպես նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները: Նշված միջոցները ներառյալ՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների ծրագիրն ավելացվել է շուրջ 57.7 մլրդ դրամով (7.7%-ով)՝ կազմելով 803.7 մլրդ դրամ, որից 764.7 մլրդ դրամը՝ սեփական եկամուտների, 39 մլրդ դրամը՝ պաշտոնական տրանսֆերտների գծով: Տարվա արդյունքներով պետական բյուջեի փաստացի եկամուտները գիջել են ճշտված ծրագիրը 2.3%-ով, իսկ սկզբնական ծրագիրը՝ գերազանցել 5.3%-ով: Թերակատարումը հիմնականում պայմանավորված է պաշտոնական դրամաշնորհների ցածր կատարողականով, որը կազմել է 38.4% (շուրջ 15 մլրդ դրամ): Իսկ սեփական եկամուտների հաշվին ՀՀ պետական բյուջեն համալրվել է 770.4 մլրդ դրամով, որի կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 100.7%:



2007 թվականի համեմատ պետական բյուջեի եկամուտներն աճել են 16.7%-ով կամ 112.6 մլրդ դրամով: Եկամուտների աճը գերազանցապես պայմանավորված է հարկերի և տուրքերի աճով, որոնց հաշվին ապահովվել է նշված հավելյալ մուտքերից շուրջ 95.3 մլրդ դրամը[1]: 16.5 մլրդ դրամով ավելացել են պարտադիր սոցիալական ապահովության վճարները, 10.4 մլրդ դրամով՝ այլ եկամուտները, իսկ պաշտոնական դրամաշնորհները նվազել են 9.5 մլրդ դրամով:

Հաշվետու տարում ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների հարաբերակցության ցուցանիշը կազմել է 21.5%, որը 0.1 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը:



2007 թվականի համեմատ 2008 թվականի պետական բյուջեի եկամուտներում 0.9 տոկոսային կետով ավելացել է հարկերի ու տուրքերի, 0.6 տոկոսային կետով՝ այլ եկամուտների, 0.2 տոկոսային կետով՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարների տեսակարար կշիռը, իսկ պաշտոնական դրամաշնորհների գծով նույն ցուցանիշը նվազել է 1.7 տոկոսային կետով:

[1] - 2008 թվականից ՀՀ պետական բյուջեն կազմվել է «Պետական ֆինանսների վիճակագրություն-2001» (GFS-2001) ձեռնարկի դասակարգմանը համապատասխան, նաև պետական բյուջեում ներառվել է ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեն, ուստի նախորդ տարվա հետ համեմատություններում հաշվի են առնվել նշված փոփոխությունները:
- 2008 թվականին արտահանողներին ԱԱՀ-ի վերադարձի գումարներն արտացոլվել են ծախսերում, ի տարբերություն նախորդ տարվա, երբ դրանք պակասեցվում էին եկամուտներից, ուստի երկու տարիների ցուցանիշների համադրելիությունն ապահովելու նկատառումով 2007 թվականի եկամուտների և ծախսերի ցուցանիշները նշված գումարի չափով (15,310.3 մլն դրամ) ավելացվել են:
- Հանքարդյունահանման լիցենզառուների և հանքարդյունահանման հատուկ լիցենզառուների կողմից վճարվող ռոյալթին և կոնցեսիոն վճարները, որոնք 2007 թվականին հաշվառվում էին որպես ոչ հարկային եկամուտներ, 2008 թվականին ներառվել են հարկային եկամուտներում, ուստի 2007 և 2008 թվականների ցուցանիշների համադրելիության նպատակով 2007 թվականի ցուցանիշներում նույնպես կատարվել են համապատասխան փոփոխություններ:

Բյուջետային եկամուտների կառուցվածքը



Հարկային եկամուտներ

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի եկամուտների 76%-ն ապահովվել է հարկային եկամուտների հաշվին, որոնք կազմել են շուրջ 598.8 մլրդ դրամ և 100.3%-ով կատարել ՀՀ կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված տարեկան ծրագիրը: Հարկ է նշել, որ հարկային եկամուտների գծով պետական բյուջեի մասին օրենքով սահմանված մակարդակից ավելի է մուտքագրվել 23.7 մլրդ դրամ կամ 4.1%:

Մինչև նոյեմբեր ամիսը հարկային եկամուտներն ունեցել են հիմնականում կայուն վարքագիծ՝ գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածների մուտքերը:



2007 թվականի համեմատ հարկային եկամուտներն աճել են 18.8%-ով կամ 94.8 մլրդ դրամով: Հարկերի աճը մեծ մասամբ ապահովվել է ներմուծման հարկման հաշվին: Մաքսային

սահմանին գանձված հարկային եկամուտները նախորդ տարվա համեմատ ավելացել են 34.7%-ով կամ 74.2 մլրդ դրամով, իսկ ներքին շրջանառությունից գանձված հարկերը՝ 7.1%-ով կամ 20.6 մլրդ դրամով: Մաքսային սահմանին գանձված հարկերի աճի նման բարձր տեմպը պայմանավորված է եղել ինչպես սահմանին հարկվող ներմուծման ծավալների աճով, այնպես էլ մաքսային վարչարարության բարելավման ուղղությամբ իրականացված լայնածավալ միջոցառումներով: Այսպես, սահմանին հարկվող ներմուծման աճի տեմպը կազմել է 129.6%, այսինքն՝ գանձումների աճի տեմպը 5.1 տոկոսային կետով գերազանցել է ներմուծման աճի տեմպը:

2008 թվականին հարկատեսակների մեծամասնության գծով արձանագրվել է աճ: Ընդ որում, բացարձակ արտահայտությամբ առավելագույն աճ ապահովել է ավելացված արժեքի հարկը՝ շուրջ 55 մլրդ դրամ, աճի տեմպը կազմել է 120.9%:

Հարկային եկամուտների կառուցվածքը



ՀՆԱ-ի նկատմամբ հարկերի և տուրքերի հարաբերակցության ցուցանիշը նախորդ տարվա համեմատ 0.3 տոկոսային կետով աճել է՝ կազմելով 17% և ապահովելով կանխատեսված ցուցանիշը: Հարկերի սահմանության գործակիցը[2], որը բնութագրում է տնտեսական աճի և հարկերի կապը, կազմել է 1.14՝ 2007 թվականի 1.64-ի դիմաց:

2008 թվականի տարեվերջի դրությամբ հարկային ապառքները կազմել են 87.8 մլրդ դրամ և տարվա ընթացքում աճել շուրջ 1.6 մլրդ դրամով: Հարկային գերավճարները կազմել են շուրջ 154.4 մլրդ դրամ և տարեսկզբի համեմատ ավելացել 29.1 մլրդ դրամով:

2008 թվականին պետական բյուջե է մուտքագրվել ավելի քան 318.3 մլրդ դրամ *ավելացված արժեքի հարկ*՝ ապահովելով հարկային եկամուտների 53.2%-ը, նախորդ տարվա 52.2%-ի դիմաց: Նշված գումարից շուրջ 209.2 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 109.1 մլրդ դրամը՝ ապրանքների և ծառայությունների ներքին շրջանառությունից: Նախորդ

[2] Հարկային եկամուտների՝ ՀՆԱ-ի միավոր աճին համապատասխանող աճը:

տարվա համեմատ պետական բյուջե մուտքագրված ԱԱՀ-ն աճել է 20.9%-ով կամ 55 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է մաքսային սահմանին գանձված մուտքերի 35.1% աճով:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում կատարվել են մի շարք փոփոխություններ, որոնք կարող էին ազդեցություն ունենալ 2008 թվականի եկամուտների վրա: Մասնավորապես՝ 2008 թվականի հունվարի 1-ից օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած հարկ վճարողները 2008 թվականի հաշվետու ժամանակաշրջաններում առանց հարկային հաշիվների կարող են հաշվանցել արտադրական և այլ առևտրային նպատակներով այդ հաշվետու ժամանակաշրջաններում ձեռք բերված ապրանքների, ինչպես նաև 2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա ապրանքային մնացորդների (որի հաշվանցումը կատարվում է 2008 թվականի առաջին հաշվետու ժամանակաշրջանում) մասով մատակարարներին կանխիկ կամ բանկային փոխանցումներով վճարված գումարներում ներառված՝ ավելացված արժեքի հարկի հաշվարկային դրույքաչափով հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարները, եթե առկա է որևէ հաշվարկային փաստաթուղթ կամ բանկային փոխանցումը կամ կանխիկ վճարումների կատարված լինելը հիմնավորող որևէ փաստաթուղթ:

2008 թվականի հունվարի 1-ից սկսած՝ արտադրական և այլ առևտրային նպատակներով հանրապետության տարածքում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց կանխիկ դրամով վճարված գումարները օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են հաշվանցվել նաև հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոններում և (կամ) կրճատ հաշիվ ապրանքագրերում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարների չափով, եթե այդ գործարքների գումարը (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը) յուրաքանչյուր միանվագ գործարքի համար չի գերազանցում 300 հազար դրամը, իսկ յուրաքանչյուր ամսվա ընթացքում բոլոր այդպիսի գործարքների համար՝ 3 միլիոն դրամը:

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված մեկ այլ փոփոխությամբ ավելացված արժեքի հարկից ազատվում են նաև «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով նախաձեռնողի կողմից ակտիվների վաճառքը արժեթղթավորման հիմնադրամին կամ վաճառողին, վաճառողի կողմից ակտիվների վաճառքը արժեթղթավորման հիմնադրամին, ինչպես նաև նույն օրենքով սահմանված դեպքերում նախաձեռնողի կողմից արժեթղթավորման հիմնադրամից ակտիվների հետգնումը կամ արժեթղթավորման հիմնադրամի հետ ակտիվների փոխանակումը: Փոփոխությունն ուժի մեջ է մտել 2008 թվականի հուլիսի 7-ից:



Ակցիզային հարկից մուտքերը հաշվետու տարում կազմել են շուրջ 45.9 մլրդ դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 7.7%-ը՝ նախորդ տարվա 8.2%-ի դիմաց: Ընդ որում, հանրապետություն ներմուծված ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 33.3 մլրդ դրամ, որից 15.9 մլրդ դրամը՝ բենզինի ու դիզելային վառելիքի, 12.6 մլրդ դրամը՝ ծխախոտի ներմուծման հարկումից: Հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից պետական բյուջեի ակցիզային հարկի մուտքերը կազմել են շուրջ 12.6 մլրդ դրամ, որից 5.9 մլրդ դրամը ստացվել է տեղական արտադրության ծխախոտի իրացումից: 2007 թվականի համեմատ ակցիզային հարկն աճել է 10.4%-ով կամ ավելի քան 4.3 մլրդ դրամով՝ պայմանավորված ենթաակցիզային ապրանքների ներմուծումից գանձված մուտքերի աճով: Այն կազմել է 16.6% կամ 4.7 մլրդ դրամ, ընդ որում, 27.6%-ով կամ 3.1 մլրդ դրամով ավելացել է բենզինի ներմուծումից գանձված ակցիզային հարկը: Նախորդ տարվա համեմատ ավելացել են նաև որոշ ալկոհոլային խմիչքների, դիզելային վառելիքի և ծխախոտի ներմուծման գծով մուտքերը՝ համապատասխանաբար 30.5%-ով, 8.4%-ով և 3.1%-ով: Ներքին արտադրության ենթաակցիզային ապրանքներից ստացված ակցիզային հարկը 3.1%-ով (407.3 մլն դրամով) զիջել է նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված ներքին արտադրության ալկոհոլային խմիչքների ֆիզիկական ծավալների կրճատմամբ: Միևնույն ժամանակ 5.5%-ով (308.4 մլն դրամով) ավելացել են տեղական արտադրության ծխախոտի իրացումից ստացված մուտքերը:



2008 թվականին պետական բյուջե է մուտքագրվել ավելի քան 86.2 մլրդ դրամ *շահութահարկ*: Հարկային եկամուտներում շահութահարկի տեսակարար կշիռը կազմել է 14.4%՝ 2007 թվականի 15%-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ շահութահարկի մուտքերն աճել են 14.2%-ով կամ 10.7 մլրդ դրամով՝ չնայած երկու խոշոր հարկ վճարողների (Զանգեզուրի ՊՄԿ և Արմենթել) կողմից նախորդ տարվա համեմատ 5.1 մլրդ դրամով պակաս շահութահարկ է վճարվել: 2008 թվականին զգալի աճ են ապահովել ֆինանսավարկային կազմակերպությունների վճարումները, որոնք կազմել են 7.7 մլրդ դրամ և 65.5%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը: Օտարերկրյա կազմակերպությունների կողմից 2008 թվականին ՀՀ պետական բյուջե է վճարվել 5.4 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 17.4%-ով: Նվազել է նաև ոչ ռեզիդենտների կողմից վճարված շահութահարկը, որը կազմել է 8.4 մլրդ դրամ և 27.5%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը:



«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով (ընդունվել է 2008 թվականի օգոստոսի 21-ին) սահմանվել է, որ հարկվող շահույթը որոշելիս առանց հիմնավորող փաստաթղթերի համախառն եկամուտը նվազեցվում է 2008 թվականի հունվարի 1-ից օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած հարկ վճարողների համար 2008 թվականի ընթացքում ձեռք բերված ապրանքների, ինչպես նաև 2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա ապրանքային մնացորդների մասով կատարված ծախսերի չափով, եթե այդ ծախսերի մասով առկա է որևէ հաշվարկային փաստաթուղթ կամ բանկային փոխանցումը կամ կանխիկ վճարումների կատարված լինելը հիմնավորող որևէ փաստաթուղթ: 2008 թվականի հունվարի 1-ից օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած հարկ վճարողների համար օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ 2008 թվականի վճարման ենթակա շահութահարկը չի կարող պակաս լինել այդ տարվա համար հաշվարկված համախառն եկամտի 2%-ից և ավելի՝ համախառն եկամտի 10%-ից: Ընդ որում, նշված չափերով վճարված գումարը համարվում է այդ տարվա համար շահութահարկի վերջնական գումար:

2008 թվականին ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել ավելի քան 53.7 մլրդ դրամ *եկամտահարկ*՝ ապահովելով հարկային եկամուտների 9%-ը՝ նախորդ տարվա 9.3%-ի դիմաց: Եկամտահարկի մուտքերը 14.8%-ով կամ 6.9 մլրդ դրամով գերազանցել են 2007 թվականի ցուցանիշը: Աճը հիմնականում պայմանավորված է աշխատանքի վարձատրության և քաղաքացիաիրավական պայմանագրերի կատարման գծով ստացված գումարների աճով, որը կազմել է 15.3% կամ շուրջ 6.7 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ զգալի աճ է ապահովել նաև այլ աղբյուրներից, մասնավորապես՝ ձեռնարկատիրական գործունեությունից (24.8%-ով), ոչ ռեզիդենտներից (22.6%-ով), փայամասնակցություններից, արժեթղթերից և ավանդներից (34.2%-ով) ստացված եկամուտների դիմաց վճարված եկամտահարկը:



2008 թվականի հունվարի 1-ից «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությամբ համախառն եկամտից յուրաքանչյուր ամսվա համար կատարվող անձնական նվազեցումը նախկինում գործող 20000 դրամից դարձել է 25000 դրամ: Մեկ այլ փոփոխությամբ (ընդունվել է 2008 թվականի օգոստոսի 21-ին) 2008 թվականի հունվարի 1-ից օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած անհատ ձեռնարկատերերի համար նախատեսվել է, որ սահմանված կարգով հաշվարկված՝ 2008 թվականի վճարման ենթակա եկամտահարկը չի կարող պակաս լինել այդ տարվա համար հաշվարկված համախառն եկամտի 2%-ից և ավելի՝ համախառն եկամտի 10%-ից: Ընդ որում, նշված չափերով վճարված գումարը համարվում է այդ տարվա համար եկամտահարկի վերջնական գումար:

2008 թվականին պետական բյուջեի պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 37.3 մլրդ դրամ *մաքսատուրք*՝ ապահովելով հարկային եկամուտների 6.2%-ը՝ նախորդ տարվա 4.8%-ի դիմաց: Ներմուծման աճի հետ կապված՝ նախորդ տարվա համեմատ մաքսատուրքի գծով բյուջետային մուտքերն աճել են 55.3%-ով կամ շուրջ 13.3 մլրդ դրամով:

Հաշվետու տարվա ընթացքում պետական բյուջե մուտքագրված *հաստատագրված վճարները* (առանց ծխախոտի արտադրանքի, ներմուծվող բենզինի ու դիզելային վառելիքի հաստատագրված վճարների) կազմել են ավելի քան 20.3 մլրդ դրամ՝ ապահովելով պետական բյուջեի հարկային եկամուտների 3.4%-ը՝ նախորդ տարվա 3.5%-ի դիմաց: Մուտքերի 65%-ը (13.2 մլրդ դրամ) ստացվել է սպասարկման ոլորտից, 23%-ը (4.7 մլրդ դրամ)՝ առևտրական գործունեությունից, 12%-ը (2.4 մլրդ դրամ)՝ հասարակական սննդի ոլորտից: Հաշվետու տարում հաստատագրված վճարները 13.8%-ով կամ 2.5 մլրդ դրամով գերազանցել են 2007 թվականի ցուցանիշը, որը հիմնականում պայմանավորված է ավտոտրանսպորտային միջոցների գազալցման, ինչպես նաև առևտրի իրականացման վայր կազմակերպելու և առևտրական գործունեության, խաղատների գործունեության, հանրային սննդի ոլորտում գործունեության կազմակերպումից, ինչպես նաև դրամական շահումով խաղային ավտոմատների շահագործման համար կատարված վճարումների աճով:

2008 թվականին *պարզեցված հարկի* գծով պետական բյուջե է մուտքագրվել ավելի քան 6.7 մլրդ դրամ: Նշված գումարից շուրջ 5.7 մլրդ դրամը ստացվել է խանութների և կրպակների միջոցով իրականացվող առևտրական գործունեությունից, մնացած գումարը՝ գործունեության այլ տեսակների հարկումից: 2007 թվականի համեմատ պարզեցված հարկի մուտքերը նվազել են 33%-ով կամ ավելի քան 3.3 մլրդ դրամով՝ պայմանավորված «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով, որոնցով 2008 թվականի հունվարի 1-ից կրճատվել են պարզեցված հարկով հարկվող գործունեության տեսակները, ինչպես նաև

նախատեսվել են սահմանափակումներ առևտրային գործունեություն իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 10 մլրդ դրամ *բնօգտագործման և բնապահպանական վճարներ,* որից 5.7 մլրդ դրամը կազմել են բնապահպանական վճարները, 4.3 մլրդ դրամը՝ բնօգտագործման վճարները: 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ բնապահպանական և բնօգտագործման վճարներից պետական բյուջեի մուտքերն աճել են 8.5%-ով կամ 781.7 մլն դրամով: Աճը հիմնականում ապահովվել է բնապահպանական վճարների մասով: Նախորդ տարվա համեմատ որոշ վճարների գծով արձանագրվել է նաև մուտքերի անկում: Մասնավորապես՝ 19.1%-ով նվազել են ավտոտրանսպորտից արտանետվող վնասակար նյութերի համար գանձվող բնապահպանական վճարները, 9.3%-ով՝ ջրօգտագործման վճարները: Վերջինիս վրա ազդեցություն է ունեցել գործող արտոնությունների տարածումը խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող բոլոր կազմակերպությունների ու տեղական ինքնակառավարման մարմինների վրա: «Բնօգտագործման վճարի դրույքաչափերի մասին» ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 864 որոշմամբ մակերևութային (բացառությամբ Սևանա լճի) ջրերի օգտագործման և խմելու համար պիտանի ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանման յուրաքանչյուր խորանարդ մետրի համար սահմանված են եղել համապատասխանաբար 0.5 դրամ և 1 դրամ ջրօգտագործման վճարներ: Նշված գործունեությունների մասով բացառություն են կազմել միայն ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի և Երևանի քաղաքապետարանի կողմից 50 տոկոս և ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր տնօրինող ջրամատակարարման և ջրահեռացման գործունեություն իրականացնող ընկերությունները, որոնց համար սահմանված են եղել համապատասխանաբար 0.025 դրամ և 0.05 դրամ ջրօգտագործման վճարներ: Կատարված փոփոխությամբ, որն ուժի մեջ է մտել 2008 թվականի հունվարի 26-ից, բացառություն են կազմել ոչ միայն ջրամատակարարման և ջրահեռացման գործունեություն իրականացնող վերոնշյալ ընկերությունները, այլ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող բոլոր կազմակերպություններն ու տեղական ինքնակառավարման մարմինները:

2008 թվականին 20.3 մլրդ դրամ պետական բյուջե է մուտքագրվել այլ հարկերից, որը նախորդ տարվա համեմատ ավելացել է 29.7%-ով կամ 4.7 մլրդ դրամով:

Պետական տուրք

2008 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 22.3 մլրդ դրամ պետական տուրքեր՝ ապահովելով պետական բյուջեի եկամուտների 2.8%-ը՝ նախորդ տարվա 3.2%-ի

դիմաց: Պետական տուրքի փաստացի մուտքերը 1.8%-ով կամ 399.8 մլն դրամով զիջել են ՀՀ կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված ծրագիրը: Ծրագրի ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է այլ ծառայությունների և գործողությունների (6%-ով), հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների իրականացման (12.3%-ով), պետական գրանցման (7.4%-ով), գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողության համար (20.4%-ով) ստացված մուտքերի գծով: Միևնույն ժամանակ, որոշ տուրքերի գծով արձանագրվել են կանխատեսվածից բարձր ցուցանիշներ: Մասնավորապես՝ ծրագիրը գերազանցել են լիցենզավորման (12.1%-ով), ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար (8.6%-ով), դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների (5.3%-ով), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու ու Հայաստանի Հանրապետության քաղաքացիության փոփոխման (27.1%-ով) համար գանձված տուրքերը:

2007 թվականի համեմատ պետական տուրքերն աճել են 2%-ով կամ 440.6 մլն դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է լիցենզավորման, ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց ելքի, իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների իրականացման, ինչպես նաև հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների իրականացման համար գանձված տուրքերի աճով: Միաժամանակ, զգալիորեն նվազել են պետական գրանցման համար գանձված տուրքերը, որոնք 24.1%-ով կամ 1.1 մլրդ դրամով զիջել են նախորդ տարվա ցուցանիշը:

2008 թվականին դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ տրվող վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական բյուջե է վճարվել ավելի քան 1.1 մլրդ դրամ՝ (որից 655.1 մլն դրամը կազմում են պետական կառավարման մարմինների կողմից վճարված և պետական բյուջեից փոխհատուցված գումարները)՝ նախատեսված 1.07 մլրդ դրամի դիմաց: Նախորդ տարվա համեմատ այս մուտքերը նվազել են 2.5%-ով կամ 29.4 մլն դրամով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու ու Հայաստանի Հանրապետության քաղաքացիության փոփոխման համար վճարվող տուրքերը կազմել են 9.6 մլն դրամ՝ ապահովելով 127.1% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված տուրքերի գծով արձանագրվել է 13.1%-ով նվազում:

Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների դիմաց վճարված տուրքերի գծով պետական բյուջե է վճարվել ավելի քան 2 մլրդ դրամ, որը 12.4%-ով զիջում է կանխատեսված ցուցանիշը: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ վճարումները կատարվում են արտարժույթով, և փոխարժեքի անկման պայմաններում մուտքերը դրամային արտահայտությամբ ավելի ցածր են: Միևնույն ժամանակ նշված տուրքերը 5.8%-ով գերազանցել են նախորդ տարվա փաստացի մուտքերը:

Պետական տուրքերի 15.6%-ը պետական բյուջե է վճարվել պետական գրանցումների դիմաց՝ կազմելով շուրջ 3.5 մլրդ դրամ, որը 7.4%-ով (275.8 մլն դրամով) զիջում է նախատեսվածը և 24.1%-ով (1.1 մլրդ դրամով)՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու, լիցենզառուներին տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության համապատասխան նմուշի փաստաթուղթ տրամադրելու, ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական) և կորցրած տեխնիկական անձնագրի (գրանցման վկայականի) կրկնօրինակ տալու, ինչպես նաև գյուղատնտեսական ինքնագնաց մեքենայի պետական համարանիշ տալու համար գանձված տուրքերի համեմատաբար ցածր կատարողականով: Միաժամանակ պետական գրանցման դիմաց որոշ տուրքերի գծով արձանագրվել է ծրագրի գերազանցում:

2007 թվականի համեմատ պետական գրանցումից ստացված տուրքերի նվազումը հիմնականում պայմանավորված է «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությամբ, որի համաձայն տեխնիկական զննությունն իրականացնում են տրանսպորտային միջոցի հաշվառման վայրը սպասարկող տարածքում տեխնիկական զննության լիցենզիա ունեցող կազմակերպությունները:

Մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տրամադրելու դիմաց 2008 թվականին պետական բյուջե է վճարվել 1.3 մլն դրամ՝ ապահովելով 73.9% կատարողական և 27.7%-ով զիջելով նախորդ տարվա մուտքերը: Մուտքերի նվազումը պայմանավորված է մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի դիմաց տրամադրված վկայագրերի թվի նվազմամբ. հաշվետու տարում այն կազմել է 267՝ 2007 թվականի 364-ի դիմաց:

Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված գործողությունների համար հաշվետու տարում ՀՀ պետական բյուջե է վճարվել 278.6 մլն դրամ, որը 20.4%-ով զիջում է նախատեսվածը և 0.8%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը, որը պայմանավորված է հայտատուների թվի նվազմամբ:

Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակության փաստաթղթերի տրամադրման համար 2007 թվականին գանձվել է շուրջ 3 մլրդ դրամ՝ կազմելով կանխատեսված մուտքերի 108.6%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված տուրքերի գծով արձանագրվել է 19% աճ:

Հաշվետու տարում պետական բյուջե մուտքագրված պետական տուրքերի 19.2%-ը ստացվել է լիցենզիաների տրամադրման դիմաց: Նշված աղբյուրից պետական բյուջե է վճարվել շուրջ 4.3 մլրդ դրամ, որը 12.1%-ով գերազանցում է կանխատեսված և 13.5%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը: Լիցենզավորման գծով մուտքերի գերազանցում է արձանագրվել բարդ ընթացակարգով տրվող լիցենզավորման դիմաց վճարված տուրքերի գծով: Ծրագրի գերազանցումը հիմնականում պայմանավորված է վիճակախաղերի և շահումներով խաղերի (345.3 մլն դրամ), տրանսպորտի (112.2 մլն դրամ), պետական սեփականություն հանդիսացող ընդերքի և բնական ռեսուրսների օգտագործման (81 մլն դրամ), բանկային և ֆինանսավարկային կազմակերպությունների (35.6 մլն դրամ) բնագավառների լիցենզավորումից ստացված մուտքերով: Միևնույն ժամանակ, որոշ տուրքերի գծով կանխատեսված մուտքերը ցածր են եղել ծրագրվածից: Մասնավորապես՝ պարզ ընթացակարգով տրամադրված լիցենզիաների դիմաց ստացվել է 651.4 մլն դրամ՝ կազմելով կանխատեսված մուտքերի 87.8%-ը և նախորդ տարվա մուտքերի 97.3%-ը: Նախորդ տարվա համեմատ լիցենզավորման դիմաց վճարված տուրքերի աճը հիմնականում պայմանավորված է վիճակախաղերի և շահումներով խաղերի (պայմանավորված նոր տեսակի խաղային սարքավորումների նկատմամբ հետաքրքրության բարձրացմամբ և քաղաքների վարչական սահմաններից դուրս նոր տարածքների յուրացման գործոնով) և տրանսպորտի բնագավառներում լիցենզավորման դիմաց վճարված տուրքերի աճով:

2008 թվականին այլ ծառայությունների և գործողությունների համար գանձված տուրքերի գումարը կազմել է ավելի քան 8.1 մլրդ դրամ, որն ապահովել է պետական տուրքի 36.5%-ը: Նշված մուտքերը 6%-ով զիջել են կանխատեսվածը, բայց միևնույն ժամանակ 6.2%-ով գերազանցել նախորդ տարվա փաստացի մուտքերը: Նշված մուտքերի դինամիկան մեծ մասամբ պայմանավորված է դրանցում մեծ տեսակարար կշիռ ունեցող՝ օդային տրանսպորտով ֆիզիկական անձանց ելքի համար գանձված տուրքերով: Հաշվետու տարում այս մուտքերը կազմել են ավելի քան 7 մլրդ դրամ՝ 10%-ով զիջելով կանխատեսվածը, որը պայմանավորված է 2008 թվականին օդային ելքի համար պետական տուրքի արտոնության իրավունքից օգտվող ուղևորների թվաքանակի աճով (14%-ով), իսկ նախորդ տարվա փաստացի մուտքերի նկատմամբ 7.2%-ով գերազանցումը կապված է ուղևորափոխադրումների աճի հետ (8.1%-ով): 2008 թվականին գերազանցվել են պետական մենաշնորհային բնույթի ծառայությունների (գործողությունների) մատուցումը հաստատող փաստաթղթի (վկայականի) տրամադրման համար յուրաքանչյուր քննությունն ընդունելու համար, ինչպես նաև

վարորդական իրավունքի վկայական և կորցրած վկայականի կրկնօրինակը տալու համար կատարված վճարները, որոնք համապատասխանաբար կազմել են 268.8 մլն դրամ և 562.1 մլն դրամ՝ նախատեսված 6.9 մլն դրամի և 539.6 մլն դրամի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված տուրքերի գծով նույնպես արձանագրվել է աճ:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ

2008 թվականին պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով բյուջետային եկամուտները կազմել են 105 մլրդ դրամ՝ 100.1%-ով ապահովելով կառավարության ճշտված ծրագրով նախատեսված ցուցանիշը: 2007 թվականի համեմատ նշված վճարներն աճել են 18.7%-ով կամ ավելի քան 16.5 մլրդ դրամով: Նշված գումարից 87.9 մլրդ դրամը վճարվել է գործատուների կողմից, 14.1 մլրդ դրամը՝ աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից, 3 մլրդ դրամը՝ անհատ ձեռնարկատերերի կողմից:

«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությամբ (ընդունվել է 2008 թվականի օգոստոսի 21-ին) սահմանվել է, որ ավելացված արժեքի հարկ վճարող չհամարվող և հաստատագրված վճար վճարող հանդիսացող անհատ ձեռնարկատերերը (ձեռներեցները) սոցիալական վճարումները կատարում են սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի տարեկան չափի նկատմամբ 3 տոկոս դրույքաչափով, բայց ոչ պակաս 60 հազար դրամից: Ընդ որում, 2008 թվականի ընթացքում պարզեցված հարկ վճարողները, հաստատագրված վճար վճարողները, ինչպես նաև «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների հետևանքով 2008 թվականի հունվարի 1-ից պարզեցված հարկից ընդհանուր հարկման կարգին անցած հարկ վճարողները 2008 թվականի համար կարող են կատարել համապատասխան վերահաշվարկներ՝ հաշվի առնելով վերոնշյալ դրույքաչափերը:

Պաշտոնական դրամաշնորհներ

2008 թվականին արտաքին աղբյուրներից տրամադրվել են շուրջ 15 մլրդ դրամ պաշտոնական տրանսֆերտներ՝ կազմելով տարեկան ճշտված ծրագրի 38.4%-ը: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի ցածր կատարողականով, որի շրջանակներում նախատեսված 21.1 մլրդ դրամի դիմաց ստացվել է 5.3 մլրդ դրամ կամ 24.9%-ը: 33.3%-ով է ստացվել Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների ֆինանսավորման համար նախատեսված դրամաշնորհը՝ կազմելով ավելի քան 2.3 մլրդ դրամ: Հաշվետու տարում Ճապոնիայի կառավարության կողմից «Պարենային արտադրության աճ» ծրագրի

շրջանակներում տրամադրված ապրանքանյութական արժեքների դրամայնացումից նախատեսված 750 մլն դրամից պետական բյուջե է մուտքագրվել 603.3 մլն դրամ, որը պայմանավորված է նշված միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի կատարողականով: Գեղարքունիքի և Տավուշի մարզերի զարգացման ծրագրերի ֆինանսավորման նպատակով Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից տրամադրվել է շուրջ 118.8 մլն դրամ, որը կազմում է տարեկան ծրագրի 88.2%-ը:

2008 թվականի պետական բյուջեում նախատեսված դրամաշնորհներից չեն ստացվել Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող՝ ՀՀ Շիրակի և Լոռու մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման, Ճապոնական սոցիալական զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող՝ համատիրությունների վրա հիմնված քաղաքային ջրամատակարարման և ջրահեռացման կառավարման բարելավման ծրագրի շրջանակներում նախատեսված դրամաշնորհը՝ 2.2 մլրդ դրամ ընդհանուր գումարով:

Հաշվետու տարում Լինսի հիմնադրամից ստացվել են դրամաշնորհներ 3.6 մլրդ դրամ ընդհանուր գումարով, որից 1.76 մլրդ դրամն ուղղվել է Երևանի փողոցների վերանորոգման, 1.66 մլրդ դրամը՝ կրթական հաստատությունների վերականգնման և 195.5 մլն դրամը՝ ճանապարհների վերանորոգման ծրագրերի ֆինանսավորմանը: Հայաստանի Հանրապետության ու Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության միջև ստորագրված՝ աղքատության հաղթահարման նպատակով աջակցության մասին փոխըմբռնման հուշագրի շրջանակներում ստացված դրամաշնորհային միջոցները կազմել են 531.3 մլն դրամ՝ 7.5%-ով գերազանցելով տարեկան ծրագրային ցուցանիշը: Ավելի քան 2.2 մլրդ դրամ է ստացվել մի շարք այլ նպատակային ծրագրերի շրջանակներում՝ կազմելով նախատեսվածի 64.8%-ը:

2008 թվականին շուրջ 261.1 մլն դրամ մուտքագրվել է պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվներին՝ նրանց կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում:

Նախորդ տարվա համեմատ պաշտոնական դրամաշնորհներից պետական բյուջեի մուտքերը նվազել են 38.9%-ով:

Այլ եկամուտներ

Պետական բյուջեի այլ եկամուտները 2008 թվականին կազմել են շուրջ 44.3 մլրդ դրամ, որը կազմում է բյուջեի եկամուտների 5.6%-ը՝ նախորդ տարվա 5%-ի դիմաց: Այլ եկամուտները գերազանցել են կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված ծրագրով սահմանված ցուցանիշը 10.3%-ով կամ 4.1 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ

միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների բարձր ցուցանիշով, որոնք նախատեսված 2.4 մլրդ դրամի դիմաց կազմել են շուրջ 6.5 մլրդ դրամ: Տարեսկզբին պետական բյուջեի ազատ մնացորդի առկայության, տարվա ընթացքում եկամուտների ծրագրի գերակատարման և ծախսերի խնայողության արդյունքում պետական բյուջեի ժամանակավորապես ազատ միջոցների առկայությունը հնարավորություն է ժամկետային ավանդներ դնել ԿԲ-ում՝ ապահովելով համապատասխան տոկոսային եկամուտների ստացումը պետական բյուջե: Նշենք, որ նախորդ տարվա համեմատ նշված մուտքերն ավելացել են 50%-ով կամ 2.2 մլրդ դրամով:

Բացի այդ, մի քանի այլ եկամտատեսակների գծով ևս արձանագրվել է ծրագրի գերազանցում: Մասնավորապես՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից նախատեսված 70 մլն դրամի դիմաց պետական բյուջե է փոխանցվել 500.1 մլն դրամ: Իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերը կազմել են շուրջ 4.5 մլրդ դրամ՝ 9.1%-ով գերազանցելով ծրագիրը և 42.1%-ով՝ նախորդ տարվա ցուցանիշը: Աճը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության ճանապարհային ոստիկանության կողմից արձանագրված խախտումների համար վարչական տուգանքների գանձումներից, գրանցման-քննական ծառայությունների դիմաց վճարումներից և այլ վճարովի ծառայություններից, ինչպես նաև հարկային ու մաքսային մարմինների կողմից գանձումների աճով: Հաշվետու տարում իրավաբանական անձանց բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվել են 948.1 մլն դրամի շահաբաժիններ՝ 61.2%-ով գերազանցելով ծրագրային ցուցանիշը և 46%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Պետության կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման դիմաց տոկոսավճարները կազմել են 468.6 մլն դրամ՝ 54%-ով գերազանցելով ծրագրային ցուցանիշը, որը հիմնականում պայմանավորված է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից 158.5 մլն դրամ վճարումով, որը բյուջեում չի նախատեսվել:

Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության դիմաց 2008 թվականին ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 884.4 մլն դրամ՝ 13%-ով գերազանցելով ծրագիրը և 87.1%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը: Մասնավորապես՝ 758.6 մլն դրամ է մուտքագրվել գույքի, 125.8 մլն դրամ՝ պետական պահուստի հողերի վարձակալությունից, որոնք համապատասխանաբար 8.6%-ով և 78.4%-ով գերազանցել են կանխատեսված մուտքերը:

Այլ եկամուտներում ընդգրկված մի շարք եկամտատեսակների գծով արձանագրվել է ծրագրի ցածր կատարողական: Մասնավորապես՝ պետության կողմից ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման դիմաց ստացվել են շուրջ 136.4 մլն դրամ տոկոսավճարներ՝ 21.3%-ով զիջելով ծրագիրը: Հարկ է նշել, որ վրացական կողմը պատշաճորեն

կատարել է իր պարտավորությունները՝ ՀՀ կառավարության և Վրաստանի կառավարության միջև ստորագրված «ՀՀ հանդեպ Վրաստանի պարտքի վերաձևակերպման մասին» համաձայնագրերով հաստատված վճարման ժամանակացույցերին համապատասխան (մինչև 31.12.2008թ.), սակայն վերջին վճարումը Գանձապետական միասնական հաշվին մուտքագրվել է 09.01.2009թ.:

Տիրազուրկ, ժառանգության իրավունքով, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից (բացառությամբ ՀՀ համայնքների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների) նվիրատվության կարգով պետությանը որպես սեփականություն անցած դրամական միջոցներից, ինչպես նաև հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող գույքի օտարումից մուտքերը կազմել են 104.7 մլն դրամ կամ ծրագրի 91.1%-ը և նախորդ տարվա փաստացի մուտքերի 11.1%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված եկամուտների անկումը պայմանավորված է 2007 թվականին ՀՀ կառավարության 04.11.2004թ. N 1480-Ա որոշման համաձայն «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ բաժնետիրոջ կողմից վճարված գումարով՝ 892.5 մլն դրամի չափով:

Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների գծով պետական բյուջե մուտքագրվել շուրջ 30.3 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 95.8%-ը: Նշված գումարից 15.3 մլրդ դրամ վճարվել է ՀՀ շարժական կապի գլոբալ համակարգի ծառայությունների մատուցման 3-րդ օպերատորի մրցույթում հաղթած «ՖՏԱ Տելեկոմ» ՓԲԸ-ի կողմից:

Նախորդ տարվա համեմատ այլ եկամուտներն աճել են 35.4%-ով կամ 7.9 մլրդ դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է ՀՀ շարժական կապի գլոբալ համակարգի ծառայությունների մատուցման երրորդ օպերատորի կողմից կատարված վճարումով, ինչպես նաև բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների ու իրավախախտումների համար կիրառվող պատժամիջոցներից ստացվող մուտքերի աճով:

ՀՀ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

2008 թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվել են 810.6 մլրդ դրամի ծախսեր՝ կազմելով տարեկան ճշտված ծրագրի 94.2%-ը և սկզբնական ծրագրի 98.6%-ը: Ծախսերի ծրագրից շեղումը մեծ մասամբ պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականով: Նշված ծրագրերի շրջանակներում 2008 թվականին կատարվել են 55.8 մլրդ դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսվածի 63.1%-ը: Առանց արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի պետական բյուջեի ծախսերի կատարողականը կազմել է 97.7% (754.8 մլրդ դրամ), որը հիմնականում տնտեսումների արդյունք է:

Հարկ է նշել, որ 2008 թվականին նոր բյուջետային պարտքեր չեն կուտակվել, և նախատեսված հատկացումների սահմաններում պետական մարմինների կողմից ստանձնված պարտավորությունները, որոնց համար սահմանված կարգով ներկայացվել են ֆինանսավորման հայտեր, ամբողջությամբ և ժամանակին ֆինանսավորվել են:

2008 թվականին պետական բյուջեի ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 22.2%՝ պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված 23.3%-ի և նախորդ տարվա 22%-ի դիմաց: 2008 թվականին, նախորդ տարվա համեմատ, բյուջետային ծախսերն աճել են 16.8%-ով կամ շուրջ 116.8 մլրդ դրամով[3]:

Տնտեսագիտական դասակարգում

Ըստ տնտեսագիտական բովանդակության՝ ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի ծախսերն ունեցել են հետևյալ կառուցվածքը. դրանց 88.5%-ն ուղղվել է ընթացիկ և 11.5%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններին: Ծախսերի ծրագրից 5.8% շեղումը հիմնականում արձանագրվել է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերում, որոնք կատարվել են 84.8%-ով, իսկ ընթացիկ ծախսերի կատարողականի ցուցանիշը կազմել է 97.6%: Նախորդ տարվա համեմատ՝ բյուջեի ծախսերն ավելացել են 16.8%-ով: Ծախսերի աճը ավելի քան կիսով չափ պայմանավորված է սուբսիդիաների ավելացմամբ:

[3] 2008 թվականին առաջին անգամ ՀՀ պետական բյուջեն կազմվել է «Պետական ֆինանսների վիճակագրություն-2001» (GFS-2001) ձեռնարկի դասակարգմանը համապատասխան, նաև պետական բյուջեում ներառվել է նախկին ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեն, ուստի 2008 թվականի հետ համադրելի դասակարգման բերելու նպատակով նախորդ տարվա ցուցանիշներում կատարվել են համապատասխան ճշտումներ:



Ընթացիկ ծախսեր

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը հատկացվել է 717.5 մլրդ դրամ, որը կազմում է տարեկան ծրագրի 97.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային և վարկային ծրագրերի ցածր կատարողականով: Առանձին ծախսային հոդվածներում առկա են նաև տնտեսումներ:

Հաշվետու տարում ընթացիկ ծախսերի 8.9%-ը՝ 64.1 մլրդ դրամ, տրամադրվել է պետական հիմնարկների աշխատողների *աշխատավարձերի* վճարմանը: Աշխատավարձերի գծով օգտագործվել է տարեկան նախատեսված միջոցների 97.3%-ը: Նախորդ տարվա համեմատ աշխատավարձի ծախսերն ավելացել են 24.8%-ով:

2008 թվականին *ծառայությունների և ապրանքների ձեռքբերման* նպատակով պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 135.3 մլրդ դրամ կամ բյուջեի ընթացիկ ծախսերի 18.9%-ը: Նշված ծախսերի տարեկան ծրագիրը կատարվել է 97.9%-ով: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է ծախսային գրեթե բոլոր հոդվածների գծով առկա տնտեսումներով:

Հաշվետու տարվա ընթացքում *պետական պարտքի սպասարկմանը* տրամադրվել է ծրագրվածի 94.6%-ը՝ շուրջ 11.1 մլրդ դրամ, որից 7.5 մլրդ դրամն ուղղվել է ներքին, իսկ 3.6 մլրդ դրամը՝ արտաքին պարտքի սպասարկմանը: Տնտեսումն արձանագրվել է ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերում՝ 630 մլն դրամ, որը հիմնականում պայմանավորված է ուղենշային միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի ծրագրված ծավալի թերտեղաբաշխմամբ (I կիսամյակի ընթացքում նախատեսված 40.5 մլրդ դրամ արժեկտրոնային

պարտատոմսերի տեղաբաշխման ենթակա ծավալից տեղաբաշխվել է ընդամենը 27.03 մլրդ դրամ ծավալը), որի հետևանքով վճարվող սպասարկման ծախսերի ծավալը փաստացի ավելի քիչ կազմեց: Նախորդ տարվա համեմատ պետական պարտքի սպասարկման ծախսերն ավելացել են 11%-ով՝ հիմնականում պայմանավորված ներքին պարտքի սպասարկման ծախսերի աճով:

2008 թվականի պետական բյուջեից տրամադրվել են 87.7 մլրդ դրամի *սուբսիդիաներ,* որից 21.2 մլրդ դրամը հատկացվել է պետական կազմակերպություններին, իսկ 66.5 մլրդ դրամը՝ ոչ պետական կազմակերպություններին: Սուբսիդիաների գծով բյուջեով նախատեսված ծախսերը կատարվել են 100%-ով: Հատկացված գումարից 65.7 մլրդ դրամը ՀՀ կառավարության 06.04.2006թ. N 449-Ն որոշման համաձայն տրամադրվել է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ին՝ գազի սպառողների վրա սակագնի ազդեցությունը մեղմելու նպատակով: Արդյունքում 2007 թվականի համեմատ՝ պետական բյուջեից տրամադրված սուբսիդիաների գումարն աճել է 4.5 անգամ:

Հաշվետու տարում պետական բյուջեից տրամադրվել են 83.2 մլրդ դրամի *դրամաշնորհներ*՝ ապահովելով 98.8% կատարողական: Պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաները հատկացվել են նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով շուրջ 21 մլրդ դրամ, ինչը 19.2%-ով ավելի է նախորդ տարվա ցուցանիշից: Այլ ընթացիկ դրամաշնորհներին տրամադրվել է 28.8 մլրդ դրամ, և 10.2 մլրդ դրամ են կազմել կապիտալ դրամաշնորհները պետական հատվածի այլ մակարդակներին՝ ապահովելով համապատասխանաբար 98.9% և 95.5% կատարողական:

Հաշվետու տարում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 29%-ը կամ 207.9 մլրդ դրամ կազմել են *սոցիալական նպաստները և կենսաթոշակները,* որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 99.6%-ով: Հատկացումները բաշխվել են հետևյալ կերպ. 54.4 մլրդ դրամն ուղղվել է նպաստների և 153.5 մլրդ դրամը՝ կենսաթոշակների ֆինանսավորմանը:

2008 թվականի պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 17.9%-ը կամ 128.2 մլրդ դրամ կազմել են *այլ ծախսերը,* որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 92.4%-ով: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականով:

Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ

2008 թվականին պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 93.1 մլրդ դրամ, որոնք կազմում են ընդհանուր ծախսերի 11.5%-ը և տարեկան ծրագրի 74.2%-ը: Ծրագրից շեղումը պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում կատարված կապիտալ

շինարարության ծախսերի ցածր կատարողականով: 2008 թվականին իրականացված ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կազմել են 181.7 մլրդ դրամ, որից 133.4 մլրդ դրամն ուղղվել է կապիտալ ներդրումներին, 30.7 մլրդ դրամը՝ մեքենաների և սարքավորումների ձեռք բերմանը, պահպանմանը և հիմնանորոգմանը, 4.5 մլրդ դրամը՝ այլ հիմնական միջոցների և 13.1 մլրդ դրամը՝ պաշարների ձեռքբերմանը:

Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից 2008 թվականին պետական բյուջե է մուտքագրվել 88.6 մլրդ դրամ կամ տարեկան ծրագված գումարի 99.8%-ը: Նշված գումարից 65.7 մլրդ դրամը ստացվել է Հրազդանի 5-րդ էներգաբլոկի վաճառքից, որի հաշվին սուբսիդիա է հատկացվել «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ին: Արդյունքում 2007 թվականի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերն ավելացել են 4.6 անգամ:

Գործառական դասակարգում

Ընդհանուր բնույթի պետական ծառայություններ

2008 թվականին ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 104.8 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 95.1% կատարողական: Ծրագրից շեղումը հիմնականում առաջացել է «Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ», «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)», «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» և «Պետական պարտքի գծով գործառնություններ» դասերում՝ մասամբ պայմանավորված նաև տվյալ բաժնում ընդգրկված՝ արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականով:

«Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» խմբի ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 12.6 մլրդ դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 98.1%-ը:

2008 թվականին 2.2 մլրդ դրամ և 379.3 մլն դրամ է տրամադրվել ՀՀ Ազգային ժողովին և ՀՀ վերահսկիչ պալատին, որոնց կատարողականը կազմել է համապատասխանաբար 99.9% և 99.8%: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են համապատասխանաբար 7.2%-ով և 105.9%-ով: Աճը հիմնականում պայմանավորված է աշխատավարձի, իսկ Վերահսկիչ պալատում՝ նաև հաստիքային միավորների աճով:

Տվյալ խմբում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը տրամադրվել է 8.2 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 97.2%-ը, որը պայմանավորված է տնտեսումներով:

Վարչական օբյեկտների հիմնանորոգման ծրագրով կատարվել են 934.8 մլն դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրի 99.6%-ը: Իսկ վարչական օբյեկտների շինարարությանը տրամադրվել է 695.9 մլն դրամ, որն իրականացվել է 99.4%-ով: Հատկացված միջոցների հաշվին շարունակվել են ՀՀ Ազգային ժողովի նոր մասնաշենքի կառուցման աշխատանքները, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Վանաձորի հարկային տեսչության վարչական շենքի կառուցումը: «Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ին նախատեսված 112.8 մլն դրամ պետական աջակցությունը և ՀՀ վերահսկիչ պալատի պահուստային ֆոնդի գծով նախատեսված 7.6 մլն դրամն ամբողջությամբ տրամադրվել են:

Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերությունների խմբի ծրագրերին հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է շուրջ 36.9 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 95.1%-ը: Տնտեսումները, որոնք կազմել են 1.9 մլրդ դրամ, հիմնականում առաջացել են ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության համակարգի զարգացման, հատուկ ֆոնդի և մաքսային պետական կոմիտեի նյութական խրախուսման և սոցիալական

զարգացման ֆոնդերի ծախսերում, որոնք կատարվել են համապատասխանաբար 55.9, 16.7 և 81.7 տոկոսով:

Այս խմբում ներառված գործադիր իշխանության մարմինների պահպանմանը տրամադրվել է 7.8 մլրդ դրամ, որը կազմում է ծրագրի 98.9%-ը: Ամբողջությամբ կատարվել են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակիցների խրախուսման նպատակային ֆոնդի, ՀՀ պետական բյուջեից ակցիզային դրոշմանիշների ձեռք բերման և ՀՀ պետական պարտատոմսերի գովազդի ծախսերը, որոնք կազմել են համապատասխանաբար 463.5 մլն դրամ, 704.6 մլն դրամ և 42.1 մլն դրամ: 2008 թվականին առաջին անգամ ՀՀ պետական բյուջեում միջոցներ հատկացվեցին արտահանողներին ավելացված արժեքի հարկի գերավճարների վերադարձի համար՝ 22 մլրդ դրամ, որն ամբողջությամբ տրամադրվել է: Բացի այդ, ևս 3.4 մլրդ դրամ վերադարձվել է ավելացված արժեքի հարկի եկամուտները նվազեցնելու միջոցով: Նախորդ տարվա համեմատ նշված հատկացումներն ավելացել են 10.1 մլրդ դրամով:

Մաքսատների և մաքսային կետերի պահպանմանը տրամադրվել է 1.2 մլրդ դրամ, իսկ ՀՀ գանձապետական համակարգի վճարահաշվարկային սպասարկմանը՝ 164 մլն դրամ, որոնց կատարողականը կազմել է 98.9%:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Օտարերկրյա ներդրումների և արտահանման աջակցության երկրորդ դրամաշնորհային ծրագրի» նպատակն է օժանդակել Հայաստանին՝ ներդրումների և արտահանման խթանման գործում, ինչպես նաև բարելավել բիզնես և ներդրումային միջավայրը, որի շնորհիվ օժանդակություն կցուցաբերվի նաև տնտեսական և սոցիալական անցումային գործընթացին: Ծրագիրը բաղկացած է 4 բաղադրիչներից՝ «Ենթակառուցվածքների և հմտությունների զարգացում», «Ներդրողների և արտահանողների սպասարկման ինստիտուցիոնալ ամրապնդում», «Ներդրումների և արտահանման խթանում», «Ծրագրի կառավարում, մոնիտորինգ և գնահատում»: Ծրագրի շրջանակներում նախատեսված էր կատարել 132 մլն դրամի ծախսեր, սակայն փաստացի օգտագործվել է 69.8 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է նրանով, որ խորհրդատվական ծառայությունների իրականացման նպատակով մշակված տեխնիկական առաջադրանքները և սարքավորումների գնման գործընթացը սկսելու նպատակով նախատեսված փաստաթղթերը Համաշխարհային Բանկ ներկայացնելուց հետո վերջինիս կողմից երկարատև դիտարկումների պատճառով նախատեսված աշխատանքները չեն իրականացվել:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական պարտքի կառավարման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարվել են 2.3 մլն դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսվածի 23.1%-ը: Ծրագրի նպատակն է ամրապնդել ՀՀ ֆինանսների նախարարության պետական պարտքի կառավարման վարչության ինստիտուցիոնալ կարողությունները՝ պարտքի կառավարումն ուժեղացնելու և ներքին պարտքի շուկայի զարգացման միջոցով: Հաշվետու տարում օգտագործվել են միայն Կառավարության

համաֆինանսավորման միջոցները, իսկ դրամաշնորհային միջոցները չեն ստացվել: Պատճառն այն է, որ ՎԶՄԲ և ՀՀ միջև դրամաշնորհի հատկացման վերաբերյալ համաձայնագիրը ստորագրվել է 2008 թվականի ապրիլի 11-ին և նախագահի կողմից հաստատվել է հունիսի 18-ին, որից հետո միայն սկսվել է նախատեսված աշխատանքների իրականացումը:

«Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Վիճակագրական Մաստեր-պլանի մշակում և տեխնիկական աջակցություն վիճակագրական կարողությունների ուժեղացման միջոցով» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է 4 մլն դրամ կամ նախատեսվածի 102.3%-ը: Միջոցներն օգտագործվել են «Ազգային վիճակագրական գլխավոր ծրագրի մշակում» թեմայով ուսումնական այցի կազմակերպման նպատակով:

Հանրային հատվածի ներքին աուդիտի իրականացման դրամաշնորհային ծրագրին հատկացվել է շուրջ 40.3 մլն դրամ, որը կատարվել է 100%-ով: Գումարը վճարվել է մատուցված խորհրդատվական ծառայությունների դիմաց:

Հաշվետու տարում շուրջ 7.7 մլրդ դրամ է տրամադրվել *արտաքին հարաբերությունների* խմբի ծրագրերին, որը կազմել է նախատեսված հատկացումների 97%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է դեսպանությունների շենքերի գնման և Հայաստանի Հանրապետությանը սուվերեն վարկանիշ շնորհելու կապակցությամբ կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարումների ցածր կատարողականով:

Արտաքին հարաբերությունների ծախսերից ավելի քան 4.6 մլրդ դրամն ուղղվել է ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանմանը՝ կազմելով նախատեսվածի 99.8%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 5.5%-ով՝ պայմանավորված նոր դիվանագիտական ներկայացուցչությունների ստեղծմամբ. 2008 թվականին Գլխավոր հյուպատոսություն է բացվել Վրաստանի Բաթումի քաղաքում և հյուպատոսական կետ՝ Հոլանդիայի Հաագա քաղաքում:

Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարների գծով ծախսերը կատարվել են 99.8%-ով՝ կազմելով 862.9 մլն դրամ:

Տնտեսումներ են արձանագրվել արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների և արտասահմանյան պաշտոնական գործուղումների ծախսերում, որոնք կատարվել են 93.5%-ով: Նշված ծրագրերի գծով նախատեսված 300-ական մլն դրամի դիմաց կատարվել են համապատասխանաբար 280.5 և 280.4 մլն դրամի ծախսեր:

ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի «Պետական արարողակարգի ծառայություն» գործակալության պահպանմանը հատկացվել է 132.2 մլն դրամ, գործադիր իշխանության, պետական կառավարման մարմինների պահպանմանը՝ 722.8 մլն դրամ, ապահովելով տարեկան ծրագրի 98.3% և 99.2% կատարողական:

Միջազգային ֆինանսական կազմակերպություններին ՀՀ անդամակցության գծով պարտավորությունների կատարման ծրագրով նախատեսված 669.9 մլն դրամը տրամադրվել է ողջ ծավալով:

Դեսպանությունների շենքերի գնման ծրագիրը կատարվել է 17.8%-ով: Տրամադրված 30.5 մլն դրամն ուղղվել է Բելգիայում ՀՀ դեսպանության շենքի ձեռք բերման նպատակով ING բանկից վերցված վարկի և վերջինիս տոկոսավճարների՝ պայմանագրով նախատեսված 2008 թվականի չափաբաժնի մարմանը: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ դեսպանության նոր շենքի գնում չի իրականացվել:

Հայաստանի Հանրապետությանը սուվերեն վարկանիշ շնորհելու կապակցությամբ կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարման ծախսերը կազմել են 20.7 մլն դրամ կամ նախատեսվածի 34.9%-ը:

Հաշվետու տարում Սոցիալական ապահովության միջազգային ասոցիացիային ու Կենսաթոշակային և սոցիալական հիմնադրամների միջազգային ասոցիացիային անդամակցության վճարները գրեթե ամբողջությամբ տրամադրվել են՝ կազմելով համապատասխանաբար 4.1 և 14.1 մլն դրամ:

ՀՀ-ում ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ) ծրագրի շրջանակներում հատկացվել է 39.1 մլն դրամ (100%), որն ուղղվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով Հայաստանի ազգային հանձնաժողովի կողմից ներկայացված մի շարք միջոցառումների ֆինանսավորմանը:

Ընդհանուր բնույթի ծառայությունների խմբի ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 72.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է նրանով, որ էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման գծով պետական պատվերի ծրագիրը, որի համար նախատեսվել էր 700 մլն դրամ, հաշվետու տարում չի կատարվել: ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման ռազմավարությամբ սահմանված պայմաններով 2008 թվականի 1-ին եռամսյակում նախաձեռնվել է մրցույթի ձևով համակարգի ներդրման համար անհրաժեշտ ծրագրային ապահովման ձեռքբերման գործընթացը: Սակայն մշակվել է գնումների համակարգի բարեփոխումների ռազմավարության նախագիծ, որով փոխվել են էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման համար նախկինում հայտարարված պայմանները: Այս կապակցությամբ դադարեցվել է մրցույթի գործընթացը՝ համակարգի ներդրման տեխնիկական առաջադրանքը ՀՀ կառավարության կողմից հաստատվելիք ռազմավարության պահանջներին համապատասխանեցնելու նպատակով: Սակայն 2008 թվականին ռազմավարությունը չի հաստատվել, ինչով պայմանավորված՝ նշված միջոցները չեն օգտագործվել:

Այս դասում ներառված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման,

քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գտնվող քաղաքացիական ծառայողների վարձատրության հետ կապված ծախսերը, ինչպես նաև քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորումն ամբողջությամբ կատարվել է՝ կազմելով համապատասխանաբար 178.7, 42, և 147.6 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գտնվող քաղաքացիական ծառայողների վարձատրության հետ կապված ծախսերն աճել են 183.6%-ով, որը պայմանավորված է կադրերի ռեզերվում գտնվող քաղաքացիական ծառայողների թվաքանակի աճով. նախորդ տարվա 93-ի փոխարեն 2008 թվականին այն կազմել է 266 մարդ: Իսկ քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման աճը, որը կազմել է 14.1%, պայմանավորված է աշխատավարձի բարձրացմամբ:

2008 թվականին Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում մարզային զարգացման ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով տրամադրված դրամաշնորհից 16.2 մլն դրամն օգտագործվել է տվյալ խմբի ծախսերի ֆինանսավորման նպատակով: Գեղարքունիքի մարզում հատկացված 2.95 մլն դրամի հաշվին ձեռք է բերվել համակարգչային տեխնիկա և տրամադրվել հասարակական կազմակերպություններին, իսկ Տավուշի մարզում 13.2 մլն դրամի հաշվին իրականացվել են մարզպետարանի և համայնքների աշխատակազմերի վերազինում ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով և մարզում համայնքային ուսումնական կենտրոնի վերազինում: Ծրագիրը կատարվել է 98.8%-ով:

«Ծրագրման և վիճակագրական ընդհանուր ծառայություններ» դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են 992.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 96.3%-ը: Ընդ որում, բոլոր 5 ծրագրերում առկա են տնտեսումներ: Պետական կառավարման մարմինների պահպանմանը տրամադրվել է 602.5 մլն դրամ, որը կազմել է ծրագրի 96.6%-ը: Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրման ծախսերը կազմել են 241.9 մլն դրամ կամ նախատեսվածի 95.9%-ը: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման պետական աջակցության հատկացումները կազմել են 104.9 մլն դրամ կամ նախատեսվածի 95.4%-ը: «SIDA. «Ժամանակի օգտագործում», «Հաշմանդամների կենսապայմանների վիճակագրություն», «Գյուղացիական տնտեսությունների ռեգիստր», «Շրջակա միջավայրի վիճակագրություն»» ծրագրի շրջանակներում արտաբյուջետային միջոցներից հատկացումները կազմել են 13.7 մլն դրամ կամ նախատեսվածի 96.9%-ը: «TASIS. Վիճակագրություն 10-Բիզնես ռեգիստրի

հետազոտություն» ծրագրով արտաբյուջետային միջոցներից հատկացումները կազմել են 29.1 մլն դրամ կամ նախատեսվածի 97.7%-ը:

Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների դասին հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 600.1 մլն դրամ, որից 218.4 մլն դրամ՝ պետական կառավարման մարմինների, 4.2 մլն դրամ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվաշեն համայնքի ղեկավարի աշխատակազմի պահպանմանը, որոնց կատարողականը կազմել է համապատասխանաբար 95% և 99.8%: «ՀՀ պետական գնումների գործակալություն» և «Սպասարկում» ՊՈԱԿ-ներին պետական աջակցությունը նախատեսված ողջ ծավալով կատարվել է՝ կազմելով համապատասխանաբար 145.3 մլն դրամ և 232.2 մլն դրամ:

2008 թվականին *«Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք»* խմբին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 4.4 մլրդ դրամ, որը կազմել է նախատեսված ցուցանիշի 89%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի ցածր կատարողականով: Տվյալ խմբում նախատեսվել են ծրագրի մոնիտորինգի և գնահատման բաղադրիչի ծախսերը, որոնք կատարվել են 22.6%-ով՝ կազմելով 145 մլն դրամ: Ծախսերի թերակատարումը անմիջականորեն կապված է գյուղական ճանապարհների վերականգնման և ոռոգվող գյուղատնտեսության ենթածրագրերի ծավալների կրճատման հետ:

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրի շրջանակներում պետական աջակցությունը ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ ԳԱԱ և այլ պետական մարմինների կազմակերպություններին նախատեսված ծավալով կատարվել է՝ կազմելով համապատասխանաբար 57.7 մլն, 1.5 մլրդ և 244.9 մլն դրամ: Ամբողջությամբ ֆինանսավորվել են նաև «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում ու զարգացում» ծրագրի շրջանակներում պետական աջակցությունը ՀՀ ԳԱԱ կազմակերպություններին, «Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանում» ծրագրի շրջանակներում պետական աջակցությունը ՀՀ կրթության և գիտության նախարարության կազմակերպություններին, ՀՀ ԳԱԱ կազմակերպություններին, ինչպես նաև նոր մրցույթով անցած բազային ֆինանսավորմամբ ծրագրերի իրականացումը, որոնց ծախսերը կազմել են համապատասխանաբար 708 մլն, 104.1 մլն, 60.7 մլն և 286.3 մլն դրամ: «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում ու զարգացում» ծրագրի շրջանակներում պետական աջակցությունը ՀՀ կրթության և գիտության նախարարության միջոցով ծրագիրն իրականացնող կազմակերպություններին և այլ պետական մարմինների կազմակերպություններին կազմել են համապատասխանաբար 516.3 մլն և 246.4 մլն դրամ, որոնք կատարվել են 98.7%-ով և 96.4%-ով: Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարները կազմել են 521.5 մլն դրամ՝ ապահովելով

94.8% կատարողական: Վերջին երեք ծրագրերի կատարողականի համեմատաբար ցածր ցուցանիշները պայմանավորված են տնտեսումներով:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ խմբի ծախսերը հաշվետու տարում կազմել են 2.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.7%-ը: Շեղումն առաջացել է Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերում (97.4%) և գիտական ու գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման (99.3%) ծրագրերում: Մնացած բոլոր ծրագրերը ֆինանսավորվել են ամբողջությամբ: Խմբի ծախսերի զգալի մասը՝ ավելի քան 1.4 մլրդ դրամ, հատկացվել է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմանը: 886.5 մլն դրամ են կազմել Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերը: Ծրագրի շրջանակներում աշխատանքներ են իրականացվել նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման, մշակման, փորձաքննության, Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրականացման հիմնական միջոցառումների ծրագրի, «Երևան» պատմաաշխարհագրական ատլասի ստեղծման և Ե-51 թունելի սեյսմաերկրաբանական հետազոտությունների և եռաչափ մոդելի ստեղծման ուղղություններով:

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորում» ծրագրի շրջանակներում «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա» ՊՈԱԿ-ին «Հայաստանի բնական հումքից նոր հատկություններով նյութերի ստացում» ծրագրի համար պետական աջակցությունը կազմել է 30 մլն դրամ, «ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ» ՊՈԱԿ-ին «Հայոց պատմություն» բազմահատորյակի տպագրություն» ծրագրի իրականացման համար՝ 25 մլն դրամ, «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա» ՊՈԱԿ-ին «Կիսահաղորդչային նանոէլեկտրոնիկա» ծրագրի իրականացման համար՝ 50 մլն դրամ, «ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ» ՊՈԱԿին «Հայաստանի հարակից երկրների պատմություն» եռհատորյակի տպագրության համար՝ 20 մլն դրամ և «Մ. Մաշտոցի անվան թանգարան (Մատենադարան)» ՊՈԱԿ-ին «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց» բազմահատորյակի ստեղծման և հրատարակման համար՝ 26 մլն դրամ: 24.9 մլն դրամ է տրամադրվել Գյումրի քաղաքի ԳԱԱ Ա. Նաջարյանի անվան երկրաֆիզիկայի և ինժեներիայի սեյսմաբանության ինստիտուտի անավարտ շենքի շինարարությանը:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների (այլ դասերին չպատկանող) խմբի ծախսերը հաշվետու տարում կազմել են 6.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 86.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականով: Մասնավորապես՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող պետական հատվածի բարեփոխումների վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 1.4 մլրդ դրամ՝ նախատեսված 1.9 մլրդ դրամի դիմաց: Ծրագրի նպատակներն են պետական կառավարման համակարգի արդյունավետության

բարձրացումն ընտրված հաստատություններում մոդելային նորարարությունների իրականացման միջոցով, պետական կառավարման համակարգի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացումը և կառավարության կողմից որոշումների կայացումն ու քաղաքականության իրականացումն արդյունավետորեն վերահսկելու համար համապատասխան մեխանիզմների ստեղծումը: Ծրագիրը ներառում է հետևյալ վեց բաղադրիչները՝ «Քաղաքացիական ծառայության համակարգի կառավարման հզորացում», «Էլեկտրոնային գնումների համակարգի ներդրում», «Արտաքին վերահսկողության ուժեղացում», «Քաղաքականության մշակման բարելավում», «Տեղական ինքնակառավարման համակարգի հզորացում», «Ծրագրի կառավարում»: Ցածր կատարողական է արձանագրվել ինչպես ընթացիկ, այնպես էլ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերում: Ընթացիկ ծախսերի թերակատարման հիմնական պատճառ են հանդիսացել ծրագրի որոշ բաղադրիչներով նախատեսված աշխատանքների հետաձգումը, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի թերակատարման հիմնական պատճառ է հանդիսացել կորպորատիվ ցանցի համար նախատեսված գումարների վերաբաշխումը:

Հաշվետու տարվա ընթացքում 542 մլն դրամ է տրամադրվել այս խմբում ներառված պետական կառավարման մարմինների՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորման հանձնաժողովի և ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի պահպանմանը, որը կազմել է ծրագրի 98.9%-ը: ՀՀ Նախագահի ընտրություններին և ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին տրամադրվել են համապատասխանաբար 755 մլն դրամ և 819.2 մլն դրամ՝ ապահովելով 98.1% և 99.8% կատարողական:

Նախատեսված ամբողջ ծավալով իրականացվել են հետևյալ ծրագրերը.

- 2008 թվականին փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռք բերմանը տրամադրվել է 146.4 մլն դրամ: Նախորդ տարվա նկատմամբ ծախսերն ավելացել են 43.7 մլն դրամով կամ 42.6%-ով, որը հիմնականում պայմանավորված է կատարված փորձաքննությունների քանակի աճով:
- Աճուրդների կազմակերպման և անցկացման աշխատանքներին տրամադրվել է շուրջ՝ 19 մլն դրամ:
- «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող աշխարհագրական անվանումների հաշվառման և գրանցման աշխատանքներին տրամադրվել է 19 մլն դրամ: ՀՀ աշխարհագրական անվանումների բնագավառում 2008 թվականին շարունակվել են իրականացվել աշխարհագրական օբյեկտների անվանումների քարտադարանի թարմացման և վարման աշխատանքները, որի արդյունքում հայտնաբերվել և հավաքագրվել են աշխարհագրական օբյեկտների նոր անվանումներ՝ մոտ 1700 հատ, որոնք պետք է ներկայացվեն աշխարհագրական անվանումների մասնագիտական հանձնաժողովի

քննարկմանը: Միաժամանակ կատարվել են նաև նոր անվանակոչված աշխարհագրական օբյեկտների անվանումների գրանցման աշխատանքներ: Ավարտվել են մոտ 3000 աշխարհագրական անվանումների հայերեն լեզվով էկզոնիմների համառոտ ցանկի ստեղծման և 500 օրինակի տպագրման աշխատանքները: 2008 թվականին սկսվել են Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող աշխարհագրական օբյեկտների անվանումների տեղեկատվական բանկի՝ աշխարհի աշխարհագրական անվանումների պաշտոնական տեղեկատուի ստեղծման աշխատանքները: Հավաքագրվել են 65000 աշխարհագրական օբյեկտների անվանումներ:

- Գեոդեզիական աշխատանքների իրականացման (WGS-84 համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգում նոր գեոդեզիական ցանցի ստեղծման աշխատանքների շարունակություն) աշխատանքներին տրամադրվել է 47.6 մլն դրամ:
- Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղեկատվության տրամադրմանը հատկացվել է 30 մլն դրամ:
- Պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների և գնահատման աշխատանքների իրականացմանը տրամադրվել է 30.6 մլն դրամ:
- «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն» գործակալության ՊՈԱԿ-ներին տրամադրվել է 372.9 մլն դրամ:
- «Հողշինմոնիթորինգ» ՊՈԱԿ-ի կողմից անշարժ գույքի գնահատման նոր համակարգի ներդրման նպատակով հողի և դրա վրա գտնվող շենքերի ու շինությունների, անշարժ գույքի շուկայի համակարգված դիտարկումների ծախսերը կազմել են 30 մլն դրամ:
- ՀՀ վարչատարածքային միավորների (համայնքների) սահմանների ամրացման ծախսերը կազմել են 46.7 մլն դրամ:

Հաշվետու տարում «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից պետական մասշտաբային շարքի բազային քարտեզների ստեղծման և օդալուսանկարահանման աշխատանքների իրականացմանը տրամադրվել է 60 մլն դրամ, որը կատարվել է 29.2%-ով: Աշխատանքների թերակատարումը պայմանավորված է Երևանում երկրի հեռահար զոնդավորման տվյալների ընդունիչ կայանի տեղադրման և շահագործման աշխատանքների նախատեսված ժամկետների ուշացումով:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի գծով իրականացվող ծախսերը կազմել են 2.2 մլրդ դրամ ապահովելով 92.7% կատարողական և 15.7%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Գանձապետական համակարգի երկրորդ սերնդի բարեփոխումների իրականացման և Պետական հատվածի

հաշվապահական հաշվառման բարեփոխումների իրականացման դրամաշնորհային ծրագրերը կատարվել են համապատասխանաբար 21.3%-ով (18.5 մլն դրամ) և 14%-ով (12.1 մլն դրամ): Դրամաշնորհների ծրագրերի շրջանակներում, առաջնորդվելով ՀԲ-ի կողմից սահմանած ընթացակարգերով, 2008 թվականի օգոստոսի 29-ին «Continental Financial Services, Inc.» ընկերության (ԱՄՆ) հետ, իսկ 2008 թվականի սեպտեմբերի 29-ին՝ «Corporate Solutions» ընկերության (Մեծ Բրիտանիա) հետ կնքվել են խորհրդատվական ծառայությունների գնման պայմանագրեր, որոնց համաձայն դրամաշնորհային միջոցներից վճարումներն իրականացվում են պայմանագրերով նախատեսված հաշվետվությունները հաստատելուց հետո (վերոհիշյալ երկրորդ պայմանագրով նախատեսվել է նաև կանխավճար): 2008 թվականի «Continental Financial Services, Inc.» ընկերության կողմից ներկայացված առաջին հաշվետվության համար խորհրդատուին վճարվել է ավելի քան 9 մլն դրամ, իսկ «Corporate Solutions» ընկերությանը վճարվել է կանխավճար 13.8 մլն դրամի չափով: «Corporate Solutions» ընկերության կողմից ներկայացվել է նաև «ԿՖԿՏՀ իրականացման կարողությունների ստեղծման սկզբնական փուլի հաշվետվությունը», որը ՀՀ ՖՆ կողմից հաստատվել է դեկտեմբերի 24-ին: Սակայն հաշվի առնելով, որ ընկերությունը հաշիվ-ապրանքագիրը ներկայացրել է 2009 թվականին, 2008 թվականին վճարում չի իրականացվել: Հաշվի առնելով նաև, որ վերոհիշյալ պայմանագրերը կնքվել են 2008 թվականի երկրորդ կիսամյակում և դրանց համաձայն՝ մնացած հաշվետվությունները ներկայացվելու են 2009 թվականին, ինչը հնարավոր չէր կանխատեսել 2008 թվականի պետական բյուջեն պլանավորելու ժամանակ, պայմանագրերի շրջանակներում 2008 թվականին այլ վճարում չի իրականացվել:

Անշարժ գույքի կադաստրի վարման ավտոմատացված համակարգի ներդրման, զարգացման և տեղեկատվական բանկի սպասարկման ծրագրով իրականացվող ծախսերը կազմել են 76.3 մլն դրամ կամ նախատեսվածի 57%-ը: Թերակատարումը հիմնականում պայմանավորված է ծրագրով նախատեսված էլեկտրոնային արխիվների ստեղծման աշխատանքներով, որոնք իրականացվել են Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին: Ծրագրով նախատեսվում էր նաև ծրագրային փաթեթների ձեռքբերում, սակայն հայտարարված մրցույթների չկայանալու հետևանքով այն չի իրականացվել:

Երկրատեղեկատվական համակարգի նախագծման, ներդրման և սպասարկման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 86.8 մլն դրամ (99.8%): Հատկացված միջոցներով 2008 թվականին իրականացվել են Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա և Նուբարաշեն համայնքների, ինչպես նաև Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքի բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծման համալիր աշխատանքները:

«Հասարակության տեղեկացվածություն» ծրագրին տրամադրվել է 8 մլն դրամ (99.7%): Ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե աշխատանքների թափանցիկության և հրապարակայնության ապահովման, հասարակության իրազեկման և տեղեկացվածության մակարդակը բարձրացնելու նպատակով իրականացվել են մի շարք աշխատանքներ: Մասնավորապես՝ պատրաստվել և տպագրվել են բացատրական բնույթի բուկլետներ, պատրաստվել և հրատարակվել է «Կադաստրի տեղակագիր» ամսագիրը, որտեղ ամսական կտրվածքով արտացոլվել են նաև անշարժ գույքի շուկայի վերլուծությունները:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Աղքատության հաղթահարման ռազմավարության հավատարմագրային հիմնադրամի երկրորդ սերնդի Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի մշակման, մոնիտորինգի և գնահատման համակարգի հզորացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 32.5 մլն դրամի փոխարեն կատարվել են 55.5 մլն դրամի ծախսեր: Ծրագրի նպատակն է օժանդակել Հայաստանի Հանրապետությանը մասնակցային եղանակով երկրորդ սերնդի Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի (ԱՀՌԾ) մշակման և կառավարման տարբեր մակարդակներում ԱՀՌԾ-ի իրականացման մոնիտորինգի և գնահատման կարողությունների հզորացման հարցում: Դրամաշնորհային ծրագիրը բաղկացած է 2 բաղադրիչներից՝ «Երկրորդ սերնդի ԱՀՌԾ-ի մշակում և հանրության մասնակցության խթանում» և «ԱՀՌԾ-ի մոնիտորինգի և գնահատման համակարգի հզորացում»: Ծախսերը կատարվել են ծրագրի շրջանակում իրականացված մի շարք խորհրդատվական ծառայությունների դիմաց վճարումներ իրականացնելու նպատակով: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի վերանայված փաստաթղթի մշակման 2-րդ փուլ» հանձնարարականի 2-րդ փուլի վճարումը, որը նախատեսվում էր իրականացնել 2007 թվականի վերջում, իրականացվեց 2008 թվականի հունվարին: Կարևոր աշխատանքներից, որոնք իրականացվել են 2008 թվականին դրամաշնորհի շրջանակներում, ԱՀՌԾ վերանայված փաստաթղթի լրամշակման և ամփոփված փաստաթղթի նախագծի պատրաստման աշխատանքների աջակցության իրականացումն էր: Իրականացվել է նաև ԱՀՌԾ մոնիտորինգի ցուցանիշների համակարգի վերանայված հայեցակարգի փաստաթղթի մշակման և մոնիտորինգի և գնահատման համակարգի կատարելագործմանն աջակցության իրականացման նպատակով հանձնարարականը: Ինչպես նաև ծրագրի շրջանակներում Մոնիտորինգի համակարգի համար ձեռք են բերվել համակարգչային սարքավորումներ:

Աղքատության հաղթահարման աջակցության չորրորդ վարկի նախապատրաստման ճապոնական դրամաշնորհային ծրագիրն իրականացվել է 100%-ով: Ծրագրի շրջանակներում օգտագործվել է 77 մլն դրամ: Դրամաշնորհի հիմնական նպատակն է օժանդակություն ցուցաբերել Աղքատության հաղթահարման չորրորդ վարկի նախապատրաստման

միջոցառումներին, սատարել ԱՀՌԾ-ի նախնական իրականացման քաղաքականությանը և անցկացվող ինստիտուցիոնալ բարեփոխումներին: Ծրագիրը բաղկացած է 4 բաղադրիչներից՝ «Հարկային և մաքսային վարչարարության ամրապնդում», «Քաղաքացիական ծառայության բարեփոխումների և պետական ֆինանսական կառավարման համակարգերի խթանում», «Մրցակցության բարձրացում և կանոնակարգային դաշտի բարելավում» և «Սոցիալական ռիսկերի մեղմացում»: Ծրագրի վերջնաժամկետն էր 2007 թվականի դեկտեմբերի 13-ը: Այդ իսկ պատճառով ծրագրի շրջանակներում նախատեսված աշխատանքները ավարտված էին մինչև վերջնաժամկետը և միայն ծրագրի աուդիտը նախատեսվում էր իրականացնել մինչև 2008 թվականի մարտի 30-ը, որն էլ իրականացվել է նախատեսված ժամկետում:

Պետական պարտքի գծով գործառնություններ խմբի ծախսերը հաշվետու տարում կազմել են 10.4 մլրդ դրամ: Պետական բյուջեի տարեկան ծրագրով նախատեսված հատկացումները կատարվել են 94.3%-ով: Շեղումը առկա է ՀՀ պետական արժեթղթերի (գանձապետական պարտատոմսերի) սպասարկման ծախսերում: 2008 թվականի պետական պարտատոմսերի սպասարկման փաստացի ծախսը կազմել է 6.8 մլրդ դրամ՝ նախատեսված 7.4 մլրդ դրամի փոխարեն: Նշված ծավալով տոկոսավճարի խնայողությունը պայմանավորված է ուղենշային միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի ծրագրված ծավալի թերտեղաբաշխմամբ (I կիսամյակի ընթացքում նախատեսված 40.5 մլրդ դրամ արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման ենթակա ծավալից տեղաբաշխվել է ընդամենը 27.03 մլրդ դրամը), որի հետևանքով սպասարկման ծախսերն ավելի քիչ կազմեցին: Մուրհակների սպասարկման ծախսերը կազմել են 3.6 մլն դրամ: Շուրջ 3.6 մլրդ դրամ են կազմել արտաքին պարտքի սպասարկման ծախսերը, որոնք կատարվել են 100%-ով:

2008 թվականին ՀՀ պետական բյուջեից կառավարության այլ մակարդակներին նախատեսված ընդհանուր բնույթի տրանսֆերտներն ամբողջությամբ ֆինանսավորվել են՝ կազմելով շուրջ 21.6 մլրդ դրամ: Նշված գումարից ավելի քան 21.3 մլրդ դրամը կազմել են համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները և Ազգային Ժողովի ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցումը: «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն բնապահպանական ծրագրերի իրականացման համար ՀՀ համայնքներին տրամադրվել են 114.3 մլն դրամի սուբվենցիաներ՝ կազմելով նախատեսվածի 98.2%-ը: Ամբողջությամբ կատարվել է Երևան քաղաքի Ավան թաղային համայնքին պետական աջակցությունը, որը կազմել է 100 մլն դրամ:

Պաշտպանություն

2008 թվականին պաշտպանության բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 121.2 մլրդ դրամ, որը 3.5%-ով զիջում է տարեկան ծրագիրը: Տնտեսումների զգալի մասն արձանագրվել է ռազմական կարիքների բավարարման ծախսերում: Նախորդ տարվա համեմատ ոլորտի ծախսերն աճել են 25.1%-ով:

Ռազմական պաշտպանությանը հատկացվել է 116.3 մլրդ դրամ, որից 116.2 մլրդ դրամը՝ ռազմական կարիքներին, որը կազմում է ծրագրի 96.5%-ը: ՀՀ ռազմական կցորդների պահպանմանը հատկացվել է 115.6 մլն դրամ, որը կազմում է ծրագրի 71.3%-ը:

Արտաքին ռազմական օգնությանը տրամադրվել է՝ 95.4 մլն դրամ, որը կազմում է ծրագրի 82.3%-ը: Այս դասում ներառված են՝ ՆԱՏՕ-ում Հայաստանի Հանրապետության ռազմական ներկայացուցչության պահպանման, ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի համադրման օղակում ՀՀ կապի սպայի գործունեության ապահովման, ՆԱՏՕ-ի վերափոխման հրամանատարությունում ՀՀ փոխգործակցության ներկայացուցչի պահպանման ծրագրերը, որոնց հատկացումները կազմում են համապատասխանաբար 36.6 մլն դրամ, 25.7 մլն դրամ և 23.5 մլն դրամ: Այս ծրագրերում առկա են տնտեսումներ, որոնք առաջացել են արտարժույթի կուրսի տարբերության հետևանքով: Երևանում ՆԱՏՕ-ի հասարակական տեղեկատվական կենտրոնի շենքի վարձակալության նպատակով բյուջեից հատկացվել է 9.6 մլն դրամ, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է:

Պաշտպանության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքների խմբում ներառված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորում» ծրագրի շրջանակներում կատարվող Հատուկ գիտահետազոտական և փոձակոնստրուկտորական աշխատանքների գծով պետական պատվերի ծախսերը կազմել են շուրջ 784.9 մլն դրամ՝ ապահովելով 99.1% կատարողական:

Պաշտպանության ծառայությունների (այլ դասերին չպատկանող) ծախսերին տրամադրվել է շուրջ 4 մլրդ դրամ, որից պաշտպանության բնագավառի այլ ծախսերը կազմել են 3.9 մլրդ դրամ, զորակոչիկներին վարորդական իրավունքի վկայականների տրման և քննությունների ընդունման ծախսերը՝ 36.4 մլն դրամ, այլ մարմինների արտաբյուջետային միջոցների հաշվին կատարված ծախսերը՝ 61.1 մլն դրամ: Այլընտրանքային ծառայության ապահովման նպատակով հատկացումներ չեն եղել դիմողների բացակայության պատճառով:

Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն

Հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության բնագավառներին ՀՀ 2008 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 61.7 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 96.6%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում

պայմանավորված է ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության ճանապարհային ոստիկանության կողմից արձանագրված խախտումների համար վարչական տուգանքների գանձումներից, գրանցման-քննական ծառայությունների դիմաց վճարումներից և այլ վճարովի ծառայություններից ստացված միջոցների և ոստիկանության ստորաբաժանումների կողմից պայմանագրային հիմունքներով պահպանության և անվտանգության ապահովման գծով իրականացվող ծառայությունների դիմաց ստացվող վճարների հաշվին կատարված ծախսերի, ինչպես նաև դատական իշխանության մարմինների պահպանման ծախսերի և ՀԲ աջակցությամբ իրականացվող դատահիրավական բարեփոխումների երկրորդ ծրագրում հոլանդական դրամաշնորհային ծրագրի ցածր կատարողականով:

Բաժնի ծախսերի 68.1%-ը կամ 42 մլրդ դրամ կազմել են *հասարակական կարգի և անվտանգության* խմբի ծախսերը, որոնց ծրագիրը կատարվել է 96.6%-ով: Հասարակական կարգի պահպանության ապահովման համար նախատեսված ծախսերն ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով շուրջ 20.8 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 12%-ով կամ 2.2 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների ավելացմամբ: Ամբողջությամբ կատարվել են նաև ՀՀ անձնագրերի բլանկների տպագրության ծախսերը՝ կազմելով ավելի քան 124.4 մլն դրամ: Պետավտոհամարանիշների ձեռք բերման համար պետական բյուջեից տրամադրվել է 213.1 մլն դրամ՝ ապահովելով 99.9% կատարողական: Հաշվետու տարում 4.8 մլրդ դրամի ծախսեր են կատարվել ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության ստորաբաժանումների կողմից պայմանագրային հիմունքներով պահպանության և անվտանգության ապահովման գծով իրականացվող ծառայությունների դիմաց ստացվող վճարների հաշվին, որոնք կազմել են նախատեսվածի 92.4%-ը և 10.3%-ով (449.1 մլն դրամ) գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը: ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության ճանապարհային ոստիկանության կողմից արձանագրված խախտումների համար վարչական տուգանքների գանձումներից, գրանցման-քննական ծառայությունների դիմաց վճարումներից և այլ վճարովի ծառայություններից ստացված արտաբյուջետային միջոցների օգտագործումը հաշվետու տարում կազմել է 3.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 76.8%-ը: Քաղաքացիներին բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայության մատուցումը կազմել է 2.7 մլն դրամ:

Ազգային անվտանգության բնագավառին 2008 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 12.6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 99.9%-ը: 2007 թվականի համեմատ՝ ազգային անվտանգության ծախսերն ավելացել են 9.6%-ով կամ 1.1 մլրդ դրամով: Մասնավորապես՝ 11.5 մլրդ դրամ հատկացվել է ազգային անվտանգության ապահովման ծրագրի ֆինանսավորմանը, որը նախատեսված ծավալով ամբողջությամբ կատարվել է: Նախորդ տարվա համեմատ՝ ծրագրի շրջանակներում կատարված ծախսերն ավելացել են 14.7%-ով կամ շուրջ 1.5 մլրդ դրամով, որն օգտագործվել է սահմանամերձ

ուղեկալների կառուցման, համակարգչային և տեխնիկական սարքավորումների ձեռք բերման և աշխատակիցներին տրվող արտաժամյա վճարումների համար: Պետական պահպանության ապահովման ծախսերի կատարողականը կազմել է 98.3% կամ շուրջ 1.1 մլրդ դրամ, իսկ նույն նպատակով նախատեսված արտաբյուջետային միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 61.8 մլն դրամ:

Հայաստանի *փրկարար ծառայության* համակարգի ստորաբաժանումների պահպանման նպատակով ծախսվել է 3.2 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 97.8%-ը: Նախորդ տարվա համեմատ՝ նշված ծախսերը պակասել են 3.1%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ 2007 թվականին ֆինանսավորված երկու ծրագրեր՝ «Տիեզերական մոնիտորինգի կենտրոնի ստեղծում» և «Կապի և ազդարարման համակարգի վերականգնում», 2008 թվականի բյուջեում չեն ներառվել:

Դատական գործունեությանը և իրավական պաշտպանությանը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 7.2 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 93.6%-ը: Ծախսերի շեղումը նախատեսվածից արձանագրվել է հիմնականում դատական իշխանության մարմինների պահպանման, ՀԲ աջակցությամբ իրականացվող Դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագրում ճապոնական և հոլանդական դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականով:

Հաշվետու տարվա բյուջեից շուրջ 4.2 մլրդ դրամ տրամադրվել է դատական իշխանության մարմինների պահպանմանը՝ կազմելով նախատեսվածի 92.2%-ը: Ծրագրի շրջանակներում առկա են 352.1 մլն դրամի տնտեսումներ: Նախորդ տարվա համեմատ՝ նշված ծախսերն ավելացել են 51.4%-ով կամ 1.4 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է դատավորների աշխատավարձերի բարձրացմամբ:

Դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագրում ճապոնական և հոլանդական դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում 2008 թվականին ծախսվել է համապատասխանաբար 347.5 մլն դրամ և 15 մլն դրամ՝ կազմելով նախատեսված հատկացումների 84.9%-ը և 4.5%-ը: Առաջին ծրագրի շրջանակներում իրականացվել են մի շարք տեղական և միջազգային մրցույթներ, որոնց արդյունքում կնքված պայմանագրերով իրականացվել են կառուցման և վերակառուցման ենթակա շենքերի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները, սկսվել է դատական արխիվների արդիականացման հետազոտության իրականացման նպատակով խորհրդատվական ծառայությունների մատուցումը, իրականացվել է Հայաստանի Հանրապետությունում մասնավոր հարկադիր կատարման ծառայության ներդրման նպատակով ծրագրի իրագործելիության ուսումնասիրությունը, Հայաստանում մասնավոր հարկադիր կատարման ծառայության ներդրման ուսումնասիրման ծրագրի շրջանակներում իրականացվել է նաև տվյալ խնդրին առնչություն ունեցող միջգերատեսչական խմբի ուսուցողական այց Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներ: Ծրագրի ցածր

կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ խորհրդատվական բնույթի մի շարք պայմանագրերի ֆինանսավորումը ՀԲ-ի հետ համաձայնեցման արդյունքում 2008 թվականի ընթացքում որոշվել է իրականացնել հոլանդական դրամաշնորհի միջոցների հաշվին, քանի որ նշված համաձայնագրով նախատեսված են առավել բարենպաստ պայմաններ: Իսկ հոլանդական դրամաշնորհային ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի պլանավորման ժամանակաշրջանում դրամաշնորհի համաձայնագիրը գտնվում էր դեռևս բանակցությունների փուլում և նախատեսվում էր աշխատանքները սկսել տարեսկզբին: Սակայն համաձայնագրի վավերացման գործընթացի երկարաձգման հետևանքով առաջին ֆինանսավորումը ՀԲ-ից ստացվել է միայն 2008 թվականի հուլիսի 12-ին: Ծրագրի շրջանակներում 2008 թվականի հոկտեմբեր ամսից իրականացվում են «ԱՐԼԻՍ» իրավական տեղեկատվական համակարգի ծրագրային ապահովման բարելավման և արդիականացման աշխատանքները, «ԱՐԼԻՍ» իրավական տեղեկատվական համակարգը շահագործող «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ կարիքների համար գնվել են անհրաժեշտ համալրող համակարգչային սարքեր, պատրաստվել են դատական և իրավական թեմաներով հեռուստահաղորդումներ:

Դատաիրավական բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրի իրականացման համար 2008 թվականին նախատեսված 1.5 մլրդ դրամի դիմաց կատարվել են 1.7 մլրդ դրամի ծախսեր: Ծրագիրը բաղկացած է վեց հիմնական բաղադրիչներից՝ «Դատական համակարգի կառավարման ու վարչարարության ուժեղացում», «Դատարանների շենքերի վերականգնում», «Դատավորների վերապատրաստման դպրոց», «Դատական ակտերի հարկադիր կատարման բարելավում», «Արբիտրաժի ծառայությունների ուժեղացում», «Իրավական տեղեկատվության մատչելիության ընդարձակում և հանրային իրազեկության բարձրացում»: 2008 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում հիմնականում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- բոլոր դատարաններում տեղադրվել է դատական համակարգի կառավարման, գործերի հոսքերի ավտոմատացման նպատակով մշակված համակարգչային ծրագիրը,
- դատարանների ավտոմատացման շրջանակներում լրացուցիչ ներկրվել է նաև համակարգչային և կազմտեխնիկայի խմբաքանակ, ինչը հնարավորություն է տվել վերակառուցված և նոր կառուցված ՀՀ բոլոր դատարանների դահլիճներում ևս տեղադրել դատական նիստերի աուդիո ձայնագրման համակարգեր,
- ավարտվել և շահագործման է հանձնվել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն ընդհանուր իրավասության դատարանի շենքը, ինչով ավարտվեցին Երևան քաղաքում տեղակայված բոլոր դատարանների շենքերի ենթակառուցվածքների վերականգնմանն ուղղված միջոցառումները,

- մեկնարկել են մի շարք դատարանների (Գորիս, Վայք, Մարալիկ, Տաշիր, Ստեփանավան, Մասիս քաղաքներում տեղակայված) վերակառուցման և կառուցման աշխատանքները,
- ՀՀ դատական օրենսգրքի համաձայն 2008 թվականից գործող վեց մասնագիտացված դատարանների համար գնվել են համակարգչային սարքավորումներ,
- Երևանի քաղաքացիական և Երևանի քրեական դատարանի համար գնվել և տեղադրվել է դատական դահլիճների և աշխատասենյակների կահավորանք,
- Երևանի քաղաքացիական և Երևանի քրեական դատարանի շենքային համալիրում և Երևանի Էրեբունի և Նուբարաշեն ընդհանուր իրավասության դատարանի շենքի համար գնվել և տեղադվել են մուտքերի անվտանգության և հսկման համակարգեր,
- Երևանի Էրեբունի և Նուբարաշեն ընդհանուր իրավասության դատարանի շենքի համար գնվել և տեղադրվել են դատական դահլիճների և աշխատասենյակների կահավորանք, անհրաժեշտ քանակի համակարգչային սարքավորումներ,
- դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կարիքների համար մեծ խմբաքանակով գնվել են համակարգչային սարքավորումներ, ինչը հնարավորություն է տվել գրեթե ամբողջությամբ ապահովել ծառայության կարիքները և պատշաճ շահագործել ծրագրի շրջանակներում նախկինում մշակված գործերի կառավարման կենտրոնացված համակարգը,
- իրականացվել է ՀՀ արդարադատության նախարության և ՀՀ սահմանադրական դատարանի կարիքների համար ձեռք բերված մեծ խմբաքանակի համակարգչային սարքավորումների մատակարարումը:

Ինչ վերաբերում է ծրագրվածից 260.4 մլն դրամով ավել չափով ծախսեր կատարելուն, ապա դա բացատրվում է նրանով որ ծրագիրը 2008 թվականի ընթացքում նախատեսվածի համեմատ առավել ինտենսիվ տեմպերով է իրականացվել: Բացի այդ, տարվա ընթացքում բարձրացել են որոշ շինարարական նյութերի գներ: Շինարարական աշխատանքների արժեքի բարձրացումը պայմանավորված է նաև մեքենաների շահագործման, վերադիր ծախսերի և այլ ծախսերի նորմերի ավելացմամբ:

Հաշվետու տարում 549.6 մլն դրամ է տրամադրվել Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության պահպանմանը, որը կազմել է նախատեսվածի 99.1%-ը: Նախորդ տարվա համեմատ՝ նշված ծախսերն ավելացել են 3.1%-ով:

Վարչական օբյեկտների շինարարության նպատակով 2008 թվականին հատկացվել է 33.1 մլն դրամ, որի կատարողականը կազմել է 100%: ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ դատարանների պահուստային ֆոնդերից օգտագործվել է համապատասխանաբար 7 մլն դրամ և 86.9 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը և 96.6%-ը: Եվրախորհրդի կողմից

տրամադրվող միջոցներով սեմինարների կազմակերպման նպատակով արտաբյուջետային միջոցներից նախատեսվել և իրականացվել են 5.3 մլն դրամի ծախսեր:

Հաշվետու տարում պետական բյուջեից 273.6 մլն դրամ է տրամադրվել իրավական պաշտպանության ծրագրերին՝ կազմելով նախատեսվածի 95.7%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 22.4%-ով, որը պայմանավորված է հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման ծրագրի ծախսերի աճով՝ կապված «Հանրային պաշտպանի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների հետ: 2007 թվականի 93.4 մլն դրամի դիմաց հաշվետու տարում հատկացվել է 152.4 մլն դրամ, որը կատարվել է նախատեսված ամբողջ ծավալով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի պահպանման ծախսերը կազմել են 115 մլն դրամ կամ նախատեսվածի 90.5%-ը: Թերակատարումը տնտեսումների արդյունք է, որը կապված է աշխատակազմի պահպանման որոշ ծախսեր դոնոր կազմակերպությունների ֆինանսավորման հաշվին կատարելու, ինչպես նաև գնման ենթակա ապրանքների մրցակցային գների նվազման հետ:

6.2 մլն դրամ է օգտագործվել «Մարդու իրավունքների պաշտպանին միջազգային և դոնոր կազմակերպությունների կողմից հատկացվող ֆինանսական աջակցություն» արտաբյուջետային ծրագրի իրականացմանը՝ կազմելով նախատեսվածի 97%-ը:

2008 թվականին 2.5 մլրդ դրամ է տրամադրվել ՀՀ դատախազությանը, որը կազմել է նախատեսվածի 96.4%-ը: Նախորդ տարվա համեմատ ծախսերն աճել են 8.7%-ով, որը հիմնականում պայմանավորված է դատախազների աշխատավարձերի բարձրացմամբ: Նշված գումարից 2.4 մլրդ դրամ տրամադրվել է ՀՀ դատախազության պահպանմանը, 62 մլն դրամ՝ վարչական օբյեկտների հիմնանորոգմանը և 53.9 մլն դրամ՝ ՀՀ դատախազության պահուստային ֆոնդին:

Քրեակատարողական համակարգի պահպանության ծախսերը կազմել են 6.8 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 99.8%-ը: 2007 թվականի համեմատ՝ դրանք ավելացել են 10.7%-ով, որը պայմանավորված է քրեակատարողական հիմնարկներում պահվող դատապարտյալների և կալանավորված անձանց թվաքանակի աճով:

<u>Տնտեսական հարաբերություններ</u>

ՀՀ պետական բյուջեի ծախսերի տնտեսական հարաբերությունների բաժնին 2008 թվականին տրամադրվել է ընդհանուր ծախսերի 11%-ը՝ ավելի քան 89.4 մլրդ դրամ, որը կազմել է տարեկան ծրագրի 80.4%-ը: Ծրագրից շեղումը մեծ մասամբ պայմանավորված է ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի ցածր կատարողականով: Բաժնի բոլոր խմբերում արձանագրվել են

ծրագրից շեղումներ, բացառությամբ կապի և տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների: Հատկացված ֆինանսական միջոցների զգալի մասն ուղղվել է երեք բնագավառների՝ տրանսպորտի (52.5%), գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության և որսորդության (27.4%) և վառելիքի ու էներգետիկայի (20.6%) ծրագրերի իրականացմանը:

Հաշվետու տարում *ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերությունների* խմբի ծախսերը կազմել են ավելի քան 2 մլրդ դրամ՝ 93.6%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Խմբում ընդգրկված են 16 ծրագրեր, որից 8-ի գծով արձանագրվել է 100% կատարողական: Մասնավորապես՝

- Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ծրագրին հատկացվել է 450 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 12.5%-ով կամ 50 մլն դրամով, որն ուղղվել է ՓՄՁ ԶԱԿ-ի մասնաճյուղերի ընդլայնմանը և գործունեության զարգացմանը.
- «Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի սուբսիդավորումը կազմել է 400.8 մլն դրամ, որն օգտագործվել է «Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից հիդրոօդերևութաբանական դիտարկումների իրականացման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 8.4%-ով կամ 31 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ.
- «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի պահպանմանը հատկացվել է 139.6 մլն դրամ, որը նախորդ տարվա համեմատ փոփոխություն չի կրել:

100%-ով ֆինանսավորվել են նաև «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» (194.8 մլն դրամ), «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից ստանդարտացման աշխատանքների կատարում» (41 մլն դրամ), «Վարչական օբյեկտների հիմնանորոգում» (8 մլն դրամ), «Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով տրամադրված նվիրաբերության միջոցների հաշվին իրականացվող ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում մարզային զարգացման ծրագիր» (7.9 մլն դրամ) և «Ապրանքային շրջանառության բնագավառում մրցակցային խնդիրներ» (1.9 մլն դրամ) ծրագրերը:

2008 թվականին 568.6 մլն դրամ են կազմել գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման համար օգտագործված միջոցները (նախարարությունների աշխատակազմերի մասով)՝

ապահովելով ծրագրի 98%-ը: Այս նպատակով եվս 40.1 մլն դրամ օգտագործվել է արտաբյուջետային միջոցներից՝ ապահովելով ծրագրի 56.2%-ը:

Հաշվետու տարում 18.9 մլն դրամ է տրամադրվել Չափագիտության ազգային ինստիտուտի կողմից չափումների միասնականության ապահովման աշխատանքների ֆինանսավորման համար՝ կազմելով ծրագրի 87.7%-ը: Հարկ է նշել, որ ֆինանսավորումը կատարվել է փաստացի աշխատանքների ծավալին համապատասխան: Չափումների միասնականության ապահովման նպատակով ծրագրի շրջանակներում իրականացվել են ամենամյա շարունակական աշխատանքներ ազգային էտալոնների պահպանման և տեխնիկական սպասարկման ուղղությամբ, ինչպես նաև 15 միավոր ազգային էտալոնների բաղդատման աշխատանքների կազմակերպում և իրականացում Ռուսաստանի Դաշնությունում: Հետազոտական աշխատանքների գծով կատարվել են հայկական և արտասահմանյան արտադրության կոնյակների բազմաբնույթ հետազոտական աշխատանքներ: Կատարվել են չափումների միասնականության ապահովման համակարգի երեք ազգային ստանդարտների մշակման աշխատանքներ, որոնք ընդունվել են «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ գիտատեխնիկական խորհրդի կողմից: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են շուրջ 2 անգամ կամ 9.4 մլն դրամով, որը պայմանավորված է 2007 թվականին ծրագրի թերկատարմամբ:

«ՀՀ տեխնիկական կանոնակարգերի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման վերահսկողության պետական ծրագրի» իրականացման համար ծախսվել է ավելի քան 3.2 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 10.5%-ը և 78.3%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը: Շեղումը պայմանավորված է իրականացված ստուգումների քանակի նվազմամբ:

Հաշվետու տարում 61.9 մլն դրամ է տրամադրվել «Արտասահմանում առևտրային ներկայացուցչությունների պահպանում» ծրագրի ֆինանսավորմանը, որը կազմել է նախատեսվածի 72.8%-ը: 2008 թվականի պետական բյուջեով նախատեսված է եղել հատկացումներ կատարել՝ կապված ԱՄՆ-ում առևտրի ներկայացուցիչ ունենալու հետ, սակայն ներկայացուցիչ չի նշանակվել, ինչով էլ պայմանավորված է ծրագրի շեղումը:

Հաշվետու տարում հիդրոօդերևութաբանական կայանների տեխնիկական վերազինման ծրագրի շրջանակներում նախատեսված աշխատանքների իրականացմանը հատկացվել է 21.3 մլն դրամ՝ ապահովելով 60% կատարողական: Շեղումը պայմանավորված է հայտարարված մրցույթները չկայանալու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ հիդրոօդերևութաբանական կայանների տեխնիկական վերազինման ծախսերը նվազել են 69.2%-ով կամ 47.9 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված տեխնիկական վերազինման ծավալների նվազմամբ:

2008 թվականին շուրջ 28.5 մլն դրամ է տրամադրվել Առևտրի համաշխարհային կազմակերպության հետ անդամակցային պարտավորությունների իրականացման նպատակով, որը կազմել է նախատեսվածի 98.7%-ը:

2008 թվականի պետական բյուջեում առաջին անգամ նախատեսվել է Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացման պետական աջակցության ծրագիրը: Այս նպատակով 52.7 մլն դրամ է տրամադրվել ծրագրի շրջանակներում նախատեսված աշխատանքների իրականացմանը՝ կազմելով նախատեսվածի 65.8%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները՝ նախապատրաստական փուլի կառավարում, այդ թվում՝ փորձագիտական թիմի կողմից մշակվել է Գյումրի քաղաքում տեխնոպարկի հիմնման ռազմավարական ծրագիրը, ուսումնական և գիտահետազոտական լաբորատորիաների հիմնում՝ տեղական և միջազգային ճանաչում ունեցող ընկերությունների հետ համատեղ, գիտահետազոտական ծրագրերի համար շուրջ 13.9 մլն դրամի դրամաշնորհներ են տրամադրվել մրցույթում հաղթող ճանաչված 3 կազմակերպությունների: Ծրագրի շրջանակներում անցկացված մրցույթներում հաղթող են ճանաչվել առավել ցածր գնային առաջարկ ներկայացրած կազմակերպությունները, որի պատճառով էլ ծրագրի շրջանակներում առաջացել է 27.3 մլն դրամի տնտեսում:

2008 թվականի ընթացքում *գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնաբուծության և որսորդության* բնագավառներում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 24.5 մլրդ դրամ կամ ծրագրվածի 74.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ոռոգման բնագավառում արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի ցածր կատարողականով:

Հաշվետու տարում գյուղատնտեսության ոլորտի ծախսերը կազմել են շուրջ11 մլրդ դրամ կամ ծրագրվածի 96.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Թռչնագրիպին հակազդելու վարկային և դրամաշնորհային ծրագրերի, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Շուկայական հնարավորություն ֆերմերներին», ինչպես նաև գյուղատնտեսական հողատեսքերի պահպանման, բարելավման ու ինժեներական կառուցվածքների վերականգնման աշխատանքների ցածր կատարողականով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերը կազմել են 663.6 մլն դրամ կամ նախատեսվածի 97%-ը:

Գյուղատնտեսության ոլորտին կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 30 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աջակցությամբ ֆինանսավորվել են հինգ վարկային և չորս դրամաշնորհային ծրագրեր:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 2.21 մլրդ դրամ՝ (որից շուրջ 2.19 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 23.3 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին)՝ ապահովելով 116% կատարողական: Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի փոքր և միջին գյուղական ձեռնարկությունների զարգացմանը՝ ֆերմերների ու գյուղական ձեռնարկատերերի համար շուկաներն առավել մատչելի դարձնելու և գյուղական շրջաններում ներդրումներ խթանելու միջոցով: Ծրագրի շրջանակներում օգտագործված միջոցներից 1.77 մլրդ դրամը ծախսվել է կապիտալ վերանորոգման աշխատանքների ֆինանսավորմանը: Իրականացվել են 80 համայնքների գազաֆիկացման և խմելու ջրի ցանցերի վերանորոգման աշխատանքներ: 119.7 մլն դրամ տրամադրվել է մեքենաների և սարքավորումների ձեռքբերմանը: Մասնավորապես՝ ձեռք են բերվել գյուղտեխնիկա (կոմբայն, տրակտոր, խոտհնձիչ և այլն), սերմերի արագ ախտորոշման տեստավորող լաբորատոր սարքեր: Եվս 322.2 մլն դրամ տրամադրվել է ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը:

Նշված վարկային ծրագրի համաֆինանսավորման մաս կազմող ճապոնական դրամաշնորհի հաշվին կատարվել են 153.8 մլն դրամի ծախսեր կամ նախատեսվածի 90.1%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են մասնակից ֆինանսական կառույցների (բանկերի) մասնագետների ուսուցման, խորհրդատվական և համայնքներում կատարվող աշխատանքների մոնիտորինգի աշխատանքներ: Շեղումը պայմանավորված է մրցութային կարգով ընտրվող մասնագետների՝ ներկայացված պահանջներին չհամապատասխանելու պատճառով որոշ ծրագրերի հետաձգմամբ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Թռչնագրիպին հակազդելու վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 214.2 մլն դրամ՝ նախատեսված 578.1 մլն դրամի փոխարեն: Ծրագրի շրջանակներում 2008 թվականին իրականացվել են շինարարական և կապիտալ վերանորոգման աշխատանքներ, այդ թվում՝ «Հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքի և Մեղրիի (Ագարակ) սահմանային հսկիչ անցակետի կառուցում, իրականացվել են Արմավիրի մարզային անասնաբուժական լաբորատորիայի և «Սննդի անվտանգության և անասնաբուժական» պետական տեսչության կենտրոնի և մարզային կառույցների հզորացում: Ձեռք են բերվել տրանսպորտային միջոցներ, համակարգչային տեխնիկա, պաշտպանիչ հանդերձանք և այլ նյութեր ու սարքավորումներ, միջոցներ են տրամադրվել նաև ծրագրի համակարգող քարտուղարության և ծրագրի իրականացման աշխատակազմի պահպանման նպատակով: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է Փոխհատուցման հիմնադրամի ստեղծման հետաձգման, Ագարակի անասնապահական և բույսերի կարանտինի սահմանային հսկիչ կետի

շինարարական աշխատանքների հետաձգման, ինչպես նաև ընթացիկ ծախսերի տնտեսման հանգամանքներով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Թռչնագրիպին հակազդելու ճապոնական դրամաշնորհային ծրագրի գծով 2008 թվականին խորհրդատվական և ուսուցողական ծրագրերի իրականացման համար նախատեսվել էր հատկացնել 57.5 մլն դրամ, որը կատարվել է 61.5%-ով՝ կազմելով 35.4 մլն դրամ: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է որոշ աշխատանքների հետաձգմամբ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Թռչնագրիպին հակազդելու ծրագրի համաֆինանսավորման ճապոնական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 137.6 մլն դրամ՝ ապահովելով 59.7% կատարողական: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է որոշ աշխատանքների հետաձգմամբ:

Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (ԳԶՄՀ) աջակցությամբ իրականացվող «Ծուկայական հնարավորություն ֆերմերներին» վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է 976.8 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 78.3%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է ֆինանսավորման համաձայնագրի՝ նախատեսված ժամկետից ուշ ուժի մեջ մտնելու հետ: Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանի Հանրապետության գյուղական աղքատ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը: Ծրագրի խնդիրն է՝ աջակցել համեմատական տնտեսական առավելություններ ունեցող առաջնային արտադրողների և առավել բարենպաստ աշխատանքային հնարավորություններ փնտրող գյուղաբնակների հետ սերտ կապ ունեցող գյուղական ձեռնարկությունների աճին, տրամադրել ներդրումային գործիքներ և հարակից ֆինանսական միջոցներ, որոնք կբավարարեն գյուղական բաժնետիրական ֆինանսավորման պահանջարկը և աջակցել Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական ոլորտի հետագա զարգացմանը: Ծրագիրն ունի 3 հիմնական բաղադրիչ՝ «Գյուղական ձեռնարկատիրության ֆինանսավորում», « Տնտեսապես հիմնավորված ենթակառուցվածքների վերականգնում» և «Ծրագրի վերլուծություն և կառավարում»: Առաջին բաղադրիչի շրջանակներում 2008 թվականին ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ հիմնադրվել է Գյուղական ներդրումների հիմնադրամը, աշխատակազմի ձևավորման նպատակով անցկացվել է մրցույթ, միջազգային խորհրդատուների հետ մշակվել են հիմնադրամի գործունեությունը ապահովող փաստաթղթերը (կանոնադրությունը, իրականացման ուղեցույցը, գործառնական ուղեցույցը և այլն): Ծրագրում ընդգրկված «Տնտեսապես հիմնավորված ենթակառուցվածքների վերականգնում» բաղադրիչի խնդիրն է՝ բարելավել հիմնական շահառու խմբի կենսամակարդակը և ներդրումային միջավայրը՝ շահութաբեր ձեռնարկատիրության զարգացման և կայուն գյուղական տնտեսական աճի համար: Բաղադրիչի շրջանակներում ներդրումների միջոցով հանրապետության ծրագրային տարածքի 4 համայքներում իրականացվել են ոռոգման ու

խմելու ջրի ցանցերի կապիտալ նորոգումներ և խորքային հորերի հորատում, իսկ 7 համայքներում ՝ գազաֆիկացման աշխատանքներ: Կատարվել են նաև նախագծային աշխատանքներ:

Նշված վարկային ծրագրին աջակցելու նպատակով ԳԶՄՀ-ի կողմից տրամադրված դրամաշնորհի հաշվին կատարվել են 10.8 մլն դրամ ծախսեր՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել է միջազգային խորհրդատվական ծառայությունների գնում՝ մշակվել են «Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի» կանոնադրությունը և աշխատանքային ուղեցույցերը:

Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության (ՕՊԵԿ) միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Արտադրական ենթակառուցվածքների վերականգնում» վարկային ծրագրի ծախսերը 28.5%-ով գերազանցել են նախատեսվածը՝ 656.8 մլն դրամի դիմաց օգտագործվել է 843.7 մլն դրամ: Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետության առավել աղքատ մարզերում գյուղական տարածքների բնակչության եկամուտների կայուն աճի ապահովումն արտադրական ենթակառուցվածքների վերականգնման միջոցով: Ծրագիրն ունի երկու բաղադրիչ: «Տնտեսապես հիմնավորված ենթակառուցվածքների վերականգնում» բաղադրիչի հիմնական նպատակն է գյուղական տարածքներում գյուղատնտեսական մթերքների իրացման համար մատակարար-արժեքային շղթայի գործունեության արդյունավետության բարձրացումը և փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացմանը խթանող պայմանների բարելավումը՝ հիմնականում տնտեսապես հիմնավորված ենթակառուցվածքների վերականգնման ճանապարհով: Կատարված ներդրումների միջոցով Հայաստանի Հանրապետության մարզերի 8 համայքներում շարունակվել է ոռոգման ու խմելու ջրի ցանցերի կապիտալ նորոգման, ջրարբիացման և խորքային հորերի հորատման, 3 համայքներում՝ միջհամայնքային և համայքային ավտոճանապարհների վերանորոգման և ասֆալտապատման, իսկ 21 համայքներում՝ գազաֆիկացման աշխատանքների իրականացումը: Ընդհանուր առմամբ իրականացվել են 825.9 մլն դրամի կապիտալ վերանորոգման ծախսեր: Եվս 11.8 մլն դրամ հատկացվել է նախագծային աշխատանքների ֆինանսավորմանը: Ծրագրի երկրորդ՝ վերլուծության և կառավարման բաղադրիչի շրջանակներում 6 մլն դրամ տրամադրվել է ծրագրի աուդիտին:

ԳԶՄՀ և ՕՊԵԿ աջակցությամբ իրականացվող Գյուղական տարածքների տնտեսական զարգացման վարկային ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 482 մլն դրամի ծախսեր՝ ապահովելով 168.4% կատարողական: Ծրագրի նպատակն է ՀՀ յոթ լեռնային մարզերում (Տավուշ, Գեղարքունիք, Լոռի, Շիրակ, Վայոց ձոր, Արագածոտն, Սյունիք) գյուղական տարածքների բնակչության եկամուտների կայուն աճի ապահովումը: Խնդիր է դրված սահմանված տարածքներում աջակցություն ցուցաբերել գյուղատնտեսությանն առնչվող տնտեսական գործունեության կայուն աճին: Ծրագրի «Տնտեսապես հիմնավորված

ենթակառուցվածքների վերականգնում» բաղադրիչների շրջանակներում իրականացված ներդրումների միջոցով հանրապետության 10 համայնքներում շարունակվել է ոռոգման ու խմելու ջրի ցանցերի կապիտալ նորոգումների և ջրարբիացման, իսկ 9 համայքներում՝ գազաֆիկացման աշխատանքների իրականացումը: Վերանորոգման աշխատանքների գծով ծախսվել է 430.1 մլն դրամ՝ նախատեսված 234.4 մլն դրամի փոխարեն: Ծրագրի «Վերլուծություն և կառավարում» բաղադրիչի շրջանակներում ծախսվել է շուրջ 51.9 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100.3%-ը:

Գյուղատնտեսական հողօգտագործողներին պետական աջակցության նպատակով 2008 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 1.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 97.7%-ը: Ծրագրի շրջանակներում հանրապետության ութ մարզերի 253 համայնքների 28065 շահառուներին՝ մշակվող գյուղատնտեսական հողատարածքի յուրաքանչյուր հեկտարի համար, անվերադարձ և անհատույց տրամադրվել է 35 հազարական դրամի պետական աջակցություն: Ծրագրում ընդգրկվել է 49855.1 հա հողատարածություն: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 1.4 մլրդ դրամով՝ պայմանավորված շահառուների թվի և հողատարածքների զգալի ավելացմամբ:

Պատվաստուկների և այլ հակահամաճարակային միջոցառումների համար անհրաժեշտ պարագաների ձեռք բերման ծախսերը կազմել են 807.7 մլն դրամ կամ նախատեսվածի 96.7%-ը: Առաջացած տնտեսումը և նախորդ տարվա նկատմանբ ծախսերի նվազումը (4.2%-ով) պայմանավորված է ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO-ի) կողմից գյուղատնտեսության նախարարությանն անհատույց առանձին տեսակի պատվաստանյութերի տրամադրմամբ:

2008 թվականին անասնաբուժական ծառայության, հակահամաճարակային միջոցառումների, կենդանիների հիվանդությունների կանխարգելման աշխատանքների կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման նպատակով ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 508 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.6%-ը: Անասնաբուժական ծառայությունների արդունավետությունը բարձրացնելու նպատակով անասնաբուժության ոլորտում կատարվել են բարեփոխումներ, և նպատակահարմար է համարվել պետության կողմից նշված ոլորտում իրականացվող ծառայությունները պատվիրակել համայնքների ղեկավարներին: Նախորդ տարվա համեմատ ծախսերի 32.6%-ով աճը պայմանավորված է անասնաբույժների հաստիքների թվի և յուրաքանչյուր անասնաբույժին ամսական վճարվող գումարի 10 հազ. դրամով ավելացմամբ: Տարվա ընթացքում հանրապետության համայնքներում ստեղծվել են շուրջ 850 անասնաբույժի հաստիքներ, որոնց նախատեսվել է յուրաքանչյուր ամսում վճարել 50 հազ. դրամ:

Հայաստանի Հանրապետության տավարաբուծության զարգացման ծրագրի իրականացման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 498.8 մլն դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը: Ծրագրի շրջանակներում 2008 թվականին հանրապետություն են ներկրվել 415 գլուխ հոլշտինյան, շվից և սիմենթալ ցեղերի տոհմային երինջներ, որոնք տարաժամկետ վճարման պայմանով (4 տարի) վաճառվել են հանարապետության 5 ֆերմերային տնտեսություններին: Նախորդ տարվա համեմատ ծախսերն աճել են 3.3 անգամ կամ 349.6 մլն դրամով՝ պայմանավորված ծրագրի շրջանակներում ձեռք բերված անասունների գլխաքանակի ավելացմամբ (305 գլխով):

Հաշվետու տարում նշված դասում ընդգրկված 7 ծրագրերի գծով արձանագրվել է 100% կատարողական: Մասնավորապես՝

- Հատուկ միջոցառումների իրականացմանը տրամադրվել է 1 մլն դրամ, որի հաշվին իրականացվել են արտակարգ իրավիճակների պայմաններում ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի պաշտպանության և գործունեության ապահովման նախապատրաստական միջոցառումներ, այն է՝ կառավարման արտաքաղաքային պահուստային կետին սպասարկող անձնակազմի վարձատրություն, կոմունալ և այլ ծառայությունների, դեղամիջոցների և առաջին անհրաժեշտության այլ պարագաների ձեռքբերում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:
- Սերմերի որակի ստուգման ու պետական սորտափորձարկման միջոցառումների իրականացման նպատակով ծախսվել է 28.3 մլն դրամ: Իրականացվել են սորտային նույնականացման աշխատանքներ, սերմերի խմբաքանակներից նմուշների ընտրություն և նմուշառում, սերմանմուշների լաբորատոր փորձաքննություն, սորտային սերմադաշտերի ապրոբացիա: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:
- Հիդրոօդերևութաբանական միջոցառումների գծով պետական պատվերի շրջանակներում տրամադրվել է 2.2 մլն դրամ, որի հաշվին իրականացվել են շրջակա միջավայրի օդերևութաբանական, ագրոօդերևութաբանական, հիդրոլոգիական, մթնոլորտային օդի վիճակի կանխատեսումների, լճերի, գետերի, արհեստական ջրամբարների և այլ ջրային մակերեսների, ջրի բաղադրության և քանակների վերաբերյալ տեղեկատվության ստացում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:
- Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների ծախսերը կազմել են 42.3 մլն դրամ: Իրականացվել են 87990 հեկտար գյուղատնտեսական հողատեսքերի ագրոքիմիական դաշտային հետազոտություններ, հողանմուշների, պարարտանյութերի և բուսաբուծական մթերքների լաբորատոր փորձաքննություններ և 170 համայնքներում մշակաբույսերի պարարտացման

հանձնարարականների կազմում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

- ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության անասնաբուժական ոստիկանական դասակի կողմից կարանտինային սահմանափակումների իրականացման նպատակով տրամադրվել է 24.6 մլն դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավելացել է 75.7%-ով:
- Բույսերի կարանտինի և գյուղմշակաբույսերի բուսասանիտարական վիճակի մոնիտորինգի, լաբորատոր փորձաքննությունների հիման վրա կանխարգելիչ և ախտորոշիչ ծառայությունների իրականացմանը տրամադրվել է 89 մլն դրամ: Կատարվել են 246 հազ. հա-ի հանրապետությունում գրանցված սահմանափակ տարածում ունեցող կարանտին օրգանիզմների տարածման արեալի ճշտում, նոր օջախների հայտնաբերում և բույսերի վնասատուների և հիվանդությունների հայտնաբերման մոնիտորինգ, փորձանմուշների և թունանյութերի նմուշների լաբորատոր փորձաքննություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:
- Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի փորձաքննության միջոցառումների իրականացման համար ծախսվել է 184.3 մլն դրամ: Իրականացվել են գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի համաճարակային վիճակի վերլուծության, մոնիտորինգի, հանրապետության տարածքը կենդանիների վարակիչ հիվանդությունների ներթափանցումից պաշտպանելու, կենդանական ծագում ունեցող հումքի և մթերքների լաբորատոր փորձաքննության միջոցառումներ, ինչպես նաև պատվաստված գյուղատնտեսական կենդանիների մոտ առաջացած իմունային ֆոնի որոշում, ձեռք բերված պատվաստանութերի և ախտորոշիչ միջոցների պահպանում: 2007 թվականի համեմատ ծախսերի 3.2%-ով նվազումը պայմանավորված է հանրապետություն ներթափանցած խոզերի աֆրիկյան ժանտախտ հիվանդության կանխարգելման և պայքարի միջոցառումների ծավալների կրճատմամբ:

Ճապոնական կառավարության «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում իրականացվող հակահեղեղային միջոցառումների ծախսերը կազմել են 324.4 մլն դրամ՝ ապահովելով 92.7% կատարողական և 11.1%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում մաքրվել է Հրազդան գետի հունի շուրջ 4.1 կմ հատվածը և շարվել 5470 մ^3 գաբիոն, մաքրվել է Աղստև գետի հունի շուրջ 2 կմ հատվածը և շարվել 2250 մ^3 գաբիոն, մաքրվել է Մարմարիկ գետի շուրջ 2.5 կմ հատվածի հունը: Նախորդ տարվա համեմատ ծախսերի նվազումը պայմանավորված է ծրագրով նախատեսված աշխատանքների ծավալների կրճատմամբ:

Գյուղատնտեսական հողատեսքերի պահպանման, բարելավման և ինժեներական կառուցվածքների վերականգնման աշխատանքների իրականացման համար հաշվետու տարում պետական բյուջեից տրամադրվել է 285.7 մլն դրամ՝ 81.5%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Հարկ է նշել, որ կատարված աշխատանքներն ամբողջությամբ ֆինանսավորվել են: Ծրագրի շրջանակներում աշխատանքներ են իրականացվել ՀՀ Լոռու, Գեղարքունիքի և Արարատի մարզերում: 2007 թվականի համեմատ այս ծրագրի ծախսերն աճել են 11.7%-ով՝ պայմանավորված աշխատանքների ծավալների ավելացմամբ:

Հաշվետու տարում գյուղատնտեսական օբյեկտների հիմնանորոգման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 200.3 մլն դրամ կամ նախատեսվածի 95.4%-ը: Հատկացված գումարների հաշվին իրականացվել են չորս մարզերի տարածքային մարզային անասնաբուժական լաբորատոր մասնաշենքերի հիմնանորոգման աշխատանքները: Ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել նաև հինգ անասնաբուժական լաբորատոր շենքեր, որով պայմանավորված՝ 2007 թվականի համեմատ այս ծրագրի ծախսերն ավելացել են 38%-ով:

«Բույսերի պաշտպանության միջոցառումներ» ծրագրի գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 162.2 մլն դրամ՝ ապահովելով 88.6% կատարողական և 43.7%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են մի շարք միջոցառումներ: 29.9 մլն դրամ տրամադրվել է 4662 հա հողատարածության վրա մորեխների դեմ պայքարի ծառայությունների իրականացմանը: 31.2 մլն դրամ տրամադրվել է մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումների ֆինանսավորմանը, որոնց շրջանակներում իրականացվել է անհրաժեշտ թունանյութերի գնում և անհատույց բաշխում համայնքներին՝ իրենց ուժերով պայքարի աշխատանքներ կազմակերպելու համար: 101.1 մլն դրամ տրամադրվել է 7700 հա տարածքի վրա անտառի վնասակար օրգանիզմների դեմ պայքարի միջոցառումների իրականացման համար: 2007 թվականի համեմատ այս ծրագրի գծով ծախսերի նվազումը պայմանավորված է նախատեսված աշխատանքների ծավալների կրճատմամբ:

Բնական կերհանդակների (արոտների) բարելավման և ջրարբիացման աշխատանքների իրականացման համար 2008 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 154.8 մլն դրամ՝ 81.5%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Ծրագրի շրջանակներում ջրարբիացման համակարգերի վերականգման աշխատանքներ են իրականացվել ՀՀ Տավուշի, Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերում: Իրականացված միջոցառումների արդյունքում վերականգնվել են ջրարբիացման 6 համակարգերի շուրջ 13.9 կմ վթարված հատվածներ, ինչի արդյունքում վերականգնվել են 20000 հա տարածքով հեռագնա արոտներ: 2007 թվականի համեմատ այս ծրագրի գծով ծախսերը նվազել են 48.4%-ով՝ պայմանավորված կատարված աշխատանքների ծավալների նվազմամբ:

2008 թվականին գյուղատնտեսության ոլորտում կատարվել են հատկացումներ ևս 4 ծրագրերի գծով «Արհեստական սերմնավորման միջոցառումներ» (38.2 մլն դրամ), «Գյուղական խորհրդատվական ծառայությունների իրականացման նպատակով ԳԱՄԿ-ների (Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների) և ԳԱՀԿ-ների (Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնների) ֆինանսավորում» (140.3 մլն դրամ), «Հայաստանի Հանրապետությունում ցորենի և գարու սերմնաբուծության զարգացման ծրագիր» (100.5 մլն դրամ) և «Սննդամթերքի անվտանգությանն ուղղված ծառայությունների մատուցում» (21.4 մլն դրամ), որոնք կատարվել են համապատասխանաբար 96.8%-ով, 99.1%-ով , 95.6%-ով և 41.9%-ով:

Հաշվետու տարում *անտառային տնտեսության* ծախսերը կազմել են շուրջ 1.8 մլրդ դրամ կամ նախատեսվածի 97.4%-ը: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են երեք ծրագրեր, որոնցում մեծ տեսակարար կշիռ ունեն անտառպահպանական, անտառվերականգնման և անտառշինական աշխատանքների իրականացման համար կատարված հատկացումները: Նշված ծրագրի գծով իրականացվել են շուրջ 1.5 մլրդ դրամ ծախսեր՝ կազմելով ծրագրի 99.5%-ը և 13.3%-ով գերազանցելով 2007 թվականի ցուցանիշը, որը պայմանավորված է անտառշինական և անտառվերականգնման աշխատանքների ծավալների ավելացմամբ: Ծրագիրն իրականացվել է երեք բաղադրիչներով՝ «Անտառպահպանություն», «Անտառվերականգնում» և «Անտառշինություն»: Հատկացված գումարից 735 մլն դրամը տրամադրվել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ին՝ որպես դրամաշնորհ, իր կանոնադրական խնդիրներն իրականացնելու համար: 596.4 մլն դրամ են կազմել անտառվերականգնման բաղադրիչի ծախսերը: 126.4 մլն դրամն ուղղվել է անտառշինական աշխատանքներին:

Հաշվետու տարում անտառային պետական մոնիտորինգի նպատակով նախատեսված շուրջ 52.6 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է և նախորդ տարվա համեմատ փոփոխություն չի կրել: Հատկացված գումարների հաշվին իրականացվել է անտառտնտեսություններում, ազգային պարկերում, արգելավայրերում անտառպահպանության և անտառօգտագործման բնագավառում իրականացված աշխատանքների արդյունքների ուսումնասիրում, փայտանյութի սպառման շուկայի, փայտանյութի մթերման և արտահանման, ապօրինի հատումների և դրա արդյունքում բնափայտի տեղափոխումների, իրացման վերաբերյալ տվյալների հավաքում, մշակում, վերլուծություն և գնահատում:

Ճապոնական կառավարության «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում իրականացվող անտառվերականգնման միջոցառումների իրականացման ծախսերը կազմել են 278.8 մլն դրամ՝ ապահովելով 87.3% կատարողական և 30%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում կատարվել են անտառապատման և ցանկապատման աշխատանքներ ՀՀ Լոռու, Տավուշի, Սյունիքի և Կոտայքի մարզերում, Գյումրի քաղաքի «Մայր Հայաստան» հուշահամալիրի շրջակայքի ցանկապատման և ոռոգման

ցանցի կառուցման աշխատանքները, և ավարտվել են 2007 թվականին սկսված՝ Հրազդանի անտառտնտեսության տնկարանում ոռոգման ցանցի կառուցման աշխատանքները: Նախորդ տարվա համեմատ ծախսերի նվազումը պայմանավորված է ծրագրով նախատեսված աշխատանքների համար 2007 թվականին կատարված կանխավճարով:

Հաշվետու տարում ավելի քան 11.7 մլրդ տրամադրվել է *ոռոգման* բնագավառի ծախսերին՝ կազմելով ծրագրվածի 59.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պատվարների անվտանգության վարկային ծրագրի ցածր կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 13 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել են չորս վարկային և մեկ դրամաշնորհային ծրագրեր:

ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի «Ոռոգվող գյուղատնտեսություն» ենթածրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 2.9 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսված ծախսերի 33.1%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2008 թվականի բյուջեն կազմելուց հետո Հազարամյակի մարտահրավերներ կորպորացիայի կողմից կատարվել է նախնական ծավալների կրճատում:

Կատարված ներդրումներով հանրապետության չորս գյուղական համայնքներում (Աբովյան, Գրիբոյեդով, Լանջազատ, Արևշատ) մեկնարկել են երրորդ կարգի ջրանցքների վերանորոգման աշխատանքները: Շինարարական աշխատանքներն ընթացել են չընդհատելով ոռոգման սեզոնը, որը խիստ կարևոր էր տվյալ համայնքների ֆերմերների համար: Աշխատանքների արդյունքում ապահովվել է 460 հա հողատարածքների հուսալի մատակարարում ոռոգման ջրով՝ վերանորոգելով 6.5 կմ ընդհանուր երկարությամբ երրորդ կարգի ոռոգման ջրանցքներ:

Հաշվետու ժամանակաշրջանում «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի շրջանակներում ձեռք են բերվել հետևյալ արդյունքները: Դասընթացներ են կազմակերպվել ջրի ներտնտեսային կառավարման և բարձրարժեք գյուղատնտեսության թեմաներով: Դասընթացներն անց են կացվել հանրապետության բոլոր 10 մարզերում: Շուկայի մասին տեղեկատվության հասանելիությունը բարելավելու նպատակով խորհրդատուն նախաձեռնել է տեղական, տարածաշրջանային և միջազգային շուկաների գյուղատնտեսական արտադրանքների ընդգրկուն տեղեկատվական բազայի ստեղծումը: Առաջնայնությունը կտրվի շուկայական տեղակատվության համակարգի զարգացմանը, որը կաջակցի մթերքների տեղափոխմանը ֆերմաներից տեղական շուկաներ, մթերքների արտահանմանը, ինչպես նաև վերամշակող ոլորտին իրենց հումքի մատակարարմանը: 2008 թվականի ընթացքում աջակցություն է ցուցաբերվել 60 գյուղատնտեսական կազմակերպություններին:

Ջրից դեպի շուկա ծրագրի հետբերքահավաքային մշակման և մարքետինգի (ՀՄՄ) բաղադրիչի հիմնական նպատակն էր գյուղատնտեսական և վերամշակող ձեռնարկությունների ոլորտներին, ինչպես նաև միջոլորտային աջակցության տրամադրումը: Աջակցությունը ներառում էր բիզնեսի և կառավարման ոլորտի խորհրդատվության տրամադրումը մասնավոր կազմակերպություններին, պատվիրատու կազմակերպությունների համար շուկայի նոր հնարավորությունների ստեղծումը, սննդամթերքի անվտանգության և հիգիենայի թեմայով դասընթացների անցկացումը և այլն: ՀՄՄ աջակցության ռազմավարությունը և մոտեցումները վերանայվել են և առավել համապատասխանեցվել պատվիրատուի կարիքներին և ուղղվել գործնական աջակցությանը: Շուկայի մասին տեղեկատվության հասանելիությունը բարելավելու նպատակով խորհրդատուն նախաձեռնել է տեղական, տարածաշրջանային և միջազգային շուկաների գյուղատնտեսական արտադրանքների ընդգրկուն տեղեկատվական բազայի ստեղծումը: Հաշվետու տարվա ընթացքում աջակցություն է ցուցաբերվել 60 գյուղատնտեսական կազմակերպությունների:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պատվարների անվտանգության առաջին և երկրորդ ծրագրերի շրջանակներում ծրագրված ավելի քան 2.6 մլրդ դրամի փոխարեն օգտագործվել է ընդամենը 1.1 մլրդ դրամ: Պատվարների անվտանգության ծրագրի» հիմնական նպատակներն են՝ պատվարների ներքին բյեֆի 350 հազար բնակչության անվտանգության ապահովումը և ոռոգման համակարգերի ջրապահովվածության ավելացումը, ինչպես նաև ենթակառուցվածքային և կազմակերպչական հիմնախնդիրների լուծման միջոցով մասնավոր սեկտորի զարգացմանը նպաստելը: Այս նպատակին հասնելու համար կատարվող ներդրումներն ուղղված են ոռոգման ենթակառուցվածքների վերականգնմանը և այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք հնարավոր կդարձնեն մասնավոր սեկտորի մասնակցությունը ենթակառուցվածքների կառավարմանը, պահպանմանը և զարգացմանը:

Հաշվետու տարում Պատվարների անվտանգության առաջին ծրագրի շրջանակներում նախատեսված շուրջ 2 մլրդ դրամի փոխարեն փաստացի ծախսերը կազմել են 918.3 մլն դրամ կամ 46.8%-ը: Ծրագրի շրջանակներում 2008 թվականին կատարվել են Մարմարիկի պատվարի կառուցվածքների վերականգնման և անվտանգության սարքավորումների տեղադրման և Մանթաշի պատվարի ֆիլտրացիայի ուսումնասիրության և միջոցառումների մշակման աշխատանքներ: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ այն գտնվում է ավարտման փուլում:

Պատվարների անվտանգության երկրորդ ծրագրով հնարավորություն ստեղծվեց շարունակել առաջին ծրագրով սկիզբ դրված՝ անվտանգությանն ուղղված միջոցառումների իրականացումը ևս 47 պատվարների համար: Ծրագիրը նպատակաուղղված է նպաստելու Հայաստանում կայուն ջրի կառավարման կարողությունների զարգացմանը: Այն կաջակցի նաև ֆինանսական կարգապահության ստեղծմանը, քանի որ դրա շնորհիվ կնվազի ոռոգման

համակարգի կախվածությունը պետական բյուջեից: Հաշվետու տարում պատվարների անվտանգության երկրորդ ծրագրի շրջանակներում նախատեսված 655.8 մլն դրամի փոխարեն փաստացի ծախսերը կազմել են 190.3 մլն դրամ կամ 29%-ը: Ծրագրի շրջանակներում 2008 թվականին կատարվել են Արագածոտնի, Տավուշի, Վայոց ձորի, Շիրակի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի 22 պատվարների առաջնահերթ վերականգնման աշխատանքները, պատվարներին մոտեցնող ճանապարհների վերականգնումը և Սյունիքի մարզի էներգետիկ պատվարների առաջնահերթ վերականգնման աշխատանքները: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ այն գտնվում է ավարտման փուլում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգի զարգացման առաջին և երկրորդ ծրագրերի շրջանակներում նախատեսված 939.1 մլն դրամի փոխարեն օգտագործվել է 689.3 մլն դրամ: Ծրագրերի նպատակն է հանրապետության ոռոգելի հողատարածքների ջրապահովվածության բարելավումը, ոռոգման համակարգերի շահագործ-ման ծախսերի նվազեցումը, ինչպես նաև համակարգում ջրի հաշվառման և կառավարման կատարելագործումը: Առաջին ծրագրի շրջանակներում փաստացի ծախսերը կազմել են 39.7 մլն դրամ՝ ապահովելով 40.3% կատարողական: Այն բաղկացած է չորս բաղադրիչներից՝ «Վթարային կառուցվածքների վերականգնում և Արաքսի գլխամասի վերակառուցում», «Ինքնահոս ոռոգման համակարգերի կառուցում», «Ծրագրի կառավարում», «Ոլորտի պետական մարմիններին և ջրօգտագործման ընկերություններին (ՋՕԸ) աջակցություն»: Նշված բաղադրիչներում ընդգրկված աշխատանքները հիմնականում կատարվել են 2007 թվականին: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ այն գտնվում է ավարտման փուլում, ինչպես նաև ոռոգման համակարգերի զարգացման երկրորդ ծրագրի իրականացմանը, որը հնարավորություն ստեղծեց շարունակել առաջին ծրագրով սկիզբ դրված միջոցառումները: Հաշվետու տարում ոռոգման համակարգերի զարգացման երկրորդ ծրագրի շրջանակներում փաստացի ծախսերը կազմել են 649.6 մլն դրամ՝ ապահովելով 77.3% կատարողական: Ծրագրի շրջանակներում 2008 թվականի ընթացքում կատարվել են Հանրապետության մարզերի մի շարք ոռոգման երրորդ կարգի ջրանցքների վերականգնման և տեխնիկական վերահսկման աշխատանքներ: 2008 թվականի ընթացքում սկսվել են Արմավիրի և Արարատի մարզերի 8 գյուղերի երրորդ կարգի ջրանցքների վերականգնման աշխատանքները, որոնք կրում են շարունակական բնույթ: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է աշխատանքները 2009 թվական տեղափոխելու հանգամանքով:

Ոռոգման համակարգերի սուբսիդավորման համար ՀՀ պետական բյուջեով նախատեսված շուրջ 5 մլրդ դրամն ամբողջությամբ ֆինանսավորվել է, որը 8.6%-ով զիջում է նախորդ տարվա ցուցանիշը: Ջրօգտագործողների ընկերություններին պետական ֆինանսական աջակցության բարեփոխումների հիմնական նպատակներն են՝ ջրօգտագործողներին աջակցությունն ու մասնակցային կառավարման ամրապնդումը,

ջրօգտագործողների ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացումն ու ինքնածախսածածկման մակարդակի աստիճանական ավելացումը, ոռոգման ջրի կորուստների կրճատումը, ինչպես նաև պետական ծախսերի կանխատեսելիության ու բաշխման արդյունավետության աճը: Նախորդ տարվա համեմատ սուբսիդավորման նվազումը պայմանավորված է ըստ տարիների նախատեսված սուբսիդիայի տրամադրման կրճատման սցենարով:

Հաշվետու տարում «Ոռոգման համակարգերի հիմնանորոգում» ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների իրականացման ծախսերը կազմել են շուրջ 1.3 մլրդ դրամ՝ ապահովելով 90.2% կատարողական: Ծրագրի շրջանակներում ոռոգման ոլորտի կազմակերպությունների կողմից իրականացվել են շահագործվող կարևոր նշանակություն ունեցող ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամբարների, գլխամասային կառուցվածքների, ջրանցքների, պոմպակայանների և այլ ջրային համակարգերի ամենամյա կապիտալ նորոգումներ: 2008 թվականին հիմնականում վերանորոգման աշխատանքներ են իրականացվել հանրապետության տարբեր ջրանցքներում: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է տնտեսումներով, ինչպես նաև 4 շինարարական օբյեկտներում մրցույթները չկայանալու հանգամանքով:

«Որոտան-Արփա-Սևան թունելների շահագործման վարչություն» պետական հիմնարկի պահպանման, Որոտան-Արփա-Սևան ջրային համակարգի շահագործման, տեխնիկական վիճակի բարելավման և նորոգման համար 2008 թվականին պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 309.3 մլն դրամ կամ նախատեսվածի 99.2%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվում են Արփա-Սևան ջրային համակարգի շահագործման և Որոտան-Արփա թունելի պահպանման աշխատանքները: Ծրագրի ամբողջական իրականացումը հնարավորություն կընձեռի անվտանգ և անխափան շահագործել Որոտան-Արփա-Սևան հիդրոտեխնիկական համալիրը, ապահովել Սևանա լիճ տեղափոխվող ջրի նախագծային ծավալը՝ տարեկան 450 մլն խ.մ: 2007 թվականի համեմատ ««Որոտան-Արփա-Սևան» թունելների շահագործման վարչություն» պետական հիմնարկի պահպանման, տեխնիկական վիճակի բարելավման և նորոգման ծրագրով նախատեսված ծախսերը նվազել են 66%-ով՝ պայմանավորված շինարարական աշխատանքների ծավալների կրճատմամբ:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով ոռոգելի հողերի կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և ընթացիկ նորոգման համար տրամադրվել է 332.7 մլն դրամ, որը ֆինանսավորվել է 99.9%-ով: Ծրագրի իրականացման արդյունքում պահպանվում և շահագործվում են հանրապետությունում առկա կոլեկտորադրենաժային ցանցերը և մաքրվում ու վերանորոգվում է կոլեկտորադրենաժային ցանցերի մի մասը, որոնցով հնարավորություն է տրվում Արարատյան հարթավայրի հողերի գրունտային ջրերի մակարդակները պահպանել թույլատրելի խորությունների վրա՝ 19000 հա-ից ոչ ավելի:

Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանման և շահագործման, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման գծով աշխատանքների իրականացման համար 2008 թվականի պետական բյուջեից նախատեսված 87 մլն դրամն ամբողջությամբ ֆինանսավորվել է: Ծրագրի շրջանակներում ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակի բարելավման նպատակով միջոցառումների մշակման համար իրականացվել են բաց կոլեկտորադրենաժային ցանցերի պահպանում և շահագործում (1055.8 կմ), հանրապետության ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակի գնահատում և բարելավման միջոցառումների մշակում (273.53 հազար հա), ինչպես նաև գրունտային ջրերի մակարդակների տեղադրման մշտական դիտումներ:

2008 թվականին ոռոգման խմբում կատարվել են հատկացումներ ևս 3 ծրագրերի գծով, այդ թվում՝ «Համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների տրամադրում», «Ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովի պահպանում» և «Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով տրամադրված նվիրաբերության միջոցների հաշվին իրականացվող ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում մարզային զարգացման ծրագիր», որոնք համապատասխանաբար կազմել են 32.6 մլն, 10.8 մլն, և 6.8 մլն դրամ՝ 93.1%-ով, 77.4%-ով, և 97.9%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Համայնքների բյուջեներին հատկացված սուբվենցիաների հաշվին հիմնանորոգվել է Աղավնաձոր համայնքի խմելու ջրագծի և կոյուղու համակարգի ներքին ցանցը: «Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով տրամադրված նվիրաբերության միջոցների հաշվին իրականացվող ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում մարզային զարգացման ծրագրի» շրջանակներում իրականացվել է Տավուշի մարզի Ջուջևան համայնքի ոռոգման ցանցի նորոգում (2 մլն դրամ), իսկ Գեղարքունիքի մարզում 4.8 մլն դրամ է հատկացվել Ծովազարդ համայնքի ոռոգման ջրագծի վերանորոգմանը:

Վառելիքի և էներգետիկայի բնագավառի ծախսերի ցուցանիշը 2008 թվականին կազմել է ավելի քան 18.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 94.3%-ով: Ընդ որում, կատարվել են 84.1 մլրդ դրամի ծախսեր, և 65.7 մլրդ դրամ է մուտքագրվել ոչ ֆինանսական ակտիվների օտարումից:

Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականով: Մասնավորապես՝ Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգնման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 2.1 մլրդ դրամ՝ (որից 2 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 122 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին), որը կազմում է նախատեսվածի 47.3%-ը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 110 ԿՎ ենթակայանների

վերականգնում և SCADA/կապի համակարգի առաջին փուլի իրականացում: 110 ԿՎ ենթակայանների վերականգնման արդյունքում Հայաստանի էներգահամակարգի առավել խնդրահարույց ենթակայաններում նախատեսված է փոխարինել հիմնական սարքավորումները: Փոխարինման արդյունքում կբարձրանա ենթակայանների, ինչպես նաև էներգահամակարգի աշխատանքի հուսալիությունը: SCADA/կապի համակարգի առաջին փուլի իրականացման արդյունքում կստեղծվի Հայաստանի էներգահամակարգի կառավարման մեկ ամբողջական համակարգ, այդ թվում՝ համապատասխան կապի, տվյալների և տեղեկատվության հավաքման, հաղորդման և պահպանման, էլեկտրաէներգիայի և էներգետիկ ռեսուրսների կառավարման, ինչպես նաև վերահսկման համակարգեր, որը հնարավորություն կստեղծի էներգահամակարգի ավելի հուսալի, արդյունավետ և կայուն աշխատանքի համար: Ծրագրի շրջանակներում 2008 թվականին իրականացվել են SCADA/կապի համակարգի առաջին փուլի իրականացման և 110 ԿՎ ենթակայանների վերականգնման գլխավոր կապալառուի ընտրման միջազգային մրցույթները և պայմանագրի ժամանակացույցի համաձայն կատարվել են նախագծային աշխատանքները: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ 2008 թվականի պետական բյուջեն կազմելու ժամանակահատվածում 110 ԿՎ ենթակայանների վերականգնման պայմանագիրը դեռևս կնքված չէր, և բյուջեում նախատեսվել է կանխատեսումային, և ոչ թե հաշվարկային ցուցանիշը:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի տեղափոխման սեկտորի վերակառուցման ծրագրով «Վանաձոր-1» ենթակայանի վերակառուցման համար ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով նախատեսված 507.3 մլն դրամի դիմաց կատարվել են 158.5 մլն դրամի ծախսեր կամ 31.3%-ը: Ծրագրի նպատակն է բարձրացնել էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիությունը, ինչպես նաև ապահովել էլեկտրաէներգիայի անխափան մատակարարում: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է «Վանաձոր-1» 110 ԿՎ ենթակայանի վերակառուցման վարկային ծրագրի շրջանակներում անցկացված գլխավոր կապալառուի ընտրության միջազգային մրցույթի արդյունքում հաղթող չճանաչելու հանգամանքով, քանի որ բոլոր հայտատուների առաջարկները գերազանցել են ծրագրի համար նախատեսված գումարը: Ծրագրի շրջանակներում կատարված ծախսերը «Ալավերդի-2» ենթակայանի վերականգնման համար կատարված փաստացի վճարումներն են 2007 թվականին կատարած աշխատանքների համար:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Վերականգնվող էներգետիկայի դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում նախատեսված 483.2 մլն դրամի փոխարեն ծախսվել է 308.5 մլն դրամ կամ նախատեսվածի 63.8%-ը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ նախատեսված 12 ծրագրերից մեկը՝ Շնող ՀԷԿ-ի տեխնիկատնտեսական հիմնավորման ծրագիրը, տեղափոխվել է 2009 թվական: Վերականգնվող էներգետիկայի

դրամաշնորհային ծրագրի նպատակն է օժանդակել ներդրումային ծրագրին, վերականգնվող էներգետիկայի զարգացմանը, նորմատիվային և կարգավորող դաշտի բարելավմանը վերականգնվող էներգետիկայի ոլորտում:

2008 թվականին 41.3%-ով գերազանցում է արձանագրվել Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Քաղաքային ջեռուցման ծրագրի ծախսերում, որոնք կազմել են 594 մլն դրամ: Ծրագրի նպատակն է մեծացնել մաքուր, արդյունավետ, ապահով և մատչելի ջեռուցման տեխնոլոգիաների օգտագործումը ՀՀ քաղաքային դպրոցներում և բազմաբնակարան շենքերում: Ծրագիրը բաղկացած է հինգ բաղադրիչներից՝ «Արդյունավետ ու ապահով ջեռուցման ծառայությունների մատուցման համար նպաստավոր միջավայրի ստեղծում», «Բնակելի շենքերի ջեռուցում», «Դպրոցների ջեռուցում», «Աջակցություն ծրագրի իրականացմանը (ապրանքների, աշխատանքների և խորհրդատվական ծառայությունների տրամադրման միջոցով)», «Ծրագրի նախապատրաստում (ծրագրի նախապատրաստման կանխավճարի մարում)»: Ծրագրի շրջանակներում իրականացվել է անապահով ընտանիքների բնակարանների գազաֆիկացման (2439 բնակարան), նախագծահետազոտական, ինչպես նաև տեխնիկական և հեղինակային հսկողության, վառարանի տեղադրման (4368 բնակարան) աշխատանքներ: Ծրագրի կատարողականը պայմանավորված է 2007 թվականին չկատարված և 2008 թվական տեղափոխված աշխատանքների իրականացմամբ, 2007 թվականին կատարված որոշ աշխատանքների դիմաց 2008 թվականին վճարումներով, ինչպես նաև անապահով ընտանիքների ջեռուցման և վառարանների տեղադրման աշխատանքների հավաստման համար պահանջված լրացուցիչ ծախսերով:

Բարձր ցուցանիշ է արձանագրվել նաև Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող Համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման ծրագրի գծով: Նշված ծրագրով 2008 թվականի պետական բյուջեից նախատեսված 13.3 մլրդ դրամի դիմաց կատարվել են շուրջ 15 մլրդ դրամի ծախսեր: Ծրագրի նպատակն է «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ում նոր էներգաբլոկի կառուցումը (220 ՄՎտ էլեկտրական և 103,7 Գկալ/ժամ ջերմային հզորությամբ), որի կիրառմամբ կնվազեցվեն վառելիքի տեսակարար ծախսը, վնասակար արտանետումները, ինչպես նաև կմեղմացվի հանրապետության էլեկտրաէներգիայի կանխատեսվող դեֆիցիտը: 2008 թվականի հուլիսի 30-ին տեղի է ունեցել նոր էներգաբլոկի կառուցման աշխատանքների հիմնարկեքը: Ծրագրի շրջանակներում իրականացվում են նոր էներգաբլոկի նախագծման և շինարարական աշխատանքները: Տեղադրված են հիմնական սարքավորումների պատվերները, որոնք գտնվում են արտադրման փուլում, պատրաստ է հովացման աշտարակը, ավարտված են 35 ԿՎ ենթակայանի և տեղափոխման գծերի, տեղամասում գրասենյակի կառուցման աշխատանքները, ավելի քան 60%-ով կատարված են հիմնական սաքավորումների հիմքերի կառուցման աշխատանքները: Ծրագրի ավարտը նախատեսվում է 2010 թվականին:

2008 թվականին շուրջ 65.7 մլրդ դրամ է ստացվել «Հրազդանի 5-րդ էներգաբլոկ» գույքային համալիրի վաճառքից, որը հատկացվել է «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի սուբսիդավորմանը:

233.6 մլն դրամ են կազմել գործադիր իշխանության, պետական կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) համար օգտագործված միջոցները՝ ապահովելով ծրագրի 99.2%-ը:

Համայնքների բյուջեներին նպատակային հատկացումները՝ սուբվենցիաները կազմել են 34.2 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 99.1%-ով:

Հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեից շուրջ 69.4 մլն դրամ տրամադրվել է *լեռնաարդյունահանման, արդյունաբերության և շինարարության* խմբի ծախսերին՝ կազմելով ծրագրվածի 93.6%-ը: Խմբի ծախսերի ցածր կատարողականը մեծ մասամբ պայմանավորված է Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի և երկրաբանահետախուզական աշխատանքների ցածր կատարողականով, որոնք համապատասխանաբար կազմել են 880 հազ. դրամ և 40 մլն դրամ՝ 22%-ով և 97.5%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի ցածր կատարողականը պայմանավորված է փաստացի պատվիրված շինարարական աշխատանքների ծավալներով, իսկ երկրաբանահետախուզական աշխատանքներինը՝ այն հանգամանքով, որ «ՀՀ պինդ օգտակար հանածոների հանքավայրերի վերաբերյալ համակարգչային տեղեկատվական համակարգի ստեղծում» ծրագրի գծով աշխատանքները կատարվել են թերություններով, և դրանց մի մասը չի ընդունվել ու չի ֆինանսավորվել:

Ամբողջությամբ տրամադրվել է «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ին 5.7 մլն դրամ պետական աջակցությունը:

Պահուստային հանքավայրերի գույքագրման համար նախատեսված ծախսերը կազմել են 15.9 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Սյունիքի, Արարատի և Գեղարքունիքի մարզերի տարածքներում գտնվող պահուստային (լքված) հանքավայրերի գույքագրման աշխատանքները:

Արտաբյուջետային միջոցների հաշվին նախատեսված «Աճուրդների կազմակերպման ֆոնդ» ծրագրի ծախսերը կազմել են 6.9 մլն դրամ՝ ապահովելով 92% կատարողական: Շեղումը պայմանավորված է նախապես նախատեսված հայտարարությունների տպագրման գործընթացի հետաձգմամբ:

2008 թվականի ընթացքում *տրանսպորտի* բնագավառի ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 46.9 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 78.8%-ով: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է ճանապարհային տրանսպորտի և երկաթուղային տրանսպորտի բնագավառներում արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի ցածր կատարողականով:

Ճանապարհային տրանսպորտի բնագավառի ծախսերը կազմել են ավելի քան 41.9 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրվածի 80.4%-ը: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 13 ծրագրեր, որոնցից ամբողջությամբ կատարվել են հինգը, իսկ դասում նախատեսված ծրագրերից երկուսի՝ Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ կազմակերպությունների կողմից զեղչ սակագնով կամ անվճար ծառայություններ մատուցելու հետևանքով չստացված եկամուտների փոխհատուցման և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երթևեկության կառավարման և անվտանգության ծրագրերի գծով հաշվետու ժամանակահատվածում ծախսեր չեն իրականացվել: 100% կատարողական է արձանագրվել հետևյալ ծրագրերում.

- «Հյուսիս-Հարավ» ավտոմայրուղու շինարարության համար նախատեսված 650.3 մլն դրամը որպես կապիտալ դրամաշնորհ տրամադրվել է Լեռնային Ղարաբաղի կառավարությանը՝ Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու շինարարության համար: Գումարն ուղղվել է Կիչան-Դրմբոն (4.9 և 2.7 կմ) և Ազոխ-Ծակուռի (8.0 կմ) ճանապարհահատվածների կառուցման աշխատանքների ֆինանսավորմանը:
- Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման նպատակով կատարված ծախսերը հաշվետու տարում կազմել են ավելի քան 707.4 մլն դրամ: Մասնավորապես՝ 232.6 մլն դրամ է հատկացվել միջպետական, 218.6 մլն դրամ՝ հանրապետական, 224.8 մլն դրամ՝ մարզային նշանակության ավտոճանապարհների տրանսպորտային օբյեկտներում կատարված շինարարական աշխատանքների համար, իրականացվել են նաև 31.4 մլն դրամի նախագծային աշխատանքներ: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել են 22 կամուրջներ, որից 8-ը՝ միջպետական, 7-ը՝ հանրապետական և 7-ը՝ տեղական նշանակության ճանապարհների վրա: 2008 թվականին նվազել է հիմնանորոգվող օբյեկտների քանակը, ինչի հետ կապված՝ նախորդ տարվա համեմատ տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման գծով բյուջետային ծախսերը նվազել են 452.8 մլն դրամով:
- Լինսի հիմնադրամի միջոցներով իրականացվող «Ճանապարհների վերանորոգում» ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 195.5 մլն դրամի ծախսեր: Ծրագրի շրջանակներում վերանորոգվել, վերակառուցվել և ասֆալտապատվել է Արմավիր-Իսահակյան-Գյումրի 3.4 կմ երկարությամբ հանրապետական նշանակության ճանապարհը: Իրականացվել են նաև նշված կառույցի տեխնիկական և հեղինակային հսկողության աշխատանքներ:
- Լինսի հիմնադրամի միջոցներով իրականացվող «Երևանի փողոցների վերանորոգում» ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 1.8 մլրդ դրամի ծախսեր: Հատկացված միջոցներով կատարվել են Բարեկամության հրապարակ-Կոմիտասի պողոտայի 3.08 կմ հատվածի, Կոմիտասի պողոտա Տիգրանյան-Շիրվանզադե 0.38 կմ հատվածի, Տիգրան Մեծ-Ե/գ կայարան փողոցի 1.74 կմ երկարությամբ հատվածի վերանորոգման, վերակառուցման

և ասֆալտապատման, Երևան քաղաքի Հերացի, Սարալանջի և Ավետիսյան փողոցները միացնող նոր 5.06 կմ երկարությամբ մայրուղու I-ից III տեղամասերի կառուցման, Երևան քաղաքի Հերացի, Սարալանջի և Ավետիսյան փողոցները միացնող նոր մայրուղի» IV տեղամաս «Հերացի-Նոր մայրուղի, թունելային անցում» 0.34 կմ երկարությամբ թունելի կառուցման և ասֆալտապատման աշխատանքները: Իրականացվել են նաև նշված կառույցների նախագծման, տեխնիկական և հեղինակային հսկողության աշխատանքներ:

- Լինսի հիմնադրամի «Ճանապարհաշինություն» և «Երևանի փողոցների վերականգնում» ծրագրերում առաջացած ֆինանսական միջոցների պակասուրդի փոխհատուցման նպատակով տրամադրվել է ավելի քան 2.4 մլրդ դրամ:

ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ճանապարհաշինության ոլորտում հաշվետու ժամանակահատվածում ծախսվել է ավելի քան 1.8 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 17.3%-ը: Միջկառավարական համաձայնագրի երկրորդ տարվա ընթացքում Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի (ԳՃՎԾ) շրջանակներում մեկնարկել են ծրագրում ընդգրկված գյուղական ճանապարհների շինարարական աշխատանքները: Իսկ Արագածոտնի և Շիրակի մարզերով անցնող Հ-17 Արմավիր-Իսահակյան-Գյումրի ավտոճանապարհի շինարարական աշխատանքները ավարտվել են: Վերանորոգված հատվածի ընդհանուր երկարությունը 24.5 կմ է: Վերանորոգված ճանապարհից անմիջականորեն կօգտվեն 7 գյուղական համայնքների ընդհանուր թվով 3481 բնակիչ: Ցածր կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2008 թվականի բյուջեն կազմելուց հետո Հազարամյակի մարտահրավերներ կորպորացիայի կողմից կատարվել է նախնական ծավալների կրճատում: ԳՃՎԾ-ի առաջին փաթեթում ընդգրկված 273 կմ երկարությամբ ճանապարհային հատվածների շինարարության գծով «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի ստանձնած պարտավորությունները կատարելու նպատակով ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց 2008 թվականի շինարարության համար անհրաժեշտ գումարը հատկացնել պահուստային ֆոնդից: Հատկացումը կազմեց շուրջ 5.1 մլրդ դրամ, որի շնորհիվ պայմանագրեր կնքվեցին 2008 թվականի մարտին հայտարարված միջազգային մրցույթի արդյունքում ընտրված կապալառուների հետ, և օգոստոսին սկսվեցին աշխատանքները: Առաջին փաթեթում ընդգրկված ճանապարհահատվածները ներառում են Հայաստանի բոլոր մարզերը, բացառությամբ Շիրակի: Ընդհանուր առմամբ շահառու համայնքների թիվը 73 է, որոնց ընդհանուր բնակչությունը կազմում է 170000: 2008 թվականի վերջի դրությամբ փաստացի հատկացված գումարից ծախսվել է 2,923.5 մլն դրամ: Նախատեսվում է ողջ շինարարությունն ավարտել մինչև 2010 թվականի հունիսը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երթևեկության կառավարման և անվտանգության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 299 մլն դրամ (որից 238.5 մլն դրամը՝ դրամաշնորհային միջոցներից, 60.5 մլն դրամը՝ Կառավարության համաֆինանսավորման հաշվին)՝ կազմելով նախատեսված ծախսերի 91.2%-ը: Ծրագրի շրջանակներում նախապատրաստվել է Երևանում երթևեկության կառավարման բարելավման և հասարակական տրանսպորտի զարգացման և բարեփոխումների համալիր երկփուլանի ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է Երևանում ներդնել և շահագործել միջազգայնորեն ճանաչված լուսանշանների համակարգ, իրականացնել երթևեկության ճարտարագիտության (երթևեկության կառավարման և ճանապարհների կահավորման) նոր սխեմաներ, որոնք կնպաստեն գործող ճանապարհային ցանցի թողունակության բարձրացմանը և երթևեկության մասնակիցների՝ առաջին հերթին հետիոտների անվտանգության ապահովմանը: Նախատեսվում է նաև գործող երթուղային ցանցի վերակազմավորում՝ Երևանի մետրոպոլիտենի օգտագործումը բարձրացնելու և մեծ տեղատարողությամբ ավտոբուսների տրամադրումը խթանելու նպատակով:

2008 թվականին Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երթևեկության կառավարման և անվտանգության վարկային ծրագրով նախատեսված էր 266.7 մլն դրամ ծախսերի իրականացում, որը, սակայն, չի կատարվել, քանի որ վարկային համաձայնագիրը չի կնքվել:

Ճանապարհային տրանսպորտի դասի ծրագրերում մեծ տեսակարար կշիռ (79.9%) ունեն Երևանի համաքաղաքային նշանակության, պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման և պետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և շահագործման ծախսերը: Հաշվետու տարում «Երևանի համաքաղաքային նշանակության ծախսեր» ծրագրի շրջանակներում պետական բյուջեից կատարվել են շուրջ 15.4 մլրդ դրամ ծախսեր՝ ապահովելով նախատեսվածի 93.4%-ը և 76%-ով (6.6 մլրդ դրամով) գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրված ծախսերից արձանագրված շեղումը պայմանավորված է որոշ պայմանագրերի լուծմամբ: Հատկացված միջոցներով տարվա ընթացքում աշխատանքներ են իրականացվել 25 ծրագրերի շրջանակներում: Ընդհանուր առմամբ 2008 թվականին իրականացվել են առավել ծանրաբեռնված և թռիչքային առումով երկար 15 կամուրջների և կամրջային կառուցվածքների սպասարկման և շահագործման աշխատանքներ, կատարվել են 340.0 հազ. քմ ասֆալտապատման, 173 հազ. գծմ ճաքալցման աշխատանքներ, բարեկարգվել են Սեբաստիա-Բագրատունյաց փողոցները՝ ապամոնտաժելով տրամվայի գծերը, կառուցվել է նոր հենապատ Հրազդան փողոցում՝ Հրազդան գետի երկայնքով, և վերանորոգվել է Լենինգրադյան - Շինարարների փողոցների հատույթում գտնվող և Նալբանդյան փողոցի հենապատը, լայնացվել է Ավետիսյան փողոցը, բարեկարգվել են Ավետիսյան և Վաղարշյան փողոցները:

2008 թվականի պետական բյուջեից 11.9 մլրդ դրամ է տրամադրվել պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգմանը՝ ապահովելով 99.9% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել են միջպետական, հանրապետական նշանակության և այլ ճանապարհների հիմնանորոգման, ինչպես նաև նախագծային և ճանապարհների կահավորման աշխատանքներ՝ տեղադրվել են ճանապարհային նշաններ ու ցուցանակներ: Նախորդ տարվա համեմատ ավտոճանապարհների հիմնանորոգման գծով բյուջետային ծախսերը նվազել են 15.6%-ով՝ ավտոճանապարհների հիմնանորոգման ենթակա տարածքների պակասեցմամբ:

Պետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և շահագործման ծախսերը կազմել են շուրջ 6.2 մլրդ դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 99.7%-ը: Ծրագրի շրջանակներում սպասարկվել են 3393 կմ երկարությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներ, 3 ավտոճանապարհային թունելներ (Պուշկին, Նալբանդ, Դիլիջան) և 5 խոշոր կամուրջներ՝ (Մեղրի, Եղվարդ, Աշտարակ, Ջերմուկ, Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման գ. Ձորագետ), կատարվել են նաև ճանապարհների կահավորման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ պետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և շահագործման գծով բյուջետային ծախսերն ավելացել են 4.8%-ով կամ 282 մլն դրամով:

Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման ծրագրով ՀՀ 2008 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 456.7 մլն դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 97.3%-ը և 0.7%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Նշված ծրագրի շրջանակներում ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ պահպանման, շահագործման և ձմեռային պահպանության ուղղություններով աշխատանքներ են կատարվել հանրապետության բոլոր մարզերում:

2008 թվականին ճանապարհային տրանսպորտի բնագավառում կատարվել են հատկացումներ ևս 2 ծրագրերի գծով՝ «Համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների տրամադրում» և «Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով տրամադրված նվիրաբերության միջոցների հաշվին իրականացվող ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում մարզային զարգացման ծրագիր», որոնք համապատասխանաբար կազմել են 35 մլն և 43 մլն դրամ՝ 99.9%-ով և 99.8%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Երկրորդ ծրագրի շրջանակներում Տավուշի մարզում իրականացվել են ճանապարհների վերականգնման, կանաչապատման և բարեկարգման աշխատանքներ:

2008 թվականի հաշվետու ժամանակահատվածում երկաթուղային տրանսպորտի բնագավառում ՀՀ պետական բյուջեից կատարվել են շուրջ 2.9 մլրդ դրամ ծախսեր՝ կազմելով

նախատեսվածի 55.3%-ը: Այս ոլորտի ծրագրերը իրականացվում են արտաքին աջակցությամբ, իսկ շեղումը հիմնականում առաջացել է Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Գյուղական ճանապարհների վերականգնման վարկային ծրագրի գծով: Ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 2.5 մլրդ դրամ (որից 1.4 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 1.1 մլրդ դրամը՝ Կառավարության համաֆինանսավորման հաշվին), որը կազմել է նախատեսված ծախսերի 54.2%-ը: Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև ստորագրված վարկային պայմանագրով նախատեսված վարկը վավերացվել է 2008 թվականի փետրվարի 5-ին: Մրցույթները ուշ կայանալու հանգամանքով պայմանավորված՝ աշխատանքները սկսվել են հոկտեմբեր ամսին, սակայն եղանակային պայմաններից ելնելով՝ ասֆալտբետոնի հետ կապված աշխատանքները, որոնք կազմում են շինարարության արժեքի շուրջ 85%-ը, դադարեցվել են: Արդյունքում շինարարական աշխատանքները 2008 թվականին ծրագրված 4.5 ամիսների փոխարեն ընթացել են ընդամենը 2 ամիս, ինչն էլ հանդիսացել է ծրագրի թերակատարման պատճառը:

Հաշվետու տարում ՀԲ աջակցությամբ իրականացվող Երկաթուղու կառուցվածքային բարեփոխումների վարկային ծրագրով նախատեսված են եղել շուրջ 162.6 մլն դրամի ծախսեր, որը վարկային համաձայնագիրը չկնքվելու պատճառով չի օգտագործվել:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Երկաթուղու կառուցվածքային ծրագրի նախապատրաստման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 127.7 մլն դրամ կամ ծրագրվածի 69.2%-ը: Համաշխարհային բանկի համաձայնությամբ ծրագիրը երկարացվել է մինչև 30.04.2009թ.՝ նախկինում սահմանված 29.09.2008թ.-ի փոխարեն: Ցածր կատարողականը պայմանավորված է միջոցների տնտեսմամբ, որն օգտագործվելու է 2009 թվականին՝ երկաթուղու կամուրջների նախագծային փաստաթղթերի պատրաստման համար: 2008 թվականին իրականացվել են երկաթուղու կառուցվածքային ծրագրի նախապատրաստման աշխատանքները:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երկաթուղու կառուցվածքային բարեփոխումների ծրագրի նախապատրաստման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 220.8 մլն դրամ կամ ծրագրվածի 117.2%-ը: Ծրագրի շրջանակներում 2008 թվականի հունվարին ամփոփվել է Հայկական երկաթուղու համակարգը կոնցեսիոն պայմանագրով փոխանցելու մրցութային գործընթացը՝ նպատակ ունենալով համապատասխան ներդրումների ներգրավմամբ վերազինել երկաթուղու շարժակազմը և զարգացնել ենթակառուցվածքները, ինչը կապահովի թե՛ անվտանգ շահագործում և բարձրակարգ սպասարկում, թե՛ երկաթուղու գործունեության արդյունավետության բարձրացում: Ծրագրի բարձր կատարողականը պայմանավորված է 2007 թվականի դեկտեմբերին կատարված աշխատանքների դիմաց 2008 թվականին իրականացված վճարումներով:

2008 թվականի ընթացքում օդային տրանսպորտի գծով պետական բյուջեի ծախսերում արձանագրվել 65.1% կատարողական՝ կազմելով 270.6 մլն դրամ: Շեղումը հիմնականում առաջացել է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության արտաբյուջետային միջոցներով իրականացվող ծախսերի գծով, որոնք 47.4%-ով զիջել են ծրագիրը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ նշված միջոցների հաշվին նախատեսվել էին անհատ անձանց և կազմակերպություններին (հիմնականում մշակույթի բնագավառի ներկայացուցիչներին) տրամադրվող օգնություններ, որոնք նախատեսվածից քիչ են կազմել:

124.6 մլն դրամ են ծախսվել գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման համար՝ ապահովելով ծրագրի 90.1%-ը, որը կապված է տնտեսումների հետ:

Հաշվետու տարում խողովակաշարային և այլ տրանսպորտի գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 1.9 մլրդ դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Հատկացված գումարից ավելի քան 1.6 մլրդ դրամ տրամադրվել է Երևանի մետրոպոլիտենի, 276 մլն դրամ՝ Երևանի էլեկտրատրանսպորտի սուբսիդավորմանը:

2008 թվականի ընթացքում *կապի* ոլորտում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 543.2 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Մասնավորապես՝ 470 մլն դրամ պետական աջակցություն է հատկացվել «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» (ՀՀԿ) ՊՈԱԿ-ին և 73.2 մլն դրամ՝ Սևանի ավազանի բնակավայրերում, Դիլիջանում և Ջերմուկում հեռուստահեռարձակման բարելավման միջոցառումների իրականացմանը:

2008 թվականին «ՀՀԿ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել են ՀՀ հաճախությունների բաշխումների աղյուսակի կազմման, ռադիոեթերի մոնիտորինգի, ռադիոէլեկտրոնային միջոցների և բարձր հաճախականության սարքավորումների տեղադրման, փորձաքննության և չափումների անցկացման, կապի շինարարական աշխատանքների տեխնիկական նորմերին համապատասխանության ընդունման, եթերի խանգարման աղբյուրների հայտնաբերման և վերացման գործառույթները:

«Սևանի ավազանի բնակավայրերում, Դիլիջանում, Ջերմուկում հեռուստահեռարձակման բարելավման միջոցառումներ» ծրագրով հատկացված միջոցներով կառուցվել է նոր հեռուստատեսային հաղորդիչ կայան՝ համալրված ժամանակակից սարքավորումներով:

2008 թվականի ընթացքում *այլ բնագավառների* ծախսերը կազմել են ավելի քան 1.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 91.2%-ը: Ոլորտի ծրագրերում մեծ տեսակարար կշիռ ունեն ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրով կատարված ծախսերը, որոնք կազմել են 869.5 մլն դրամ՝ ապահովելով 90.1% կատարողական: Ծրագրի

տվյալ բաղադրիչի նպատակը ծրագրային գործունեության վերահսկումն ու կառավարումն է: Ցածր կատարողականը պայմանավորված է որոշակի ծախսերի չկատարմամբ: Մասնավորապես՝ տարվա ընթացում նախատեսվել էր սպասարկող ավտոմեքենաների ձեռքբերում, որն իրականացվել է մասամբ, չեն վճարվել նախապես պլանավորված պարգևավճարների գումարները: Այս բաղադրիչի բյուջեից են ֆինանսավորվում ՀՄՀ Հայաստանի հետ համագործակցող՝ «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ը, Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը, «Գյուղական ֆինանսավորման կառույց-ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն: Ծրագրի թերակատարմանը նպաստել է նաև 2008 թվականի օգոստոսին պայմանագրի դադարեցումը «Ջրային տնտեսության զարգացման և բարեփոխումների ԾԻԳ» ՊՀ-ի հետ, որը նույնպես ֆինանսավորվում էր այս միջոցներից:

Զբոսաշրջության ոլորտին պետական աջակցության նպատակով ՀՀ 2008 թվականի պետական բյուջեից նախատեսվել էր տրամադրել 250 մլն դրամ, սակայն փաստացի օգտագործվել է 239.3 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 95.7%-ով[4]: Մասնավորապես՝ ՀՀ 2008 թվականի զբոսաշրջության զարգացման ծրագրի իրականացման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 71 մլն դրամ՝ ապահովելով նախատեսվածի 88.8%-ը և գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը 1.4%-ով: Ծրագրի կատարողականը պայմանավորված է մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպության ցածր գնային առաջարկով:

«Ծաղկաձորը՝ միջազգային չափանիշներին համապատասխանող զբոսաշրջության կենտրոն» նպատակային խնդիրների լուծման ծրագրի շրջանակներում ծախսերը կազմել են 168.3 մլն դրամ: Ծրագրի նպատակն է ներկայացնել Հայաստանը որպես կայուն, ապահով, ձեռնարկատիրական գործունեության և ներդրումների համար բարենպաստ, ինչպես նաև գրավիչ զբոսաշրջային երկիր: Հատկացված միջոցներով իրականացվել է Հայաստանը ներկայացնող տեսահոլովակների հեռարձակում «Սի Էն Էն» և «Եվրոնյուզ» հեռուստաալիքներով:

2008 թվականի ընթացքում *տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների* շրջանակներում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 158.4 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Խմբում ընդգրկված են 3 ծրագրեր:

«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրական խնդիրների իրականացման և տեխնիկական կանոնակարգերի մշակման աշխատանքների

[4] «ՀՀ զբոսաշրջության զարգացման պետական ծրագրի շրջանակներում ՀՀ 2008 թվականի զբոսաշրջության զարգացման ծրագրի» և «ՀՀ զբոսաշրջության զարգացման պետական ծրագրի շրջանակներում «Ծաղկաձորը՝ միջազգային չափանիշներին համապատասխանող զբոսաշրջության կենտրոն» ծրագրի հաշվետվությունները ներկայացվում են սույն հաշվետվությանը կից՝ առանձին տեղեկանքներով:

համար տրամադրվել է 52 մլն դրամ: «Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրի շրջանակներում ՀՀ գյուղատնտեսության նախարարության կազմակերպություններին տրամադրվել է 46.4 մլն դրամ պետական աջակցություն՝ զիջելով նախորդ տարվա ցուցանիշը 51.1%-ով: Ծրագրի շրջանակներում համակարգի 3 գիտական կենտրոններում իրականացվել է 3 գիտական բազային թեմաների ֆինանսավորում: Նախորդ տարվա համեմատ ծախսերի նվազումը պայմանավորված է ֆինանսավորվող բազային թեմաների նվազմամբ (7 թեմայով): «Գնագոյացման և ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ին տրամադրվել է 60 մլն դրամ պետական աջակցություն՝ 71.4%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է աշխատավարձի բարձրացմամբ:

2008 թվականի ընթացքում *այլ դասերին չպատկանող տնտեսական հարաբերությունների* ցուցանիշը կազմել է -4.3 մլրդ դրամ՝ նախատեսված -4.8 մլրդ դրամի փոխարեն: Մասնավորապես՝ խմբում ընդգրկված ծրագրերի գծով կատարվել են ավելի քան 18.7 մլրդ դրամի ծախսեր, իսկ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվել է 23 մլրդ դրամ: Տվյալ խմբում ներառվել են «ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 15-րդ կետի համաձայն Երևան քաղաքում պետական սեփականություն համարվող ինքնակամ կառույցների ուղղակի վաճառքից կամ աճուրդով օտարումից ստացված բյուջետային մուտքերը, որոնք կազմել են շուրջ 1.3 մլրդ դրամ:

Հաշվետու տարում այս դասակարգմամբ կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 20 ծրագրեր, որոնցից մեկը Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ վարկային ծրագիրն է: Վերջինիս շրջանակներում օգտագործվել է ավելի քան 2.1 մլրդ դրամ՝ 25.7%-ով գերազանցելով նախատեսվածը: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է նրանով, որ բյուջեի կազմման փուլում մի շարք օբյեկտների բնույթը դեռևս հայտնի չէր, ուստի դրանք պայմանականորեն դասվել էին առողջապահության և ջրային տնտեսության ոլորտներին: Հետագայում, փորձաքննության արդյունքում դրանք փոխադրվեցին այլ դասերին չպատկանող տնտեսական հարաբերությունների խումբ: Բացի այդ, ձեռք է բերվել դպրոցական կահույք, որը բյուջեով նախատեսված չէր: 2008 թվականին ավարտվել են շինարարական աշխատանքները 27 օբյեկտներում՝ նախատեսված 26-ի դիմաց, շինարարական աշխատանքներ են իրականացվել նաև 21 այլ օբյեկտներում, որոնց ավարտը նախատեսված է 2009 թվականին: Ծրագրի շրջանակներում մշակույթի կենտրոնների համար գնվել է 4500 բազկաթոռ, և ֆինանսավորվել են գրասենյակի գործառնական ծախսերը:

Պետական ռեզերվների գործակալության համակարգի հիմնարկների պահպանման և նյութական ռեսուրսների ՀՀ պետական պահուստի ձևավորման ու պահպանման ծախսերը համապատասխանաբար կազմել են 61.1 մլն և 5.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի

կատարումը 98.3 և 99.9 տոկոսով: Իսկ պետական պահուստից նյութական արժեքների թարմացման, փոխարինման, փոխառման և ապաամրագրման գործառնությունների իրականացման արտաբյուջետային ծրագրի փաստացի ցուցանիշը կազմել է -68.9 մլն դրամ՝ նախատեսված 22.6 մլն դրամի դիմաց:

285.6 մլն դրամ են կազմել գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերը՝ ապահովելով ծրագրի կատարումը 92%-ով:

Շուրջ 2.4 մլրդ դրամ ուղղվել է *այլ ծրագրերի* իրականացմանը՝ ապահովելով 100% կատարողական:

Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայությանը հատկացված շուրջ 147.2 մլն դրամով (որը կատարվել է 100%-ով) իրականացվել են մթնոլորտային երևույթների ամենօրյա ռադիոլոկացիոն դիտարկումներ, ստացվել են արբանյակային ամենօրյա տվյալներ մթնոլորտային երևույթների ընդհանուր պատկերների վերաբերյալ, ինչպես նաև ուսումնասիրվել և վերլուծվել են հանրապետությունում կարկտահարությունների և այլ մթնոլորտային տարերային աղետների դեպքերը: Նախորդ տարվա համեմատ ծրագրի գծով բյուջետային ծախսերն ավելացել են 30.2%-ով կամ 34.1 մլն դրամով՝ պայմանավորված կազմակերպության աշխատանքների ծավալների ավելացմամբ:

Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի շրջանակներում կատարված աշխատանքների ֆինանսավորումը կազմել է ավելի քան 2 մլրդ դրամ, որը 3%-ով զիջել է նախատեսվածը և 37.3%-ով նախորդ տարվա ցուցանիշը: Հատկացված միջոցներով տարվա ընթացքում աշխատանքներ են իրականացվել 11 ծրագրերի շրջանակներում, մասնավորապես՝ 1 մլրդ դրամ կապիտալ դրամաշնորհ է հատկացվել «Երևանի մետրոպոլիտեն» ՊՓԲԸ-ին, 339.9 մլն դրամի հաշվին իրականացվել են Երևան քաղաքի ոռոգման ցանցի վերանորոգման և վերակառուցման աշխատանքներ, 142.7 մլն դրամ տրամադրվել է պետական կամ հասարակական կարիքների համար հողամասը վերցնելու և վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված քաղաքացիներին դրամական փոխահատուցման համար, 139 մլն դրամ սուբսիդիա է հատկացվել «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ին, Երևանի քաղաքային տնկարանում կառուցվել է ջերմատուն (100.2 մլն դրամ):

Հաշվետու տարում 19.8 մլն դրամ է հատկացվել Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքի շրջակայքում մոծակների դեմ պայքարի գծով միջոցառումների իրականացման համար՝ ապահովելով 98.9% կատարողական:

ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 20-ի N 1321-Ա որոշման համաձայն, ՀՀ շարժական կապի գլոբալ համակարգի ծառայությունների մատուցման 3-րդ օպերատորի

մրցույթի հաղթողի կողմից վճարված գումարի հաշվին Գերմանահայկական հիմնադրամի կողմից իրականացվող Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման վարկային ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը մատուցված իրավական խորհրդատվության դիմաց միջազգային խորհրդատու Վահե Յաղուբյանին տրամադրվել է 51.9 մլն դրամ վարձատրություն:

Ծախսերի այս խմբում ներառվել են «ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 15-րդ և 16-րդ կետերի համաձայն կատարված հատկացումները, այդ թվում՝

- Երևան քաղաքում պետական սեփականություն համարվող Երևանի քաղաքապետարանին հանձնված ինքնական կառույցների ուղղակի վաճառքից, աճուրդով օտարումից ՀՀ 2008 թվականի պետական բյուջե ստացվող բյուջետային եկամուտների հաշվին Երևան քաղաքի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորում՝ 1.3 մլրդ դրամ,
- Երևան քաղաքում ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացման վճարներից ՀՀ 2008 թվականի պետական բյուջե ստացվող բյուջետային եկամուտների հաշվին Երևան քաղաքի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորում՝ 266.2 մլն դրամ,
- Երևան քաղաքում պետական սեփականություն համարվող և Երևանի քաղաքապետարանին հանձնված ինքնակամ կառույցների վարձակալությունից ՀՀ 2008 թվականի պետական բյուջե ստացվող բյուջետային եկամուտների հաշվին Երևան քաղաքի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորում՝ 14.2 մլն դրամ,
- Երևան քաղաքի վարչական սահմաններում թույլ տված վարչական իրավախախտումների համար Երևանի քաղաքապետի որոշումներով նշանակված տուգանքներից (տույժերից) ՀՀ 2008 թվականի պետական բյուջե ստացվող բյուջետային եկամուտների հաշվին Երևան քաղաքի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորում՝ 62.7 մլն դրամ:

Ելնելով ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի մասին օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներից՝ ՀՀ պետական բյուջեից առանց սահմանափակման իրականացվել են շուրջ 4.8 մլրդ դրամի ծախսեր: Նշված գումարից 4.1 մլրդ դրամը կազմում են պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում պետական մասնակցության նվազեցման ճանապարհով ակտիվների կազմից գույք առանձնացնելիս գույքն ստացող պետական կառավարչական հիմնարկի կողմից մատակարարին վճարման ենթակա ԱԱՀ-ի պարտավորության կատարման գծով ծախսերը:

Շրջակա միջավայրի պաշտպանություն

2008 թվականի ընթացքում շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառում պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 3 մլրդ դրամ կամ ծրագրով նախատեսվածի 70.2%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման վարկային և դրամաշնորհային ծրագրերի և Հայաստանի անտառների զարգացման շվեդական դրամաշնորհային ծրագրի ցածր կատարողականով, ինչպես նաև Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) աջակցությամբ իրականացվող Սևանա լճի բնապահպանական ծրագրի կատարումը հետաձգելու հանգամանքով:

Հաշվետու տարում *«Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում» ՓԲԸ-ին* պետական աջակցության համար նախատեսված շուրջ 28.2 մլն դրամն ամբողջությամբ տրամադրվել է: Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների նպատակն է միջուկային և ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների պահպանմամբ ռադիոակտիվ թափոնների կենտրոնների փոխադրումը, ուսումնասիրումը, տեղափոխումը, վնասազերծումը, պահպանումը և թաղումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 35.1%-ով, որը պամանավորված է վնասակարության պայմաններում աշխատողների աշխատավարձի 100%-ով բարձրացմամբ:

2008 թվականին օդի աղտոտման դեմ պայքարի ուղղությամբ կատարված ծախսերը կազմել են շուրջ 245.6 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Հատկացված գումարից 7 մլն դրամը տրամադրվել է «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ին: Վերջինիս կողմից իրականացվել են թափոնների վերաբերյալ վարչական վիճակագրական հաշվետվությունների ուսումնասիրում, կազմակերպություններում առաջացած թափոնների հաշվառում, դասակարգում՝ ըստ վտանգավորության աստիճանի, տնտեսության ճյուղերի և սպասարկման ոլորտի, կատարվել են նաև թափոնների պետական կադաստրի ստեղծման և վարման աշխատանքների իրականացման նպատակով տվյալների հավաքում, ուսումնասիրում և վերլուծություն, ժամկետանց թունաքիմիկատներով աղտոտված տարածքների հաշվառում և մարդու առողջության ու շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության ռիսկի գնահատում: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծրագրի ծախսերը փոփոխություն չեն կրել: Ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիտորինգի իրականացման նպատակով պետական աջակցության շրջանակներում տրամադրվել է 100.6 մլն դրամ: Հաշվետու տարում ձեռնարկված միջոցառումների արդյունքում առանձնանում են ՀՀ կառավարության կողմից ոլորտին տրվող ֆինանսական հատկացումների շարունակական ավելացումը, միջազգային տեխնիկական-մասնագիտական շոշափելի օժանդակությունը՝

զգալի կերպով շարունակվել է ընդլայնվել իրականացվող աշխատանքների ծավալն ու բովանդակությունը, բարձրացվել իրականացվող մոնիթորինգային աշխատանքների որակը, նվազեցվել ռեժիմային աշխատանքների իրականացման ռիսկայնությունը: Նախորդ տարվա համեմատ՝ նշված ծախսերն աճել են 9.5%-ով, որը կապված է մոնիտորինգային աշխատանքների ծավալների, ինչպես նաև բովանդակության փոփոխության հետ: «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի վերազինման ծրագրի ծախսերը կազմել են շուրջ 98.1 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել սարքեր և սարքավորումներ, այդ թվում՝ համակարգչային տեխնիկա: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 8.2%-ով, որը պայմանավորված է տեխնիկական վերազինման ծավալների աճով: Ծաղկաձորի օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգի կայանի ստեղծման և շահագործման ծախսերը կազմել են ավելի քան 39.8 մլն դրամ, որն ուղղվել է շինարարական աշխատանքների ֆինանսավորմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.1 անգամ, որը պայմանավորված է շինարարական աշխատանքների ծավալների աճով:

Կենսաբազմազանության և բնության պաշտպանության ծրագրերին ուղղվել է ավելի քան 570.3 մլն դրամ՝ 59.3%-ով կատարելով տարեկան ծրագիրը: Շեղումը պայմանավորված է ՎԶԵԲ աջակցությամբ իրականացվող Սևանա լճի բնապահպանական ծրագրի ֆինանսավորման համար նախատեսված 391.3 մլն դրամ միջոցները չօգտագործելու հանգամանքով: 2008 թվականին ՎԶԵԲ հետ շարունակվել են Սևանի ջրավազանի և 5 բնակավայրերի (Գավառ, Վարդենիս, Մարտունի, Ջերմուկ և Սևան) կեղտաջրերի մաքրման կայանների ներդրումային ծրագրերի նախապատրաստման աշխատանքները, արդյունքում ստորագրվել են համապատասխան համաձայնագրեր, որոնք ճանաչվել են արդյունավետ, սակայն հաշվետու տարում ծրագրի իրականացումը չի սկսվել:

Խմբի ծախսերից շուրջ 15.4 մլն դրամը կազմել են «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տեխնիկական վերազինման ծախսերը, որոնք նախատեսված ծավալով ամբողջությամբ կատարվել են: Ծրագրի շրջանակներում կատարվել են ««Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի թանգարանի լուսավորման աշխատանքներ, խրտվիլակների տեղադրում, գնվել են սարքավորումներ և գրասենյակային գույք: Նախորդ տարի նշված ծրագրով ծախսեր չեն կատարվել:

Ձկան պաշարների համալրման գծով պետական պատվերի ծախսերը ևս կատարվել են նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով շուրջ 80 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում զգալի չափով ավելացել են ձկնային պաշարների համալրման ծավալները էնդեմիկ ձկնատեսակների պոպուլյացիայի համալրման նպատակով: Արդյունքում նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են մոտ 2.7 անգամ կամ 50 մլն դրամով:

Սևանա լճի ջրածածկ անտառատնկարկների մաքրման աշխատանքների կատարմանն ուղղվել է 41.5 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրային հատկացումները: Ծրագրի

շրջանակներում իրականացվել են շուրջ 95 հա ջրի տակ մնացած անտառածածկ տարածքների մաքրման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը փոփոխություն չեն կրել:

Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման ծախսերը կազմել են 4 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով նախատեսված հատկացումները: Ծրագրի շրջանակներում Սևանա լճում կատարվել են հիդրոակուստիկ դիտարկումներ ձկների տարածական տեղաբաշխման, խտության, պաշարների գնահատման ուղղությամբ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը փոփոխություն չեն կրել:

«Սևան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների իրականացման համար նախատեսված 166.4 մլն դրամ պետական աջակցությունն ամբողջությամբ տրամադրվել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են «Սևան» ազգային պարկի պահպանությանը և տարածքների արդյունավետ օգտագործմանը նպատակուղղված միջոցառումներ, կատարվել են անտառավերականգնման, անտառակուլտուրաների լրացման, խնամքի աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը փոփոխություն չեն կրել:

«Դիլիջան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների իրականացման համար պետական բյուջեով նախատեսված 73.4 մլն դրամ պետական աջակցությունը նույնպես ամբողջությամբ տրամադրվել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են «Դիլիջան» ազգային պարկի պահպանությանը և տարածքների արդյունավետ օգտագործմանը նպատակուղղված, ինչպես նաև գիտական ուսումնասիրությունների գծով համապատասխան միջոցառումներ, ազգային պարկի տարածքի բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության գենոֆոնդի, բնության ժառանգության պահպանության, մարդու գործունեության հետևանքով պարկի բնական էկոհամակարգերի հավասարկշռությունը խախտող գործընթացների կանխարգելման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.7%-ով:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող բնության հատուկ պահպանվող (ԲՀՊ) տարածքների պահպանության, ԲՀՊ տարածքներում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների իրականացման համար հատկացվել է 65.6 մլն դրամ պետական աջակցություն, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է: Ծրագրի շրջանակներում կատարվել են «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինման ներքո գտնվող տարածքներում (Ստեփանավանի «Սոճուտ», Իջևանի «Դենդրոպարկ», Բերդի «Սորաններ», Վանաձորի «Վանաձոր» և Ջրվեժի անտառպուրակ) պետական պատվերով նախատեսված պահպանության և անտառտնտեսական աշխատանքներ, դենդրոպարկերում բուսական բազմազանության հաշվառում և գույքագրում, անտառկուլտուրաների խնամք, տնկում և լրացում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

«Շիկահող» պետական արգելոցի և «Սոսիների պուրակ» պետական արգելավայրի պահպանության, պետական արգելոցում գիտական ուսումնասիրությունների և «Սոսիների պուրակ» պետական արգելավայրում անտառտնտեսական աշխատանքների իրականացման նպատակով նախատեսված 34.8 մլն դրամ պետական աջակցության ծախսերն ամբողջությամբ կատարվել են: Ծրագրի շրջանակներում «Շիկահող» պետարգելոցում իրականացվել են պետական պատվերով նախատեսված պետարգելոցի պահպանության, արգելոցում գիտական ուսումնասիրությունների գծով համապատասխան միջոցառումներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 40.1%-ով, որը պայմանավորված է «Սոսիների պուրակ» պետարգելավայրի պահպանության և արգելավայրում անտառտնտեսական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ հատկացումներով:

«Խոսրովի անտառ» պետական արգելոցի պահպանության, արգելոցում գիտական ուսումնասիրությունների իրականացման նպատակով հատկացվել է 79.2 մլն դրամ պետական աջակցություն՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում «Խոսրովի անտառ» պետարգելոցում իրականացվել են պետական պատվերով նախատեսված պետարգելոցի պահպանության, արգելոցում գիտական ուսումնասիրությունների գծով համապատասխան միջոցառումներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 10.3%-ով, որը պայմանավորված է «Խոր Վիրապ» և «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրերի պահպանության իրականացման համար անհրաժեշտ հատկացումներով:

ՀՀ կենդանիների և բույսերի Կարմիր գրքի լրամշակման ծրագրի ծախսերը կատարվել են նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով 10 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում կատարվել են բուսական և կենդանական աշխարհի հազվագյուտ և անհետացող տեսակների արդի վիճակի, քանակական և որակական ցուցանիշների բացահայտման, պոպուլյացիաների աճելավայրերի/ապրելավայրերի վիճակի գնահատման, տարածվածության բացահայտման և արեալների քարտեզագրման, ՀՀ Կարմիր գրքում ընդգրկվող բուսակենդանական տեսակների և սնկերի ճշգրիտ ցուցակների կազմման և հարակից նյութերի պատրաստման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.6%-ով:

Շրջակա միջավայրի պաշտպանության (այլ դասերին չպատկանող) խմբի ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 2.2 մլրդ դրամ կամ ծրագրվածի 71%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀԲ աջակցությամբ իրականացվող բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման վարկային և դրամաշնորհային ծրագրերի և Հայաստանի անտառների զարգացման շվեդական դրամաշնորհային ծրագրի ցածր կատարողականով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով)

ծախսերը կազմել են շուրջ 896 մլն դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 98%-ը, որը պայմանավորված է առանձին ծախսատեսակների տնտեսմամբ:

«Անալիտիկ» ՓԲԸ կարողությունների զարգացման ծրագրի ծախսերը կատարվել են նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով 10.4 մլն դրամ, որը հատկացվել է ատոմա-աբսուրբցիոն սպեկտրոմետրի ձեռք բերմանը:

Ջրային պետական կադաստրի տեխնիկական իրականացման ծրագրով նախատեսված 27.8 մլն դրամի ծախսերն ամբողջությամբ կատարվել են: Ծրագրի շրջանակներում շարունակվել են 2007 թվականին սկսված՝ Ջրային պետական կադաստրի նոր կառուցվածքին համապատասխան աշխարհագրական տեղեկատվական վերլուծական համակարգի կիրառական ներդրման աշխատանքները: Հաշվետու տարում կատարված աշխատանքների արդյունքում ստեղծված համակարգն իր մեջ ներառում է թեմատիկ թվային քարտեզներ դրանց համապատասխան տվյալների բազաներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 76.1%-ով, որը պայմանավորված է նախատեսված աշխատանքների բովանդակության և ծավալների փոփոխությամբ:

Բնության հատուկ պահպանվող տարածքների վերանայման, սահմանների ճշգրտման և քարտեզագրման աշխատանքների համար տրամադրվել է 52.3 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հանրապետության վեց մարզերում գտնվող 10 պետական արգելավայրերի և դենդրոպարկերի դիրքերը ճշգրտելու նպատակով դաշտային դիտարկումներ և հետազոտություններ, ուսումնասիրվել են բնության հատուկ պահպանվող տարածքների անտառաշինական և հողաշինարարական քարտեզները, կազմվել են համապատասխան քարտեզներ, կազմվել է արգելավայրերի տարածքների վերանայման սահմանների նկարագրությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.3 անգամ, որը պայմանավորված է նախատեսված աշխատանքների ծավալների (քարտեզագրվող ԲՀՊ տարածքների քանակի և տարածքների) աճով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ծախսվել է համապատասխանաբար 487 մլն դրամ (նախատեսվածի 48.4%-ը) և 279.6 մլն դրամ (նախատեսվածի 62.6%-ը): Ծրագիրն իրականացվում է երեք բաղադրիչներով՝ «Ջրահավաք ավազանների համայնքահեն կառավարում», «Պետական անտառների կատարելագործված կառավարում» և «Պահպանվող տարածքների կառավարում և կենսառեսուրսների պահպանություն»: Ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ մի շարք աշխատանքների հանձման-ընդունման ակտերը ստորագրվել, և համապատասխան վճարումներն իրականացվել են 2009 թվականին, ինչպես նաև «Հայանտառ» ՊՈԱԿ-ի համար անտառտնտեսական, չափիչ և այլ գործիքների ձեռք բերման գործընթացի ուշացմամբ, որը նույնպես կատարվել է 2009 թվականի հունվարին:

Ջրի ազգային ծրագրի մշակման ծախսերը կատարվել է նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով 41.4 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում կատարվել են Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի մարզերում ստորերկրյա քաղցրահամ աղբյուրների (ջրառու հորատանցքերի և բնաղբյուրների) գույքագրման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 48.8%-ով կամ 39.4 մլն դրամով, որը պայմանավորված է ծրագրով նախատեսված աշխատանքների բովանդակության և ծավալների (գույքագրվող ջրաղբյուրների քանակի) փոփոխությամբ:

Բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական աշխատանքների, համակարգչային ցանցի սպասարկման և զարգացման իրականացման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 14.9 մլն դրամ պետական աջակցություն՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել է ՀՀ բնապահպանության նախարարության տեղային համակարգչային ցանցի և առկա համակարգչային տեխնիկայի ծրագրային ու տեխնիկական սպասարկումը: Ապահովվել է բնապահպանական պաշտոնական ինտերնետային կայքի անխափան գործունեությունը, որը հարստացվել է տեղեկատվություն պարունակող նոր բաժիններով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 17.9%-ով կամ 3.2 մլն դրամով, ինչը պայմանավորված է նրանով, որ, ի տարբերություն 2007 թվականի, հաշվետու տարվա ծրագրով տեխնիկական վերազինման ծախսեր չէին նախատեսված:

«Արտադրության և սպառման թափոնների հիմնական տեսակների գոյացման տեսակարար ցուցանիշների տեղեկատվական ձեռնարկի» մշակման ծախսերը կազմել են շուրջ 9 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրային հատկացումները: Ծրագրի շրջանակներում կատարվել են արտադրության կարևոր ճյուղերում և սպասարկման ոլորտում առաջացող թափոնների վերաբերյալ տվյալների հավաքում, վերլուծություն և գնահատում, արտադրության և սպառման թափոնների հիմնական տեսակների գոյացման տեսակարար ցուցանիշների տեղեկատվական ձեռնարկի մշակում:

Տարբեր ծագում ունեցող (օրգանական, քիմիական, հանքային, կոմունալ) արտադրության և սպառման թափոնների առաջարկվող վնասազերծման և օգտագործման տեխնոլոգիաների ցանկի մշակման ծախսերը կատարվել են նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով շուրջ 9 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում կատարվել են ՀՀ առկա թափոնների վերամշակման և վնասազերծման տեխնոլոգիաների վերաբերյալ տեղեկատվության ուսումնասիրում և վերլուծություն, թափոնների օգտագործմանն ու վնասազերծմանը վերաբերող տեխնոլոգիաների վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրում և ՀՀ-ում դրանց կիրառման նպատակահարմարության գնահատման նպատակով տեղեկատվության աղբյուրների ուսումնասիրում:

Ավտոտրանսպորտի արտանետումների չեզոքացուցիչների ներդրման, վերանորոգման, ռեգեներացիայի և սպասարկման համակարգի մշակման և ներդրման ծախսերը կազմել են 1.2 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով նախատեսված հատկացումները: Ծրագրի շրջանակներում կատարվել են չեզոքացուցիչների տարբեր տեսակների ստեղծման, սպասարկման և ներկրման ծախսերի անհրաժեշտ ներդրումների վերլուծություն, մշակվել է ներդրման ծրագիր:

«Հիդրոերկրաբանական մոնիտորինգ» ՊՈԱԿ-ին ՀՀ տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիտորինգի վարման համար նախատեսված 18 մլն դրամ պետական աջակցությունն ամբողջությամբ տրամադրվել է: Ծրագրի հիմնական նպատակն է՝ գնահատել ՀՀ տարածքում ստորերկրյա ջրերի ձևավորման գործընթացների քանակական և որակական հատկանիշների տարածաժամանակային փոփոխությունների հիմնական օրինաչափությունները և դրանց հիման վրա ապահովել ստորերկրյա ջրերի առավել արդյունավետ օգտագործումն ու պահպանումը, օգտագործել դրանք վնասակար ազդեցության դեմ պայքարի համապատասխան միջոցառումների մշակման և ստորերկրյա ջրերի ռեժիմի ճիշտ կառավարման եղանակների ընտրության համար: Ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիտորինգի վարման աշխատանքներն իրականացվել են Ախուրյանի, Սևան-Հրազդանի և Արարատյան ավազանային կառավարման տարածքների սահմաններում ընկած 7 հանքավայրերում և տեղամասերում:

«Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիայի կատարման նպատակով շրջակա միջավայրի վրա աղտոտիչների ազդեցության հետազոտման և արտանետումների ներգործությունը կարգավորող մեթոդական և իրավական ակտերի մշակման ծախսերը կազմել են 5.9 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի անտառների զարգացման շվեդական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է 298.3 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 65.5%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է աշխատանքների ավարտի ուշացումով (2009 թվականի հունվար), քանի որ հաշվետու տարում տեղի ունեցավ հիմնական ինստիտուցիոնալ միջազգային փորձագետի չնախատեսված փոփոխություն: Ծրագրի շրջանակներում մշակվել է Սահմանային և ռազմական նշանակության անտառների և անտառային հողերի օգտագործման կարգը, ավարտման փուլում են գտնվում 3 ենթաօրենսդրական ակտերի մշակման աշխատանքները: Մատուցվել են ուսուցման և մի շարք այլ խորհրդատվական ծառայություններ:

«Բնապահպանական նպատակային ֆոնդ» արտաբյուջետային ծրագրի շրջանակներում կատարվել են 16.8 մլն դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսվածի 43.1%-ը: Ծրագրի ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ չեն իրականացվել «Անալիտիկ» ՊՓԲԸ-ի վարչական շենքի տանիքի հիմնանորոգման և լոկալ

ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքները: Վերոգրյալ գումարը չի ծախսվել՝ պայմանավորված ընդերքի ոլորտում պետական լիազոր մարմինների իրավասությունների փոփոխման հետ, որի արդյունքում «Անալիտիկ» ՊՓԲ ընկերությունը դուրս է եկել ՀՀ բնապահպանության նախարարության ենթակայությունից: Ծրագրի շրջանակներում 2008 թվականին կատարվել են Եղվարդ քաղաքի օդակայանի շենքի հիմնանորոգման և Վայոց ձորի մարզի վայրի կենդանիներին դիտելու և նկարահանելու համար դիտահրապարակների շինարարական աշխատանքներ, «Անալիտիկ» ՊՓԲԸ-ի վարչական շենքի տանիքի հիմնանորոգման և լոկալ ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում, «Դիլիջան» ազգային պարկի «Խոսրովի անտառ» և «Ծիկահող» պետարգելոցների հիմնադրման 50-ամյակի հոբելյանական միջոցառումներ, պետական աջակցություն «Բնապահպանի օրագիր» և «Կարծիք» հաղորդաշարերին և տեղեկատվական այլ ծառայությունների մատուցում:

<u>Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ</u>

2008 թվականին *բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների* բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 14 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 72.7%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է ջրամատակարարման ոլորտի ծախսերի ցածր կատարողականով:

Հաշվետու տարում շուրջ 3.8 մլրդ դրամ է տրամադրվել *բնակարանային շինարարության* ոլորտին՝ կազմելով ծրագրվածի 99.4%-ը: Գումարի զգալի մասը՝ 3.3 մլրդ դրամ, կազմել են Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերը, որոնք կատարվել են 99.3%-ով: Ծրագրի շրջանակներում վերանորոգվել են 10 վթարային շենքեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 47.2%-ով կամ 2.9 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է ծրագրային աշխատանքների նվազմամբ:

Անավարտ շինարարության բնակշինարարական կոոպերատիվների փայատերերի ներդրված միջոցների դիմաց պետական օգնության ծախսերը կազմել են 500 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով նախատեսված հատկացումները:

Բաժնի ծախսերի 55.6%-ն ուղղվել է *ջրամակատարման* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը: Նշված ծախսերը կազմել են ավելի քան 7.8 մլրդ դրամ կամ տարեկան ծրագրի 59.9%-ը, որը հիմնականում պայմանավորված է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող՝ ՀՀ Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման վարկային ծրագրի ցածր կատարողականով, ինչպես նաև ՀՀ Շիրակի ու Լոռու մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման դրամաշնորհային ծրագրերը չկատարելու հանգամանքով:

Հաշվետու տարում գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են շուրջ 136.2 մլն դրամ՝ 93.7%-ով կատարելով ծրագիրը: Շեղումը պայմանավորված է առանձին հոդվածներով նախատեսված ծախսերի, մասնավորապես՝ այլ ծախսերի տնտեսմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերն աճել են 13.4%-ով, որը հիմնականում պայմանավորված է քաղաքացիական ծառայողների աշխատավարձի բնականոն աճով:

Մեծամորի ռեզերվային հորի կառուցման ծախսերը կատարվել են նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով շուրջ 31.2 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում ավարտին են մոտեցել Մեծամորի ռեզերվային հորի կառուցման, խորքային հորի հորատման և էլեկտրական գծերի վերականգնման աշխատանքները:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է 769.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 78.9%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է մի շարք աշխատանքների կատարումը, ինչպես նաև որոշ աշխատանքների դիմաց վճարումները հաջորդ տարի տեղափոխելու հանգամանքներով: Ծրագիրը բաղկացած է երկու հիմնական բաղադրիչներից՝ «Համայնքային ենթակառուցվածքների վերականգնում և բարելավում» և «Կառավարման բարելավում և կարողությունների հզորացում»: Հաշվետու տարում ծրագրի շրջանակներում կազմակերպվել են մրցույթներ, ստորագրվել են շինարարական աշխատանքների մի շարք պայմանագրեր, սկսվել են շենքերի ու շինությունների վերանորոգման և մեքենաների ու սարքավորումների ձեռք բերման աշխատանքներ՝ Գորիս, Թալին, Էջմիածին քաղաքների և Արտաշատի տարածաշրջանի գյուղերի ջրամատակարարման համակարգերի բարելավման նպատակով: Բոլոր վերոհիշյալ համայնքների համար նախատեսված աշխատանքները կրում են շարունակական բնույթ և նախատեսվում է, որ կավարտվեն 2009 թվականին:

Նոր Խարբերդի այգեգործական տնտեսության ջրամատակարարման բարելավման ծախսերը կազմել են շուրջ 59.4 մլն դրամ՝ 99%-ով ապահովելով նախատեսված հատկացումները: Ծրագրի շրջանակներում անցկացվել է 6696 գծմ երկարությամբ խողովակաշար, ինչպես նաև հիմնանորոգվել է ջրաչափական հանգույցը:

Պետական բյուջեով նախատեսված «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի 1.2 մլրդ դրամ սուբսիդավորումն ամբողջությամբ կատարվել է, որն ուղղվել է ընկերության ընթացիկ գործունեության արդյունքում առաջացած ֆինանսական ճեղքվածքի մարմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 12.1%-ով կամ 167.7 մլն դրամով, ինչը պայմանավորված է տարեցտարի սուբսիդավորման ծավալների կրճատման միտումներով:

ՀՀ համայնքային բյուջեներին տրամադրվել են 159.8 մլն դրամի սուբվենցիաներ՝ ապահովելով ծրագրի 99.9% կատարողական: Միջոցները հատկացվել են ՀՀ Վայոց ձորի և Կոտայքի մարզերի համայնքներին: Մասնավորապես, Վայոց ձորի մարզին տրամադրվել է 119.8 մլն դրամ սուբվենցիա Գնդեվազի համայնքի ջրագծի կառուցման նպատակով, Կոտայքի մարզին՝ 40 մլն դրամ Ջրվեժ համայնքի ջրահեռացման համակարգի կառուցման նպատակով:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի կողմից տրամադրված միջոցներով իրականացվող ՀՀ Լոռու և Շիրակի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրերի գծով օգտագործվել է համապատասխանաբար 2.1 մլրդ դրամ և 654 մլն դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրային ցուցանիշների համապատասխանաբար 100.2%-ը և 32%-ը: Վերջին ցածր ցուցանիշը պայմանավորված է շինարարական աշխատանքների մրցույթները չկանալու և կրկնակի մրցույթներ հայտարարելու արդյունքում աշխատանքների ուշացմամբ: Ծրագրերի շրջանակներում 2008 թվականի ընթացքում ավարտվել են նախագծման աշխատանքները, պատրաստվել և իրականացվել են մրցույթներ, ձեռք են բերվել մեքենաներ, սարքեր և սարքավորումներ, վարչական շենքի գրասենյակի գույք, իրականացվել են վարչական շենքերի, արհեստանոցների և պահեստների վերականգնման և մի շարք այլ աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են համապատասխանաբար 10.8 և 2.8 անգամ, ինչը պայմանավորված է կատարված աշխատանքների ծավալների ավելացմամբ:

Նույն ծրագրերի ֆինանսավորման նպատակով նախատեսված շուրջ 2.1 մլրդ դրամ դրամաշնորհային միջոցներից 2008 թվականին ծախսեր չեն իրականացվել, քանի որ կատարված աշխատանքների համար մասհանման հայտերի հիման վրա՝ Գերմանական KfW բանկի կողմից գումարները տրամադրվել են միայն վարկային միջոցներից: Ծրագրով նախատեսված գումարները տեղափոխվել են 2009-2010թթ.:

ՀԲ աջակցությամբ իրականացվող համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 1.5 մլրդ դրամ՝ ապահովելով տարեկան 100.5% կատարողական, ինչը պայմանավորված է նրանով, որ նշված ծրագիրը գտնվում է ավարտման փուլում (ծրագրի ավարտման ժամկետն է 2009 թվականի առաջին եռամսյակը): Ծրագրի առաջնահերթ խնդիրներն են ջրամատակարարման համակարգերի արդյունավետության բարձրացումը, ջրամատակարարման ժամերի ավելացումը, ջրի վարձի գանձման համակարգերի բարելավումը, սոցիալապես խոցելի խմբերի համար աջակցության և վճարման պայմանների հատուկ մեխանիզմի սահմանումը, ինչպես նաև հաճախորդների սպասարկման բարելավման և հասարակության իրազեկության ծրագրերի մշակումը: 2008 թվականին ծրագրի շրջանակներում կատարվել են 9 քաղաքային համայնքների ջրամատակարարման համակարգերի վերանորոգման և վերականգնման աշխատանքները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 38%-ով կամ 941.5 մլն դրամով, ինչը

պայմանավորված է նրանով, որ ծրագրով նախատեսված աշխատանքները մոտեցել են ավարտին:

ՀԲ աջակցությամբ իրականացվող՝ Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների վարկային ծրագրի շրջանակներում կատարվել են 922.4 մլն դրամի ծախսեր, որն ապահովել է ծրագրված հատկացումների 55.2% կատարողական: Ցածր կատարողականը պայմանավորված է գնումների պլանի փոփոխությամբ, որի արդյունքում առանձին աշխատանքներ տեղափոխվել են 2009 թվական: Ծրագրի շրջանակներում հաշվետու տարում շարունակվել են բաշխիչ ցանցում նախկինում կատարված գոտիավորման աշխատանքները, ինչպես նաև սկսվել է նոր գոտիների և սեկտորների կազմավորման գործընթացը: Իրականացվել են ջրագծերի, դիտահորերի կառուցման և վերակառուցման, սարքավորումների տեղադրման, ինչպես նաև հորատանցքերի հոսքաչափերի տեղադրման շինարարական աշխատանքներ: 2008 թվականին շարունակվել և ավարտվել են շինարարական աշխատանքները 2007 թվականից փոխանցված մի շարք օբյեկտներում: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծրագրի շրջանակներում կատարված ծախսերն աճել են 6%-ով կամ 51.9 մլն դրամով, որը պայմանավորված է կատարված աշխատանքների ծավալներով:

Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով տրամադրված նվիրաբերության միջոցների հաշվին իրականացվող ՀՀ Գեղարքունիքի մարզի մարզային զարգացման ծրագրի ֆինանսավորմանը 2008 թվականին տրամադրվել է 16.6 մլն դրամ՝ 98.2%-ով ապահովելով նախատեսված հատկացումները: Ծրագրի շրջանակներում վերանորոգվել են թվով 3 համայքների խմելու ջրի ներքին ցանցերը և օրվա կարգավորիչ ջրամբարները (ՕԿՋ): 2007 թվականի համեմատ նշված ծախերը նվազել են 16.4%-ով, ինչը պայմանավորված է նախորդ տարում թվով 5 համայքների խմելու ջրագծերի վերանորոգման աշխատանքների կատարմամբ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի շրջանակներում կատարվել են 55.6 մլն դրամի ծախսեր, որն ապահովել է ծրագրված հատկացումների 38.3% կատարողական: Ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ պլանավորման ընթացքում դեռ հայտնի չէր 2 օբյեկտների բնույթը, ուստի դրանք պայմանականորեն դասվել էին ջրային տնտեսության ոլորտին, որոնք հետագայում փոխադրվեցին տնտեսական հարաբերությունների ոլորտ: Ծրագրի շրջանակներում ավարտվել են շինարարական աշխատանքները ջրային տնտեսության մեկ օբյեկտում:

«Նոր-Ակունք» ՓԲԸ-ի ընթացիկ գործունեության արդյունքում առաջացող ֆինանսական ճեղքվածը փակելու համար ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով հատկացված սուբսիդան ամբողջությամբ ֆինանսավորվել է՝ կազմելով 73.5 մլն դրամ:

Չի օգտագործվել Ճապոնական սոցիալական զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող համատիրությունների վրա հիմնված քաղաքային ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման դրամաշնորհային ծրագրով նախատեսված 240 մլն դրամը, քանի որ երկու երկրների միջև դրամաշնորհային համաձայնագիրը չի ստորագրվել:

Ֆրանսիական Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման բարելավման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության վարկային ծրագրով պետական բյուջեով նախատեսվել էին 478.6 մլն դրամի ծախսեր: Սակայն այն չի կատարվել, քանի որ ծրագրի վարկային համաձայնագիրը ստորագրվել է 2008 թվականի մայիսին, ուժի մեջ է մտել հոկտեմբերի 1-ից, իսկ դեկտեմբեր ամսին սկսվել է ծրագրի խորհրդատուի ընտրության մրցութային գործընթացը: Սահմանված ժամկետի համաձայն մրցույթի 1-ին փուլը նախատեսվում է ավարտել 2009 թվականին:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Արմավիրի մարզի մի շարք բնակավայրերի ջրամատակարարման և կոյուղու համակարգերի վերականգնման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված 112.8 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Արմավիր քաղաքի հյուսիսային մասի 13.2 կմ ջրագծի վերականգնման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 80%-ով կամ 452.4 մլն դրամով, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագրով նախատեսված աշխատանքները մոտեցել են ավարտին:

2008 թվականին պետական բյուջեի ծախսերի *փողոցների լուսավորման* խմբում շուրջ 1.3 մլրդ դրամ է օգտագործվել Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի շրջանակներում՝ կազմելով նախատեսված հատկացումների 99.5%-ը: Կատարված հատկացումների հաշվին վեց համայնքների 17 փողոցներում վերանորոգվել և վերակառուցվել է 30կմ երկարությամբ արտաքին լուսավորության ցանց:

Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների գծով կատարվել են 4 մլն դրամ ծախսեր՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Միջոցները հատկացվել են Երևանի համաքաղաքային ծախսերի շրջանակներում 23 վթարային շենքերի և մեկ տան տեխնիկական վիճակի հետազննման աշխատանքներ:

Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների՝ այլ դասերին չպատկանող ծրագրերի գծով հաշվետու տարում կատարվել են ավելի քան 1.1 մլրդ դրամ ծախսեր՝ 98.8%-ով ապահովելով ծրագրային հատկացումները:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերը կազմել են 472.3 մլն դրամ՝ 97.7%-ով ապահովելով նախատեսված տարեկան

հատկացումները: Շեղումը պայմանավորված է տարբեր ծախսային հոդվածներով առաջացած տնտեսումներով:

Երևանի համաքաղաքային նշանակության ծրագրերի շրջանակներում կատարվել են 667.4 մլն դրամի ծախսեր՝ 99.6%-ով ապահովելով տարեկան ծրագրային հատկացումների ծավալը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են թվով 26 ջրային կառույցների շահագործման-պահպանման աշխատանքներ:

Առողջապահություն

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի *առողջապահության* ոլորտի ծախսերը կազմել են շուրջ 50 մլրդ դրամ՝ 91.9%-ով կատարելով տարեկան ծրագիրը: Ծրագրից շեղումներ են արձանագրվել հիմնականում արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերում: Բաժնի ծախսերի 38.7%-ն ուղղվել է հիվանդանոցային ծառայությունների, 37.3%-ը՝ արտահիվանդանոցային ծառայությունների, 9.5%-ը՝ բժշկական ապրանքների, սարքերի և սարքավորումների ձեռք բերման, 8.9%-ը՝ այլ դասերին չպատկանող առողջապահական ծրագրերի և 5.6%-ը՝ հանրային առողջապահական ծառայությունների ֆինանսավորմանը:

Հաշվետու ժամանակահատվածում *բժշկական ապրանքների, սարքերի և սարքավորումների* ձեռք բերման ծախսերը կազմել են ավելի քան 4.7 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 95.2% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է Գլոբալ հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «ՀՀ-ում Տուբերկուլյոզի դեմ պայքարի Ազգային ծրագրի ուժեղացում» արտաբյուջետային ծրագրի կատարողականով, որը կազմել է 75% (549.6 մլն դրամ), քանի որ Հանրապետական հակատուբերկուլյոզային դիսպանսերի վերանորոգման աշխատանքները 2008 թվականին չեն ավարտվել:

Ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություններ մատուցողների համար կենտրոնացված կարգով դեղորայքի ձեռք բերման ծախսերը 100%-ով կատարվել են՝ կազմելով շուրջ 1 մլրդ դրամ, իսկ «Կենտրոնացված կարգով դեղորայքի ձեռքբերում» ծրագրին տրամադրվել է 1.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 97.1%-ը: Նշված միջոցներն ուղղվել են սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված բնակչության համար դեղորայքի ապահովմանը: Նախորդ տարվա համեմատ ծախսերն ավելացել են 24.5%-ով՝ պայմանավորված սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների թվի աճով:

Արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող՝ Իմունականխարգելման ազգային ծրագրի շրջանակներում ծախսվել է 13.8 մլն դրամ՝ նախատեսված 20.0 մլն դրամի դիմաց: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ գրասենյակը չունի մշտական աշխատատեղ և վերանորոգման համար նախատեսված գումարները, ինչպես նաև համակարգչային ծրագրերի ներդրման գումարները չեն ծախսվել:

Կենտրոնացված կարգով բժշկական սարքերի և սարքավորումների ձեռքբերման ծրագրին ուղղվել է շուրջ 1.5 մլրդ դրամ՝ 100%-ով կատարելով տարեկան ծրագիրը: Ծրագրի նպատակն է համակարգի առողջապահական հիմնարկների բժշկական սարքավորումների և ավտոտրանսպորտի նորացումը և վերազինումը, որը խիստ անհրաժեշտ է հատկապես գյուղական և սահմանամերձ շրջաններում:

2008 թվականի պետական բյուջեից *արտահիվանդանոցային ծառայությունների* ձեռք բերմանը տրամադրվել է ավելի քան 18.6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.9%-ով կատարում: Արտահիվանդանոցային ծառայությունների ծախսերի 42.6%-ը կամ ավելի քան 7.9 մլրդ դրամը կազմել են ընդհանուր բնույթի, 19.9%-ը կամ 3.7 մլրդ դրամը՝ մասնագիտացված բժշկական ծառայությունների, 4.2%-ը կամ ավելի քան 777.8 մլն դրամը՝ ստոմատոլոգիական և 33.4%-ը կամ 6.2 մլրդ դրամը՝ պարաբժշկական ծառայությունների ծախսերը:

«Բնակչության առողջության առաջնային պահպանման գծով պետական պատվեր» ծրագրի շրջանակներում հատկացվել է ավելի քան 7.9 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.9% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել է բժշկական օգնություն և սպասարկում հանրապետության ամբողջ ազգաբնակչությանը, ինչպես նաև ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով հաստատված բնակչության խմբերին անվճար և արտոնյալ պայմաններով դեղորայքի տրամադրում: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերն ավելացել են 13.8%-ով՝ պայմանավորված տեղամասային սկզբունքով աշխատող բուժանձնակազմի աշխատավարձի ավելացմամբ:

Հաշվետու տարում շուրջ 128 մլն դրամ է տրամադրվել մտավոր, հոգեկան, լսողական ֆիզիկական, շարժողական և այլ զարգացման խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման գծով պետական պատվերի ֆինանսավորմանը, որը կատարվել է 100%-ով: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է մատուցվել շուրջ 1100 հաշմանդամ երեխաների: Նախորդ տարվա համեմատ այս ծրագրի գծով ծախսերն աճել են 43.3%-ով՝ պայմանավորված ծրագրի շրջանակներում բուժօգնության դեպքերի և մեկ հիվանդի բուժման գնի ավելացմամբ:

Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության գծով պետական պատվերի շրջանակներում հատկացվել է 946.1 մլն դրամ, որը 100%-ով ֆինանսավորվել է: Ծրագրի շրջանակներում նախածննդյան և հետծննդյան հսկողություն է իրականացվել շուրջ 42 հազար հղիների՝ նախորդ տարվա 40 հազարի դիմաց, ինչպես նաև բուժօգնություն են ստացել գինեկոլոգիական հիվանդություններով կանայք: Ծախսերի աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 35.5%՝ պայմանավորված բուժանձնակազմի աշխատավարձի ավելացմամբ:

Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության ապահովման նպատակով «Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին տրամադրվել է ավելի քան 55.9 մլն դրամ պետական աջակցություն՝ 99.2%-ով

ապահովելով նախատեսվածը: Շեղումն առաջացել է բժշկական սարքավորումների համար նախատեսված գումարի տնտեսմամբ: 2007 թվականի համեմատ՝ նշված ծախսերն ավելացել են 34.6%-ով՝ պայմանավորված դեղորայքի և աշխատավարձի ծախսերի ավելացմամբ:

Նեղ մասնագիտացված բժշկական օգնության գծով պետական պատվերի շրջանակներում հատկացվել է 2.4 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է մատուցվել հանրապետության ամբողջ բնակչությանը: Աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 15.3%՝ պայմանավորված բուժանձնակազմի աշխատավարձի ավելացմամբ:

«Շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման գծով պետական պատվեր» ծրագրի ծախսերը կազմել են շուրջ 129.7 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 99.7% կատարողական: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է տրամադրվել 7.5 հազար հիվանդների: 2007 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 32.3%-ով՝ պայմանավորված ծրագրի շրջանակներում բուժօգնության դեպքերի կրճատմամբ:

Օրթոդոնտոլոգիական բժշկական օգնության գծով պետական պատվերի նախատեսված ծախսերը կատարվել են 98.1%-ով՝ կազմելով շուրջ 11.5 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է իրականացվել 2.2 հազար հիվանդների: Նախորդ տարվա համեմատ ծախսերն աճել են 14.7%-ով՝ պայմանավորված բուժօգնության դեպքերի և մեկ հիվանդի բուժման գնի ավելացմամբ:

Ստոմատոլոգիական ծառայությունների հետևյալ ծրագրերը՝ «Ստոմատոլոգիական բժշկական օգնության գծով պետական պատվեր» և «Երեխաների բերանի խոռոչի հիգիենայի պահպանման գծով պետական պատվեր», ֆինանսավորվել են ամբողջությամբ, որոնց տրամադրվել է համապատասխանաբար 682.4 և 95.4 մլն դրամ: Ծրագրերի շրջանակներում բուժօգնություն է ցուցաբերվել համապատասխանաբար 253 և 79.5 հազար հիվանդների:

Պարաբժշկական ծառայություններում ընդգրկված են 3 ծրագրեր՝ «Շտապ բժշկական օգնության գծով պետական պատվեր», «Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների գծով պետական պատվեր», ինչպես նաև «Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրերը, որոնց շրջանակներում օգտագործվել է ավելի քան 6.2 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.7%-ը: Մասնավորապես՝ շուրջ 1.5 մլրդ դրամ (99.7%) տրամադրվել է շտապ բժշկական օգնության գծով պետական պատվերի ֆինանսավորմանը: Պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման շրջանակներում 2008 թվականին իրականացվել է 342 հազար կանչ: 2007 թվականի համեմատ՝ նշված ուղղությամբ բյուջեի ծախսերն ավելացել են 9.5%-ով՝ պայմանավորված կանչերի թվաքանակի և մեկ կանչի գնի ավելացմամբ:

Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների գծով պետական պատվերի ծախսերը կազմել են 2.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.9%-ը, որի շրջանակներում իրականացվել է 3325 հետազոտություն: Նախորդ տարվա համեմատ այս ծրագրի գծով ծախսերն աճել են 22.8%-ով՝ պայմանավորված բուժօգնության դեպքերի և մեկ հիվանդի բուժման գնի ավելացմամբ:

Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության գծով պետական պատվերի գծով 2008 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 2.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.4%-ը: Ծրագրի շրջանակներում դեռահասների բժիշկ-մասնագետների կողմից իրականացվել է 15-17 տարեկան պատանիների առողջության առաջնային պահպանում և շարունակական հսկողություն, ապահովվել է զինկոմիսարիատներին կից բժշկական հանձնաժողովներում ընդգրկված բժիշկ-փորձագետների և բուժքույրերի աշխատավարձերի բարձրացումը, ինչպես նաև նշված տարիքի անձանց փորձաքննության նպատակով հիվանդանոցային բուժհաստատություններ ուղեգրման ճանապարհածախսի փոխատուցումը: Ծախսերի աճը 2007 թվականի համեմատ կազմել է 33%՝ պայմանավորված բուժանձնակազմի աշխատավարձի ավելացմամբ:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեից ավելի քան 19.3 մլրդ դրամ տրամադրվել է *հիվանդանոցային ծառայություններին՝* ապահովելով ծրագրի 99.9% կատարողական: Տարվա ընթացքում հիվանդանոցային բուժօգնության շրջանակներում ծառայություններ է մատուցվել 237.5 հազար հիվանդի: Հիվանդանոցային ծառայությունների ծախսերի 38.3%-ը կամ ավելի քան 7.4 մլրդ դրամը կազմել են բժշկական, մոր և մանկան կենտրոնների, 36.1%-ը կամ շուրջ 7 մլրդ դրամը՝ մասնագիտացված հիվանդանոցային ծառայությունների, 25.6%-ը կամ ավելի քան 4.9 մլրդ դրամը՝ ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայությունների ծախսերը:

Անհետաձգելի բժշկական օգնության գծով պետական պատվերի ծախսերը կազմել են շուրջ 2.3 մլրդ դրամ՝ ապահովելով 99.9% կատարողական: 2007 թվականի համեմատ՝ դրանք նվազել են 1.9%-ով՝ պայմանավորված բժշկական օգնության դեպքերի նվազմամբ: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2007 թվականի 32.6 հազար հիվանդի դիմաց 2008 թվականին բուժօգնություն է ստացել 31.6 հազար հիվանդ: Միևույն ժամանակ ավելացել է մեկ հիվանդի բուժման միջին ծախսը՝ 2007 թվականի 71.3 հազար դրամի փոխարեն կազմելով 72.2 հազար դրամ:

Հաշվետու տարում պետական բյուջեից շուրջ 2.7 մլրդ դրամ է տրամադրվել բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ֆինանսավորմանը՝ 99.7%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2008 թվականին բուժօգնություն են ստացել 29.4 հազար հիվանդ՝ 2007

թվականի 26.7 հազար հիվանդի դիմաց: Նախորդ տարվա համեմատ՝ նշված ծախսերն ավելացել են 22.4%-ով, ինչը նաև պայմանավորված է մեկ հիվանդի բուժման ծախսի ավելացմամբ:

«Տուբերկուլյոզի բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրի ծախսերը կազմել են 1.1 մլրդ դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը և 14.9%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է բուժօգնության դեպքերի և մեկ հիվանդի բուժման ծախսի ավելացմամբ: Եթե 2007 թվականին ծրագրի շրջանակներում բուժօգնություն էր ստացել 4.7 հազար հիվանդ, ապա 2008 թվականին հիվանդների թիվը կազմել է 5.3 հազար:

«Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության ծախսերի» ծրագրով 2008 թվականի բյուջեով հատկացվել է ավելի քան 659.2 մլն դրամ, որն ամբողջ ծավալով ֆինանսավորվել է: Ծրագրի շրջանակներում 2008 թվականին բուժօգնություն են ստացել 9.9 հազար հիվանդ՝ 2007 թվականի 9 հազարի դիմաց, որի արդյունքում ծրագրի ծախսերը 6%-ով գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը:

«Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրով պետական բյուջեից հատկացվել է 155.9 մլն դրամ, որի շրջանակներում բուժօգնություն են ստացել 1.2 հազար հիվանդ՝ 2007 թվականի 1.3 հազարի դիմաց: Արդյունքում 2007 թվականի համեմատ արձանագրվել է ծախսերի 5.8%-ով անկում, չնայած մեկ հիվանդի բուժման միջին ծախսն ավելացել է 127.4 հազ. դրամից մինչև 129.9 հազ. դրամ:

Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության և խնամքի գծով պետական պատվերի ծախսերը կազմել են շուրջ 1.6 մլրդ դրամ՝ 100%-ով ապահովելով նախատեսվածը և 8%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծախսերի աճը պայմանավորված է բուժօգնության դեպքերի և մեկ հիվանդի բուժման գնի ավելացմամբ: Ծրագրի շրջանակներում 2008 թվականին մեկ հիվանդի բուժման միջին ծախսը կազմել է 236.4 հազ. դրամ՝ նախորդ տարվա 229.2 հազ. դրամի դիմաց:

Հեմոդիալիզի անցկացման գծով պետական պատվերի ֆինանսավորմանը հատկացվել է շուրջ 1.1 մլրդ դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բուժօգնության և սպասարկման շրջանակներում իրականացվել է 59.3 հազար սեանս՝ նախորդ տարվա 56.3 հազարի դիմաց: 2007 թվականի համեմատ՝ նշված ծախսերն ավելացել են 7.8%-ով, որը պայմանավորված է նաև մեկ հիվանդի բուժման ծախսի ավելացմամբ:

Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց բժշկական օգնության և փորձաքննության նպատակով պետական բյուջեից ծախսվել է 962.5 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 99.9%-ը: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է ստացել 48.6 հազար

հիվանդ՝ 2007 թվականի 44.1 հազարի դիմաց: Նախորդ տարվա համեմատ՝ այս ծրագրի ֆինանսավորումն ավելացել է 20.9%-ով՝ պայմանավորված բուժօգնության դեպքերի և մեկ հիվանդի բուժման գնի ավելացմամբ:

«Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության գծով պետական պատվեր» և «Վերականգնողական բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրերի ծախսերը կազմել են համապատասխանաբար 888.5 և 569.0 մլն դրամ, որոնք իրականացվել են նախատեսված ողջ ծավալով: Նշված ծախսերը համապատասխանաբար 7%-ով և 1.9%-ով գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշները, որը պայմանավորված է բուժօգնության դեպքերի ավելացմամբ:

Մանկաբարձական բժշկական օգնության գծով պետական պատվերի ծրագրով նախատեսված 4.1 մլրդ դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2007 թվականի 48.7 հազար դեպքի դիմաց 2008 թվականին արձանագրվել է 52.5 հազար դեպք: 2007 թվականի համեմատ ծախսերի 50.2% աճը պայմանավորված է նաև մեկ հիվանդի բուժման ծախսի ավելացմամբ:

Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնությանն ուղղվել է շուրջ 348.9 մլն դրամ կամ նախատեսվածի 99.7%-ը: Նախորդ տարվա համեմատ՝ այս ծրագրի ծախսերն ավելացել են 15.4%-ով՝ պայմանավորված բուժօգնության դեպքերի և մեկ հիվանդի բուժման ծախսի ավելացմամբ: Ծրագրի շրջանակներում մեկ հիվանդի բուժման միջին ծախսը կազմել է 68.4 հազար դրամ՝ 2007 թվականի 63.0 հազարի դիմաց:

«Երեխաներին բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրին տրամադրվել է շուրջ 3 մլրդ դրամ՝ 100%-ով ապահովելով նախատեսվածը և 13.3%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: 2007 թվականի համեմատ ծախսերի աճը պայմանավորված է բուժօգնության դեպքերի և մեկ հիվանդի բուժման ծախսի աճով:

Հաշվետու տարում *հանրային առողջապահական ծառայությունների* ձեռք բերման ծախսերը կազմել են ավելի քան 2.8 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.9% կատարողական:

Նշված խմբի ծրագրերում մեծ տեսակարար կշիռ ունեն հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական միջոցառումների իրականացման գծով պետական պատվերի համար տրամադրված միջոցները, որոնք կազմել են 1.8 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.9%-ը: Նախորդ տարվա համեմատ՝ նշված ծախսերն ավելացել են 11%-ով՝ պայմանավորված ծառայության աշխատողների աշխատավարձի բարձրացմամբ, ինչպես նաև գրասենյակային ապրանքների և նյութերի, փափուկ գույքի, դեղորայքի, վիրակապական նյութերի ծախսերի աճով:

Հիգիենիկ հակահամաճարակային ծառայության գծով պետական պատվերի շրջանակներում նախատեսված 322.7 մլն դրամը ծախսվել է ամբողջությամբ՝ 29.1%-ով

գերազանցելով 2007 թվականի ցուցանիշը, ինչը պայմանավորված է աշխատավարձերի բարձրացմամբ և պատվաստանյութի ձեռք բերման ծախսերի աճով:

2008 թվականին 244.9 մլն դրամ է տրամադրվել հատուկ վտանգավոր վարակների կանխարգելման ծառայությունների ձեռք բերման գծով պետական պատվերի ֆինանսավորմանը, որը կատարվել է 100%-ով: 2007 թվականի համեմատ՝ նշված ծախսերն ավելացել են 12.3%-ով՝ պայմանավորված հատուկ և կյանքի համար վտանգավոր պայմաններում ժանտախտ, խոլերա, տուլարեմիա և այլ հիվանդությունների հարուցիչների հայտնաբերման և կանխարգելման աշխատանքներում ընդգրկված աշխատողների աշխատավարձի բարձրացմամբ, ինչպես նաև դեղորայքի ձեռք բերման և այլ տնտեսական ծախսերի աճով:

Նշված բնագավառի մյուս ծրագրերը ևս գրեթե ամբողջությամբ ֆինանսավորվել են, այդ թվում՝ «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ծրագրի գծով պետական պատվեր» և «Ախտահանման ծառայության ձեռք բերման գծով պետական պատվեր» ծրագրերը, որոնց տրամադրվել է համապատասխանաբար 80.3 և 66.7 մլն դրամ: Նշված ծախսերը համապատասխանաբար 21.1%-ով և 15%-ով գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշները, որը պայմանավորված է աշխատողների աշխատավարձի բարձրացմամբ:

«Արյան հավաքագրման և դրան առնչվող ծառայությունների ձեռքբերման գծով պետական պատվեր» ծրագրի ծախսերը կազմել են շուրջ 194 մլն դրամ՝ ապահովելով 99.5% կատարողական: Միջոցներն ուղղվել են արյան փոխներարկման կայանների պահպանմանը, որոնց ֆունկցիոնալ խնդիրն է արյան հավաքագրումը, բաց թողումը և բուժկանխարգելիչ հիմնարկներին արյունով և դրա բաղադրիչներով ապահովումը Հայաստանի տասը մարզերում: Իսկ Երևան քաղաքը սպասարկում է «Ռ.Յոլյանի անվ. արյունաբանության կենտրոն» ՓԲԸ-ն: Կենտրոնի առաջնային խնդիրներից են դիսպանսեր հսկողության տակ գտնվող արյան չարորակ հիվանդություններով տառապող հիվանդների ամբուլատոր հետազոտումը և բուժումը, արյան փոխներարկման կայանների կողմից կատարվող աշխատանքների արտագնա ստուգումը և մեթոդական օգնությունը: 2007 թվականի համեմատ այս ծրագրի գծով ծախսերն աճել են 13.5%-ով՝ պայմանավորված աշխատողների աշխատավարձի բարձրացմամբ և հակառեզուս իմունոգլոբուլինի պատրաստման և դրանք ծննդատներին տրամադրման աշխատանքներով:

Ծխելու դեմ պայքարի պետական ծրագրի ծախսերին ուղղվել է 100 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական:

Առողջապահության գծով հետազոտական և նախագծային աշխատանքների համար հաշվետու ժամանակահատվածում նախատեսված 9.3 մլն դրամը ծախսվել է ամբողջությամբ: Տվյալ խմբում ֆինանսավորվել է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ»

ծրագրի շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարության կազմակերպություններին պետական աջակցության ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ՝ նշված ծախսերը նվազել են 85.3%-ով՝ պայմանավորված գիտական թեմաների կրճատմամբ:

Այլ դասերին չպատկանող առողջապահական ծախսերի շրջանակներում իրականացվել են ավելի քան 4.4 մլրդ դրամի ծախսեր, որոնց կատարողականը կազմել է 52.1%: Նշենք, որ արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերը խմբում ունեն զգալի տեսակարար կշիռ՝ 68.8%, և դրանց ցածր կատարողականով է հիմնականում պայմանավորված խմբի ծախսերի շեղումը ծրագրվածից:

«Հանրապետությունից դուրս բուժման ուղեգրված հիվանդների ճանապարհածախսի փոխհատուցում» ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 23.6 մլն դրամ: Չնայած 58.9% կատարողականին, ամբողջությամբ բավարարվել է փաստացի ներկայացված պահանջը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 40.2%-ով՝ պայմանավորված հանրապետությունից դուրս մեկնող հիվանդների թվի ավելացմամբ, որը կազմել է 154՝ նախորդ տարվա 124-ի դիմաց:

Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների անցկացման գծով պետական պատվերի շրջանակներում ծախսվել է 393.2 մլն դրամ, որի կատարողականը կազմել է 99%: Այն ուղղվել է սոցիալապես անապահով հիվանդների՝ յուրահատուկ, բացառիկ բուժսարքավորումներով և տեխնոլոգիաներով անվճար ախտորոշիչ հետազոտությունների իրականացմանը: 2007 թվականի համեմատ ծախսերը նվազել են 9.1%-ով՝ պայմանավորված հիվանդների թվաքանակի կրճատմամբ:

«Դեղագործական շուկայի կանոնակարգման և դրան առնչվող ծառայությունների գծով պետական պատվեր» ծրագրով ծախսերը կազմել են 20.1 մլն դրամ՝ ապահովելով 91.5% կատարողական, որը պայմանավորված է գրանցված դեղերի քանակով: 2007 թվականի համեմատ՝ նշված ծախսերն աճել են 5.3%-ով՝ կապված մարդասիրական օգնության կարգով ներմուծվող դեղերի, դեղագործական արտադրանքի փաստաթղթային և լաբորատոր փորձաքննությունների ավելացման հետ:

Առողջապահական օբյեկտների հիմնանորոգման նպատակով 2008 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 636.6 մլն դրամ՝ ապահովելով 98.8% կատարողական: Հատկացված գումարն ուղղվել է Եղեգնաձորի բուժմիավորման շենքի, Նուռնուս գյուղի բուժկետի, ինչպես նաև 11 հիվանդանոցների հիմնանորոգմանը (2-ը Երևանում, 9-ը՝ հանրապետության մարզերում): Ծրագրից շեղումը պայմանավորված է միջոցների տնտեսմամբ, ինչպես նաև Նուռնուս գյուղում գազաֆիկացում չլինելու պատճառով գյուղի բուժկետում նախատեսված ջեռուցման համակարգը չտեղադրելու հանգամանքով:

2008 թվականին ՀԲ աջակցությամբ իրականացվող առողջապահական համակարգի արդիականացման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է 640.3 մլն դրամ՝ կազմելով

ծրագրվածի 32.9%-ով: Շեղումը պայմանավորված է նրանով, որ որոշ պայմանագրերով նախատեսված աշխատանքները և վճարումները տեղափոխվել են 2009 թվական: Իջևանի բժշկական կենտրոնի շինարարական աշխատանքներն առայժմ ընթացքի մեջ են, իսկ Հրազդանի բժշկական կենտրոնի շինարարական աշխատանքները ժամանակավորապես դադարեցվել են՝ կապված կենտրոնի նախագծի վերանայման աշխատանքների հետ: Ծրագրով նախատեսված հիվանդանոցների հաշվապահների վերապատրաստման աշխատանքները դեռևս չեն իրականացվել, քանի որ նպատակահարմար է վերոնշյալ կրթական դասընթացներն իրականացնել կիրառելով ծրագրով նախատեսված հիվանդանոցային ծառայությունների ինքնարժեքի հաշվարկման նոր մեթոդաբանություն, որի մշակման աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են (Առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում): Համաշխարհային Բանկի և ՀՀ առողջապահության նախարարության համաձայնությամբ ՀՀ մարզային կենտրոնական հիվանդանոցային միավորումների համար ռենտգեն սարքավորումներ ձեռք բերելու նպատակով մրցույթը չեղյալ է համարվել՝ պահանջվող սարքավորումների տեխնիկական մասնագրերում որոշ ճշգրտումներ կատարելու նպատակով: Սարքավորումների ձեռքբերումը նախատեսվում է իրականացնել 2009 թվականի ընթացքում:

Առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 918.8 մլն դրամ, որը կատարվել է 29.8%-ով: Ծրագրով նախատեսված էր իրականացնել ութ մարզային հիվանդանոցային հաստատությունների վերանորոգում, սակայն ՀՀ մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրում համապատասխան փոփոխությունների իրականացման գործընթացի հետ կապված՝ վերանորոգման աշխատաքներն առայժմ չեն իրականացվել: «Խորհրդատվական ծախսեր» կատեգորիայով թերակատարումը պայմանավորված է մարդկային ռեսուրսների կառավարման ռազմավարության մշակման աշխատանքների հետաձգմամբ, որոնք նախատեսվում է իրականացնել 2009 թվականի բյուջեի շրջանակում: Հիվանդանոցային ծառայությունների ինքնարժեքի գնահատման աշխատանքների իրականացման նպատակով ընտրվել է տեղական խորհրդատվական կազմակերպություն և միջազգային անհատ խորհրդատու: Վերոնշյալ խորհրդատուների կողմից ինքնարժեքի գնահատման մեթոդաբանության մշակման աշխատանքներն առայժմ ընթացքի մեջ են, որի կապակցությամբ տվյալ խորհրդատվական աշխատանքերի դիմաց վճարումը նախատեսվում է իրականացնել 2009 թվականին:

Հաշվետու տարում ՀԲ աջակցությամբ իրականացվող՝ Առողջապահական համակարգի արդիականացման վարկային ծրագրում ճապոնական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է 41.1 մլն դրամ՝ ապահովելով 51.9% կատարողական, որը պայմանավորված է խորհրդատվական ծառայությունների հետաձգմամբ:

2008 թվականին շուրջ 4 մլն դրամ (նախատեսվածի 99.7%-ը) օգտագործվել է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով տրամադրված նվիրաբերության միջոցներից՝ ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում մարզային զարգացման ծրագրի շրջանակներում: Հատկացված միջոցներով իրականացվել են Իջևանի մոր և մանկան կենտրոնի վերանորոգման աշխատանքները:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի շրջանակներում նախատեսված 58.5 մլն դրամի փոխարեն ծախսերը կազմել են շուրջ 30.9 մլն դրամ՝ ապահովելով 52.8% կատարողական: Ծրագրին կառավարությունը մասնակցություն է ցուցաբերել 7.8 մլն դրամի չափով, իսկ վարկային միջոցները կազմել են ավելի քան 23 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում նախատեսված է եղել սկսել շինարարական աշխատանքները 4 օբյեկտներում, սակայն աշխատանքներ են իրականացվել 2 օբյեկտներում: Պատճառն այն է, որ բյուջեի պլանավորման ընթացքում դեռ հայտնի չէր 2 օբյեկտների բնույթը, ուստի դրանք պայմանականորեն դասվել էին առողջապահության ոլորտին: Հետագայում փորձաքննության արդյունքում դրանք փոխադրվեցին տնտեսական հարաբերությունների ոլորտ:

ՀԲ աջակցությամբ իրականացվող՝ Թռչնագրիպին հակազդելու վարկային ծրագրով պետական բյուջեով նախատեսվել էր շուրջ 248.8 մլն դրամի ծախս, որը կատարվել է 60.8%-ով՝ կազմելով 151.2 մլն դրամ: Ծրագրին կառավարությունը մասնակցություն է ցուցաբերել 2.1 մլն դրամի չափով, իսկ վարկային միջոցները կազմել են 149.1 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում 2008 թվականի ընթացքում մի շարք այլ միջոցառումների հետ միասին նախատեսված էին նաև ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի վիրուսաբանական և հատուկ վտանգավոր վարակների լաբորատորիաների վերանորոգման աշխատանքներն ու թռչնի գրիպի կանխարգելման համար հակավիրուսային դեղամիջոցի ձեռք բերումը: Հաշվի առնելով, որ համապատասխան լաբորատորիաների վերանորոգման համար նախագծումն անհրաժեշտ է իրականացնել միջազգային փորձագետների աջակցությամբ՝ լաբորատորիաներում կենսաանվտանգության կանոնների ապահովման նպատակով, շինարարական աշխատանքները փոխադրվել են 2009 թվական:

ՀԲ աջակցությամբ իրականացվող՝ Թռչնագրիպին հակազդելու ճապոնական դրամաշնորհային ծրագրի գծով ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով հատկացվել էր շուրջ 61.8 մլն դրամ, որը կատարվել է 17.2%-ով, կամ ծախսերը կազմել են 10.6 մլն դրամ: Ծրագրին կառավարությունը մասնակցություն է ցուցաբերել 1.8 մլն դրամի չափով, իսկ վարկային միջոցները կազմել են 8.8 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում 2008 թվականի ընթացքում նախատեսված էր իրականացնել թերապևտների, մանկաբույժների, ընտանեկան բժիշկների, լաբորատոր մասնագետների և միջին բուժանձնակազմի սեմինար-պարապմունքներ «Թռչնի

գրիպի համաճարակաբանական հսկողություն և բուժում» թեմայով, ինչպես նաև տվյալների մուտքագրման և հաղորդման համակարգչային ծրագրի մշակում: Հաշվի առնելով միջազգային մի շարք կազմակերպությունների կողմից իրականացվող դրամաշնորհային ծրագրերը, որոնք ներառում են նաև սեմինարներ «Թռչնի գրիպի համաճարակաբանություն և բուժում» թեմայով, նշված ծրագրով նախատեսված սեմինարների իրականացումը տեղափոխվեց 2009 թվական: Վարակիչ հիվանդությունների, մասնավորապես՝ գրիպի համաճարակաբանական հսկողության իրականացման համար տվյալների մուտքագրման և հաղորդման համակարգչային ծրագրի մշակումը նույնպես տեղափոխվել է 2009 թվական՝ անհրաժեշտ ցուցանիշների թերի լինելու պատճառով:

Դատաբժշկական և գենետիկ ծառայությունների ձեռքբերման գծով 2008 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 320 մլն դրամ, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է:

Պաթանատոմիական ծառայությունների ձեռք բերման գծով տրամադրվել է շուրջ 38.3 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը:

«Հաշմանդամ երեխաների օրթեզների և կորսետների պատրաստման գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսված 81.8 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է:

«Առողջապահության համակարգի գործունեության զանգվածային տեղեկատվության ապահովման գծով պետական պատվեր» ծրագրին հատկացվել է 82.1 մլն դրամ՝ ապահովելով 97.8% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվում են առողջապահության բժշկական վիճակագրության և բժշկասանիտարական տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն, որի վերջնական արդյունքները հանձնվում են վիճակագրության պետական ծառայությանը և պետական ռեգիստրին: ՀՀ առողջապահության նախարարության համար ձեռք են բերվել համակարգիչներ և հարակից սարքավորումներ, ներդրվել են նաև առողջապահական տեղեկատվական համակարգեր և ինտերնետ կապ: Առողջապահական համակարգի գործունեության զանգվածային տեղեկատվության, բնակչության լայն շրջանակներում հավաստի բժշկական գիտելիքների տարածման համար տպագրվում է հանրամատչելի զրույցների հավելված:

Մասնագիտական, խորհրդատվական և կազմակերպամեթոդական աջակցության գծով պետական պատվերի ծախսերը կազմել են 36.1 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրային հատկացումները: Ծրագրի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել սիրտ-անոթային, սպինալ և պրոֆեսիոնալ հիվանդություններով տառապող, շաքարային դիաբետով, ասթմայով հիվանդներին, ինչպես նաև մասնագետներին տրամադրվել է ուռուցքաբանական, նարկոլոգիական, մաշկավեներական, հոգեբուժական և հակատուբերկուլյոզային ծառայությունների գծով կազմակերպչամեթոդական օգնություն:

Խմբում ընդգրկված հետևյալ ծրագրերը՝ «Այլ բուժօգնության և սպասարկման գծով պետական պատվեր» (15 մլն դրամ), «Մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և

դեղագործական արտադրանքի մաքսազերծման և բաշխման աշխատանքների գծով պետական պատվեր» (40 մլն դրամ) և «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի աջակցության գծով պետական պատվեր» (35 մլն դրամ) ֆինանսավորվել են ամբողջությամբ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Թռչնագրիպին հակազդելու ծրագրի համաֆինանսավորման ճապոնական դրամաշնորհային ծրագրով ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 379.9 մլն դրամի հատկացում, որը կատարվել է 11.2%-ով՝ կազմելով շուրջ 42.5 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է նրանով, որ դրամաշնորհային ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման գործընթացը ավելի ուշ է սկսվել, քան նախատեսված էր՝ կապված Սանիտարական կարանտինային կետերի (ՍԿԿ) համար համապատասխան հողահատկացումների և տեղակայման վայրի ընտրության հարցերի հետ: Դրա հետ կապված՝ չի կատարվել ՍԿԿ-ների համար համապատասխան ապրանքների, սարքավորումների ու տրանսպորտային միջոցների ձեռք բերումը, որը նախատեսված է իրականացնել շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերը կազմել են 878.3 մլն դրամ՝ ապահովելով 96.5% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է աշխատավարձի, գործուղման ծախսերի, սոցիալական ապահովության վճարների, կոմունալ ծախսերի և մի շարք այլ ծախսային հոդվածների գծով միջոցների տնտեսմամբ:

<u>Հանգիստ, մշակույթ և կրոն</u>

2008 թվականին ՀՀ պետական բյուջեից հանգստի, մշակույթի և կրոնի ծրագրերի ֆինանսավորմանը տրամադրվել է 16 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսված ծախսերի 98.6%-ը:

Հանգստի և սպորտի բնագավառին տրամադրվել է ավելի քան 1.1 մլրդ դրամ՝ 98.5%-ով ապահովելով տարեկան ծրագիրը:

2008 թվականին «Մարզաձևերի զարգացման նպատակով պետական աջակցություն ՀՀ մարզական ֆեդերացիաներին» ծրագրով նախատեսված միջոցները նպատակաուղղվել են միջոցառումների քանակի ավելացմանը և որակի բարձրացմանը, մարզիկների բժշկական հետազոտման աշխատանքների բարելավմանը, մարզաձևերի ՀՀ ազգային հավաքական թիմերը երիտասարդ հեռանկարային մարզիկներով համալրմանը և օլիմպիական վարկանիշային միջազգային մրցումներին նախապատրաստմանը: Այս ծրագրով ՀՀ մարզական ֆեդերացիաներին տրամադրվել է 833.2 մլն դրամ պետական աջակցություն՝ ապահովելով 99.4% կատարողական: Ծրագրի շրջանակներում հաշվետու տարում անց են կացվել ՀՀ 78 առաջնություններ, որոնց մասնակցել են 5504 մարզիկներ: Աշխարհի, Եվրոպայի

առաջնություններին, գավաթի խաղարկություններին և միջազգային մրցաշարերին նախապատրաստվելու նպատակով ՀՀ հավաքական թիմերում ընդգրկված մարզիկների համար կազմակերպվել են 85 ուսումնամարզական հավաքներ, որտեղ մասնակցել է 3055 մարդ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 3.2%-ով, քանի որ 2007 թվականը նախապատրաստական աշխատանքների ժամանակահատված էր:

Հաշվետու տարվա պետական բյուջեով 65 մլն դրամ սուբսիդիա էր նախատեսվել «Չեսս» շախմատային ակադեմիա» հիմնադրամին, որն ամբողջությամբ տրամադրվել է:

Նախատեսված չափով հատկացվել է Օլիմպիական խաղերում, Աշխարհի, Եվրոպայի առաջնություններում և գավաթի խաղարկություններում հաղթողներին և մրցանակակիրներին դրամական մրցանակների հանձնման նպատակով «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ին պետական աջակցությունը, որը կազմել է 50 մլն դրամ:

ՀՀ հավաքական թիմերին մարզագույքով և մարզահանդերձանքով ապահովման նպատակով պետական աջակցությունը «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ին կազմել է 28 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 133.3%-ով, որն ուղղվել է 2008 թվականի Պեկինի օլիմպիական խաղերում Հայաստանի հավաքականի մասնակցության ապահովմանը:

Ուսանողական մարզական խաղերի անցկացման նպատակով ՀՀ ուսանողական մարզական ֆեդերացիային տրամադրվել է 3.7 մլն դրամ պետական աջակցություն՝ կազմելով նախատեսվածի 85.1%-ը, որը պայմանավորված է տնտեսումներով:

Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 7-րդ մարզական խաղերի անցկացման նպատակով «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ին նախատեսված 16 մլն դրամ պետական աջակցությունն ամբողջությամբ տրամադրվել է: Ծրագրի շրջանակներում 2008 թվականին այս խաղերն անց են կացվել 2 փուլով, որոնց մասնակցել են 150 դպրոցների 17000 աշակերտներ:

ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում Սյունիքի մարզի Քաջարան քաղաքի հիմնադրման 50-ամյակին նվիրված փառատոնի անցկացման նպատակով պետական աջակցությունը «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ին կազմել է 6 մլն դրամ, որը կատարվել է 100%-ով:

Եվրոպայի խորհրդի կողմից հրատարակված գիտամեթոդական գրականության, Եվրախորհրդի հանձնարարականների և այլ նյութերի թարգմանության, խմբագրման, տպագրման և բազմացման նպատակով «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ին տրամադրվել է 3 մլն դրամ պետական աջակցություն, որը կատարվել է 100%-ով: Այս ծրագրի շրջանակներում իրականացվում են Եվրախորհրդի սպորտի զարգացման կոմիտեի և այլ կազմակերպությունների կողմից հրատարակված գիտամեթոդական գրականության չափորոշիչների, կանոնադրությունների թարգմանում, խմբագրում, տպագրում և

բազմացում: Եվրոպական ընտանիքին ինտեգրելու նպատակով 2008 թվականին թարգմանվել, խմբագրվել և հրատարակվել են «Ֆիզիկական ակտիվությունը և առողջությունը Եվրոպայում» (1300 օրինակ) և «Աջակցություն ակտիվ կենսակերպին քաղաքի պայմաններում» (1300 օրինակ) գրքույկները, որոնք բաշխվել են ՀՀ բոլոր մարզերի, ԼՂՀ-ի և Երևան քաղաքի համայնքներին:

Հանրակրթական դպրոցների 1-6-րդ դասարանների միջև ՀՀ Ազգային Ժողովի գավաթի խաղարկության անցկացման նպատակով «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ին պետական աջակցության նպատակով տրամադրվել է 998 հազ. դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.8%-ը:

Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացման նպատակով նախատեսվել էր 2.5 մլն դրամ պետական աջակցություն «Երկրապահ կամավորական միություն» հասարակական կազմակերպությանը, որը խաղերը չկայանալու պատճառով չի ֆինանսավորվել:

ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացման նպատակով պետական աջակցությունը «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ին կազմել է 14.3 մլն դրամ, որը կատարվել է 89.3%-ով: Շեղումն առաջացել է գովազդային վահանակը չտեղադրելու արդյունքում:

ՀՀ մարզային և տարածաշրջանային սեմինար-խորհրդակցությունների, կլոր սեղանների կազմակերպման նպատակով 2 մլն դրամ պետական աջակցություն էր նախատեսվել «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ին, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է: Ծրագրի նպատակն է հանրությանը և ոլորտի մասնագետներին ծանոթացնել սպորտի Եվրոպական խարտիայի պահանջներից բխող հիմնահարցերին, սեմինար-խորհրդակցությունների կազմակերպման միջոցով օժանդակել դրանց գործնական կիրառմանը ոլորտի տարբեր բնագավառներում: 2008 թվականին մարզային սեմինար-խորհրդակցություններին մասնակցել են 4 մարզերի 140 մարզաշխատող:

100%-ով կատարվել է նաև մանկապատանեկան սպորտի մասսայականացման նպատակով պետական աջակցությունը «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ կազմելով 8 մլն դրամ:

Պետական աջակցությունը հաշմանդամային սպորտով զբաղվող մարզական և այլ հասարակական կազմակերպություններին կազմել է 9 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 100%-ը: Ծրագրի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել 4 հասարակական կազմակերպությունների, իրականացված միջոցառումներին մասնակցել են 428 հաշմանդամ մարզիկներ: Ի թիվս այլ միջոցառումների, մասնակցություն է ցուցաբերվել նաև Պեկինի պարալիմպիկ խաղերին:

Նավամոդելային սպորտի զարգացման նպատակով պետական աջակցությունը ՀՀ նավամոդելային սպորտի ֆեդերացիային կազմել է 5.5 մլն դրամ, որը կատարվել է նախատեսված չափով:

Ամբողջությամբ տրամադրվել է նաև «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ին 17.8 մլն դրամ պետական աջակցությունը:

ՀՀ հավաքական թիմերի ավագ մարզիչների վարձատրության և աշխարհի 8 չեմպիոններին թոշակի հատկացման նպատակով «ՀՀ հավաքական թիմերի կենտրոն» ՓԲԸ-ին պետական աջակցությունը կազմել է 15.9 մլն դրամ, որը կատարվել է 92.3%-ով: Շեղումը պայմանավորված է նրանով, որ նախատեսված 8 չեմպիոնների փոխարեն դիմել և թոշակ են ստացել 6 հոգի:

2008 թվականի Պեկինի 29-րդ օլիմպիական խաղերին մասնակցության ապահովման նպատակով «Հայաստանի ազգային կոմիտե» իրավաբանական անձանց միությանը պետական աջակցությունը կազմել է 67.9 մլն դրամ, որը կատարվել է 95.7%-ով: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով:

Եվրախորհրդի սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագրին անդամակցելու անդամավճարը նախատեսված էր 3.1 մլն դրամ, որը չի իրականացվել պետական մարմինների միջև համաձայնեցման փուլում գտնվելու պատճառով:

Հաշվետու տարում 1.5 մլրդ դրամ ուղղվել է *գրադարանների* ֆինանսավորմանը, որն ապահովել է ծրագրով նախատեսված հատկացումների 99.9%-ը: Նախորդ տարվա համեմատ՝ գրադարաններին պետական բյուջեից տրամադրված միջոցներն ավելացել են 57.8%-ով կամ 555.5 մլն դրամով, որը պայմանավորված է մշակութային օբյեկտների հիմնանորոգման ծրագրով հատկացված միջոցների աճով: 2008 թվականին նախատեսվել էր 561.8 մլն դրամ հատկացնել տվյալ դասում ընդգրկված մշակութային օբյեկտների հիմնանորոգման ծրագրին, որն ամբողջությամբ իրականացվել է: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել է մշակութային 6 օբյեկտ՝ (2-ը Երևան քաղաքում, 4-ը հանրապետության մարզերում), նախորդ տարվա 4-ի փոխարեն:

2008 թվականին 877.6 մլն դրամ ուղղվել է թվով 16 գրադարաններին պետական աջակցության տրամադրմանը, որի կատարողականը կազմել է 99.9%: Նախորդ տարվա համեմատ՝ գրադարաններին պետական աջակցության աճը կազմել է 7.2%, որը հիմնականում պայմանավորված է աշխատողների աշխատավարձերի 20%-ով բարձրացմամբ: 2008 թվականին շարունակվել են աշխատանքները գրադարանային-տեղեկատվական սպասարկման ծառայությունների արդյունավետության բարձրացման և ՀՀ բնակչության համար մատչելիության, ազգային գրավոր մշակույթի բաղկացուցիչ մաս հանդիսացող գրադարանային հավաքածուների պահպանության և դրանց համալրման, ժամանակակից

տեղեկատվական տեխնոլոգիաների և կառավարման նոր համակարգերի կիրառման ուղղություններով:

ՀՀ ազգային գրապալատին պետական աջակցության համար նախատեսված 45.9 մլն դրամն ամբողջությամբ տրամադրվել է: Ծրագրով նախատեսված հատկացումներն ուղղվել են ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության մաս հանդիսացող՝ ՀՀ-ում ու արտերկրում լույս տեսած և լույս տեսնող հրատարակությունների անձեռնմխելի ֆոնդերի պահպանման, մատենագիտական տեղեկույթի պետական պաշարների համալրման, օգտվողներին մատենագիտական տեղեկատվությամբ ապահովման, գիտության զարգացման և հանրության կրթական մակարդակի բարձրացման խնդիրների իրագործմանը:

Կենտրոնացված կարգով ՀՀ ազգային գրապալատի և գրադարանների համար սարքերի և սարքավորումների ձեռքբերման գծով պետական պատվերի ծրագրին հատկացվել է 32.1 մլն դրամ, որը կազմում է նախատեսվածի 97.6%-ը և 39.4%-ով գերազանցում է 2007 թվականի հատկացումները: Բյուջեով նախատեսված հատկացումների ավելացումն ուղղվել է համակարգի գրադարանների և Հայաստանի ազգային գրապալատի նյութատեխնիկական բազայի հագեցմանը:

2008 թվականին *թանգարանների և ցուցահանդեսների* ծրագրերին պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 1.4 մլրդ դրամ, որը կազմում է նախատեսվածի 99.9%-ը: Նախորդ տարվա համեմատ՝ այս ուղղությամբ կատարված ծախսերն ընդհանուր առմամբ փոփոխություն չեն կրել:

Թանգարանների հիմնանորոգման համար ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 96.7 մլն դրամ՝ գրեթե ամբողջությամբ ապահովելով ծրագրային հատկացումների ծավալը: Հատկացված գումարն ուղղվել է թվով 3 մշակութային օբյեկտների վերանորոգմանը, որից 2-ը՝ Կոտայքի մարզում, 1-ը՝ Արագածոտնի մարզում:

Թանգարաններին պետական աջակցության համար նախատեսված միջոցներն օգտագործվել են ամբողջությամբ՝ կազմելով 1.3 մլրդ դրամ և 3%-ով գերազանցելով 2007 թվականի հատկացումները: Ավելացված միջոցներն ուղղվել են ոլորտի աշխատողների աշխատավարձերի 20%-ով բարձրացմանը:

2008 թվականի պետական բյուջեից 25.4 մլն դրամ է տրամադրվել կենտրոնացված կարգով թանգարանների համար սարքերի և սարքավորումների ձեռքբերման նպատակով՝ 97%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում թանգարանները ստացել են համակարգչային, կենցաղային տեխնիկա, 2 թանգարաններում ներդրվել է անվտանգության ահազանգման համակարգ:

Հաշվետու տարում 985.1 մլն դրամ է հատկացվել *մշակույթի տների, ակումբների և կենտրոնների* ֆինանսավորմանը, որը կատարվել է 96%-ով: Շեղումը ծրագրից հիմնականում պայմանավորված է մշակութային օբյեկտների շինարարության և հիմնանորոգման

աշխատանքների ցածր կատարողականով: Նախորդ տարվա համեմատ՝ նշված ծախսերը նվազել են 26.3%-ով՝ պայմանավորված 2008 թվականի պետական բյուջեից մշակութային օբյեկտների հիմնանորոգման նպատակով միջոցների պակաս հատկացմամբ: Մասնավորապես՝ 458 մլն դրամ են կազմել հիմնանորոգման, 472.7 մլն դրամ՝ շինարարության ծախսերը, որոնք կատարվել են համապատասխանաբար 97.5 և 95.1 տոկոսով: Նշված ծրագրերի շրջանակներում հանրապետության մարզերում հիմնանորոգվել է 16 և կառուցվել 9 մշակութային օբյեկտ:

Մշակույթի տներին, ակումբներին և կենտրոններին պետական աջակցությունը տրամադրվել է նախատեսված չափով՝ կազմելով 25.2 մլն դրամ: 2007 թվականի համեմատ աջակցության ծավալներն ավելացել են 11.4%-ով՝ պայմանավորված նշված կազմակերպություններում աշխատավարձերի 20%-ով բարձրացմամբ:

Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով տրամադրված նվիրաբերության միջոցների հաշվին իրականացվող ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում մարզային զարգացման ծրագրով նախատեսված 34.7 մլն դրամի փոխարեն կատարվել են 29.1 մլն դրամի ծախսեր, որը պայմանավորված է տնտեսմամբ: Հատկացված միջոցներով Գեղարքունիքի մարզի 2 գյուղական համայնքներում վերանորոգվել են մշակույթի պալատները:

Այլ մշակութային կազմակերպություններին ՀՀ 2008 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 809.9 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 96.8%-ը: 2007 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 41.4%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ այս բնագավառում 2008 թվականի պետական բյուջեից միջոցներ են հատկացվել մշակութային օբյեկտների հիմնանորոգմանը՝ 32.5 մլն դրամ, և Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերին՝ 180 մլն դրամ, որոնք իրականացվել են նախատեսված ողջ ծավալով և նախորդ տարի նախատեսված չեն եղել: Առաջին ծրագրի շրջանակներում հաշվետու տարում հիմնանորոգվել է Հայաստանի գրողների միության շենքը, իսկ Երևանի համաքաղաքային ծախսերի շրջանակներում պետական օժանդակություն է ցուցաբերվել «Երևան» հիմնադրամին՝ «Երևանի օր» տոնակատարության և այլ քաղաքային միջոցառումների կազմակերպման նպատակով:

Հաշվետու տարում 320.3 մլն դրամ տրամադրվել է Հայաստանի ազգային արխիվի սուբսիդավորմանը՝ ապահովելով 92.4% կատարողական:

Տեղեկատվական-վերլուծական և հասարակության հետ կապերի կենտրոնին պետական աջակցությունն օգտագործվել է 99.9%-ով՝ կազմելով 35.9 մլն դրամ:

2008 թվականին 179.4 մլն դրամ նախատեսվել է Երևանի կենդանաբանական այգու սուբսիդավորման համար, որի կատարողականը կազմել է 100%:

«Ժողովրդական ստեղծագործության և արհեստագործության կենտրոն» ՊՈԱԿ-ին 2008 թվականի պետական բյուջեից հատկացվել է 28.8 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.9%-ը: 2007 թվականի համեմատ նշված ծախսերի աճը կազմել է 12.8% կամ 41.1 մլն դրամ, որը հիմնականում պայմանավորված է աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձերի բարձրացմամբ: Ծրագիրն իրականացվել է ազգաբնակչության հոգևոր և գեղագիտական զարգացման, հասարակության մեջ ժողովրդական ստեղծագործության տարածման, ավանդական ժողովրդական արհեստների պահպանման և ուսումնասիրման, ինքնագործ կոլեկտիվների, ինքնուս անհատ ստեղծագործողների, ժողովրդական վարպետների ստեղծագործությունների կատարելագործման և հանրահռչակման նպատակով:

«Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին 2008 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 32.9 մլն դրամ աջակցություն՝ ապահովելով ծրագրի 99.2%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 18.4% աճը պայմանավորված է աշխատողների աշխատավարձերի բարձրացմամբ: Կենտրոնի նպատակը մշակութային արժեքների փորձագիտական ուսումնասիրության, մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների մշակութաբանական ու արվեստաբանական փորձաքննության իրականացումն է: 2008 թվականին փորձաքննության ենթարկված առարկաների թիվը կազմել է 2427՝ նախորդ տարվա 2938-ի փոխարեն: Տարբերությունը պայմանավորված է հայտատուների դիմումների թվի նվազմամբ:

Արվեստի ծրագրերի ֆինանսավորմանը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 3.5 մլրդ դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 99.1% կատարողական: 2007 թվականի համեմատ արվեստի բնագավառում պետական բյուջեի ծախսերը նվազել են 18.8%-ով կամ 808.7 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ նախորդ տարի, բացի 2008 թվականին ֆինանսավորված ծրագրերից, միջոցներ էին հատկացվել նաև հետևյալ երեք ծրագրերի՝ Ֆրանսիայի Հանրապետությունում Հայաստանի տարվա միջոցառումների իրականացման, Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի և ՀՀ բանակի ստեղծման և Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձերի տոնակատարություններին նվիրված միջոցառումների գծով:

Արվեստի բնագավառի ծախսերի մեծ մասն ուղղվել է մշակութային կազմակերպություններին պետական աջակցությանը: Պետական աջակցության նպատակով բյուջեից նախատեսված հատկացումները գրեթե ամբողջությամբ ֆինանսավորվել են, այդ թվում՝ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնին՝ 653.8 մլն դրամ (98.6%), Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնին՝ 252.3 մլն դրամ (98.8%), այլ թատրոններին և համերգային կազմակերպություններին՝ 1.7 մլրդ դրամ (99.7%), մշակութային միջոցառումների իրականացմանը՝ 757.5 մլն դրամ (100%), և Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան թատրոնին՝ 20 մլն դրամ (100%):

«Ժողովրդական» կոչման արժանացած անձանց ամենամսյա պատվովճարների համար նախատեսված 54 մլն դրամի փոխարեն հատկացվել է 38.2 մլն դրամ, որը ֆինանսավորվել է ներկայացված փաստացի պահանջին համապատասխան:

Մշակութային օբյեկտների հիմնանորոգման ծրագրով նախատեսվել և օգտագործվել է 98.7 մլն դրամ, որը հատկացվել է Երևանի Հ. Պարոնյանի անվան թատրոնի և Երգի պետական թատրոնի շենքերի հիմնանորոգմանը:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով *կինեմատոգրաֆիայի* բնագավառի համար նախատեսված 625 մլն դրամն ամբողջությամբ ֆինանսավորվել է: Նախորդ տարվա համեմատ՝ նշված ծախսերն ավելացել են 6.4%-ով կամ 37.7 մլն դրամով:

Կինոնկարների արտադրությանը տրամադրված շուրջ 469.6 մլն դրամ պետական աջակցությունը, որը կատարվել է նախատեսված ծավալով, օգտագործվել է 17 խաղարկային, 15 վավերագրական կինոնկարների և 4 մուլտֆիլմերի նկարահանման նպատակով, ընդամենը՝ 36՝ նախորդ տարվա 30-ի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.9%-ով:

Կինեմատոգրաֆիայի ոլորտում այլ ծառայությունների ֆինանսավորման համար տրամադրվել է 54.2 մլն դրամ, որն իրացվել է նախատեսված ամբողջ ծավալով: Ծրագիրն իրականացվել է կինոարվեստի բնագավառում կինոարվեստի պահպանման, տարածման և զարգացման, միջազգային կինոփառատոներին և կինոշուկաներին Հայաստանի Հանրապետության մասնակցության նպատակով: Հաշվետու տարում կինոշուկաներին և կինոփառատոներին մասնակցել են 18 խաղարկային և 8 վավերագրական ֆիլմեր: Վերականգնվել է 6 ֆիլմ, թվայնացվել՝ 12 վավերագրական ֆիլմ:

Ազգային կինոծրագրերի իրականացման նպատակով պետական աջակցությունը «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ին կազմել է 101.3 մլն դրամ, որն իրացվել է նախատեսված ամբողջ ծավալով: 2007 թվականի համեմատ գրանցվել է ծախսերի 7.8% աճ, որը պայմանավորված է աշխատողների աշխատավարձերի 20%-ով բարձրացմամբ:

Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման ու պահպանման նպատակով ՀՀ 2008 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 860.6 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 96.5%-ը: Նախորդ տարվա համեմատ՝ նշված ծախսերն ավելացել են 14.8%-ով, ինչը պայմանավորված է 2008 թվականին Թբիլիսիում գտնվող հայ գրողների պանթեոնի պահպանման նպատակով պետական աջակցության տրամադրմամբ, որը կազմել է 4 մլն դրամ:

«Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ին ծրագրով նախատեսվել և տրամադրվել է 58.7 մլն դրամ: Ծրագրի նպատակներն են պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրումը, վավերագրումը, պահպանական փաստաթղթերի փաթեթի ստեղծումը և դրանց շնորհիվ հուշարձանների պահպանության

ապահովումն ու հետագա սերունդներին փոխանցումը: Այդ ուղղությամբ 2008 թվականին կազմվել է ՀՀ մարզերի 87 համայնքների 457 հուշարձանների պահպանական գոտի և թողարկվել 517-ը (փաստաթղթերի համակարգչային մշակում և թողարկում ըստ սահմանված ձևաչափի): 2007 թվականի համեմատ նշված ծրագրի ծախսերն ավելացել են 6.3%-ով, որը հիմնականում ուղղվել է կենտրոնի աշխատողների աշխատավարձերի 20%-ով բարձրացմանը:

Հուշարձանների վերականգնման աշխատանքների իրականացմանը ծրագրով նախատեսված 487 մլն դրամի դիմաց տրամադրվել է 460.2 մլն դրամ: 26.8 մլն դրամի շեղումը պայմանավորված է 3 հուշարձանների մշակված նախագծերում անհրաժեշտ լրամշակման պահանջով, որը ծագել է վերականգնման աշխատանքների իրականացման փուլում: Ծրագրի նպատակն է պատմության և մշակույթի հուշարձանների փրկումը կորստից ու ավերումից, ինչպես նաև վթարային հուշարձանների թվի կրճատումը: Անշարժ հուշարձանների վերա-կանգնման և պահպանման աշխատանքների գծով մշակվել են 12 հուշարձանների վերականգն-ման նախագծեր: Սկսվել են 5, շարունակվում են 7 և ավարտվել են 3 հուշարձանների վերականգնման աշխատանքները: Արդյունքում նվազել է վտանգված հուշարձանների քանակը, ինչպես նաև հնարավորություն է ընձեռվել դրանք ներառելու զբոսաշրջային երթուղիներում: Եթե մինչև 2007 թվականը վերականգնման գործընթացում հիմնականում ընդգրկված են եղել միայն Արագածոտնի, Լոռու, Վայոց ձորի, Սյունիքի և Կոտայքի մարզերի հուշարձանները, ապա 2008 թվականից վերականգնման գործընթացում ներառվել են նաև Երևանի, Շիրակի, Արարատի, Արմավիրի, Տավուշի և Գեղարքունիքի մարզերի հուշարձանները:

Տվյալ ոլորտում ընդգրկված՝ Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերին տրամադրվել է 337.6 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 98.7%-ը: Հատկացված միջոցներով իրականացվել են բռնադատվածների հուշարձանի վերակառուցման, Ալ. Մյասնիկյանի արձանի պատվանդանի և Մատենադարանի աստիճանների վերանորոգման աշխատանքներ:

Հաշվետու ժամանակահատվածում *հեռուստառադիոհաղորդումների* գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 3.4 մլրդ դրամ: Տրամադրված միջոցներով ֆինանսավորվել է 8 ծրագիր, որից 5-ն իրականացվել է նախատեսված ողջ ծավալով: Հատկացումների հիմնական մասը՝ շուրջ 2.3 մլրդ դրամ (100%), տրամադրվել է հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ին՝ որպես պետական աջակցություն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը կազմել են 100.2%:

Հաշվետու տարում 691.8 մլն դրամ (100%) պետական աջակցություն է տրամադրվել «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ին՝ ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով, որը նախորդ տարվա համեմատ փոփոխություն չի կրել:

Ռադիոհեռուստատեսային հաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով 23 մլն դրամ պետական աջակցություն է տրամադրվել «Շիրակի հանրային

հեռուստառադիո» ՓԲԸ-ին, որը կազմել է նախատեսվածի 100%-ը և 25.6%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը:

«Միր» միջպետական հեռուստառադիոընկերության գործունեության ծախսերում Հայաստանի Հանրապետության մասնաբաժինը կազմել է 74.4 մլն դրամ, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է և 10%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը:

Հասարակական կարծիքի ուսումնասիրման նպատակով «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ին նախատեսվել և հատկացվել է 10 մլն դրամի պետական աջակցություն, որը նախորդ տարվա համեմատ փոխության չի ենթարկվել:

2008 թվականի պետական բյուջեից 41.5 մլն դրամ պետական աջակցություն է հատկացվել «Տնտեսական բարեփոխումների վերլուծական տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ-ին, որը կատարվել է 98.9%-ով և 11.8%-ով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը: Ավելացումը պայմանավորված է աշխատավարձի աճով:

Հաշվետու տարվա բյուջեից 71.5 մլն դրամ տրամադրվել է պետական գնումների հրապարակայնության ապահովման գծով պետական պատվերի ֆինանսավորմանը, որը կազմել է նախատեսվածի 99.9%-ը և 45.3%-ով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը:

Այս ոլորտի պետական կառավարման մարմինների՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի և Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի պահպանմանը տրամադրվել է 191.2 մլն դրամ՝ նախատեսված 202.5 մլն դրամի դիմաց:

2008 թվականին շուրջ 750.1 մլն դրամ են կազմել *հրատարակչությունների և խմբագրությունների* ծախսերը՝ 94.7%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Շեղումը հիմնականում առաջացել է հրատարակումների, մասնավորեցվող պետական գույքի վերաբերյալ տեղեկությունների հրապարակման գծով պետական պատվերի և «Պաշտոնական հայտարարություններ» կայքէջի ստեղծման և վարման ծախսերի տնտեսման արդյունքում: Նախորդ տարվա համեմատ՝ հրատարակչությունների և խմբագրությունների ծախսերը կրճատվել են 5.1%-ով կամ 40.2 մլն դրամով:

Պետական մամուլի հրատարակմանը պետական աջակցությունը կազմել է 60.1 մլն դրամ, որը ֆինանսավորվել է նախատեսված ամբողջ ծավալով: Միջոցները հատկացվել են «Հանրապետություն» և «Հայաստանի Հանրապետություն-Ռեսպուբլիկա Արմենիա» ՓԲԸ-ներին: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերում փոփոխություն տեղի չի ունեցել:

Գրականության հրատարակման գծով պետական պատվերի շրջանակներում 2008 թվականին հատկացվել է 135.4 մլն դրամ՝ կազմելով ծրագրվածի 100%-ը:

2008 թվականին ամբողջությամբ ֆինանսավորվել են գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակմանը (44.3 մլն դրամ), «Էկոնոմիկա» հանդես» ՓԲԸ-ին (38.6 մլն դրամ), մանկական, մանկապատանեկան թերթերի և ամսագրերի հրատարակմանը (42.8 մլն դրամ) և «Վրաստան» թերթի հրատարակմանը (10 մլն դրամ) պետական աջակցության համար

նախատեսված միջոցները: Պետական աջակցությունը ոչ պետական մամուլի հրատարակմանը կազմել է 45 մլն դրամ կամ նախատեսվածի 97%-ը: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Շրջապատ», «Վայոց ձոր», «Քաղաքացիական ծառայություն» և «Հանրային ծառայություն» թերթերին նախատեսված գումարը չի տրամադրվել՝ կապված կազմակերպությունների իրավական կարգավիճակի հետ:

Հրատարակումների գծով պետական պատվերի ֆինանսավորմանը տրամադրվել է 311.2 մլն դրամ, որը կազմել է ծրագրվածի 91.9%-ը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ 27.6 մլն դրամ հատկացվել էր նոր դիվանագիտական անձնագրերի տպագրության համար, որը չի իրականացվել անձնագրի բնութագրի բացակայության պատճառով: Այն կկազմվի ստանդարտների ճշտման աշխատանքների ավարտից հետո:

2008 թվականին ամբողջությամբ տրամադրվել է «Վրաստան» թերթի հրատարակմանը 10 մլն դրամ պետական աջակցությունը: Բարձր կատարողական են ունեցել նաև իրավաբանական տերմինաբանության զարգացման և Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի զարգացման ծրագրերը՝ կազմելով համապատասխանաբար 99.8% (13 մլն դրամ) և 98.5% (22.7 մլն դրամ): Մասնավորեցվող պետական գույքի վերաբերյալ տեղեկությունների հրապարակման գծով պետական պատվերի գծով տրամադրվել է 12.2 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 66.7%-ը: Ծրագրի շրջանակներում «Ազգ» օրաթերթի կողմից մատուցվել են տեղեկատվական սպասարկման ծառայություններ: Շեղումը պայմանավորված է նրանով, որ ծրագիրը հաստատվել և հատկացումները կատարվել են մայիս ամսից: «Պաշտոնական հայտարարություններ» կայքէջի ստեղծման և վարման աշխատանքների համար տրամադրվել է 14.7 մլն դրամ կամ նախատեսվածի 70%-ը:

Հաշվետու ժամանակահատվածում *տեղեկատվության ձեռքբերման* գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 55.8 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով նախատեսված հատկացումները: Ծրագիրն իրականացրել է «Արմենպրես» ՓԲԸ-ն, որը տեղեկատվություն է տրամադրել հանրապետության ՋԼՄ-ներին և արտերկրում գտնվող ՀՀ դեսպանատներին: Նախորդ տարվա համեմատ՝ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով *երիտասարդական ծրագրերին* հատկացված գումարը կազմել է 342.8 մլն դրամ, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է: Հայաստանի Հանրապետության մարզերում ապահովվել է մարզային երիտասարդական կենտրոնների աշխատանքը՝ տեղական ինքնակառավարման մարմինների, մարզային հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ, որոնց նպատակն է բարձրացնել մարզերում երիտասարդական պետական քաղաքականության արդյունավետությունը, այն հասանելի դարձնել մարզերի երիտասարդությանը: Զբաղվածության պետական ծառայության տարածքային կենտրոնների և «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» և «Երիտասարդների մասնագիտական

կողմնորոշման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների համագործակցությամբ մարզային կենտրոններում իրականացվել են համատեղ ծրագրեր՝ ուղղված երիտասարդության զբաղվածության հիմնախնդիրների լուծմանը: Հուլիսի 11-ից մինչև 18-ը Վայոց ձորի Ջերմուկ քաղաքում իրականացվել է «Բազե-2008» համահայկական երիտասարդական հավաքը, որին մասնակցել են շուրջ 600 երիտասարդներ Հայաստանի Հանրապետությունից, սփյուռքի գաղթօջախներից և Արցախից: Գործել է 2006 թվականին ստեղծված «Երիտասարդ առաջնորդների դպրոցը», որի նպատակն է ընտրել հասարակության առավել ակտիվ երիտասարդների և նրանց դասավանդել արդյունավետ առաջնորդության հմտություններ ու գիտելիքներ, սերմանել առողջ արժեքներ, ինչպես նաև նպաստել համաշխարհային ներկա զարգացումների վերաբերյալ իրական պատկերացումների ձևավորմանը: Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի հետ համատեղ իրականացվել է երիտասարդների և ուսանողների համակարգչային հիմնարար և մասնագիտական գիտելիքների ձեռքբերման և օտար լեզվի անվճար դասընթացների ծրագիրը: Երիտասարդությանն անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովման առումով մեծ ուշադրություն է դարձվել երիտասարդության իրազեկման և տեղեկատվության տրամադրման խնդիրներին: Հրատարակվել է երիտասարդական պետական քաղաքականության և երիտասարդության հիմնահարցերը լուսաբանող «Մենք, դուք, նրանք» երկշաբաթաթերթը: Հայերենով, ռուսերենով, անգլերենով գործել և պարբերաբար թարմացվել է Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության էլեկտրոնային կայքէջը, «Երկիր-Մեդիա» հեռուստաընկերությամբ և Հայաստանի Հանրապետության մարզերում տեղական հեռուստաընկերությունների միջոցով, երկու շաբաթը մեկ անգամ հեռարձակվել է «Անկախության սերունդ» երիտասարդական հեռուստահաղորդաշարը: Կազմակերպվել են Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական պետական քաղաքականության իրականացման արդյունավետության բարձրացմանը, երիտասարդների հասարակական ակտիվությանը և մասնակցային գործընթացի իրազեկվածության բարձրացմանն ուղղված կլոր սեղան-քննարկումներ Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում: Աջակցություն է ցուցաբերվել շուրջ 50 երիտասարդական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, տաղանդավոր և շնորհալի երիտասարդ ստեղծագործողների, գիտնականների մասնակցությանը միջազգային տարբեր գիտաժողովների, սեմինարների, համաժողովների: Երիտասարդական կազմակերպությունների հետ համագործակցության զարգացման և նրանց գործունեությանը պետական աջակցության ուղղությամբ 2008 թվականի ընթացքում քննարկվել են հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված դրամաշնորհային ծրագրերի հայտերը, և փորձագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա ցուցաբերվել է համապատասխան աջակցություն շուրջ 80 կազմակերպությունների:

2008 թվականի պետական բյուջեով *«Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ»* դասի ծախսերը կազմել են 179.6 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագիրը: Նշված գումարից 69.6 մլն դրամը տրամադրվել է ՀՀ ԱԺ ընտրություններում 3 և ավելի տոկոս ձայն հավաքած կուսակցություններին նյութական աջակցության նպատակով, 100 մլն դրամը՝ հասարակական կազմակերպություններին, 10 մլն դրամը՝ ազգային փոքրամասնություններին պետական աջակցության նպատակով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) նպատակով տրամադրվել է 414.6 մլն դրամ, որը կազմել է ծրագրվածի 95.5%-ը: Միջոցները հատկացվել են ՀՀ մշակույթի և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունների աշխատակազմերի պահպանմանը:

<u>Կրթություն</u>

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի ծախսերի 12.8%-ն ուղղվել է կրթության բնագավառի ֆինանսավորմանը: Այս ծախսերը կազմել են ավելի քան 103.5 մլրդ դրամ՝ ապահովելով 98.9% կատարողական: Ծրագրից շեղումը հիմնականում առաջացել է կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների գծով:

Հաշվետու տարում կրթության ծախսերից շուրջ 15.9 մլրդ դրամն ուղղվել է *տարրական ընդհանուր կրթության,* 43.9 մլրդ դրամը՝ *միջնակարգ ընդհանուր կրթության* ծրագրերին, որոնք ապահովել են համապատասխանաբար 100% և 99.9% կատարողական: Նշված ծախսերի տեսակարար կշիռը կրթության ծախսերում կազմել է 57.7%:

2008 թվականին տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում հանրակրթական ուսուցման ծախսերը կատարվել են նախատեսված ծավալով՝ կազմելով ավելի քան 53.7 մլրդ դրամ (որից 14.9 մլրդ դրամը կազմել են տարրական, 27.7 մլրդ դրամը՝ հիմնական ընդհանուր կրթության, 11.1 մլրդ դրամը՝ միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերը): Նախորդ տարվա համեմատ՝ հանրակրթության ուսուցման ծախսերն աճել են 13.5%-ով, որը հիմնականում պայմանավորված է ուսուցիչների և վարչական անձնակազմի աշխատավարձի 21%-ով բարձրացմամբ: 2008 թվականին ուսուցիչների միջին աշխատավարձը կազմել է 90.6 հազ. դրամ, իսկ վարչական անձնակազմի աշխատավարձը՝ 136 հազ. դրամ: Հանրակրթության համակարգում 2008 թվականին գործել է 1410 դպրոց 408267 աշակերտով, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 11%-ով:

200.4 մլն դրամ է տրամադրվել երաժշտական դպրոցներում ուսուցման գծով պետական պատվերին (որից 76.6 մլն դրամը կազմել են տարրական, 101.1 մլն դրամը՝ հիմնական ընդհանուր կրթության, 22.7 մլրդ դրամը՝ միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերը):

Հատկացված միջոցների հաշվին ապահովվել է Երևանի Չայկովսկու անվան միջնակարգ մասնագիտական դպրոցի գործունեությունը, որտեղ 2008 թվականին սովորել է 547 աշակերտ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 14.3%-ով, ինչը պայմանավորված է երաժշտական դպրոցի վարչական, մանկավարժական և ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատավարձերի բարձրացմամբ:

Հատուկ կրթության ծախսերը կատարվել են 99.9%-ով՝ կազմելով ավելի քան 2.5 մլրդ դրամ (որից՝ 671.2 մլն դրամը՝ տարրական, 1.4 մլրդ դրամը՝ հիմնական, 435.8 մլն դրամը՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության գծով): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 21%-ով, որը պայմանավորված է սովորողների միջին տարեկան թվաքանակի նվազմամբ: Հաշվետու տարում հատկացված միջոցներով գործել է 34 դպրոց՝ 3727 աշակերտով:

2008 թվականին տարրական, հիմնական և միջնակարգ(լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում արտակարգ ունակություններ դրսևորած երեխաների հանրակրթության կազմակերպման համար ծախսվել է ավելի քան 1.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 97.4%-ը: Համակարգում գործել են 6 դպրոցներ, որտեղ սովորողների միջին տարեկան թիվը կազմել է 1953: 2007 թվականի համեմատ նշված ծախերն աճել են 16.4%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի բարձրացմամբ, որն իրականացվել է հանրակրթության համակարգում կատարված բարձրացումների ընդհանուր սկզբունքներով:

Հաշվետու տարում տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում ներառական կրթության ծախսերը կազմել են ավելի քան 227.5 մլն դրամ (որից 97.6 մլն դրամը՝ տարրական, 106.5 մլն դրամը՝ հիմնական ընդհանուր կրթության և 23.5 մլն դրամը՝ միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերն են): Հաշվետու տարում ներառական կրթության համակարգում ընդգրկվել են 541 աշակերտ: Ծրագիրն սկսել է գործել 2008 թվականից:

«Ավագ դպրոցների համակարգի ներդրում» ծրագրի իրականացման համար տրամադրվել է 225.7 մլն դրամ՝ 97.2%-ով ապահովելով նախատեսված հատկացումները, որը պայմանավորված է մրցույթների արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում 30 դպրոց համալրվել է լաբորատոր սարքավորումներով, իսկ 20 դպրոց՝ աշակերտական գույքով, համակարգչային, գրասենյակային և ուսումնական սարքավորումնե-րով: Ծրագիրն սկսել է գործել 2008 թվականից:

Լինսի հիմնադրամի միջոցներով իրականացվող «Կրթական հաստատությունների վերականգնում» ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 1.7 մլրդ դրամ: Դրամաշնորհի հաշվին կատարվել են դպրոցների ուժեղացման-վերակառուցման աշխատանքներ Երևան քաղաքում, Արագածոտնի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու և Շիրակի մարզերում: Իրականացվել են նաև նշված կառույցների տեխնիկական և հեղինակային հսկողության աշխատանքները:

Միջնակարգ ընդհանուր կրթության բնագավառում շուրջ 33.8 մլն դրամ տրամադրվել է երեկոյան ուսուցմանը, որի հաշվին ֆինանսավորվել են Շիրակի մարզում և Երևան քաղաքում 2 երեկոյան դպրոցներ՝ 209 աշակերտով: Նախատեսված ծախսերն ամբողջությամբ կատարվել են, իսկ նախորդ տարվա համեմատ աճել են 28%-ով կամ 7.4 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է մանկավարժների աշխատավարձի բարձրացմամբ:

2008 թվականին *նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության* ծախսերը կազմել են շուրջ 3.9 մլրդ դրամ կամ նախատեսված հատկացումների 98.8%-ը, որից 1.5 մլրդ դրամը՝ նախնական մասնագիտական (արհեստագործական), 2.4 մլրդ դրամը՝ միջին մասնագիտական կրթության ծախսերն են: Ծրագրերը կատարվել են համապատասխանաբար 99%-ով և 98.6%-ով: Հաշվետու տարում նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության համակարգում գործող 34 ուսումնական հաստատություններում կրթություն են ստացել միջին հաշվով 5647 աշակերտ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 15%-ով, որը հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի բարձրացմամբ: Իսկ միջին մասնագիտական կրթության ծախսերի կատարողականը պայմանավորված է սովորողների փաստացի թվաքանակի՝ կանխատեսվածից պակաս լինելու հանգամանքով: 2008 թվականի ընթացքում հանրակրթական ուսուցման շրջանակներում 74 ուսումնական կենտրոններում թվով 7238 ուսանողներ ստացել են միջին մասնագիտական ուսուցում տարբեր մասնագիտություններով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 25.1%-ով ավելացումը կապված է աշխատավարձերի բարձրացման հետ, որն իրականացվել է հանրակրթության համակարգում կատարված բարձրացումների ընդհանուր սկզբունքներով:

2008 թվականին *բարձրագույն կրթության* բնագավառի ծախսերը կազմել են շուրջ 6.7 մլրդ դրամ, որից 6.1 մլրդ դրամը բարձրագույն մասնագիտական կրթության ծախսերն են, իսկ 561.4 մլն դրամը՝ հետբուհական մասնագիտական կրթության ծախսերը: Բարձրագույն կրթության ծախսերի տարեկան ծրագիրը կատարվել է 99.4%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 25.3%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ, ինչպես նաև արտասահմանյան երկրներում կրթություն ստացող ուսանողների թվի և ուսման ծախսերի ավելացմամբ:

2008 թվականին հետբուհական մասնագիտական կրթության բնագավառի ծախսերը կատարվել են 94.2%-ով՝ կազմելով 561.4 մլն դրամ, որից 74.7 մլն դրամը՝ գիտական կադրերի պատրաստման, իսկ 486.7 մլն դրամը՝ հետբուհական մասնագիտական կրթության ծախսերն են: Նշենք, որ գիտական կադրերի պատրաստման և հետբուհական մասնագիտական կրթության ծախսերը կատարվել են համապատասխանաբար 77%-ով և 98.3%-ով՝ պայմանավորված ասպիրանտների թվի նվազմամբ:

Հաշվետու տարում *ըստ մակարդակների չդասակարգվող կրթության* ծախսերը կազմել են շուրջ 2.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 96.5%-ը, որից 1.7 մլրդ դրամը՝ արտադպրոցական դաստիարակության, իսկ 772 մլն դրամը՝ լրացուցիչ կրթության ծախսերն են: Շեղումն առաջացել է հիմնականում լրացուցիչ կրթության բնագավառում ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպման և «Դատական դպրոց» ՊՈԱԿ-ին պետական աջակցության ծախսերի ցածր կատարողականի արդյունքում:

Ավելի քան 1.1 մլրդ դրամ է հատկացվել արտադպրոցական դաստիարակության հաստատությունների պահպանմանը՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: 2008 թվականին գործել է 38 ուսումնական կենտրոն 12433 սանով: 2007 թվականի համեմատ՝ նշված ծախսերն աճել են 25.1%-ով կամ 226.9 մլն դրամով, որը հիմնականում կապված է աշխատավարձի բարձրացման հետ:

«Տ. Պետրոսյանի անվան շախմատի տուն» ՊՈԱԿ-ին 2008 թվականի պետական բյուջեից հատկացվել է 8.6 մլն դրամ պետական աջակցություն, որն օգտագործվել է նախատեսված ամբողջ ծավալով: 2007 թվականի համեմատ՝ նշված ծախսերն աճել են 18.5%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձի բարձրացմամբ:

Մարզական հասարակական կազմակերպություններին նախատեսված շուրջ 333.6 մլն դրամ պետական աջակցությունը տրամադրվել է ամբողջությամբ: Ծրագրի շրջանակներում աջակցություն են ստացել մարզական հասարակական կազմակերպությունների 29 մասնաճյուղեր: Նախորդ տարվա համեմատ՝ նշված ծախսերն աճել են 19.7%-ով, որը հիմնականում կապված է աշխատավարձի բարձրացման հետ:

Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսուցման նպատակով վարձավճարների փոխհատուցման համար 2008 թվականի պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 156.3 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 98.4%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի մոտ 3.5 անգամ աճը պայմանավորված է աշակերտների թվի և մեկ սովորողի ուսման վարձավճարի փոխհատուցման չափի ավելացմամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ 2007 թվականին ֆինանսավորումը կատարվել է սեպտեմբեր ամսից, իսկ 2008 թվականին՝ ամբողջ տարվա համար:

Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների համար ուսումնական նոր ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների մշակման և հրատարակման ծախսերը կազմել են շուրջ 17.1 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով նախատեսված հատկացումները: Ուսումնական ծրագրերի և հրատարակվող գրքերի համար հատկացված միջոցների հաշվին 2008 թվականին առաջին անգամ տպագրվել են գեղարվեստական կրթության 20 անուն ուսումնական նոր ծրագրեր, դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ: Հրատարակված

գրականությունը անվճար տրամադրվել է հանրապետության բոլոր համայնքների երաժշտական և արվեստի դպրոցներին:

«Երևանի առագաստային ակումբ» հասարակական կազմակերպության համար նախատեսված պետական աջակցությունը կատարվել է նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով 40.3 մլն դրամ: Նախորդ տարի այս ծրագրով ծախսեր նախատեսված չեն եղել:

Լրացուցիչ կրթության ծախսերը կազմել են շուրջ 772 մլն դրամ կամ ծրագրի 89.9%-ը: ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գծով կատարվել են շուրջ 16.6 մլն դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսված ցուցանիշի 77%-ը: Թերակատարումը պայմանավորված է քաղաքացիական ծառայողների թվի նվազմամբ: Դրանով է պայմանավորված նաև նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 14%-ով նվազումը: 2008 թվականի ընթացքում վերապատրաստվել է 2114 քաղաքացիական ծառայող՝ նախորդ տարվա 2259-ի դիմաց:

«Ուսուցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ուղղվել է 61 մլն դրամ պետական աջակցություն՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ՝ նշված ծախսերն աճել են 3.4%-ով կամ 2 մլն դրամով:

Լրացուցիչ կրթության ուսուցման գծով նախատեսված 1 մլն դրամ պետական պատվերն աբողջությամբ ֆինանսավորվել է: Նախորդ տարվա համեմատ՝ նշված ծախսերը նվազել են 80%-ով կամ 4 մլն դրամով, որը պայմանավորված է լրացուցիչ կրթություն ստանալ ցանկացող անձանց թվի նվազմամբ:

ՀՀ արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստման և հատուկ ուսուցման ծախսերը կատարվել են նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով 98.8 մլն դրամ: 2007 թվականի համեմատ նշված ծախսերի եռակի աճը պայմանավորված է վերապատրաստվողների թվի ավելացմամբ:

Հաշվետու տարում ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպման ծախսերը կազմել են շուրջ 22 մլն դրամ՝ 64%-ով զիջելով ծրագրված ցուցանիշը, ինչը պայմանավորված է դասընթացներին մասնակցած քաղաքացիների թվով: Դրանով պայմանավորված է նաև նախորդ տարվա համեմատ այս ծախսերի 42.9%-ով նվազումը:

«Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ին 2008 թվականի պետական բյուջեից հատկացվել է ավելի քան 54 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Ակադեմիան որակավորման բարձրացման և վերապատրաստման ուղղությամբ իրականացնում է պետական, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների ղեկավարների, մասնագետների ուսուցում (շուրջ 1722 ունկնդիր), այդ թվում՝ Հայաստանի փրկարար ծառայության համակարգի ենթասպայական և սպայական անձնակազմի, հանրապետությունում գործող փրկարարական

ծառայությունների հրամանատարների, քաղաքացիական պաշտպանության կազմավորումնե-րի հրամանատարների համար:

Օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններ գործուղված փրկարարական ծառայողների ուսուցման ծախսերը կազմել են շուրջ 14.5 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 75.8%-ը, որը պայմանավորված է նրանով, որ ունկնդիրների գերակշիռ մասը չի օգտվել արձակուրդը ՀՀ-ում անցկացնելու հնարավորությունից: 2007 համեմատ ծախսերի 41.5%-ով նվազումը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախորդ տարում 8 ունկնդիրներից բացի, վճարովի հիմունքներով ուսանում էին ևս 4 կուրսանտներ:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի պետական ծառայողների վերապատրաստման ծախսերը կազմել են 305 հազ. դրամ՝ 48.4%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ՝ նշված ծախսերը նվազել են 43.1%-ով:

Բուժանձնակազմի մասնագիտացման, շարունակական ուսուցման և վերապատրաստ-ման ծախսերը կատարվել են նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով ավելի քան 155.4 մլն դրամ: 2008 թվականին նշված դասընթացներին մասնակիցել է 1549 հոգի: Նախորդ տարվա համեմատ՝ նշված ծախսերն աճել են 72.5%-ով կամ 65.3 մլն դրամով:

Համայնքային ծառայողների վերապատրաստման ծախսերը կազմել են ավելի քան 43.3 մլն դրամ՝ 92.5%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատությամբ նշված ծախերը 2.6 անգամ աճել են, ինչը պայմանավորված է վերապատրաստվող համայնքային ծառայողների թվի ավելացմամբ: Այն նախորդ տարվա 1559-ի դիմաց կազմել է 2371:

Հաշվետու տարում «Դատական դպրոց» ՊՈԱԿ-ին հատկացվել է 261.3 մլն դրամ պետական աջակցություն՝ ապահովելով նախատեսված ցուցանիշի 88.4%-ը, որը պայմանավորված է փաստացի ներկայացված պահանջով:

«Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ին բյուջեից հատկացվել է 43.7 մլն դրամ պետական աջակցություն, որն ամբողջությամբ օգտագործվել է:

2008 թվականի պետական բյուջեի կրթության ոլորտի ծախսերի 29.3%-ն ուղղվել է *կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների* ֆինանսավորմանը: Նշված ծախսերը կազմել են ավելի քան 30.3 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 97.2%-ը: Շեղումը պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կրթության որակի և համապատասխանության, ինչպես նաև նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈ) բարեփոխումների ծրագրերի ցածր կատարողականով:

Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման իրականացման նպատակով հաշվետու տարում նախատեսված 5.5 մլն դրամն ամբողջությամբ տրամադրվել է: Ծրագրի շրջանակներում 2008 թվականին, ինչպես և նախորդ տարի, վերապատրաստվել են 50

սփյուռքահայ ուսուցիչներ: Սակայն նախորդ տարվա համեմատ ծախերն աճել են 5.5 անգամ կամ 4.5 մլն դրամով, ինչը պայմանավորված է սփյուռքահայ ուսուցիչների կեցության ծախսերը պետական բյուջեից ֆինանսավորելու հանգամանքով:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննությունների կազմակերպման նպատակով կատարվել են շուրջ 10 մլն դրամի ծախսեր՝ ապահովելով 99.8% կատարողական և 0.2%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Կրթական օբյեկտների հիմնանորոգման ծախսերը կազմել են շուրջ 13.6 մլրդ դրամ՝ 99.4%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Երևան քաղաքի մեկ դպրոցում հիմնանորոգման աշխատանքների՝ պայմանագրով նախատեսված ծավալից պակաս կատարված աշխատանքներով: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել են 249 կրթական օբյեկտներ (Երևանում՝ 62, մարզերում՝ 187) և մեկ մանկապարտեզ Լոռու մարզում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը 8.6%-ով աճել են, որը պայմանավորված է հիմնանորոգված դպրոցների քանակի աճով:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հիմնանորոգման ծախսերը կատարվել են նախատեսված ծավալով՝ կազմելով շուրջ 98.9 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել են 2 միջին մասնագիտական կրթական օբյեկտներ:

«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հիմնանորոգման ծախսերը կազմել են շուրջ 744.6 մլն դրամ կամ նախատեսվածի 91.9%-ը: Ծրագրից շեղումը պայմանավորված է կապիտալ վերանորոգման ծախսերի տնտեսմամբ, որն առաջացել է կայացած մրցույթների արդյունքում: Ծրագիրը սկսվել է 2008 թվականին:

«Զեյթուն ուսանողական ավան» հիմնադրամի սուբսիդավորման համար նախատեսված 18.5 մլն դրամի ֆինանսավորումը կատարվել է ամբողջությամբ: Նախորդ տարվա համեմատ՝ այս ծրագրի ծախսերը նվազել են 5.6%-ով կամ 1.1 մլն դրամով, ինչը պայմանավորված է ավանի բնակիչների թվի նվազմամբ:

Շուրջ 542.2 մլն դրամ (ծրագրվածի 98.4%-ը) տրամադրվել է նախագծային աշխատանքների իրականացմանը, որոնց շրջանակներում կատարվել են ընդհանուր թվով 176 օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և լրամշակման աշխատանքներ: Նախագծային աշխատանքների ծավալի ավելացման արդյունքում այս ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 5.1%-ով կամ 26.5 մլն դրամով:

Կրթական օբյեկտների շինարարությանը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 2 մլրդ դրամ՝ ապահովելով 98.4% կատարողական և 10.8%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում հաշվետու տարում

կատարվել են շինարարական աշխատանքներ 28 դպրոցներում և «Փոքր Սիեր» կրթահամալիրում: Նախորդ տարվա համեմատ ծախսերի աճը պայմանավորված է վերանորոգված դպրոցների քանակի ավելացմամբ:

Մարզական օբյեկտների շինարարության ծրագրի շրջանակներում կառուցվել են 2 մարզային դպրոցներ, որոնց համար հաշվետու տարվա բյուջեով նախատեսված 43.7 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 73.8%-ով կամ 123.2 մլն դրամով, ինչը պայմանավորված է 3 մարզադպրոցի պակաս կառուցմամբ:

Ավագ դպրոցների շենքերի հիմնանորոգման ծախսերը կատարվել են 97.3%-ով և կազմել 1.8 մլրդ դրամ: Ծրագրի շրջանակներում կատարվել են 29 ավագ դպրոցների շենքերի հիմնանորոգման աշխատանքներ, որոնցից 3-ը՝ Երևան քաղաքում, 26-ը՝ մարզերում:

Հանրակրթական ծրագրերի իրականացմանն օժանդակության շրջանակներում «Հանրապետության դպրոցների ինտերնետային ցանցի սպասարկում և համակարգչային սարքավորումների պահպանում» ծրագրի իրականացման համար «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին տրամադրվել է 303.2 մլն դրամ պետական աջակցություն՝ 90%-ով կատարելով նախատեսված հատկացումները: Ծրագիրն իրականացվել է 330 դպրոցներում, ինչպես նախորդ տարի: Շեղումը պայմանավորված է ծրագրում ընդգրկված 320 նոր դպրոցների ինտերնետային ցանցի սպասարկման ժամկետների հետաձգմամբ: Նախորդ տարվա համեմատ այս ծրագրի ծախսերն աճել են 2.2 անգամ կամ 168 մլն դրամով, ինչը պայմանավորված է նրանով, որ 2007 թվականին դպրոցների սպասարկումը սկսվել է հուլիսի 1-ից:

Հանրակրթական ծրագրերի իրականացմանն օժանդակության շրջանակներում դպրոցականների ամառային հանգստի կազմակերպմանն ուղղվել է ավելի քան 155.3 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում ապահովվել է 3000 երեխաների ամառային հանգիստը: 2007 թվականի համեմատ ծախսերն աճել են 17.5%-ով: Վերջինս պայմանավորված է մանկավարժների աշխատավարձերի բարձրացմամբ, որը կատարվել է հանրակրթության համակարգում իրականացված բարձրացումների ընդհանուր սկզբունքով:

Կենտրոնացված կարգով ավարտական փաստաթղթերի, գովասանագրերի, դասամատյանների, մեդալների, ծրարների, ուսումնական ծրագրերի, մանկավարժական պարբերականների և ուսումնաղիտողական պարագաների ձեռքբերման նպատակով նախատեսված 409.5 մլն դրամի դիմաց կատարվել են 405.1 մլն դրամի ծախսեր՝ ապահովելով 98.9% կատարողական և 2.6%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված ավարտական փաստաթղթերի, դիպլոմների, քարտեզների և պաստառների թվաքանակի ավելացմամբ:

Տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով ապահովելու ծրագրի շրջանակներում ՀՀ 2008 թվականի պետական բյուջեից կատարվել են 469.4 մլն դրամի ծախսեր՝ 100%-ով կատարելով ծրագրային ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ՝ այս ծախսերը նվազել են 9.6%-ով, որը պայմանավորված է դասագրքերի պատվերի նվազեցմամբ:

Տվյալ ոլորտում հաշվետու տարվա ընթացքում կատարվել են շուրջ 1.7 մլրդ դրամի Երևանի համաքաղաքային նշանակության ծախսեր՝ 95.9%-ով կատարելով ծրագիրը: Շեղումը պայմանավորված է փաստացի կնքված պայմանագրերով: Ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի 45 դպրոցներում կատարվել են կաթսայատների և ջեռուցման համակարգերի կառուցման աշխատանքներ:

ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային բնակավայրերի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունները մանկավարժական կադրերով համալրման ծրագրով օգտագործվել է 49.9 մլն դրամ, որը 22.2%-ով պակաս է նախատեսվածից՝ պայմանավորված գործուղված մանկավարժների թվով: 2008 թվականին նախատեսված 400 մանկավարժի փոխարեն գործուղվել են 240-ը: Ծախսերի 3.6%-ով նվազում է արձանագրվել նաև նախորդ տարվա համեմատ, քանի որ 2007 թվականին գործուղված մանկավարժների թիվը կազմել էր 255:

Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցման նպատակով տրամադրվել է շուրջ 44.4 մլն դրամ՝ ապահովելով 89.4% կատարողական, ինչը հիմնականում պայմանավորված է տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում իրականացվել է 7 մարզերի գյուղական բնակավայրերից մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տեղափոխումը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 38.9%-ով, որը պայմանավորված է ծրագրում ավելի շատ մարզեր ընդգրկվելու հանգամանքով:

Ռազմագիտության կաբինետների վերականգնման ծրագրով հաշվետու տարվա պետական բյուջեից տրամադրվել է 28.8 մլն դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 94.9%-ը: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել 277 հատ DVD, 278 հատ հեռուստացույց, 2000 լրակազմ՝ բաղկացած 8 պաստառներից: Նշենք, որ նախորդ տարի այս ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել միայն 3195 լրակազմ՝ բաղկացած 5 պաստառներից: Դրանով է հիմնականում պայմանավորված նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 5.4 անգամ աճը:

Դպրոցականների հանրապետական սպարտակիադայի անցկացման համար հաշվետու տարում 35 մլն դրամի պետական աջակցություն է տրամադրվել «Աշխատանքային ռեզերվներ» մարզական հասարակական կազմակերպությանը՝ ապահովելով 100% կատարողական: Տարվա ընթացքում անցկացվել են ՀՀ անկախության 17-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական 17-րդ խաղերը՝ 7 մարզաձևերից: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Դպրոցականների օլիմպիադաների անցկացման համար նախատեսված ծախսերը նույնպես ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով 27 մլն դրամ, որը տրամադրվել է «Երևանի պետական համալսարանին առընթեր Ա.Շահինյանի անվան ֆիզիկա-մաթեմատիկական հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ին: Ծրագրի շրջանակներում 2008 թվականի ընթացքում անց է կացվել հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլը հանրակրթական 14 առարկաներից: Մասնակցած աշակերտների թիվը կազմել է 1015՝ նախորդ տարվա 1000-ի դիմաց: 2007 թվականի համեմատ՝ այս ծախսերը նվազել են 31%-ով, որը կապված է նախորդ տարի հայոց լեզվի և հայ գրականության համահայկական օլիմպիադայի կազմակերպման հետ:

Հանրակրթական ծրագրերի իրականացմանն օժանդակության շրջանակներում «Պատանի հետազոտողի և ստեղծագործողի հեռակա դպրոց», «Հանրակրթական դպրոցներում նախապատրաստական ուսուցում» և պետական այլընտրանքային մանկավարժական ծրագրերի իրականացման համար «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ին նախատեսվել է հատկացնել համապատասխանաբար 15.4 մլն դրամ, 35.3 մլն դրամ և 25.7 մլն դրամ, որոնք ամբողջությամբ ֆինանսավորվել են: Նախորդ տարվա համեմատ՝ այս ծախսերն աճել են համապատասխանաբար 14.3%-ով, 20.5%-ով և 26.8%-ով, որը հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի բարձրացմամբ:

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին 2008 թվականի պետական բյուջեից հատկացվել է 41.3 մլն դրամ, որը ֆինանսավորվել է նախատեսված ծավալով: Նախորդ տարվա համեմատ՝ այս ծախսերի 10% աճը պայմանավորված է կենտրոնում նոր բաժնի ստեղծման հանգամանքով:

Գնահատման և թեստավորման կենտրոնին որպես պետական աջակցություն նախատեսված 374.4 մլն դրամն ամբողջությամբ տրամադրվել է: Ծրագրի շրջանակներում անցկացվել են հայոց և օտար լեզուներ, մաթեմատիկա առարկաներից միասնական և ավարտական քննություններ: 2007 թվականի համեմատ՝ այս ծախսերն աճել են 65.4%-ով, ինչը բացատրվում է նրանով, որ 2008 թվականին միասնական քննություններ են անցկացվել 5 առարկաներից՝ նախորդ տարվա 2-ի փոխարեն:

Սփյուռքի հայկական կրթական հաստատությունների համար ուսումնական գրականության և օժանդակ նյութերի ստեղծման և ձեռքբերման համար կատարված ծախսերը կազմել են ավելի քան 69.9 մլն դրամ՝ ապահովելով ծրագրված և նախորդ տարվա ցուցանիշների 99.9%-ը: Ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել 48332 հատ 95 անվանում դասագիրք և օժանդակ նյութեր:

Ներքին սփյուռքի՝ Ջավախքի դպրոցների համար գույքի ձեռքբերման ծախսերը կատարվել են նախատեսված չափով՝ կազմելով 30 մլն դրամ: Տրամադրված միջոցներով Ջավախքի հայկական դպրոցների համար ձեռք է բերվել 1500 կոմպլեկտ աշակերտական գույք

(1սեղան և 2 աթոռ) և 300 հատ գրատախտակ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շրջանակներում կատարվել են ավելի քան 1.4 մլրդ դրամի ծախսեր (որից՝ 1.3 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 111.7 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին)՝ ապահովելով 80.5% կատարողական: Շեղումն արձանագրվել է հիմնականում «Ուսուցիչների վերապատրաստում» և «Շարունակական օժանդակություն բարեփոխումներին» ենթածրագրերի ծախսերում՝ պայմանավորված որոշ վերապատրաստման դասընթացներ, ինչպես նաև 10 ավագ դպրոցների գրադարանները ուսումնամեթոդական գրականությամբ համալրման ծախսերը 2009 թվական տեղափոխելու հանգամանքով, «Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրում հանրակրթության համակարգում» ենթածրագրով շեղում չի արձանագրվել: Ծրագրի մյուս երեք՝ «Ուսումնական ծրագրեր և գնահատում», «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ» և «Աջակցություն ծրագրի իրականացմանը» ենթածրագրերով նախատեսված և փաստացի կատարված ծախսերի միջև տարբերությունը խնայողության արդյունք է:

Հատուկ դպրոցների համար նախատեսված ծրագրերի, դասագրքերի, ձեռնարկների, ուսումնական այլ նյութերի մշակման և հրատարակման համար կատարվել են շուրջ 90 մլն դրամի ծախսեր՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Նշված ծրագրի շրջանակներում մշակվել են 17 անուն տետրերի լրակազմեր և 13 անուն ձեռնարկներ, տպագրվել են 2000 հատ բրալյան տետրեր, ինչպես նաև վերոնշյալ 30 անուն տետրերի լրակազմերը և ձեռնարկները: 2007 թվականի համեմատ՝ այս ծրագրի ծախսերն աճել են 2.2 անգամ, քանի որ նախորդ տարի մշակված ոչ բոլոր նյութերն էին տպագրվել:

«Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն» հիմնադրամին 2008 թվականին պետական բյուջեով նախատեսված 43 մլն դրամ պետական աջակցությունն ամբողջությամբ տրամադրվել է, որը 56.6%-ով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված կոնֆերանսների կազմակերման համար միջոցների հատկացմամբ:

Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով տրամադրված նվիրաբերության միջոցների հաշվին իրականացվող ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզային զարգացման ծրագրերի շրջանակներում կատարվել են շուրջ 5 մլն դրամի ծախսեր՝ ապահովելով 100% կատարողական: Հատկացված միջոցներն ուղղվել են Տավուշի մարզում դպրոցական գույքի նորացմանը:

12-ամյա կրթության անցման կապակցությամբ 6 տարեկան երեխաների ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ գույքի ձեռքբերման համար հաշվետու տարվա

պետական բյուջեից տրամադրվել է 1.2 մլրդ դրամ՝ ապահովելով 96.3% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել Երևանի և հանրապետության բոլոր մարզերի դպրոցների համար անհրաժեշտ դպրոցական գույք: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.9 անգամ՝ պայմանավորված աշակերտների թվի աճի արդյունքում ձեռքբերված գույքի ծավալների ավելացմամբ:

Բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումների համար նախատեսված 50 մլն դրամ պետական աջակցությունն ամբողջությամբ տրամադրվել է: Նշված ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել 5000 հատ «Բարձրագույն կրթության եվրոպական տարածք» ձեռնարկ, 10000 հատ «Ուսանողի ուղեցույց-3» ձեռնարկ, 5000 հատ «Որակի ապահովման մոդուլներ» ձեռնարկ: 2007 թվականի համեմատ այս ծախսերում փոփոխություն գրեթե չի արձանագրվել:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երկրորդ ծրագրի շրջանակներում նախատեսված 699.9 մլն դրամի փոխարեն ծախսերը կազմել են շուրջ 771.6 մլն դրամ (որից 658.6 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 113 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին)՝ 10.2%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը, ինչը պայմանավորված է նրանով, որ շինարարական աշխատանքներն իրականացվել և ավարտվել են 21 կրթական հիմնարկներում՝ նախատեսված 17-ի փոխարեն:

Մարզական օբյեկտների հիմնանորոգմանն ուղղվել է շուրջ 416.8 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգման աշխատանքներ են կատարվել Երևան քաղաքի և հանրապետության մարզերի 6 մարզադպրոցներում: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 34.5%-ով, ինչը պայմանավորված է 3 մարզադպրոց պակաս հիմնանորոգելու հանգամանքով:

Լինսի հիմնադրամի «Դպրոցաշինություն» ծրագրում առաջացած ֆինանսական միջոցների պակասուրդի փոխհատուցման համար նախատեսված 967.5 մլն դրամն ամբողջությամբ տրամադրվել է, որն օգտագործվել է նշված ծրագրով նախատեսված դպրոցների ուժեղացման-վերակառուցման, ինչպես նաև նախագծային աշխատանքների ֆինանսավորման նպատակով:

Հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման նպատակով «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ -ին հաշվետու տարում տրամադրվել է 457.7 մլն դրամ պետական աջակցություն, որը կատարվել է 100%-ով: 2008 թվականի ընթացքում վերապատրաստման դասընթացներին մասնակցած ունկնդիրների ընդհանուր թիվը կազմել է 5000 մարդ: Նախորդ տարվա համեմատ՝ այս ծախսերն ավելացել են 17.1%-ով, որը հիմնականում պայմանավորված է հանրակրթության համակարգում աշխատավարձերի բարձրացմամբ:

«Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն» ՊՈԱԿ-ին հատկացվել է շուրջ 184 մլն դրամ պետական աջակցություն՝ 98.3%-ով կատարելով նախատեսված ծախսերը: Ծրագրի շրջանակներում սպասարկվել է 2200 երեխա: Ծրագիրն սկսել է գործել 2008 թվականից:

2008 թվականի պետական բյուջեից նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխումների ուղղությամբ կատարվել են ավելի քան 2 մլրդ դրամի ծախսեր՝ ապահովելով ծրագրի 91.4% կատարողական: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով, որն առաջացել է կայացած մրցույթների արդյունքում: Ծրագրի շրջանակներում իրականացվել է նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների համար լաբորատոր, արհեստանոցային, համակարգչային տեխնիկայի, ուսանողական գույքի և հաստատությունների վերազինման համար անհրաժեշտ այլ գույքի ձեռքբերում, մշակվել են նաև մի շարք մասնագիտությունների չափորոշիչներ, վերապատրաստվել են հաստատությունների տնօրեններ, փոխտնօրեններ, մանկավարժներ, փորձագետներ, կատարվել են թարգմանություններ և այլն: Ծրագիրն սկսել է գործել 2008 թվականից:

«Բուհերում ուսման գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման, կրթության որակի ապահովման, հավաստման և որակավորումների ազգային համակարգի ներդրում» ծրագրի իրականացման համար Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին նախատեսված 25.2 մլն դրամ պետական աջակցությունն ամբողջությամբ տրամադրվել է: Հատկացված միջոցներով տպագրվել են 5000 հատ «Բարձրագույն կրթություն-2» և 5000 հատ «Բարձրագույն կրթություն-3» տեղեկագրեր: Ծրագիրն սկսել է գործել 2008 թվականից:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից շուրջ 416 մլն դրամ տրամադրվել է *այլ դասերին չպատկանող կրթության* բնագավառում գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը (նախարարությունների աշխատակազմերի մասով)՝ ապահովելով նախատեսված ծախսերի 98.3%-ը:

<u>Սոցիալական պաշտպանություն</u>

2008 թվականի պետական բյուջեի ծախսերի 26.2%-ն ուղղվել է սոցիալական պաշտպանության ոլորտին: Ոլորտին կատարված հատկացումները կազմել են շուրջ 212.6 մլրդ դրամ՝ ապահովելով 99.4% կատարողական:

Հաշվետու տարում ավելի քան 1.1 մլրդ դրամ տրամադրվել է *վատառողջության և անաշխատունակության* խմբին՝ ապահովելով 99.5% կատարողական:

«Վատառողջություն» դասում ընդգրկված են երկու ծրագրեր՝ «Աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում» և «Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում բժշկա-սոցիալական վերականգնման, աշխատունակության փորձաքննության տրամադրման նպատակով պետական աջակցություն ««Արթմեդ» բժշկավերականգնողական կենտրոն» ՓԲԸ-ին, որոնց հատկացումները կազմել են համապատասխանաբար 73.4 մլն դրամ՝ (93.4%) և 96.8 մլն դրամ՝ (100%): Առաջին ծրագրի գծով տնտեսումը պայմանավորված է վնասի փոխհատուցում ստացողների փաստացի թվաքանակի նվազմամբ: 2007 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 12.1%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ: «Արթմեդ» բժշկավերականգնողական կենտրոն» ՓԲԸ-ին պետական աջակցության շրջանակներում հիմնականում իրականացվում է նախապրոթեզավորման և հետպրոթեզավորման, աշխատանքային վերականգնման կարիք ունեցող հաշմանդամ քաղաքացիների բուժումը: 2008 թվականին նախատեսվել և իրականացվել է 9 հիվանդատեսակների գծով 631 մարդու անվճար բուժում: Ծրագրի ծախսերը 2007 թվականի համեմատ ավելացել են 7.7%-ով՝ պայմանավորված նախորդ տարվա նկատմամբ 46 մարդու բուժում ավել նախատեսելու հանգամանքով: Ընդհանուր առմամբ վատառողջության դասին տրամադրվել է 170.1 մլն դրամ, որը 9.6%-ով ավելի է 2007 թվականի ցուցանիշից:

Անաշխատունակության դասում ընդգրկված են հինգ ծրագրեր, որոնք ամբողջությամբ ֆինանսավորվել են՝ կազմելով 976.2 մլն դրամ: Մասնավորապես՝ «Հաշմանդամներին մատուցվող ծառայությունների» ծրագրի շրջանակներում դպրոցն ավարտած, ինչպես նաև ուշ տարիքում տեսողությունը կորցրած հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրության, տետրերի պատրաստման և «խոսող գրքերի» ձայնագրության ծառայություն իրականացնելու համար տրամադրվել է 11.7 մլն դրամ: Հաշմանդամներին անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման համար ծախսվել է 867.3 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել են անվճար բժշկական օգնության և սպասարկման իրավունք ունեցող հաշմանդամ քաղաքացիների համար գերմանական և հայրենական տեխնոլոգիաներով արտադրվող պրոթեզաօրթոպեդիկ պարագաների և վերականգնման տեխնիկական միջոցների պատրաստումը, դրանց վերանորոգումը, ինչպես նաև հաշմանդամի սայլակների, լսողական ապարատների, ձայնաստեղծ սարքերի և աչքի պրոթեզների ծառայությունների ձեռքբերումը: Հոգեկան առողջության վերականգնման նպատակով պետական աջակցությունը «Սթրես կենտրոն» ՓԲԸ-ին կազմել է 64.6 մլն դրամ: Պետական աջակցությունը տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց «Արև» համակարգով ուսուցանելու և համակարգչային տեխնիկայով ապահովելու համար կազմել է 16.1 մլն դրամ,

իսկ «Փրկություն» հասարակական կազմակերպության հաշմանդամ երեխաների և պատանիների սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոնին՝ 16.5 մլն դրամ: Վերջին երկու ծրագրերը գործում են 2008 թվականից:

Ծերության դասի ծրագրերին հատկացվել է շուրջ 154.9 մլրդ դրամ՝ ապահովելով 99.8% կատարողական: Տվյալ դասում ամենամեծ կշիռն ունեցել են ապահովագրական կենսաթոշակների ծախսերը՝ 127.2 մլրդ դրամ, որն իրականացվել է 99.9%-ով: 2007 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 64%-ով կամ 49.8 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է հիմնական կենսաթոշակի չափի փոփոխությամբ, որը 4250 դրամից դարձել է 6800 դրամ, ինչպես նաև ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքի համար տրվող հավելման չափի փոփոխությամբ՝ 230 դրամից 395 դրամ:

Սպայական անձնակազմի ու նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակների ապահովման ծախսերը կազմել են 17.1 մլրդ դրամ (99.9% կատարողական), 2007 թվականի համեմատ նշված ծախսերը աճել են 61%-ով կամ 6.5 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է սպայական անձնակազմի կենսաթոշակների վերահաշվարկի հանգամանքով:

Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովման ծախսերը կազմել են 2.7 մլրդ դրամ՝ ապահովելով 98.1% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: 2007 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 32.1%-ով կամ 651.6 մլն դրամով, որը պայմանավորված է բազային կենսաթոշակի բարձրացմամբ՝ 3000 դրամից մինչև 5000 դրամ:

Սոցիալական կենսաթոշակների ծախսերը կատարվել են նախատեսված ծավալով և կազմել շուրջ 5.3 մլրդ դրամ: 2007 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 51.8%-ով կամ 1.8 մլրդ դրամով, որը պայմանավորված է հիմնական կենսաթոշակի բարձրացմամբ՝ 4250 դրամից մինչև 6800 դրամ, և կենսաթոշակառուների թվի աճի հանգամանքով:

ՀՀ օրենքներով և ՀՀ կառավարության որոշումներով նշանակված կենսաթոշակները, ամենամսյա դրամական օժանդակությունը և կենսաթոշակի տարբերության հատուցման ծախսերը կազմել են 204.3 մլն դրամ, որոնք 5%-ով զիջել են 2007 թվականի ցուցանիշը՝ պայմանավորված կենսաթոշակառուների թվաքանակի փոփոխությամբ:

ՀՀ պետական բյուջեից «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համաձայն ապահովագրական ստաժի դիմաց կենսաթոշակների հատկացումը կազմել է 764 մլն դրամ, որոնք 2007 թվականի համեմատ նվազել են 42.8%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ տարվա ընթացքում նշված ծրագրով նախատեսված միջոցները վերաբաշխվել են՝ տվյալ վճարումները նախատեսելով ապահովագրական կենսաթոշակների ծախսերում:

«Տարեցներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում տարեցների շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի

նախարարության ենթակայությանը հանձնված տարեցների տուն-ինտերնատ հանդիսացող ՊՈԱԿ-ներին պետական աջակցությունը կազմել է 1.1 մլրդ դրամ: Ծախսերը նախորդ տարվա նկատմամբ ավելացել են 3.8%-ով կամ 41.4 մլն դրամով, որը պայմանավորված է սանիտարահիգիենիկ պարագաների և կոմունալ ծախսերի համար լրացուցիչ միջոցներ նախատեսելու հանգամանքով:

Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկման նպատակով «Միայնակ տարեցների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ին պետական աջակցությունը կազմել է 80.2 մլն դրամ, որն ամբողջությամբ կատարվել է և 9.9%-ով գերազանցել նախորդ տարվա ծախսերը: Ծախսերի աճը պայմանավորված է բյուջեով 300 շահառուի և 15 սպասարկողների համար լրացուցիչ միջոցներ նախատեսելու հանգամանքով:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց վերականգնման նպատակով «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին պետական աջակցությունը կազմել է 13.1 մլն դրամ, որը կատարվել է 99.5%-ով:

ՀՀ մարզերում միայնակ տարեցներին և հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկման նպատակով «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը նախատեսված 127.2 մլն դրամ պետական աջակցությունն ամբողջությամբ տրամադրվել է: Այն 2007 թվականի նկատմամբ ավելացել է 16.7%-ով, որն արդյունք է խնամվողների և սպասարկողների թվաքանակի ավելացման:

«Հարազատին կորցրած անձինք» խմբի ծրագրերին տրամադրվել է շուրջ 32.8 մլն դրամ՝ ապահովելով 73.2% կատարողական: Շեղումը հիմնականում առաջացել է աշխատող քաղաքացիների մահվան դեպքում թաղման նպաստի վճարումների գծով: Այս նպատակով օգտագործվել է նախատեսված միջոցների 47.5%-ը՝ 8.3 մլն դրամ, ինչը պայմանավորված է դեպքերի քանակի նվազմամբ:

Հայաստանի զոհված ազգային հերոսների ընտանիքներին հատկացվել են 20.2 մլն դրամ նպաստներ՝ կազմելով նախատեսվածի 92.3%-ը, ինչը ևս դեպքերի քանակի նվազման հետևանք է:

Առնվազն մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող գործազուրկի մահվան դեպքում հատկացվել են 4.3 մլն դրամի թաղման նպաստներ՝ կազմելով նախատեսվածի 79.3%-ը: Շեղումը պայմանավորված է նպաստառուների փաստացի քանակով:

Ընտանիքի անդամներ և զավակներ խմբի ծրագրերին հատկացվել է շուրջ 35.5 մլրդ դրամ ապահովելով 99.5% կատարողական: Նշված գումարի զգալի մասը՝ 28.8 մլրդ դրամ, տրամադրվել է ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության ֆինանսավորմանը, որը կազմել է նախատեսվածի 99.9%-ը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն ավելացել են 11.5%-ով (շուրջ 3 մլրդ դրամով), ինչը պայմանավորված է նպաստի նվազագույն չափի

բարձրացմամբ, ինչպես նաև նպաստառու ընտանիքների անչափահաս երեխաներին տրվող հավելավճարների չափի ավելացմամբ: 2008 թվականին ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն է ստացել 119514 ընտանիք՝ 2007 թվականի 124688-ի դիմաց:

ՀՀ պաշտպանության և փրկարարական ծառայության ժամանակ հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհված (մահացած) զինծառայողների ու փրկարար ծառայողների ընտանիքներին հաշվետու տարում տրամադրվել են 94.6 մլն դրամ միանվագ սոցիալական ապահովագրության վճարներ՝ կազմելով նախատեսվածի 52%-ը: Հարկ է նշել, որ ծրագիրը ֆինանսավորվել է ներկայացված փաստացի հայտերի ամբողջ ծավալով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 33.6%-ով:

2008 թվականին մինչև 2 տարեկան երեխա խնամող և մասնակի վճարովի արձակուրդում գտնվող անձանց տրվող ամենամսյա նպաստների գծով ծախսերը կազմել են 221.7 մլն դրամ կամ նախատեսվածի 99.3%-ը: 2007 թվականի համեմատ այս ծախսերը նվազել են 5.6%-ով կամ 13.1 մլն դրամով, որը պայմանավորված է դիմողների փաստացի քանակի նվազմամբ:

Մարդասիրական օգնության կարգով ստացվող պարենամթերքի բաշխման ծառայությունների ձեռքբերմանը տրամադրվել է 17.6 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվում է ՄԱԿ-ի Համաշխարհային պարենի ծրագրի կողմից ներկրված պարենամթերքի բաշխումը՝ ՀՀ երեք մարզերի շուրջ 36000 և Երևան քաղաքի 3000 շահառուներին: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն ավելացել են 9.2%-ով, որը պայմանավորված է Երևան քաղաքի շահառուներին պարենամթերքի բաշխման ծառայությունների մատուցմամբ:

«Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին տրամադրվել է 33.4 մլն դրամ պետական աջակցություն, որը կազմել է նախատեսվածի 92.6%-ը, իսկ նախորդ տարվա համեմատ՝ նվազել 90.7%-ով, ինչը պայմանավորված է ծրագրով նախատեսված բնակարանների ձեռքբերման նոր ընթացակարգերին անցնելու կապակցությամբ նախատեսված բնակարանների և դրանց կահավորման համար անհրաժեշտ գույքի գնումը չիրականացնելու, ինչպես նաև ծրագրի առանձին բաղադրիչների գծով նախատեսվածից պակաս ծախսեր կատարելու հանգամանքով:

«Սոցիալական աջակցություն» ծրագրի շրջանակներում սոցիալապես անապահով քաղաքացիներին կամ ընտանիքներին հրատապ օգնության համար տրամադրվել է 10.5 մլն դրամ դրամական օժանդակություն կամ նախատեսվածի 88.3%-ը, ինչը պայմանավորված է փաստացի դիմողների քանակով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն ավելացել են 19.1%-ով, որը բացատրվում է նախորդ տարվա համեմատ օգնության համար դիմած խնդրատուների թվաքանակի ավելացմամբ:

Հղիության և ծննդաբերության նպաստի ծրագրով նախատեսված էր շուրջ 2.3 մլրդ դրամի հատկացում, որը կատարվել է 99.8%-ով:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի ծրագրով նախատեսված էր շուրջ 1.4 մլրդ դրամի հատկացում, որը կատարվել է 99.9%-ով: 2008 թվականին միանվագ նպաստ է ստացել 34560 ընտանիք:

2008 թվականին 93.8%-ով կատարվել են վարժական հավաքների և զինծառայության և փրկարարական ծառայության ընթացքում մահացած (զոհված) զինծառայողների ու փրկարար ծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերի փոխհատուցման ծախսերը՝ 347.2 մլն դրամի չափով, և 6.4%-ով գերազանցելով նախորդ տարվա ծախսերը:

Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայությունների ծրագրի շրջանակներում երեխաների շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) համակարգի՝ երեխաների տուն-ինտերնատ հանդիսացող ՊՈԱԿ-ներին պետական աջակցության ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 1.4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.6%-ը: Տարվա ընթացքում նախատեսվել էր երեխաների տուն-ինտերնատներում իրականացնել 935 խնամվողների շուրջօրյա խնամք: Փաստացի խնամվողների միջին տարեկան թվաքանակը կազմել է 866 մարդ՝ պայմանավորված մանկատներում խնամվող երեխաների ժամանակավոր բացակայություններով: 2007 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 7.7%-ով, որը պայմանավորված է սպասարկող անձնակազմի աշխատավարձի և ջեռուցման ծախսերի, ինչպես նաև երեխաների գրպանի ծախսերի համար նախատեսված միջոցների ավելացմամբ:

Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայությունների ծրագրի շրջանակներում մանկական խնամակալական կազմակերպություններին բեռնաթափման նպատակով պետական աջակցությունը կազմել է 19.6 մլն դրամ կամ 100%: 2007 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 14.7%-ով, որը կապված է բյուջեով սննդամթերքի փաթեթի ընդգրկման շրջանակի մեծացման հետ:

Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայությունների ծրագրի շրջանակներում ռիսկի գոտում հայտնված երեխաներին սոցիալական հոգածության տրամադրման նպատակով «Երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ներին 2008 թվականի բյուջեով նախատեսված պետական աջակցությունը կազմել է 132.5 մլն դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը: Նախորդ տարվա համեմատ՝ նշված ծախսերն ավելացվել են 2.9%-ով, որը պայմանավորված է ջեռուցման ծախսերի աճով: 2008 թվականի գործել են «Երևանի Աջափնյակ թաղային համայնքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ը և «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ը:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 05-1680 գործով 15.07.2005թ. վճռի համաձայն Հայաստանի Հանրապետության կողմից կերակրողին կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցման ծախսերն ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով 1.1 մլն դրամ:

«Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում ՀՀ ԱՍՀՆ ենթակայությանը հանձնված երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության հաստատություն հանդիսացող ՊՈԱԿ-ներին պետական աջակցությունը կազմել է 696.5 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 99.9%-ով կատարում:

«Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության երեխաների խնամքի չորս ցերեկային կենտրոններին տրամադրվել է 51.3 մլն դրամ, որն ուղղվել է 515 երեխայի սոցիալ-հոգեբանական և կրթական կարիքների բավարարման ծառայությունների մատուցմանը: Միջոցներն օգտագործվել են նախատեսված չափով:

Հայաստանի Հանրապետությունում խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման հետ կապված ծախսերը կազմել են 15.7 մլն դրամ՝ ապահովելով 97.6% կատարողական: Ծրագրի շրջանակներում 2008 թվականին 20 երեխա տեղափոխվել են խնամատար ընտանիքներ:

2008 թվականին շուրջ 3.7 մլրդ դրամ տրամադրվել է *գործազրկության* ծրագրերի ֆինանսավորմանը՝ կազմելով նախատեսվածի 99.2%-ը: Ծախսերի հիմնական մասն ուղղվել է գործազրկության նպաստի վճարմանը՝ շուրջ 2.8 մլրդ դրամ, որը կատարվել է նախատեսված չափով: Հաշվետու տարում գործազրկության նպաստի չափն ավելացել է՝ 12 հազ. դրամից մինչև 15 հազ. դրամ, ավելացել է նաև գործազրկության նպաստ ստացող անձանց թիվը՝ նախորդ տարվա 13588-ի դիմաց կազմելով 16673 մարդ:

Զբաղվածության ծառայությունների ծրագրի շրջանակներում իրականացվող վարձատրվող հասարակական աշխատանքների շրջանակներում օգտագործվել է 692.3 մլն դրամ, կամ ծրագիրը կատարվել է 99.4%-ով: Նշված ծախսերը 1.1%-ով (7.5 մլն դրամով) գերազանցել են 2007 թվականի ցուցանիշը, ինչը վարձատրվող հասարակական աշխատանքների ծավալների ավելացման արդյունք է:

Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար գործազուրկներին և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամներին տրամադրվել է 450 հազ. դրամ ֆինանսական աջակցություն՝ նախատեսված 2.2 մլն դրամի փոխարեն: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ նախատեսվածից քիչ թվով գործազուրկներ են դիմել աջակցություն ստանալու համար:

Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի ընդունելիս գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման ծախսերը կազմել են 42.3 մլն դրամ՝

նախատեսված 48.9 մլն դրամի փոխարեն: Տնտեսումը պայմանավորված է համապատասխան հայտերի բացակայությամբ:

Ապահովագրական ստաժ չունեցող կամ մինչև մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների մասնագիտական ուսուցման և աշխատանքային ունակությունների վերականգնման կազմակերպման նպատակով տրամադրվել է 4.1 մլն դրամ կամ նախատեսվածի 82.4%-ը: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է համապատասխան հայտերի բացակայությամբ:

Ապահովագրական ստաժ չունեցող կամ մինչև մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների մասնագիտական ուսուցման և աշխատանքային ունակությունների վերականգնման կազմակերպմանը տրամադրվել է շուրջ 70 մլն դրամ, որը կազմում է նախատեսվածի 90.8%-ը: Տնտեսումը պայմանավորված է համապատասխան հայտերի բացակայությամբ:

«Զբաղվածության ծառայություններ» ծրագրի շրջանակներում աշխատաշուկայում հավասարակշռության ստեղծման նպատակով «Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն» ՊՈԱԿ-ին պետական աջակցությունը կազմել է 10.3 մլն դրամ, որն իրականացվել է նախատեսված ողջ ծավալով:

Առնվազն մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող գործազուրկ անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման համար հատկացվել է 63.4 մլն դրամ ապահովելով 96.1% կատարողական: Այս ծրագրում առկա տնտեսումը ևս պայմանավորված է համապատասխան հայտերի բացակայությամբ:

Այլ վայր աշխատանքի գործուղվող գործազուրկների նյութական ծախսերի հատուցման, առնվազն մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող հաշմանդամների մասնագիտական ուսուցման և աշխատանքային ունակությունների վերականգնման կազմակերպման, երկարամյա ծառայության և արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չզբաղված անձանց վերամասնագիտացման, ինչպես նաև աշխատաշուկայի հետազոտման և կանխատեսման աշխատանքների կազմակերպման ծախսերը կազմել են համապատասխանաբար 1.1 մլն դրամ (94%), 5.2 մլն դրամ (52.7%), 670.2 հազ. դրամ (39.4%) և 5 մլն դրամ (99.1%): Նշված տնտեսումները պայմանավորված են համապատասխան հայտերի բացակայությամբ:

«Բնակարանային ապահովում» խմբի ծրագրերին ՀՀ 2008 թվականի պետական բյուջեից հատկացվել է ավելի քան 5.4 մլրդ դրամ՝ ապահովելով 99.9% կատարողական և 2.8%-ով գերազանցելով 2007 թվականի ցուցանիշը:

49.8 մլն դրամ է տրամադրվել Արմավիրի մարզում բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգման աշխատանքներին՝ կազմելով նախատեսվածի 99.6%-ը:

Զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովման և բնակարանային պայմանների բարելավման համար տրամադրվել է շուրջ 3 մլրդ դրամ, որը կազմում է ծրագրի 100%-ը:

Գյուղական բնակավայրերում անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարություն իրականացնելու համար տրամադրվել է շուրջ 790.5 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.3%-ը: Ծրագրի շրջանակներում Լոռու մարզի 19 գյուղական համայնքներում իրականացվել են 72 անհատական անավարտ բնակարանների ավարտման աշխատանքներ, իսկ Շիրակի մարզում կառուցվել է 21 բնակարան:

«Բնակարանային ապահովում բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով» ծրագրի ծախսերը կազմել են 1.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Բնակարանների գնման վկայագրերի միջոցով 2008 թվականին ձեռք են բերվել թվով 441 բնակարան, որոնցից 253-ը՝ ՀՀ Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած անձանց, 8-ը՝ Երևան քաղաքում բնակվող փախստական ընտանիքների, 169-ը՝ ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքում բնակվող փախստական ընտանիքների և 11 սողանքային գոտիներում գտնվող բնակելի տների բնակիչների համար: 2007 թվականի համեմատ այս ծրագրի ծախսերն ավելացել են 7.7%-ով կամ 114.4 մլն դրամով:

Սոցիալական հատուկ արտոնությունների (այլ դասերին չպատկանող) խմբում 2008 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 4.2 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 98.5% կատարողական:

2008 թվականի պետական բյուջեով նախատեսվել է փախստականի կարգավիճակ հայցողներին տրամադրել 500 հազ. դրամ միանվագ նպաստ, որը, սակայն, չի ծախսվել վճարման համապատասխան կարգ չլինելու պատճառով:

2008 թվականի պետական բյուջեից 753.4 մլն դրամ է տրամադրվել վետերանների պատվովճարներին, որը կազմել է ծրագրի 98.7%-ը, իսկ նախորդ տարվա ցուցանիշի համեմատ՝ 98.9%:

Երկրորդ համաշխարհային պատերազմի վետերաններին, 25.11.98թ. ՀՕ-258 օրենքի 13-րդ հոդվածում նշված պատճառներով հաշմանդամ դարձած զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին տրամադրվել է 2.1 մլրդ դրամ դրամական օգնություն, որը կազմել է նախատեսվածի 98.3%-ը: Տնտեսումը պայմանավորված է դրամական օգնություն ստացողների թվաքանակի նվազման հանգամանքով:

ՎՏԲ-Հայաստան ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների՝ նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված

դրամական ավանդների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են 1.3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99%-ը: 2007 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 30.6%-ով:

Հաշվետու տարում «Տարեցներին մատուցող ծառայություններ» ծրագրի շրջանակներում 43.4 մլն դրամ պետական աջակցություն է ցուցաբերվել անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման նպատակով «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին, որը նախատեսված չափով կատարվել է:

Փախստականների սոցիալական խնդիրների լուծման միջոցառումներ իրականացնելու նպատակով տրամադրվել է 12.1 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 86.4%-ը: Պետական բյուջեով նախատեսված և ծախսված գումարների տարբերությունը պայմանավորված է փախստականների թվի նվազմամբ:

Պետական աջակցությունը «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ին կազմել է 7.5 մլն դրամ (78%), որի միջոցով իրականացվում է ժամանակավոր ապաստանի կարգավիճակ հայցող փախստականների սպասարկումը (կացարանի տրամադրում, սնունդ, բուժզննում և այլ ծառայությունների տրամադրում): 2007 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 29.1%-ով՝ պայմանավորված կարգավիճակ հայցողների քանակի և սպասարկման ծավալների աճով:

Բռնադատված քաղաքացիներին պատճառված վնասի դիմաց 2008 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 1.2 մլն դրամ միանվագ դրամական փոխհատուցում, որը կատարվել է 90.7%-ով և 30%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված դիմողների փաստացի թվաքանակի նվազմամբ:

Սոցիալական պաշտպանության (այլ դասերին չպատկանող) խմբի ծրագրերի գծով 2008 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 7.7 մլրդ դրամ՝ ապահովելով 91.2% կատարողական: Շեղումը հիմնականում առաջացել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման վարկային ծրագրի և կենսաթոշակային ապահովության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի պահպանման և զարգացման ծրագրի գծով:

ՀՀ սոցիալական ապահովության նախարարության աշխատակազմի պահպանման նպատակով օգտագործվել է 1.5 մլրդ դրամ, որը կազմել է նախատեսվածի 98.2%-ը:

Հաշվետու տարում 273.1 մլն դրամ տրամադրվել է սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման նպատակով, որն իրականացվել է նախատեսված ողջ ծավալով: 2007 թվականի նկատմամբ նշված ծախսերն ավելացել են 126.1 մլն դրամով կամ 85.9%-ով, որը պայմանավորված է սոցիալական ծառայություններ մատուցող մարմինների աշխատողների աշխատավարձերի բարձրացմամբ:

Կենսաթոշակային ապահովության ոլորտում պետական կառավարման մարմնի պահպանման և զարգացման ծրագրի ծախսերը կատարվել են 86%-ով և կազմել շուրջ 1.9 մլրդ դրամ: Տնտեսումն արդյունք է աշխատավարձի ֆոնդի տնտեսման և աշխատողների թվաքանակի կրճատման: 2007 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 3.6%-ով կամ 65.5 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է 2008 թվականին ծառայության տարածքային բաժինների կապիտալ և ընթացիկ վերանորոգման աշխատանքներով:

Սոցիալական պաշտպանությանը տրամադրող օժանդակ ծառայությունների (այլ դասերին չպատկանող) դասի ծախսերը կազմել են շուրջ 4.1 մլրդ դրամ՝ ապահովելով 90.9% կատարողական, որը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագրի ցածր կատարողականով:

Սոցիալական աջակցության ծառայությունների ծրագրի շրջանակներում 345.5 մլն դրամ տրամադրվել է ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության վճարման հետ կապված փոստային ծառայությունների ձեռքբերմանը՝ ապահովելով 99.8% կատարողական: Նախորդ տարվա համեմատ՝ նշված ծախսերն ավելացել են 11.4%-ով, ինչը պայմանավորված է ընտանեկան նպաստի գումարի ավելացմամբ:

Փախստականների և նրանց ընտանիքների վերաբերյալ տեղեկատվական ծառայությունների ձեռք բերման շրջանակներում «Համակարգչային կենտրոն» ՊՈԱԿ-ին նախատեսված 35.5 մլն դրամ պետական աջակցությունն ամբողջությամբ տրամադրվել է, իսկ 2007 թվականի համեմատ՝ նվազել 10.1%-ով, քանի որ 2008 թվականին կապիտալ ծախսեր չեն իրականացվել:

Այլ օբյեկտների շինարարության և հիմնանորոգման ծրագրերի շրջանակներում կատարվել են համապատասխանաբար 478.2 մլն և 94.3 մլն դրամի ծախսեր, ընդ որում շինարարությունն իրականացվել է 100%-ով, իսկ հիմնանորոգման ծախսերը՝ 86.7%-ով:

«Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում բժշկասոցիալական փորձաքննության (ԲՍՓ) ձևաթղթի տպագրության ծառայությունների ձեռքբերման և «Սոցիալական աջակցության ծառայություններ» ծրագրի շրջանակներում սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների (ՍԾՏԳ) ձևաթղթերի տպագրության ծառայությունների ձեռքբերման նպատակով տրամադրվել է համապատասխանաբար 7.1 մլն դրամ և 11.5 մլն դրամ:

2008 թվականին Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 430.6 մլն դրամ կամ ծրագրված հատկացումների 53%-ը: Ցածր կատարողականը բացատրվում է 2008 թվականի դեկտեմբերի 16-ին ստորագրված՝ վարկային համաձայնագրի

փոփոխությամբ, համաձայն որի ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգվել է մինչև 2009 թվականի դեկտեմբերի 31-ը:

Ծրագրի նպատակներն ուղղակիորեն կապված են մարդկային զարգացման խթանման և սոցիալական ապահովության համակարգերի և հանրային հատվածի հիմնական գործառույթների բարելավման հետ: Ծրագիրը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ «Ընդհանուր աջակցություն սոցիալական պաշտպանության ոլորտին», «Աշխատանք և զբաղվածություն», «Կենսաթոշակներ», «Սոցիալական աջակցություն», «Ծրագրի կառավարում, մոնիթորինգ և գնահատում»: Շեղումը հիմնականում առաջացել է մեքենաների և սարքավորումների ձեռք բերման հոդվածով: Թերակատարման պատճառներից հիմնականն այն է, որ ելնելով այն հանգամանքից, որ Կառավարությունում որպես կարևոր ռազմավարական հարց քննարկվում է մեկ ընդհանուր համահայկական տեղեկատվական հոսքերի ցանցի ստեղծման անհրաժեշտությունը, որը խոշոր ֆինանսական ռեսուրսներ է պահանջում և հնարավոր է որ իրականացվի որևէ մասնավոր ընկերության կողմից, ուստի վարկային միջոցներով նախատեսված Տեղեկատվական հոսքերի կորպորատիվ ցանցի (ՏՀԿՑ) գործարկման հարցը սառեցվեց և որոշվեց այդ գումարները վերաբաշխել: Սոցիալական ոլորտում ՏՀԿՑ-ի գործարկման հետաձգման հետ կապված՝ ուշացվեց նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործող տեղեկատվական համակարգերի բարելավման և արդիականացման համար նախատեսված մրցույթի գործընթացը, և քանի որ 2008 թվականի վերջում վարկային համաձայնագրի իրականացման ժամկետը երկարացվեց մինչև 2009 թվականի դեկտեմբերի 31-ը, տեղեկատվական համակարգերի արդիականացումը հետաձգվեց 2009 թվական: Ցածր կատարողականի պատճառներից մեկն էլ այն է, որ Գյումրիում հաշմանդամների կենտրոնի տարածքի հատկացման հարցը լուծվեց տարվա վերջին, ուստի շինարարության հիմնական մասը կիրականացվի 2009 թվականին և այն շահագործման կհանձնվի ամռանը, հետևաբար կենտրոնի համար նախատեսված համակարգչային և տնտեսական տեխնիկան, կահույքը, գրենական պիտույքները և անհրաժեշտ այլ պարագաները ձեռք կբերվեն 2009 թվականին:

Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման գծով նույնպես առաջացել է տնտեսում, որը պայմանավորված է տարվա կեսին պատվիրատուի կողմից վերանորոգման ենթակա սոցիալական ծառայությունների տարածքային գրասենյակների փոփոխությամբ: Արդյունքում մրցույթը հայտարարվեց տարվա վերջին, իսկ աշխատանքները հիմնականում կիրականացվեն արդեն 2009 թվականի ընթացքում:

Ծրագիրն ամբողջովին չկատարելու պատճառներից են նաև որոշ խորհրդատվական ծառայությունների իրականացման ժամկետների հետաձգումը և որոշ խորհրդատուների կողմից պարտավորությունների ոչ պատշաճ կատարումը:

Ծրագրի շրջանակում 1-ին բաղադրիչով (Ընդհանուր աջակցություն սոցիալական պաշտպանության ոլորտին) ավարտվել են սոցիալական պաշտպանության ոլորտի կազմակերպությունների համար Տեղեկատվական հոսքերի կորպորատիվ ցանցի նախագծման աշխատանքները, որի արդյունքում մշակվել է վերոնշյալ ցանցի նախագիծը և գործարկման համար անհրաժեշտ սարքավորումների ցանկը:

2-րդ բաղադրիչով (Աշխատանք և զբաղվածություն) հաջողությամբ իրականացվել են Երևանում Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոնի անձնակազմի վերապատրաստման աշխատանքները: Իրականացվել են «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությանը կից ստեղծված աշխատանքային ակումբների գործունեության և աշխատանքի տոնավաճառների կազմակերպման համար անհրաժեշտ համակարգչային տեխնիկայի, կենցաղային սարքավորումների, նյութերի, կահույքի և տպագրական նյութերի ձեռք բերման նպատակով հայտարարված մրցույթները, Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոնի համար տպագրական նյութերի ձեռք բերման նպատակով հայտարարված մրցույթը, որոնց արդյունքում ժամանակին մատակարարվել են նշված ապրանքները: Ավարտվել են Երևանում Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոնի տարածքի շինվերանորոգման աշխատանքները: «Զբաղվածության ծառայությունների տրամադրման բարելավում» ենթածրագրի շրջանակում, բացառությամբ վերջին փուլի, իրականացվել են աշխատանքի ակումբների և աշխատանքի տոնավաճառների ստեղծման հետ կապված խորհրդատվական ծառայությունները, որոնց դիմաց վճարումները կատարվել են: Հաջողությամբ իրականացվել են հետևյալ խորհրդատվական ծառայությունները՝ Գյումրիի հաշմանդամների աշխատանքային վերականգման փորձնական կենտրոնի ստեղծման մեթոդական ապահովման աշխատանքները, Երևանում Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոնի տարածքի վերանորոգման հեղինակային ու տեխնիկական հսկողության աշխատանքները, Զբաղվածության պետական ծառայության տարածքային կենտրոնների տնօրենների և աշխատակազմի համար կազմակերպված վերապատրաստման դասընթացները:

4-րդ բաղադրիչով (Սոցիալական աջակցություն) ավարտվել է Ընտանեկան նպաստ» ծրագրի մոնիթորինգի իրականացման իրավասություններ ունեցող մասնագետների վերապատրաստումը:

5-րդ բաղադրիչով (Ծրագրի կառավարում, մոնիթորինգ և գնահատում) իրականացվել է մրցույթ ծրագրի աուդիտի անցկացման նպատակով, որի արդյունքում պայմանագիր է կնքվել հաղթող ճանաչված “Գրանթ Թորնթոն Ամիո” ընկերության հետ, որն իրականացրել է 2007 թվականի աուդիտը:

Հաջողությամբ ընթանում են նաև ՀՀ տարբեր մարզերի Զբաղվածության պետական ծառայության, սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի, սոցիալական

ծառայության և աշխատանքի պետական տեսչության տարածքային գրասենյակների նախագծային աշխատանքները ընտրված երկու տեղական նախագծային ընկերությունների կողմից, որոնք իրականացնում են նաև Երևանում և Վայոց Ձորի մարզում շինվերանորոգման աշխատանքների տեխնիկական և հեղինակային հսկողության աշխատանքները:

Համակցված բաղադրիչով հաջողությամբ իրականացվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակիցների և ՀՀ սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների աշխատակիցների համար համակարգչային գիտելիքների ոլորտում ուսուցման և վերապատրաստման դասընթացները, «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության կառուցվածքային ստորաբաժանումների, մարզային և տարածքային մարմինների աշխատակիցների համար «Գործ» ինտերնետային տեղեկատվական համակարգի ուսուցման և գործակալությունում տեղեկատվական համակարգի տեղադրման, ինչպես նաև ՀՀ սոցիալական ծառայությունների տարածքային գրասենյակների և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների վերապատրաստման դասընթացները:

Ավարտվել են ՀՀ սոցիալական ոլորտի համակարգի համար համակարգչային սերվերների, ցանցային սարքավորումների մատակարարումը, որի դիմաց ամբողջությամբ կատարվել են վճարումները: Կատարվել են նաև Վայոց ձորի մարզի զբաղվածության պետական ծառայության, Սոցիալական ապահովագրության պետական ծառայության և սոցիալական ծառայության Ջերմուկի տարածքային գրասենյակների շինվերանորոգման աշխատանքները:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեից «Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում հաշմանդամների տվյալների տեղեկատվական համակարգի շահագործման և սպասարկման նպատակով ««Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ-ին հատկացվել է 17.8 մլն դրամ պետական աջակցություն, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 6%-ով՝ պայմանավորված աշխատողների աշխատավարձերի բարձրացմամբ:

«Զբաղվածության ծառայություններ» ծրագրի շրջանակներում գործազուրկների տվյալների տեղեկատվական համակարգի («Գործ» համակարգ) շահագործման և սպասարկման նպատակով ««Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ-ին պետական աջակցությունը կազմել է 20.7 մլն դրամ, որը ևս կատարվել է նախատեսված չափով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն ավելացել են 6.1%-ով՝ պայմանավորված աշխատողների աշխատավարձերի բարձրացմամբ:

«Սոցիալական ապահովության ծառայություններ» ծրագրի շրջանակներում «Սոցիալական ապահովության քարտերի համակարգի ներդրման, տեղեկատվական բազայի վարման և շահագործման նպատակով պետական աջակցությունը ««Նորք»

տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ-ին կազմել է 148.7 մլն դրամ՝ ապահովելով 99% կատարողական: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն ավելացել են 12.3%-ով՝ պայմանավորված աշխատողների աշխատավարձերի բարձրացմամբ:

«Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում «Մանուկ» տեղեկատվական համակարգի շահագործման և վարման նպատակով պետական աջակցությունը ««Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ-ին կազմել է 15.2 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ ծախսերն ավելացել են 164.3%-ով՝ պայմանավորված աշխատողների աշխատավարձերի բարձրացմամբ և շահառուների թվաքանակի ավելացմամբ:

«Սոցիալական աջակցության ծառայություններ» ծրագրի շրջանակներում ընտանեկան նպաստի տվյալների տեղեկատվական համակարգի շահագործման և սպասարկման նպատակով պետական աջակցությունը ««Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ-ին կազմել է 30.2 մլն դրամ՝ ապահովելով 97.2% կատարողական: Նախորդ տարվա համեմատ ծախսերն ավելացել են 5.9%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Մեթոդաբանական ձեռնարկների մշակման և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստման նպատակով պետական աջակցությունը «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին կազմել է 63.3 մլն դրամ, ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ ծախսերն ավելացել են 7.3%-ով, որը սոցիալական ոլորտի մեթոդաբանական ձեռնարկի մշակման ծավալների ավելացման արդյունք է:

«Սոցիալական աջակցության ծառայություններ» ծրագրի շրջանակներում մինչև 2 տարեկան երեխայի խնամքի և նրա ծննդյան միանվագ նպաստների տվյալների «Նպաստ-2» համակարգի շահագործման և սպասարկման նպատակով պետական աջակցությունը ««Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ-ին կազմել է 9.1 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ ծախսերն ավելացել են 5.7%-ով՝ պայմանավորված աշխատողների աշխատավարձերի բարձրացմամբ:

Հանրային իրազեկման միջոցառումների իրականացմանը տրամադրվել է 14 մլն դրամ, որը կատարվել է 91.7%-ով:

Հաշվետու տարում պետական բյուջեից ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի վճարը կազմել է 2.4 մլրդ դրամ, որն իրականացվել է նախատեսված ծավալով:

Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր

2008 թվականի պետական բյուջեից ՀՀ կառավարության պահուստային ֆոնդին հատկացվել է շուրջ 37.1 մլրդ դրամ, որից օգտագործվել է 34.3 մլրդ դրամը կամ նախատեսվածի 92.5%-ը: Տրամադրված միջոցներից 14.4 մլրդ դրամն ուղղվել է ընթացիկ ծախսերին՝ կազմելով նախատեսվածի 85.1%-ը, 19.9 մլրդ դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին՝ ապահովելով 98.7% կատարողական: Նախորդ տարվա համեմատ պահուստային ֆոնդի ծախսերն ավելացել են 52.6%-ով:

2008 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ևս 2.1 մլրդ դրամ տրամադրվել է ֆինանսական ակտիվների ձեռքբերման և փոխառու միջոցների մարման նպատակով, որը ներառված է պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում:

ՀՀ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեն կատարվել է 25.2 մլրդ դրամ պակասուրդով՝ ճշտված ծրագրով նախատեսված 57 մլրդ դրամի փոխարեն: Ընդ որում, պակասուրդի ֆինանսավորման ցածր մակարդակ է արձանագրվել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրներում: Նշենք, որ 2007 թվականին ՀՀ պետական բյուջեն կատարվել էր 21.1 մլրդ դրամ պակասուրդով[5]: Պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 0.7% և նախորդ տարվա համեմատ փոփոխություն չի կրել, իսկ ծրագրված ցուցանիշից պակաս է 1.4 տոկոսային կետով:

Հաշվետու տարում պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրները կազմել են շուրջ 7.8 մլրդ դրամ՝ նախատեսված 28.2 մլրդ դրամի դիմաց: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում նշված ցուցանիշը կազմել էր -14.9 մլրդ դրամ: Պակասուրդի ներքին ֆինանսավորման ցուցանիշի՝ ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է ծախսերի տնտեսումների արդյունքում ազատ բյուջետային միջոցների առկայությամբ, որոնք հաշվետու ժամանակահատվածում ավելացել են 23.4 մլրդ դրամով՝ 7.6 մլրդ դրամ օգտագործելու փոխարեն:

Ներքին պետական պարտքի կառավարման նպատակների շրջանակներում 2008 թվականին ծրագրված էր բյուջեի դեֆիցիտը ֆինանսավորել 25 մլրդ դրամով: Տարեվերջին նախատեսվում էր ներքին պետական պարտքի ծավալը հասցնել 90.3 մլրդ դրամի, եկամտաբերությունը՝ 9%-ի, ժամկետայնությունը՝ 4-4.5 տարվա: Համաձայն մշակված տարեկան ծրագրի, 2008 թվականի ընթացքում նախատեսվում էր թողարկել 59 մլրդ դրամ և մարել 32.9 մլրդ դրամ ծավալով պարտատոմսեր: Տարեսկզբին հրապարակվել էր նաև պետական պարտատոմսերի թողարկման ծրագիր՝ ըստ առանձին թողարկումների:

2008 թվականին անցում կատարվեց նոր՝ ուղենշային պարտատոմսերի թողարկումների: Պարտատոմսերի տեղաբաշխումը իրականացվել է տարվա ընթացքում՝ դրանցից յուրաքանչյուրի պարբերական վերաբացումների միջոցով: Նոր ուղենշային պարտատոմսերի թողարկումներին անցումը լայն հնարավորություններ է ստեղծում պետական պարտատոմսերի երկրորդային շուկայի զարգացման համար: Նախկինում իրականացված միջնաժամկետ և երկարաժամկետ փոքրածավալ բազմաթիվ թողարկումների փոխարեն 2008 թվականի փետրվարին հայտարարվեց 3, 5, 10 և 20 տարի մարման ժամկետով մեծածավալ ուղենշային պարտատոմսերի թողարկման մասին, որոնց տեղաբաշխման ծավալը տարվա ընթացքում կազմել է 33.5 մլրդ դրամ, տեղաբաշխման միջին եկամտաբերությունը՝ 9.36%: Ուղենշային պարտատոմսերի թողարկումներին զուգահեռ իրացվելիության ավելացման և մարման բեռի հարթեցման նպատակով պարբերաբար իրականացվել են հետգնումներ: 2008 թվականին

[5] Վերահաշվարկվել է GFS-2001-ի դասակարգմանը համապատասխան:

փաստացի իրականացված հետգնումների ծավալը կազմել է 17.7 մլրդ դրամ՝ նախատեսված 12.0 մլրդ դրամի դիմաց:

Գանձապետական պարտատոմսերի միջոցով դեֆիցիտի ֆինանսավորման փաստացի ցուցանիշը կազմել է 25.3 մլրդ դրամ՝ կազմելով տարեկան ճշտված ծրագրով նախատեսված ֆինանսավորման 100%-ը, որը 341.3 մլն դրամով ավելի է սկզբնական տարեկան ծրագրից: Պետք է նշել, որ տարվա երկրորդ կեսին արդեն պարզորոշ ուրվագծվեց ներքին աղբյուրներից բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման ծրագրի կատարման չափազանց բարձր ռիսկայնությունը: Բանն այն է, որ ՀՀ ֆինանսական շուկայում ձևավորված իրավիճակում, երբ, փաստորեն, պետական պարտատոմսերի թողարկումն իրականացվում էր երկու կառույցների կողմից (ՀՀ ֆինանսների նախարարություն և ՀՀ կենտրոնական բանկ), շուկայի մասնակիցների խիստ սահմանափակ թվի և արտարժույթի շուկայում ձևավորվող բացասական սպասումների պայմաններում, գանձապետական պարտատոմսերի նախապես հայտարարված տարեկան ծրագիրը գրեթե անհնար էր իրագործել (ՀՀ ֆինանսների նախարարության կողմից թողարկվող միջին և երկարաժամկետ պարտատոմսերի նկատմամբ պահանջարկն էապես նվազել էր): ՀՀ կառավարության և ԿԲ միջև երկարատև քննարկումներից հետո համաձայնություն ձեռք բերվեց դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների կոորդինացման շրջանակներում՝ սեպտեմբեր ամսից ՀՀ կենտրոնական բանկի կողմից սեփական արժեթղթերի թողարկումը դադարեցնելու վերաբերյալ: Այդ պահից, եկամտաբերության կորի ողջ երկայնքով թողարկումներն իրականացրել է բացառապես ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ փոխհամաձայնեցված ծրագրի շրջանակներում:

2008 թվականին ներքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշներն ունեն հետևյալ պատկերը. շրջանառության մեջ եղած ներքին պարտքի եկամտաբերությունը կազմել է 8.36% (2007 թվականին՝ 7.05%), պարտքի ժամկետայնությունը՝ 1535 օր (2007 թվականին՝ 1258 օր), մարման բեռի բաշխվածությունը հասել է մինչև 2028 թվականը: Պարտքի ժամկետի ավելացումը պայմանավորված է երկարաժամկետ՝ 20 տարի մարման ժամկետայնությամբ պարտատոմսերի թողարկմամբ:

2008 թվականին առաջին անգամ թողարկվել են նաև 2 տարի մարման ժամկետով խնայողական արժեկտրոնային պարտատոմսեր: Խնայողական պարտատոմսերի տեղաբաշխման ծավալը կազմել է 340,796.0 հազ. դրամ: 2008 թվականից սկսած՝ Գանձապետական պահառու համակարգն իր ներդրողների համար ապահովում է 3, 6, 9, 12, 15, 18 և 24 ամիս մարման ժամկետով խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի մշտական առաջարկ:

2008 թվականին շարունակվել է նաև ՀՀ ներքին շահող փոխառության պարտատոմսերի հետգնման գործընթացը. հետգնումը կազմել է ընդամենը 642.1 հազ. դրամ:

2008 թվականի վերջի դրությամբ ՀՀ ներքին պետական պարտքը կազմել է 100,893.2 մլն դրամ կամ ՀՆԱ-ի 2.8%-ը՝ 2007 թվականի 75,429.8 մլն դրամի կամ ՀՆԱ-ի 2.4%-ի դիմաց: Նշված ծավալից 92.3 մլն դրամը կազմել են շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերը, իսկ 8,588.4 մլն դրամը՝ ՀՀ կառավարության 06.12.2007թ. N 1434-Ա որոշմամբ որպես ՀՀ ներքին պետական պարտք ներգրավված վարկը:

Մուրհակների մարման նպատակով նախատեսված 409.8 մլն դրամի դիմաց կատարվել են 377.8 մլն դրամի վճարումներ:

2008 թվականի ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից 614 մլն դրամ ուղղվել է «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ից ստացված վարկի մարմանը:

2008 թվականին պետական բյուջեի պակասուրդը ներքին ֆինանսական ակտիվների գծով կազմել է -16.6 մլրդ դրամ: Մասնավորապես՝ առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի մասնավորեցման արդյունքում կուտակված միջոցներից բյուջե է մուտքագրվել շուրջ 13.4 մլրդ դրամ: «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ և «Կոջեմա Լոջիստիկս» ֆրանսիական կազմակերպության միջև 2005 թվականի սեպտեմբերի 30-ին կնքված պայմանագրով նախատեսված աշխատանքներն իրականացնելու նպատակով «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման նպատակով հատկացվել է 236.1 մլն դրամ:

2008 թվականին պետական բյուջեից իրականացվել է 7.3 մլրդ դրամ ներքին վարկավորում՝ կազմելով նախատեսվածի 41.5%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի շրջանակներում նախատեսված վարկավորման փոքր ծավալով: Նշված ծախսերը կազմել են շուրջ 7.2 մլրդ կամ նախատեսվածի 41%-ը: Շեղում է արձանագրվել հիմնականում Գերմանահայկական հիմնադրամի կողմից իրականացվող փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման վարկային ծրագրի գծով, որի շրջանակներում նախատեսված 15.3 մլրդ դրամի համաֆինանսավորումն ամբողջությամբ իրականացվել է, որից շուրջ 5 մլրդ դրամն ուղղվել է առևտրային բանկերի վարկավորմանը:

Հաշվետու տարում 149.8 մլն դրամի արտոնյալ վարկեր են տրամադրվել բռնադատված քաղաքացիներին՝ անհատական բնակարանային շինարարություն իրականացնելու նպատակով: Բյուջեով նախատեսված վարկավորումը գրեթե ամբողջությամբ իրականացվել է:

Նախկինում տրամադրված վարկերից բյուջե է վերադարձվել 1.1 մլրդ դրամ, որի գծով հաշվետու ժամանակահատվածում ծրագրվել էին 875.2 մլն դրամի մուտքեր:

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվել էր շուրջ 7.6 մլրդ դրամ օգտագործել բյուջեի 2008 թվականի տարեսկզբի ազատ միջոցներից, սակայն փաստացի արդյունքներով դրանք 23.4 մլրդ դրամով ավելացել են:

2008 թվականին պետական բյուջեի պակասուրդն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել է 17.4 մլրդ դրամով՝ կազմելով նախատեսվածի 60.5%-ը: Պակասուրդի ցածր ֆինանսավորման պատճառն արտաքին աջակցությամբ իրականացվող նպատակային վարկային ծրագրերի ցածր կատարողականն է, ինչպես նաև վարկային և դրամաշնորհային միջոցների մնացորդների 979.2 մլն դրամով ավելացումը:

Արտաքին փոխառու միջոցներից բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը կազմել է 44.4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 82.3%-ը: Տարվա ընթացքում արտաքին աղբյուրներից ստացվել են 49.3 մլրդ դրամի վարկային միջոցներ, որի ծրագիրը կատարվել է 83.7%-ով: Ստացված վարկերից 29.5 մլրդ դրամը տրամադրվել է միջազգային կազմակերպությունների կողմից, որից 6.4 մլրդ դրամը Համաշխարհային բանկի կողմից Աղքատության հաղթահարման աջակցության չորրորդ ծրագրի շրջանակներում տրամադրված միջոցներն են: Հաշվետու տարում շուրջ 19.8 մլրդ դրամ վարկային միջոցներ են ստացվել օտարերկրյա պետություններից՝ նախատեսված 22.5 մլրդ դրամի դիմաց: 2007 թվականի համեմատ՝ արտաքին աղբյուրներից տրամադրված վարկերի գումարը նվազել է 23.6%-ով կամ 15.2 մլրդ դրամով, ինչը հետևանք է ինչպես ծրագրերի ցածր կատարողականի, այնպես էլ փոխարժեքի տատանումների:

2008 թվականի պետական բյուջեից շուրջ 4.9 մլրդ դրամ ուղղվել է արտաքին պարտավորությունների մարմանը, որից 4 մլրդ դրամը հատկացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը:

Արտաքին ֆինանսական ակտիվների գծով ֆինանսավորման ծրագիրը կատարվել է ամբողջությամբ և կազմել 26 մլրդ դրամ: Մասնավորապես՝ 26,032.8 մլն դրամ է կազմել ԼՂՀ-ին տրամադրված միջպետական վարկը, որից 1.5 մլրդ դրամը հատկացվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից: 28.8 մլն դրամ վճարվել է Վրաստանի կողմից՝ ՀՀ նկատմամբ ունեցած պարտքի դիմաց, որի գծով նախատեսվել էր 60.4 մլն դրամի մուտք: Հարկ է նշել, որ Վրաստանի կողմից վճարումն իրականացվել է հաստատված վճարման ժամանակացույցերին համապատասխան, սակայն վերջին վճարումը գանձապետական միասնական հաշվին մուտքագրվել է 2009 թվականի հունվարին:

2008 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը կազմել է 1,577.1 մլն ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 13.2%-ը՝ 2007 թվականի 1,448.9 մլն դոլարի և 15.7%-ի դիմաց: Պարտքի հիմնական մասը՝ 1,425.2 մլն ԱՄՆ դոլարը, ՀՀ կառավարության անմիջական վարկային պարտավորություններն են, 151.9 մլն ԱՄՆ դոլար են կազմում Կենտրոնական բանկի վարկային պարտավորությունները:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը կազմել է 54.1 մլն ԱՄՆ դոլար, որից 26.3 մլն ԱՄՆ դոլարը՝ կառավարության և 27.8 մլն դոլարը՝

ԿԲ պարտավորությունների գծով: Արտահանման նկատմամբ արտաքին պարտքի սպասարկման հարաբերակցությունը կազմել է 3.1%՝ նախորդ տարվա 2.9%-ի դիմաց: 2008 թվականի վերջի դրությամբ արտաքին պարտքի զուտ ներկա արժեքի ցուցանիշն (ԶՆԱ) աճել է՝ 2007 թվականի 833 մլն ԱՄՆ դոլարի դիմաց կազմելով 994.5 մլն ԱՄՆ դոլար, սակայն նվազել է ԶՆԱ/ՀՆԱ հարաբերակցությունը՝ 2007 թվականի 9.0%-ի դիմաց կազմելով 8.3%: Հաշվետու տարում աճել է ԶՆԱ/արտահանում ցուցանիշը՝ 2007 թվականի 46.9%-ից հասնելով 56.2%-ի: Հատկանշական է, որ արտաքին պարտքը բնութագրող հիմնական ցուցանիշներով Հայաստանը համարվում է նվազ և միջին պարտքի բեռ ունեցող երկիր, և այս առումով պարտքի հետագա սպասարկումը ռիսկեր չի պարունակում: